

# ԱԶԴԱԳԻՐ



«Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ  
Թողարկողի ֆիրմային անվանումը

փակ բաժնետիրական ընկերություն  
Կազմակերպա-իրավական ձևը

ՀՀ, Երևան 0043, Շիրակի փ. 1/68  
Հեռ.՝ +374 11 700 500

Էլ. փոստ՝ [alfapharm@alfapharm.am](mailto:alfapharm@alfapharm.am)  
Կայք՝ <https://alfapharm.am/hy/>

«Ամերիաբանկ» ՓԲԸ  
Գլխավոր տեղաբաշխողի անվանումը

փակ բաժնետիրական ընկերություն  
Կազմակերպա-իրավական ձևը

ՀՀ, ք. Երևան 0010, Վ. Սարգսյան 2  
Հեռ.՝ (+37410) 56 11 11

Էլ.-փոստ՝ [info@ameriabank.am](mailto:info@ameriabank.am)  
Կայք՝ [www.ameriabank.am](http://www.ameriabank.am)

---

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ  
ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ  
ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:

---

Արժեթղթերի տեսակը՝	անվանական, արժեկտրոնային պարտատոմս (այսուհետ՝ Պարտատոմս)
Արժեթղթերի ձևը՝	ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը՝	15,000 (տասնհինգ հազար) հատ
Արժեթղթերի անվանական արժեքը՝	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
Արժեթղթերի թողարկման ծավալը՝	1,500,000,000 (մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ
Արժեկտրոնը՝	11.3% (տասնմեկ ամբողջ երեք տասնորդական տոկոս)
Շրջանառության ժամկետը՝	36 (երեսունվեց) ամիս

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՄԱՍ 1 ԱՄՓՈՓԱԹԵՐԹ</b>	<b>5</b>
1.1 Տեղեկատվություն թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ	5
1.2 Թողարկողին և Պարտատոմսերին առնչվող ռիսկերը	9
1.3 Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները	12
1.4 Թողարկողի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին տեղեկություններ	13
1.5 Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և խոշոր մասնակիցները	13
1.6 Առաջարկվող արժեթղթերի հիմնական վիճակագրական տվյալները	15
1.7 Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը	16
1.8 Ամփոփ ֆինանսական տվյալներ	16
<b>ՄԱՍ 2 ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ</b>	<b>19</b>
2.1 Ռիսկային գործոններ	19
2.2 Հիմնական տեղեկատվություն	20
2.3 Տեղեկատվություն՝ կապված առաջարկվող (կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող) արժեթղթերի հետ	21
2.4 Առաջարկի ժամկետները և պայմանները	30
2.5 Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը	41
2.6 Լրացուցիչ տեղեկատվություն	41
<b>ՄԱՍ 3 ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ</b>	<b>43</b>
3.1 Անկախ աուդիտորներ	43
3.2 Ռիսկային գործոններ	43
3.3 Տեղեկատվություն թողարկողի մասին	45
3.4 Բիզնեսի նկարագիրը	48
3.5 Թողարկողի կառուցվածքը	55
3.6 Թողարկողի հիմնական միջոցները	56
3.7 Զարգացման վերջին միտումները	56
3.8 Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը	57
3.9 Թողարկողի կառավարման մարմինները և անդամները	58
3.10 Կառավարման մարմինների գործունեությունը	68
3.11 Հսկող անձինք	68
3.12 Տեղեկատվություն թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին	68
3.13 Լրացուցիչ տեղեկատվություն	69
3.14 Էական պայմանագրերը	70
3.15 Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը	70
3.16 Այլ տեղեկատվություն	70
<b>ՄԱՍ 4 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ</b>	<b>72</b>
4.1 ՀԱՎԵԼՎԱԾ 1: Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը	72

4.2	ՀԱՎԵԼՎԱԾ 2: Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը	74
4.3	ՀԱՎԵԼՎԱԾ 3: Սահմանումներ	75
4.4	ՀԱՎԵԼՎԱԾ 4: Տիեզերական հաշվետվություններ	76

**ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ**

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը»:


Ստորագրող անձինք՝


<u>Արայոմ Հովհաննիսյան</u> (անուն, ազգանուն)	<u>Խորհրդի նախագահ</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>04.11.2025թ.</u> (ամսաթիվ)
---	------------------------------------	---	----------------------------------

<u>Սամվել Շիլաջյան</u> (անուն, ազգանուն)	<u>Խորհրդի անդամ</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>04.11.2025թ.</u> (ամսաթիվ)
---	----------------------------------	---	----------------------------------

<u>Հարություն Շատվորյան</u> (անուն, ազգանուն)	<u>Խորհրդի անդամ</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>04.11.2025թ.</u> (ամսաթիվ)
--	----------------------------------	---	----------------------------------


<u>Բայան Դուռչև</u> (անուն, ազգանուն)	<u>Խորհրդի անդամ</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>04.11.2025թ.</u> (ամսաթիվ)
--	----------------------------------	---	----------------------------------

<u>Գեորգի Հորոզով</u> (անուն, ազգանուն)	<u>Խորհրդի անդամ</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>04.11.2025թ.</u> (ամսաթիվ)
--	----------------------------------	---	----------------------------------


<u>Միքայել Մացակյան</u> (անուն, ազգանուն)	<u>Գլխավոր տնօրեն</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>04.11.2025թ.</u> (ամսաթիվ)
--	-----------------------------------	---	----------------------------------

<u>Լիանա Ղևոնդյան</u> (անուն, ազգանուն)	<u>Ֆինանսական տնօրեն</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>04.11.2025թ.</u> (ամսաթիվ)
--	--------------------------------------	---	----------------------------------

<u>Փայլակ Հովակիմյան</u> (անուն, ազգանուն)	<u>Գլխավոր հաշվապահ</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>04.11.2025թ.</u> (ամսաթիվ)
---	-------------------------------------	---	----------------------------------

<u>«Ամերիաբանկ» ՓԲԸ՝ ի դեմս Ամալիա Զաղազպանյանի</u> (անուն, ազգանուն)	<u>Տեղաբաշխող</u>	 (ստորագրություն)	<u>04.11.2025թ.</u> (ամսաթիվ)
--	-------------------	---	----------------------------------

Ստորագրությունները հավաստում են՝

<u>Միքայել Մացակյան</u> (անուն, ազգանուն)	<u>Գլխավոր Տնօրեն</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>04.11.2025թ.</u> (ամսաթիվ)
--	-----------------------------------	---	----------------------------------

# ՄԱՍ 1 ԱՍՓՈՓԱԹԵՐԹ

## ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՍՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ: ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՍԲՈՂՋԱԿԱՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձինք ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում են քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է սույն ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել սույն ազդագիրը (այսուհետ՝ նաև Ազդագիր) և վերջինիս կից ներկայացվող փաստաթղթերն էլեկտրոնային տարբերակով [www.alfapharm.am/hy/](http://www.alfapharm.am/hy/) և [www.ameriabank.am](http://www.ameriabank.am) կայքերից:

### 1.1 Տեղեկատվություն թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ

#### 1.1.1 Թողարկողի տվյալները և կապի միջոցները

##### Լրիվ ֆիրմային անվանում

Հայերեն՝ «Ալֆա-Ֆարմ» փակ բաժնետիրական ընկերություն  
Ռուսերեն՝ Закрытое акционерное общество «Альфа-Фарм»  
Անգլերեն՝ “Alfa-Pharm” closed joint-stock company

---

##### Կրճատ ֆիրմային անվանում

Հայերեն՝ «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ  
Ռուսերեն՝ ЗАО “Альфа-Фарм”  
Անգլերեն՝ “Alfa-Pharm” CJSC

---

Պետական գրանցման վայր՝ ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ, 0043, Շիրակի փ. 1/68

---

Պետական գրանցման համար՝ 273.120.04865

Գործունեության վայր՝ ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ, 0043, Շիրակի փ. 1/68

---

Կապի միջոցներ՝ Հեռ.՝ +374 11 700 500  
Էլ. փոստ՝ [alfapharm@alfapharm.am](mailto:alfapharm@alfapharm.am)  
Կայք՝ <https://alfapharm.am/hy/>

Թողարկողին առնչվող հարցերի առաջացման դեպքում կարելի է դիմել հետևյալ եղանակներով՝ էլ. փոստ՝ [alfapharm@alfapharm.am](mailto:alfapharm@alfapharm.am), հեռ.՝ +374 11 700 500:

### 1.1.2 Թողարկողի համառոտ պատմությունը և ռազմավարությունը

«Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև «Ընկերություն», «Թողարկող» կամ «Ալֆա-Ֆարմ») Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ նաև ՀՀ) առաջատար դեղագործական ընկերությունն է, որը հիմնադրվել է 1996թ-ին: Ընկերության հիմնադիրներ են հանդիսանում ՀՀ դեղագործական ոլորտում բազմամյա փորձ ունեցող անձինք, ում մասնագիտական և կազմակերպչական ունակությունների շնորհիվ Ընկերությունը բարձրորակ ծառայություններ է մատուցում հանրությանը: 2005-2017 թթ.-ին Ընկերության բաժնետեր է եղել «Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը» (EBRD), իսկ ներկայումս Ընկերության բաժնետեր է արևելյան Եվրոպայի խոշորագույն դեղագործական ընկերություններից «Ալտա Ֆարմասյութիքըլս» ՍՊԸ-ն (Alta Pharmaceuticals OOD):

Ընկերությունը զբաղեցնում է առաջատար դիրքեր դեղամիջոցների ինչպես մեծածախ, այնպես էլ մանրածախ վաճառքում՝ ունենալով ամենամեծ դեղատնային ցանցը ՀՀ-ում: 2018թ.-ից սկսած գործում է Ալֆա-Ֆարմի շուրջօրյա առաքման ծառայությունը, որը ՀՀ-ում հիմնադրված առաջին օնլայն շուրջօրյա դեղատունն է է:

Օրենսդրական փոփոխություններով պայմանավորված՝ 2019թ. անհրաժեշտություն է առաջացել տրոհել մեծածախ դեղագործական գործունեությունը մանրածախ գործունեությունից: Արդյունքում Ընկերությունը սկսել է զբաղվել միայն մանրածախ գործունեությամբ, իսկ մեծածախ գործունեությամբ սկսել է զբաղվել նորաստեղծ «Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ն, որի 100% բաժնետերն է հանդիսանում Ընկերությունը: 2021 թ.-ին Ընկերությունը ձեռք է բերել նաև դեղարտադրող «Էյ Լաբ ֆարմասյութիքալս» ՍՊԸ, և հանդիսանում է վերջինիս 100% բաժնետեր:

Ընկերության հիմնական ռազմավարական ուղղություններն են.

- **Տեսականու և շուկայի ընդլայնում** - Ընկերության ռազմավարության կարևոր ուղղություններից է՝ ընդլայնել կոսմետիկայի, բիոակտիվ հավելումների և օրթոպեդիկ արտադրանքների տեսականին, ինչպես նաև ընդլայնել Ընկերության գործունեության աշխարհագրությունը և մեծածախ, և մանրածախ առևտրում:
- **Թվայնացման և էլեկտրոնային առևտրի աճ** - առցանց խանութի դիրքավորում՝ որպես մանրածախ առևտրի զարգացման կարևոր խթան: Այն իր մեջ ընդգրկում է օգտագործողի փորձի բարելավում՝ բջջային հավելվածներով կամ այլ WEB հարթակներում հարմարավետ դիզայնի, արագ վճարման և տարբեր անհատականացված առաջարկների միջոցով:
- **Նորարարություն** - նոր կամ զգալիորեն բարելավված ապրանքների, ծառայությունների, գործընթացների կամ բիզնես մոդելների ստեղծում և ներդրում, որոնք կարող են արժեք ավելացնել հաճախորդների համար, ամրապնդել Ընկերության մրցունակությունը և ապահովել կայուն աճ:

- **Գործառնական ցիկլի բարելավում** - այն իր մեջ ներառում է դեղագործական ստանդարտների կիրառումը բոլոր կատեգորիաներում /GMP, ISO/, մատակարարման շղթայի բարելավումը և ծախսերի կառավարումը, արագ և հուսալի առաքման ապահովումը, վաճառքից հետո սպասարկման բարելավումը:
- **Բրենդինգ և վստահության կառուցում** - դիրքավորել Ընկերությունն իբրև առողջության և գեղեցկության լավագույն գործընկեր, ամրապնդել մաշկաբանների, սննդաբանների և օրթոպեդների հետ համագործակցությունը:
- **Արհեստական բանականություն** - արհեստական բանականությունը դիտարկել ոչ միայն որպես գործիք տարաբնույթ խնդիրների լուծման համար, այլ նաև որպես Ընկերության զարգացման, արդյունավետության և առաջխաղացման կարևոր խթան:

### 1.1.3 Թողարկողի կանոնադրական կապիտալը և դրա կառուցվածքը

Ընկերության կանոնադրական կապիտալն առ 30/06/2025թ. կազմել է 1,229,844,833 (մեկ միլիարդ երկու հարյուր քսանհինգ միլիոն ութ հարյուր քառասունչորս հազար ութ հարյուր երեսուններեք) ՀՀ դրամ, որը բաղկացած է 932,407 (ինը հարյուր երեսուներկու հազար չորս հարյուր յոթ) հատ տեղաբաշխված բաժնետոմսից՝ յուրաքանչյուրը 1,319 (մեկ հազար երեք հարյուր տասնինը) ՀՀ դրամ անվանական արժեքով: Թողարկողի մասնակիցների ցանկը (ներառյալ բաժնետոմսերի չափերը) ներկայացված է [Ազդագրի 3.5.1 ենթազխում](#):

### 1.1.4 Թողարկողի բիզնեսի նկարագիրը

Ալֆա-Ֆարմն իր դուստր ընկերությունների հետ միասին իրականացնում է դեղամիջոցների ներկրում, դրանց մեծածախ և մանրածախ վաճառք: Բացի այդ, Ընկերությունը զբաղվում է նաև բուժական կոսմետիկայի, կոսմետիկայի, բիոակտիվ հավելումների, մանկական սննդի և պարագաների, ինչպես նաև օրթոպեդիկ ապրանքների վաճառքով:

Այսպիսով, Ընկերության հիմնական գործունեությունը ներառում է հետևյալը.

- **Ներկրում և մեծածախ վաճառք:** Ընկերությունն իրականացնում է ուղղակի ներմուծումներ ավելի քան 100 համաշխարհային առաջատար արտադրողներից, այդ թվում՝ Եվրոպայից, ԱՄՆ-ից, Ռուսաստանից, ԱՊՀ երկրներից, Հնդկաստանից և այլ երկրներից՝ միաժամանակ համագործակցելով նաև տեղական մատակակարների հետ: Ընկերության գործընկերներն են այնպիսի հայտնի ընկերություններ, ինչպիսիք են՝ Les Laboratoires Servier-ը, Sanofi-Aventis-ը, Abbott-ը, Berlin-Chemie AG-ը, Novartis

Consumer-ը, Bayer Consumer-ը, Hoffman-La Roche-ը, Nycomed Austria-ը, Pfizer-ը, L'oreal-ը, Pierre Fabre-ը, Denk Pharma-ը և այլն:

- **Լոգիստիկա:** Ընկերության կենտրոնական պահեստը զբաղեցնում է մոտ 3,600 մ<sup>2</sup> տարածք և հազեցած է առաջնակարգ հոսքագծային տեխնիկայով, որը համապատասխանում է դեղամիջոցների պահպանման, մշակման և բաց թողնման ամենախիստ պահանջներին: Լոգիստիկ կենտրոնի բարձր թողունակությունը հնարավորություն է տալիս ժամանակին և որակյալ կազմակերպել Ընկերության կողմից իրացվող տեսականու առաքումը ՀՀ-ում գտնվող դեղատներ և բուժհաստատություններ:
- **Առաքման գործընթաց:** Ընկերությունը դեղամիջոցներ և բժշկական տարատեսակ պարագաներ է մատակարարում 900-ից ավելի դեղատների (ներառված չեն Ընկերության դեղատները) և ավելի քան 160 բուժհաստատությունների: Կարևորագույն ներդրումներից է եղել տրանսպորտային պարկի թարմացումը և հազեցումը համապատասխան ջերմային ապահովվածություն ունեցող բեռնատարերով՝ առաքման գործընթացն անհրաժեշտ ստանդարտներին համապատասխանեցնելու համար: Ընկերությունն ունի GDP սերտիֆիկացում, որը երաշխավորում է դեղագործական ապրանքների ապահով առաքումը՝ միջազգային պահանջներին համապատասխան:
- **Մանրածախ վաճառք:** Ընկերությունը ՀՀ-ում ունի ամենամեծ դեղատնային ցանցը, որը ներառում է ՀՀ բոլոր մարզերը: Ընկերության հիմնական ներդրումային գործունեությունն ուղղված է նոր, ավելի ֆունկցիոնալ ու ժամանակակից դեղատների բացմանը, եղած դեղատների նորացմանը և դեղատնային ցանցի ընդլայնմանը: Դեղատնային ցանցը բաղկացած է ավելի քան 200 դեղատներից, որոնց գրեթե կեսը գտնվում է Երևանում: Բացի այդ, վերջին տարիներին Թողարկողը էական ներդրումներ է կատարել էլեկտրոնային առևտրի (E-commerce) հարթակի զարգացման համար՝ ստեղծելով առաջին օնլայն դեղատունը ՀՀ-ում և շարունակելով ներդրումներն այդ հարթակի զարգացման և օգտատերին ավելի հարմարավետ դարձնելու համար:

#### 1.1.5 Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը

Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը ներկայացված է [Հավելված 2-ում](#):

#### 1.1.6 Թողարկողի խմբի կառուցվածքը

Թողարկողի խմբի կառուցվածքը հասանելի է [Ազդագրի 3.5.1](#) ենթազվխում:

### 1.1.7 Ակտիվների որակը

2025թ.-ի հունիսի 30-ի դրությամբ Թողարկողի ընդհանուր ակտիվների մեծությունը կազմել է 20.33 մլրդ ՀՀ դրամ: Նույն պահի դրությամբ կապիտալի համարժեքության գործակիցը (ընդհանուր կապիտալի հարաբերությունն ընդհանուր ակտիվներին) կազմել է 52.8%:

## 1.2 Թողարկողին և Պարտատոմսերին առնչվող ռիսկերը

### 1.2.1 Թողարկողին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Ընկերությունն իր բնականոն գործունեությունն իրականացնելիս բխվում է մի շարք ռիսկերի, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ իր ֆինանսական վիճակի և արդյունքների վրա: Ցանկացած ներդրող մինչև Պարտատոմսերում ներդրում կատարելը պետք է ամբողջությամբ ուսումնասիրի այդ ռիսկերը, որոնք ներկայացված են ստորև:

**Մրցակցության ռիսկ.** ՀՀ-ում դեղերի շուկան բավականին մրցակցային է: Դեղամիջոցների ներկրմամբ, մեծածախ և մանրածախ վաճառքով են զբաղվում բազմաթիվ ընկերություններ: Խիստ մրցակցության պայմաններում մրցակից ընկերությունների կողմից գնային կամ ծախսային առավելություններ ունենալու դեպքում Թողարկողը կարող է բխվել հաճախորդների թվի նվազման, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ դրամական հոսքերի վրա:

**Մատակարարման շղթաների հետ կապված ռիսկ.** Թողարկողի կողմից վերջնական սպառողին անհրաժեշտ դեղերով ապահովելու համար ձևավորված մատակարարման շղթան ունի բավականին բարդ կառուցվածք, որը ներառում է դեղամիջոցների ավելի քան 100 արտադրողներ (որոնց մի մասից ներմուծվում են դեղերը, իսկ մյուս մասը տեղական ընկերություններ են), դեղերի ժամանակին և անհրաժեշտ պայմաններում տեղափոխումն ու պահպանումն ապահովող համակարգեր, ինչպես նաև Ընկերության ավելի քան 200 դեղատներից բաղկացած դեղատնային ցանցը, 900-ից ավելի այլ դեղատներ (ներառված չեն Ընկերության դեղատները) և ավելի քան 160 բուժհաստատություններ: Արտադրողից մինչև վերջնական սպառողին անհրաժեշտ դեղամիջոցներով ապահովելիս կարող են առաջանալ բազմաթիվ խոչընդոտներ՝ կապված դեղեր արտադրողների գործունեության խաթարումների, իրենց գործունեության երկրներում դեղերի արտադրության և շրջանառության կարգավորման խստացումների, դեղերի տեղափոխման ուշացումների, դրանց պահպանման պայմանների խաթարումների, ինչպես նաև դեղերի որակի հսկողության ձախողումների հետ: Նշված իրադարձությունները կարող են հանգեցնել անհրաժեշտ դեղորայքի պակասորդի, ներմուծված դեղերի պիտանելիության կորստի, ինչպես նաև Ընկերության համար տարաբնույթ ծախսերի մեծացման, որոնք էլ, հետևաբար, կարող են պատճառ հանդիսանալ շուկայում Թողարկողի մասնաբաժնի

կրճատման, վերջինիս նկատմամբ վատահոլության կորստի և ի վերջո դրամական հոսքերի նվազման համար:

**Պաշարների կառավարման ռիսկ:** Դեղերն ունեն պիտանելիության հստակ ժամկետներ և պահպանման խիստ պայմաններ: Ուստի պաշարների օպտիմալ կառավարումն ունի կարևորագույն նշանակություն: Թողարկողի կողմից շուկայում դեղերի պահանջարկի ոչ ճշգրիտ գնահատումն ու կանխատեսումը կարող է հանգեցնել պաշարների ավելցուկի (ինչը կարող է մեծացնել պահպանման ծախսերը ու բացասաբար ազդել դեղերի պիտանելիության վրա) կամ պակասուրդի (ինչը կարող է կրճատել շուկայում Ընկերության մասնաբաժինը և վտանգել Ընկերության հեղինակությունը): Երկու պարագայում էլ Ընկերությունը կրում է դրամական հոսքերի նվազման ռիսկ՝ մի դեպքում հավելյալ ծախսերի, մյուս դեպքում բաց թողնված եկամտի տեսքով:

**Արտարժույթի ռիսկ:** Թողարկողն իրականացնում է դեղերի ներմուծում օտարերկրյա արտադրողներից, որոնց գծով վճարումները կատարվում են արտարժույթով: Իսկ Ընկերության եկամուտները մեծամասամբ ստացվում են դեղերի վաճառքից՝ ստացված ՀՀ դրամով: Արդյունքում տվյալ երկրների արժույթների՝ ՀՀ դրամի նկատմամբ փոխարժեքների տատանումները կարող են հանգեցնել եկամուտների նվազմանը կամ ծախսերի մեծացմանը:

**Ոլորտի կարգավորման դաշտի փոփոխությունների հետ կապված ռիսկ:** ՀՀ-ում դեղերի շրջանառության ոլորտը ենթարկվում է պետական խիստ կարգավորման: «Դեղերի մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության տեսակների լիցենզավորման, դեղերի ներմուծման, դեղերի պետական գրանցման և նույն օրենքով նախատեսված այլ պահանջների, ինչպես նաև ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված դրույթների և բնակչությանը դեղերով ապահովելու և դեղագործությունը զարգացնելու պետական քաղաքականության փոփոխությունները կարող են բացասաբար ազդել Թողարկողի եկամտի հիմնական աղբյուրների, ինչպես նաև ծախսերի վրա՝ վտանգելով Թողարկողի մրցունակությունը:

**Կիրերհարձակումների ռիսկ:** Թողարկողը կիրառում է տարաբնույթ տեղեկատվական տեխնոլոգիաներ՝ դեղերի ներմուծումն ու մատակարարումն ապահովելու, դեղերի գրանցումներն ու որակի վերահսկողությունն իրականացնելու, ինչպես նաև դեղերի և դեղատոմսերի վերաբերյալ տեղեկատվությունը պահպանելու և օնլայն դեղատոմսը գործարկելու համար: Կիրերհարձակումները կարող են Ընկերության նորմալ գործունեության խաթարման պատճառ հանդիսանալ, ինչպես նաև հանգեցնել հաճախորդների, դեղերի, դեղատոմսերի վերաբերյալ և այլ գաղտնի տեղեկատվության արտահոսքի՝ այդպիսով վտանգելով Թողարկողի հեղինակությունը:

**Տնտեսական, քաղաքական, սոցիալական և առողջապահական ռիսկեր:** Դեղերի մանրամեծածախ վաճառքի գործունեության հաջողությունը սերտորեն կապված է ՀՀ-ում ընդհանուր տնտեսական, սոցիալական և քաղաքական զարգացումների հետ: ՀՀ-

ում տնտեսական կամ սոցիալական վիճակի վատթարացումը և քաղաքական անկայունությունը կարող են բացասաբար ազդել հաճախորդների վճարունակության և ընդհանուր վաճառքի ծավալների վրա: Բացի այդ, առողջապահական խնդիրների (այդ թվում՝ համաճարակների, պանդեմիաների) անսպասելի տարածումն Ընկերության համար լուրջ մարտահրավերներ կարող է ստեղծել՝ կապված անհրաժեշտ դեղորայքի պահանջարկն ապահովելու և մատակարարման շղթայի անխափան գործունեությունը պահպանելու հետ:

### 1.2.2 Պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

**Տոկոսադրույքի ռիսկ:** Շուկայում Պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն տոկոսադրույքների բարձրացումը, այլ հավասար պայմաններում, հանգեցնում է Պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

**Շուկայական ռիսկ:** Երկրորդային շուկայում Պարտատոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող են նվազել ներքին/միջազգային տնտեսություններում տնտեսական ընթացիկ ցուցանիշների և դրանց փոփոխությունների սպասումների հետ կապված: Ներդրողը պետք է հաշվի առնի, որ արժեթղթերի գները շուկայում կարող են ժամանակի ընթացքում իջնել կամ բարձրանալ:

**Վերաներդրման ռիսկ:** Վերաներդրման ռիսկը պայմանավորված է Պարտատոմսերից պարբերաբար ստացվող արժեկտրոնային եկամուտների առնվազն համարժեք եկամտաբերությամբ (ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությամբ) ներդրում կատարելու հնարավորության բացակայությամբ:

**Վարկային/դեֆոլտի ռիսկ:** Ներդրողները Պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում Թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում Թողարկողի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման, արժեկտրոնային վճարումներ իրականացնելու կամ Պարտատոմսերն իրենց անվանական արժեքով մարման անհնարիության և հավանական սնանկացման հետ:

**Արտարժույթային ռիսկ:** Արտարժույթային ռիսկն առկա է այն ներդրողների մոտ, ովքեր, իրենց դրամական միջոցները Պարտատոմսերում ներդնելու նպատակով, պետք է փոխարկեն մի արժույթից մեկ այլ արժույթի:

**Իրացվելիության ռիսկ:** Թողարկողը չի կարող երաշխավորել, որ Պարտատոմսերի շրջանառության ողջ ժամկետի ընթացքում ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել Պարտատոմսերը երկրորդային շուկայում (կարգավորվող շուկայում) իրենց համար տնտեսապես շահավետ գնով:

**Գնաճի կամ գնադուրսակության ռիսկ:** ՀՀ-ում գնաճի առկայության պարագայում, Թողարկողի կողմից Պարտատոմսերի դիմաց առաջարկվող անվանական արժեկտրոնային եկամտաբերությունը գնահատելիս ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրական եկամտաբերությունը կարող է լինել անվանական արժեկտրոնային եկամտաբերությունից ավելի ցածր:

### **1.3 Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները**

Ընկերությունը դեղերի ներմուծման և մանրամեծածախ վաճառքի իրականացման համար ՀՀ առողջապահության նախարարությունից ստացել է անհրաժեշտ բոլոր լիցենզիաները, որոնք ներկայացված են [Ազդագրի 3.4.1](#) ենթագլխում:

2024թ.-ին Ընկերության ընդհանուր հասույթը կազմել է շուրջ 34.6 մլրդ ՀՀ դրամ, որի աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 3.2%: Հասույթի շուրջ 54%-ը ստացվել է մեծածախ վաճառքից: Ընդհանուր հասույթում դեղորայքից ստացված եկամուտները կազմել են շուրջ 70%, իսկ մնացած 30%-ը ստացվել է կոսմետիկայի և բիոակտիվ հավելումների, ինչպես նաև մանկական սեզմենտի, բժշկական սարքավորումների և այլ կատեգորիայի ապրանքների վաճառքից:

Նշենք, որ նախորդ տարիների համեմատ հասույթի աճի տեմպը որոշ չափով դանդաղել է՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով, մասնավորապես՝ դեղերի վաճառքի աճի տեմպի և մանկական սեզմենտի ապրանքների վաճառքների որոշակի նվազմամբ: Բացի այդ, 2024թ.-ին ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունների համաձայն՝ արգելվել է դեղատներից մի շարք դեղամիջոցների ձեռքբերումն առանց բժշկի կողմից տրված էլեկտրոնային դեղատոմսի: Սրա հետևանքով Ընկերությունը կրել է մրցակցային դիրքի որոշակի կորուստ այն դեղատների համեմատ, որոնք, միգրացե, օրենքի պահանջներին հետևում են ոչ ամբողջությամբ: Այնուամենայնիվ, 2021-2024թթ. Ընկերությանը հաջողվել է ապահովել ընդհանուր եկամուտների միջինում տարեկան 5.7% աճ:

2024թ.-ին Ընկերության զուտ շահույթը կազմել է շուրջ 1.88 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ տարիների համեմատ որոշակի անկում է ունեցել՝ պայմանավորված հիմնականում շուկայում առկա գնային ուժեղ մրցակցությամբ: Զուտ շահույթի մարժան կազմել է շուրջ 5%: Սակայն պետք է նշել, որ 2021-2024թթ. Ընկերությունը կարողացել է ապահովել զուտ շահույթի միջինում տարեկան 4.6% աճ:

2025թ.-ի 1-ին կիսամյակի դրությամբ Ընկերության ընդհանուր հասույթը կազմել է 18.6 մլրդ ՀՀ դրամ, իսկ զուտ շահույթը՝ 873.8 մլն ՀՀ դրամ՝ մոտ 5% մարժայի պահպանմամբ: Հասույթի շուրջ 53%-ը ստացված է մեծածախ վաճառքից: Ընդհանուր առմամբ, վերջին տարիներին մեծածախ վաճառքից եկամուտները կազմել են Ընկերության ընդհանուր հասույթի ավելի քան 50%-ը:

Չնայած ոլորտում առկա ուժեղ մրցակցությանը, դեղերի ներմուծմամբ և դեղատնային գործունեությամբ զբաղվող անձանց մեծ թվի, ինչպես նաև շահույթի փոքր

մարժանների՝ Ընկերության ղեկավարությունն ակնկալում է պահպանել եկամուտների, շահույթի և դրամական հոսքերի կայուն աճն առաջիկա տարիների ընթացքում՝ հաշվի առնելով Ընկերության կողմից ներմուծվող և վաճառվող արտադրանքների տեսականու ընդլայնման, եկամուտների և ապրանքների տարատեսականացման, նորարարությունների ակտիվ կիրառման, էլեկտրոնային առևտրի աճի, դեղատնային ցանցի ընդլայնման և այլ ռազմավարական ուղղությունների զարգացումները:

Թողարկողը ներգրավված չէ դատական, արբիտրաժային և (կամ) վարչական որևէ վարույթում, որը ունեցել կամ կարող է ունենալ էական ազդեցություն Թողարկողի ֆինանսական վիճակի կամ արդյունքների վրա: Բացի այդ, մոտակա տարիներին չեն սպասվում այնպիսի կազմակերպական փոփոխություններ, որոնք կարող են ունենալ էական ազդեցություն Ընկերության ընթացիկ գործունեության վրա:

Թողարկողի տնտեսական գործունեության վրա էական ազդեցություն կարող են ունենալ շահութաբեր ապրանքային խմբերի զարգացումը, որոնց թվին են պատկանում կոսմետիկայի, բիոակտիվ հավելումների շարունակական աճը, օրթոպեդիկ ուղղության զարգացումը, շուկայում առկա նոր թրենդերի ներկայացումը, ներուժի բացահայտումը և հետագա զարգացումը:

Ընկերությունն ունի նաև արտադրական գործունեություն, որի պատշաճ զարգացումը, դեղերի ժամանակին և արագ գրանցումը ևս կարող է հիմք հանդիսանալ շահութաբեր արտադրական ուղղության ընդլայնման և ֆինանսական վիճակի հետագա բարելավման համար:

#### **1.4 Թողարկողի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին տեղեկություններ**

Թողարկողի 2023 և 2024 թթ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է «Փրայստոյթերհաուս Կուպերս Արմենիա» ՍՊԸ-ն:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2

հեռ.՝ +374 10 512151

կայք՝ [www.pwc.am](http://www.pwc.am)

#### **1.5 Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և խոշոր մասնակիցները**

Թողարկողի կառավարման մարմիններն են Ընկերության ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ընդհանուր Ժողով), Տնօրենների խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) և գործադիր մարմինը (այսուհետ՝ Գլխավոր տնօրեն):

• **Թողարկողի Հնդանուր ժողովի մասնակիցների կառուցվածքը**

Մասնակից	Բաժնեմաս (ՀՀ դրամ)	Բաժնեմաս (%)
Ռազմիկ Հովհաննիսյան	207,909,000	35.54
«Ալտա Ֆարմայութիքըլս» ՍՊԸ	168,831,000	28.86
Սամվել Շիլաջյան	102,726,000	17.56
Արմեն Ղահրամանյան	53,995,500	9.23
Հարություն Շատվորյան	18,018,000	3.08
Անժելա Մոլախյան	18,018,000	3.08
Կարապետ Ռնուպողյան	15,502,500	2.65

• **Թողարկողի Խորհրդի կառուցվածքը**

Անունը, ազգանունը	Պաշտոնը	Փորձառությունը ոլորտում
Արտյոմ Հովհաննիսյան	Խորհրդի նախագահ	Ավելի քան 20 տարի
Սամվել Շիլաջյան	Խորհրդի անդամ, Հնկերության դեղատնային ցանցի տնօրեն	Ավելի քան 30 տարի
Հարություն Շատվորյան	Խորհրդի անդամ, Հնկերության կոմերցիոն տնօրեն	Ավելի քան 30 տարի
Բայան Դոտչև	Խորհրդի անդամ	Ավելի քան 11 տարի
Գեորգի Հորոզով	Խորհրդի անդամ	Ավելի քան 15 տարի

• **Թողարկողի գործադիր մարմնի կառուցվածքը**

Անունը, ազգանունը	Պաշտոնը	Փորձառությունը ոլորտում
Միքայել Մացակյան	Գլխավոր տնօրեն	10 տարի

2025թ. հունիսի 30-ի դրությամբ Թողարկողն իր փոխկապակցված ընկերությունների հետ ունեւր 1,081 աշխատակից, որից՝ 869-ը «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ում, 196-ը «Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ում, իսկ 16-ը «Էյ Լաբ ֆարմայութիքըլս» ՍՊԸ-ում: Աշխատակիցների կազմում են դեղագետներ, դեղագործներ, վաճառքի օպերատորներ, պահեստի աշխատակցիներ և այլն: Աշխատակիցների քանակը վերջին երկու տարում ավելացել է շուրջ 5%-ով:

## 1.6 Առաջարկվող արժեթղթերի հիմնական վիճակագրական տվյալները

Թողարկվող Պարտատոմսերն անվանական ոչ փաստաթղթային են, բաժանելի չեն և փոխարկելի չեն:

Պարտատոմսերի դիմաց տոկոսային եկամուտը վճարվելու է արժեկտրոնների տեսքով:

Պարտատոմսերի թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը կազմում է 1,500,000,000 (մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ: Թողարկվող և տեղաբաշխվող (վաճառվող) Պարտատոմսերի քանակը 15,000 (տասնհինգ հազար) հատ է: Մեկ Պարտատոմսի անվանական արժեքը կազմում է 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ:

Թողարկման արժույթը ՀՀ դրամն է:

Պարտատոմսերի ձեռքբերման նվազագույն քանակը 5 (հինգ) հատ է՝ բացառությամբ այն դեպքի, երբ հասանելի պարտատոմսերի քանակը փոքր է 5 (հինգ) հատից:

Պարտատոմսերը տեղաբաշխվելու և մարվելու են ՀՀ դրամով:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտը հաշվարկվելու և վճարվելու է ՀՀ դրամով:

Պարտատոմսերի դիմաց հաշվարկվելու և վճարվելու է արժեկտրոնային անվանական եկամուտ, որի տարեկան մեծությունը, արտահայտված որպես տոկոս Պարտատոմսի անվանական արժեքից (տարեկան արժեկտրոնային եկամտաբերություն), կազմում է 11.3% (տասնմեկ ամբողջ երեք տասնորդական տոկոս):

Պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային անվանական եկամուտը վճարվելու է տարեկան պարբերականությամբ՝ Պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային եկամտաբերության չափով:

Արժեկտրոնների հաշվարկման օր է համարվելու Ազդագրի [1.7](#) և [2.4 գլուխներով](#) սահմանված Պարտատոմսերի տեղաբաշխումն սկսելու օրվան հաջորդող 12-րդ, 24-րդ և 36-րդ ամիսների համապատասխան օրերը:

Պարտատոմսերի վաղաժամկետ մարման հնարավորություն (թողարկողի կամ ներդրողի նախաձեռնությամբ (քոլ օպցիոն, փութ օպցիոն)) նախատեսված չէ:

Ընկերությունը Պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված միջոցները ուղղելու է կապիտալ ծախսերի իրականացմանը:

## 1.7 Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը

Պարտատոմսերը տեղաբաշխվելու են կարգավորվող շուկայից դուրս, ուղիղ վաճառքի միջոցով:

Պարտատոմսերի տեղաբաշխումը սկսվելու է Ազդագիրը գրանցելու մասին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ նաև՝ ՀՀ ԿԲ) նախագահի որոշման օրվան հաջորդող 10-րդ (տասներորդ) աշխատանքային օրը և ավարտվելու է տեղաբաշխման սկիզբը համարվող օրվան հաջորդող 40-րդ (քառասուներորդ) աշխատանքային օրը (կամ ավելի վաղ, եթե Պարտատոմսերն ամբողջությամբ վաճառվեն ավելի կարճ ժամկետում):

## 1.8 Ամփոփ ֆինանսական տվյալներ

### 1.8.1 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

հազ. դրամ

Ցուցանիշի անվանումը	2025թ. I-ին կիսամյակ (Մուղիտ չանցած)	2024թ. (Մուղիտ անցած)	2023թ. (Մուղիտ անցած)	2022թ. (Մուղիտ անցած)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	18,624,635	34,593,602	33,516,715	31,307,520
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	(14,408,716)	(27,072,318)	(25,404,479)	(24,238,419)
<b>Համախառն շահույթ (վնաս)</b>	<b>4,215,919</b>	<b>7,521,284</b>	<b>8,112,236</b>	<b>7,069,101</b>
Իրացման ծախսեր	(2,736,852)	(4,566,589)	(4,485,699)	(3,853,265)
Վարչական ծախսեր	(407,658)	(685,817)	(782,086)	(702,599)
<b>Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)</b>	<b>1,071,409</b>	<b>2,268,878</b>	<b>2,844,451</b>	<b>2,513,237</b>
Գործառնական այլ եկամուտներ	142,189	392,583	189,043	343,382
Գործառնական այլ ծախսեր	(69,697)	(140,263)	(120,655)	(215,718)
<b>Գործառնական շահույթ (վնաս)</b>	<b>1,143,901</b>	<b>2,521,198</b>	<b>2,912,839</b>	<b>2,640,901</b>
Ֆինանսական ծախսեր/եկամուտ	(51,652)	(232,106)	(146,250)	(142,539)
<b>Մովորական գործունեությունից շահույթ (վնաս)</b>	<b>1,092,248</b>	<b>2,289,092</b>	<b>2,766,589</b>	<b>2,498,362</b>
Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս)	-	-	-	-
<b>Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը</b>	<b>1,092,248</b>	<b>2,289,092</b>	<b>2,766,589</b>	<b>2,498,362</b>
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	(218,450)	(411,870)	(538,296)	(466,835)
<b>Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո</b>	<b>873,799</b>	<b>1,877,222</b>	<b>2,228,293</b>	<b>2,031,527</b>

### 1.8.2 ԱՄՓՈՓ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵՎԵՐԻՆ

հազ. դրամ

Ցուցանիշի անվանումը	2025թ. I-ին կիսամյակ (Մուղիտ չանցած)	2024թ. (Մուղիտ անցած)	2023թ. (Մուղիտ անցած)	2022թ. (Մուղիտ անցած)
Հիմնական միջոցներ	3,177,374	3,057,147	2,898,299	2,737,722
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	97,443	97,443	127,640	115,751
Ոչ նյութական ակտիվներ	252,373	224,545	251,318	170,317

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	2,623,672	2,623,672	1,588,025	1,797,667
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	139,094	145,985	153,489	188,399
<b>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</b>	<b>6,289,956</b>	<b>6,148,792</b>	<b>5,018,771</b>	<b>5,009,856</b>
Պաշարներ	9,334,485	9,789,807	8,193,698	7,701,405
Տրված ընթացիկ կանխավճարներ	1,829,146	453,773	0	0
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	1,983,959	1,688,655	2,324,081	1,762,398
Այլ դեբիտորական պարտքեր	563,265	540,345	725,867	608,536
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	179,210	259,455	308,815	1,031,201
Այլ ընթացիկ ակտիվներ	147,111	0	0	0
<b>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</b>	<b>14,037,176</b>	<b>12,732,035</b>	<b>11,552,461</b>	<b>11,103,540</b>
<b>Ընդամենը ակտիվներ</b>	<b>20,327,131</b>	<b>18,880,827</b>	<b>16,571,232</b>	<b>16,113,396</b>
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի գուտ գումար	1,229,845	1,229,845	1,229,845	1,229,845
Էմիսիոն եկամուտ	0	0	0	0
Կուտակված շահույթ	9,505,917	9,715,118	9,237,896	8,272,603
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>	<b>10,735,762</b>	<b>10,944,963</b>	<b>10,467,741</b>	<b>9,502,448</b>
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	42,171	85,978	51,494	332,417
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	2,135,564	2,135,564	1,357,351	1,359,275
<b>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</b>	<b>2,177,735</b>	<b>2,221,542</b>	<b>1,408,845</b>	<b>1,691,692</b>
Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	1,680,614	1,075,888	429,293	238,700
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	2,773,571	3,192,126	2,773,265	2,910,980
Այլ կրեդիտորական պարտքեր	577,422	458,654	664,307	639,681
Այլ ընթացիկ պարտավորություններ	2,382,027	987,654	827,781	1,129,895
<b>Ընդամենը ընթացիկ պարտավորություններ</b>	<b>7,413,634</b>	<b>5,714,322</b>	<b>4,694,646</b>	<b>4,919,256</b>
<b>Ընդամենը պարտավորություններ</b>	<b>9,591,369</b>	<b>7,935,864</b>	<b>6,103,491</b>	<b>6,610,948</b>
<b>Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ</b>	<b>20,327,131</b>	<b>18,880,827</b>	<b>16,571,232</b>	<b>16,113,396</b>

### 1.8.3 ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ

հազ.դրամ

Ցուցանիշի անվանումը	2025թ. I-ին կիսամյակ (Մուղիտ չանցած)	2024թ. (Մուղիտ անցած)	2023թ. (Մուղիտ անցած)	2022թ. (Մուղիտ անցած)
<b>Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին</b>	<b>259,455</b>	<b>308,815</b>	<b>1,031,201</b>	<b>211,061</b>
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր	(369,164)	2,131,458	2,064,097	3,349,305
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր	(272,000)	(373,494)	(474,895)	(293,829)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր	560,919	(1,808,129)	(2,309,263)	(2,266,401)
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	0	805	(2,325)	31,065
<b>Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին</b>	<b>179,210</b>	<b>259,455</b>	<b>308,815</b>	<b>1,031,201</b>

### 1.8.4 ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Ցուցանիշի անվանումը	2025թ. I-ին կիսամյակ	2024	2023	2022
Չուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	937	2,013	2,390	2,179
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	8.1%	17.5%	22.3%	22.7%
Ակտիվների շահութաբերություն (ROA)	4.5%	10.6%	13.6%	13.2%
Չուտ շահույթի մարժա (NPM)	4.7%	5.4%	6.6%	6.5%
Կապիտալի համարժեքության գործակից	0.53	0.58	0.63	0.59
Ֆինանսական կայվածության գործակից	0.89	0.73	0.58	0.70
Բացարձակ իրացվելիության գործակից	0.02	0.05	0.07	0.21
Ընթացիկ իրացվելիության գործակից	0.61	0.51	0.72	0.69
Ընդհանուր իրացվելիության գործակից	1.89	2.23	2.46	2.26
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից*	10.1	17.2	16.4	17.3

Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով*	18.0	21.2	22.3	21.1
Պաշարների շրջանառելիության գործակից*	1.5	3.0	3.2	3.2
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով*	242.2	121.2	114.2	113.9
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից*	4.8	9.1	8.9	8.9
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով*	37.8	40.2	40.8	41.1

\* Ներկայացված ցուցանիշները միջինացված են

Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ներկայացված են [Հավելված 1](#)-ում:

## ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՍՈՎ) ԿՐՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԵԹԵ ԱՅՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ Է ԱԶԴԱԳՐԻ ՄՅՈՒՄ ՄԱՍԵՐԻ ՀԵՏ ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

# ՄԱՍ 2 ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## 2.1 Ռիսկային գործոններ

**Տոկոսադրույքի ռիսկ:** Տնտեսությունում տոկոսադրույքների փոփոխությունը կարող է հանգեցնել ներդրողների կողմից Պարտատոմսերի նկատմամբ եկամտաբերության ցուցանիշի վերանայման: Ընդ որում, երկրորդային շուկայում Պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն տոկոսադրույքների բարձրացումն, այլ հավասար պայմաններում, հանգեցնում է Պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

**Շուկայական ռիսկ:** Երկրորդային շուկայում Պարտատոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող են (կարճաժամկետ կամ երկարաժամկետ ժամանակամիջոցում) նվազել ներքին և միջազգային տնտեսություններում տնտեսական ընթացիկ ցուցանիշների և դրանց փոփոխությունների սպասումների հետ կապված: Ներդրողը պետք է հաշվի առնի, որ Պարտատոմսերի գները շուկայում կարող են տատանվել և ժամանակի ընթացքում կարող են իջնել կամ բարձրանալ: Միևնույն ժամանակ ներդրողը պետք է հաշվի առնի, որ, անկախ շուկայում գների փոփոխություններից և սպասումներից, Թողարկողի կողմից վճարվող արժեկտրոնների և Պարտատոմսի մարման գումարային մեծություններն, արտահայտված թողարկման արժույթով, չեն փոփոխվում:

**Վերաներդրման ռիսկ:** Այն բոլոր ներդրողները, որոնք Պարտատոմսերը ձեռք կբերեն դրանք մինչև մարումը պահելու և ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությունն ապահովելու ու ստանալու համար, պետք է նկատի ունենան, որ իրենց վրա են վերցնում վերաներդրման ռիսկ, որը պայմանավորված է Պարտատոմսերից պարբերաբար ստացվող արժեկտրոնային եկամուտներն առնվազն համարժեք եկամտաբերությամբ (ձեռք բերման/գնման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությամբ) ներդնելու հնարավորությունների հավանական բացակայությամբ:

**Վարկային (դեֆոլտի) ռիսկ:** Ներդրողները Պարտատոմսերը ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում Թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում Թողարկողի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման, արժեկտրոնային վճարումներ իրականացնելու կամ Պարտատոմսերն իրենց անվանական արժեքով մարելու անհնարինության և հավանական սնանկացման հետ:

**Արտարժույթային ռիսկ:** Պարտատոմսերն արտահայտված են ՀՀ դրամով, և հետևապես, ներդրումները և ներդրումների ետ ստացումը (Պարտատոմսերի ձեռք բերման և Պարտատոմսերի մարման դիմաց ստացվող գումարներ) իրականացվելու են ՀՀ դրամով: Ուստի, այս իմաստով արտարժույթային ռիսկն առկա է այն ներդրողների մոտ, ովքեր, իրենց դրամական միջոցները, Պարտատոմսերում ներդնելու նպատակով, պետք է փոխարկեն մի արժույթից մեկ այլ արժույթի:

**Իրացվելիության ռիսկ:** Թողարկողը Պարտատոմսերը ցուցակելու և/կամ առևտրին թույլատրելու նպատակով դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ (այսուհետ նաև՝ Բորսա կամ Ֆոնդային բորսա), ինչպես նաև երկրորդային շուկայում Պարտատոմսերի իրացվելիությունն ապահովելու համար ներգրավելու է շուկա ստեղծող/ներ: Այնուամենայնիվ, Թողարկողը չի կարող երաշխավորել, որ Պարտատոմսերի շրջանառության ողջ ժամկետի ընթացքում ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել Պարտատոմսերը երկրորդային շուկայում իրենց համար տնտեսապես շահավետ գնով և ծավալով:

**Գնաձի կամ գնողունակության ռիսկ:** Գնաձի առկայության պարագայում, Թողարկողի կողմից Պարտատոմսերի դիմաց առաջարկվող անվանական արժեկտրոնային եկամտաբերությունը գնահատելիս ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրական եկամտաբերությունը կարող է լինել անվանական արժեկտրոնային եկամտաբերությունից ավելի ցածր (գնաձի չավոլ):

## 2.2 Հիմնական տեղեկատվություն

Ընկերությունը Պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված միջոցներն ուղղելու է կապիտալ ծախսերի իրականացմանը:

Թողարկողը հավաստիացնում է, որ Պարտատոմսերի տեղաբաշխումից ներգրավված միջոցները որևէ կերպ չի օգտագործի կամ փոխառություն տրամադրի կամ այլ կերպ հասանելի դարձնի որևէ այլ անձի, որպեսզի՝ (ա) ուղղակիորեն կամ անուղղակիորեն ֆինանսավորի որևէ անձի հետ ցանկացած գործունեություն կամ բիզնես, որը նման ֆինանսավորման պահին կհանդիսանա ԱՄՆ կառավարության, ՄԱԿ-ի, Եվրոպական Միության (կամ նրա անդամ պետություններից որևէ մեկի), Միացյալ Թագավորության, Շվեյցարիայի, Կանադայի, Ճապոնիայի կամ նշվածներից որևէ մեկի կառավարական հաստատությունների և գործակալությունների կողմից կիրառվող որևէ պատժամիջոցի կամ սահմանափակող միջոցների (այսուհետ՝ Պատժամիջոցներ) առարկա կամ թիրախ, (բ) ուղղակիորեն կամ անուղղակիորեն ֆինանսավորի որևէ երկրում/տարածքում կամ երկիրը/տարածքը ներառող կամ երկրի/տարածքի կողմից ցանկացած գործունեություն կամ բիզնես, որը հանդիսանում է երկրի/տարածքի նկատմամբ կիրառվող Պատժամիջոցների առարկա կամ թիրախ, կամ (գ) որևէ այլ ձևով հանգեցնի որևէ անձի (ներառյալ Ազդագրի ներքո Պարտատոմսերի տեղաբաշխմանը մասնակցող ցանկացած անձի, լինի դա Տեղաբաշխող, խորհրդատու, ներդրող կամ այլ անձ) կողմից Պատժամիջոցների խախտման:

## **2.3 Տեղեկատվություն՝ կապված առաջարկվող (կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող) արժեթղթերի հետ**

### **2.3.1 Արժեթղթերի տեսակը և դասը**

Թողարկվող Պարտատոմսերն անվանական արժեկտրոնային պարտատոմսեր են, անբաժանելի են և փոխարկելի չեն: Պարտատոմսերը դեռևս չունեն տարբերակիչ ծածկագիր:

### **2.3.2 Երկիրը**

Պարտատոմսերը թողարկվել են ՀՀ տարածքում՝ համաձայն ՀՀ օրենսդրության և ենթաօրենսդրական ակտերի: Վեճերի և դատական գործընթացների առկայության դեպքերում վերջիններս կարգավորվելու են ՀՀ օրենսդրության համաձայն:

### **2.3.3 Արժեթղթերի ձևը**

Թողարկված Պարտատոմսերը ոչ փաստաթղթային են, իսկ Պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը կվարի «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ը (ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 26/1 5-րդ հարկ, հեռ.՝ (+374) 60 615555)՝ ըստ «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Դեպոզիտարիա) համապատասխան կանոնների և ընթացակարգերի:

### **2.3.4 Արժեթղթի անվանական արժեքը և քանակը**

Մեկ Պարտատոմսի անվանական արժեքը կազմում է 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ: Թողարկվող և տեղաբաշխվող (վաճառվող) Պարտատոմսերի քանակը 15,000 (տասնհինգ հազար) հատ է:

### **2.3.5 Թողարկման արժույթը**

Թողարկման արժույթը ՀՀ դրամն է:

### **2.3.6 Առաջարկվող արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն**

Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի՝ Թողարկողի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ՝

- 1) առաջին հերթին բավարարվում են լուծարվող իրավաբանական անձի գույքի գրավով ապահովված պարտավորությունների մասով պարտատերերի պահանջները.
- 2) երկրորդ հերթին բավարարվում են այն քաղաքացիների պահանջները, որոնց առջև լուծարվող իրավաբանական անձը պատասխանատվություն է կրում

- նրանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար՝ համապատասխան պարբերական վճարումների կապիտալացման միջոցով.
- 3) երրորդ հերթին վճարվում է աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց արձակման նպաստների, աշխատավարձի և հեղինակային պայմանագրերով վարձատրությունը.
  - 4) չորրորդ հերթին մարվում է պետական բյուջե կատարվող պարտադիր վճարների պարտքը.
  - 5) հինգերորդ հերթին հաշվարկներ են կատարվում մնացած պարտատերերի հետ՝ բացառությամբ ստորադաս փոխառություններով պարտատերերի.
  - 6) վեցերորդ հերթին հաշվարկներ են կատարվում ստորադաս փոխառություններով պարտատերերի հետ:

Յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո: Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարվում են հինգերորդ հերթին:

Եթե լուծարումը պայմանավորված է Թողարկողի սնանկությամբ, ապա պարտատերերի պահանջները բավարարվում են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

### 2.3.7 Արժեթղթերից բխող իրավունքները

Պարտատոմսերից բխող իրավունքներն են.

- 1) ստանալ Պարտատոմսերով նախատեսված արժեկտրոնային եկամուտները և մարման գումարը՝ ըստ Ազդագրով սահմանված կարգի: Արժեկտրոնային եկամտի ստացման և շրջանառության ժամկետի վերջում Պարտատոմսերի մարման գումարի ստացման իրավունքի իրականացման համար ներդրողներից լրացուցիչ գործողությունների կատարում չի պահանջվում, և արժեկտրոնային եկամուտն, ինչպես նաև Պարտատոմսի մարման գումարը փոխանցվելու են ներդրողի բանկային հաշվին՝ համաձայն Դեպոզիտարիայի և Հաշվի օպերատորի հետ կնքվելիք Արժեթղթերի գծով եկամուտների փոխանցման եռակողմ պայմանագրի (այսուհետ՝ Եռակողմ պայմանագիր),
- 2) Թողարկողի կողմից Պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սահմանված ժամկետից ուշ վճարելու դեպքում ձեռնարկել Պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող իր պահանջների բավարարման ուղղությամբ օրենսդրությամբ թույլատրվող գործողություններ,
- 3) Գրավադրել Պարտատոմսերն օրենսդրությամբ սահմանված կարգով,

4) Իր ցանկությամբ օտարել Պարտատոմսերը Ֆոնդային բորսայում (Ֆոնդային բորսայում ցուցակված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված կարգով: Ընդ որում, ներդրողները պետք է հաշվի առնեն, որ Օրենքով արգելվում է կարգավորվող շուկայից (ֆոնդային բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված կորպորատիվ արժեթղթեր,

5) Օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

Միաժամանակ Պարտատոմսի սեփականատերը պարտավոր է Պարտատոմսերի թողարկման պայմաններով սահմանված ժամկետներում իրականացնել Պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարների փոխանցում համապատասխան բանկային հաշվին, կատարել Պարտատոմսերի ձեռքբերումից, օտարումից և այլ գործողություններից ծագող դրամային և ոչ դրամային ցանկացած պարտավորություն, ինչպես նաև կրել օրենսդրությամբ նախատեսված այլ պարտականություններ:

### **2.3.8 Անվանական տոկոսադրույքը և այդ տոկոսների վճարման պայմանները**

Պարտատոմսերի դիմաց հաշվարկվելու և վճարվելու է արժեկտրոնային անվանական եկամուտ, որի տարեկան մեծությունը, արտահայտված որպես տոկոս Պարտատոմսի անվանական արժեքից (տարեկան արժեկտրոնային եկամտաբերություն), կազմում է 11.3% (տասնմեկ ամբողջ երեք տասնորդական տոկոս):

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտը հաշվարկվելու և վճարվելու է ՀՀ դրամով:

Պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային անվանական եկամուտը վճարվելու է տարեկան պարբերականությամբ՝ Պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային եկամտաբերության չափով:

Արժեկտրոնների հաշվարկման օր է համարվելու Ազդագրի [1.7](#) և [2.4 գլուխներով](#) սահմանված Պարտատոմսերի տեղաբաշխումն սկսելու օրվան հաջորդող 12-րդ, 24-րդ և 36-րդ ամիսների համապատասխան օրերը:

Արժեկտրոնները Պարտատոմսերի սեփականատերերին և/կամ անվանատերերին վճարվելու են արժեկտրոնների հաշվարկման օրը: Եթե հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնը վճարման օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Արժեկտրոնները (տոկոսագումարները) ստանալու իրավունք ունեն Պարտատոմսերի արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրվա վերջի դրությամբ

Պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք (սեփականատերերը կամ անվանատերերը):

Արժեկտրոնների վճարումների համար նախատեսվող գումարներն անվանատերերին և/կամ սեփականատերերին վճարվում են մինչև 0.1 ՀՀ դրամ ճշտությամբ (ընդ որում կլորացումը իրականացվում է թվաբանական կլորացման կանոններին համաձայն՝ մինչև ամենամոտ ամբողջ տասնորդական թիվը):

Համաձայն Եռակողմ պայմանագրի՝ Դեպոզիտարիան Թողարկողի հանձնարարությամբ և Հաշվի օպերատորի միջնորդությամբ Թողարկողին մատուցում է արժեթղթերի գծով եկամուտների փոխանցման և արժեթղթերի մարման ծառայություններ: Արժեկտրոնի գումարները վճարվում են անկանխիկ ձևով: Դրամական միջոցների այն մասը, որը հնարավոր չի լինի փոխանցել արժեթղթերի սեփականատիրոջը և/կամ անվանատիրոջը Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում Պարտատոմսի սեփականատերերի ռեեստրի փակման օրվա դրությամբ ռեեստրում գրանցված բանկային հաշիվների բացակայության կամ դրանց ճշտման անհնարինության պատճառով, կվերադարձվի Թողարկողի համապատասխան բանկային հաշվին: Այնուհետև Թողարկողը կգործադրի իրենից կախված բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողին բոլոր հնարավոր կապի միջոցներով հայտնաբերելու ու նրան վճարման ենթակա գումարը փոխանցելու համար: Ներդրողին հայտնաբերելու անհնարինության դեպքում վճարման ենթակա գումարը մուծվելու է նոտարի կամ դատարանի (օրենքով սահմանված դեպքերում) դեպոզիտ համաձայն ՀՀ օրենսդրության:

Համաձայն Եռակողմ պայմանագրի՝ Դեպոզիտարիան, արժեկտրոնի գումարների վճարման հիմքով, մինչև արժեկտրոնների վճարման օրվա ժամը 14:00 ՀՀ ԿԲ է ներկայացնում տեղեկատվություն Պարտատոմսի արժեկտրոնների վճարման փաստի մասին:

Արժեկտրոնի գումարի հաշվարկման համար հիմք է ընդունվում հետևյալ բանաձևը՝

$$ԱԳ = (FV \times C) / k,$$

որտեղ՝

ԱԳ-ն արժեկտրոնի գումարն է,

FV- մեկ Պարտատոմսի անվանական արժեքն է,

C- տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,

k-ն մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է (արժեկտրոնների տարեկան վճարման դեպքում k=1, կիսամյակային վճարման դեպքում՝ k=2):

Արժեկտրոնի կուտակումն իրականացվելու է հետևյալ բանաձևով՝

$$AI = FV \times \frac{C}{k} \times \frac{DCS}{DCC}$$

- AI – կուտակված արժեկտրոնային եկամուտն է,
- FV – մեկ Պարտատոմսի անվանական արժեքն է,
- C – տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,
- k – մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է, հաճախականությունը, (արժեկտրոնների տարեկան վճարման դեպքում k=1, կիսամյակային վճարման դեպքում՝ k=2),
- Օրերի հաշվարկման պայմանականությունը Պարտատոմսերի համար համարվում է Actual/Actual-ը, ընդ որում
  - DCS – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D2M2Y2 - D1M1Y1];
  - DCC – արժեկտրոնային փուլի օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D3M3Y3 - D1M1Y1];
  - D1M1Y1 – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է;
  - D2M2Y2 – գործարքի կատարման ամսաթիվն է;
  - D3M3Y3 – գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:

### 2.3.9 Արժեթղթերի մարման ժամկետը և արժեքը

Պարտատոմսերի մարման օր է համարվում տեղաբաշխումն սկսելու օրվան հաջորդող 36-րդ (երեսունվեցերորդ) ամսվա համապատասխան օրը:

Մեկ Պարտատոմսի մարման արժեքը 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ է:

Պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը փակվում է Պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրը: Պարտատոմսերի մարման գումարն իրավունք ունեն ստանալ մինչև ռեեստրի փակման պահը Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք:

Պարտատոմսերի մարման գումարները Պարտատոմսերի սեփականատերերին/անվանատերերին վճարվում են Պարտատոմսերի մարման օրը: Եթե մարման օրը ոչ աշխատանքային օր է, ապա մարման գումարները վճարվում են մարման օրվան հաջորդող աշխատանքային օրը:

Թողարկողը մարման գումարները վճարելու է անկանխիկ ձևով՝ համաձայն Եռակողմ պայմանագրի: Դրամական միջոցների այն մասը, որը հնարավոր չի լինի փոխանցել

արժեթղթերի սեփականատիրոջը և/կամ անվանատիրոջը Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում Պարտատոմսի սեփականատերերի ռեեստրի փակման օրվա դրությամբ ռեեստրում գրանցված բանկային հաշիվների բացակայության կամ դրանց ճշտման անհնարինության պատճառով, կվերադարձվի Թողարկողի համապատասխան բանկային հաշվին: Այնուհետև Թողարկողը կգործադրի իրենից կախված բոլոր ողջամիտ ջանքերը ներդրող(ներ)ին բոլոր հնարավոր կապի միջոցներով հայտնաբերելու ու նրան վճարման ենթակա գումարը փոխանցելու համար: Ներդրողին հայտնաբերելու անհնարինության դեպքում Թողարկողը վճարման ենթակա գումարը մուծելու է նոտարի կամ դատարանի (օրենքով սահմանված դեպքերում) դեպոզիտ՝ համաձայն ՀՀ օրենսդրության:

Համաձայն Եռակողմ պայմանագրի՝ Դեպոզիտարիան, հիմք ընդունելով մարման գումարների վճարման փաստը, մինչև մարման գումարների վճարման օրվա ժամը 14:00 ՀՀ ԿԲ է ներկայացնում տեղեկատվություն Պարտատոմսի մարման գումարների փաստացի վճարման մասին:

Պարտատոմսերի մարման դիմաց վճարումները կատարվելու են ՀՀ դրամով:

Հաշվի առնելով Պարտատոմսերի մարման հետ կապված միջբանկային փոխանցումների անհրաժեշտությունը՝ ներդրողները պետք է նկատի ունենան, որ մարման գումարների փոխանցման (միջբանկային փոխանցումներ) հետ կապված հնարավոր միջնորդավճարների ծախսերը պետք է կատարվեն ներդրողի հաշվին, հետևաբար նման դեպքերում ներդրողները մարման գումարները կստանան պահումներով՝ ըստ միջնորդ բանկերում /առկայության դեպքում/ գործող սակագների:

### 2.3.9.1 **Վաղաժամկետ մարման հնարավորություն**

Պարտատոմսերի վաղաժամկետ մարման հնարավորություն (Թողարկողի կամ ներդրողի նախաձեռնությամբ (քոլ օպցիոն, փուլ օպցիոն)) չի նախատեսվում:

### 2.3.10 **Արժեթղթերի տարեկան եկամտաբերությունը**

Պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը (մինչև մարումը տարեկան եկամտաբերություն, yield to maturity, YTM) տեղաբաշխման ընթացքում լինելու է անփոփոխ և հավասար Պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային եկամտաբերությանը. վերջինս կազմում է 11.3% (տասնմեկ ամբողջ երեք տասնորդական տոկոս):

### 2.3.11 **Նոր թողարկման մասին տեղեկատվություն**

Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման մասին որոշումն ընդունվել է Թողարկողի Ընդհանուր ժողովի 27.06.2025թ. թիվ 2025-1 որոշմամբ:

### 2.3.12 Արժեթղթերի ազատ շրջանառելիության սահմանափակումների նկարագրությունը

Թողարկողի կանոնադրությամբ կամ Պարտատոմսերի թողարկման/առաջարկի մասին Թողարկողի համապատասխան իրավասու մարմնի որոշմամբ (այսուհետ՝ Թողարկողի որոշում) Պարտատոմսերի թողարկման/տեղաբաշխման, ինչպես նաև Պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ որևէ այլ սահմանափակումներ չեն սահմանվում, բացի տեղաբաշխման ընթացքում վաճառքի գործարքի նվազագույն ծավալի սահմանափակումից: Համաձայն Թողարկողի կողմից սահմանված թողարկման պայմանների՝ տեղաբաշխման ընթացքում վաճառքի նվազագույն քանակը մեկ գործարքի համար կազմում է 5 (հինգ) հատ Պարտատոմս (բացառությամբ այն դեպքի, երբ հասանելի պարտատոմսերի քանակը փոքր է 5 (հինգ) հատից):

Պարտատոմսերի ազատ շրջանառության հետ կապված որևէ այլ սահմանափակումներ չկան՝ բացառությամբ Օրենքով և ենթաօրենսդրական ակտերով սահմանված դեպքերի:

Թողարկողը պարտադիր դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ Պարտատոմսերը ցուցակելու համար, և համաձայն գործող օրենսդրության՝ Պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս շրջանառությունը կարող է իրականացվել միայն Բորսայում:

Ներդրողները կարող են իրենց ցանկությամբ օտարել Պարտատոմսերը Ֆոնդային բորսայում (ցուցակված և առևտրին թույլատրված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ Օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, ներդրողները պետք է հաշվի առնեն, որ Օրենքով չի թույլատրվում կարգավորվող շուկայից (ֆոնդային բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված կորպորատիվ արժեթղթեր: Սույն պահանջի ներքո ՀՀ ԿԲ-ն կարող է բացառություններ սահմանել ներքոնշյալ գործարքների համար.

- մասնավոր գործարքների համար, այն է՝ գործարքներ, որոնց կողմերը նախապես հայտնի են,
- արժեթղթերի տեղաբաշխման նպատակով տեղաբաշխողների կողմից իրականացվող գործարքների համար,
- կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթերի՝ այլ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության և վաճառելու դեպքերի համար:

### 2.3.13 Արժեթղթերից ստացվող եկամուտների հարկումը

**Կարևոր ծանուցում:** Չնայած այն հանգամանքին, որ Թողարկողը, ներդնելով իր լավագույն ջանքերը և առկա գիտելիքները, սույն բաժնում ներկայացնում է արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման մոտեցումները ՀՀ-ում, այնուամենայնիվ Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ ներդրողներն այն չպետք է համարեն հարկային խորհրդատվություն և ներդրումներ անելիս հիմնվեն միայն այս բաժնում ներկայացված նյութի վրա: Թողարկողը չի երաշխավորում, որ ներդրողի կողմից Ազդագրի ստացման և ծանոթացման պահին հարկային օրենսդրությունը կհամապատասխանի ներկայացվածին, կամ համարժեքորեն կիրառություն կունենա ՀՀ հարկային մարմինների կողմից և ցանկացած պարագայում խորհուրդ է տալիս օգտվել մասնագիտացված հարկային խորհրդատվության ծառայություններից: Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ սույնով զերծ է մնում ցանկացած ներդրողի հնարավոր պահանջներից կապված հարկային օրենսդրության և հարկման մեխանիզմների փոփոխության արդյունքում առաջացած լրացուցիչ ֆինանսական պահանջների նկատմամբ պատասխանատվությունից:

Թողարկողի Պարտատոմսերից ստացվող եկամուտը ենթակա է հարկման շահութահարկով (իրավաբանական անձանց համար) և եկամտային հարկով (ֆիզիկական անձանց համար):

#### 2.3.13.1 *Պարտատոմսերից ստացվող եկամտի շահութահարկով հարկման կարգը և նկարագիրը*

ՀՀ-ում շահութահարկ են վճարում (հարկատու են) ՀՀ ռեզիդենտները և ոչ ռեզիդենտները, բացառությամբ ՀՀ պետական կառավարչական հիմնարկների, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և ՀՀ ԿԲ-ի: ՀՀ Հարկային օրենսգրքով (այսուհետ՝ Հարկային օրենսգիրք) ՀՀ ռեզիդենտ կազմակերպություն (այսուհետ՝ ռեզիդենտ կազմակերպություն) է համարվում այն կազմակերպությունը, որի գտնվելու վայրը հանդիսանում է ՀՀ-ն:

#### *Ռեզիդենտ իրավաբանական անձանց հարկումը*

Ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը: Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և Հարկային օրենսգրքի սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Շահութահարկի գումարը ռեզիդենտ իրավաբանական անձանց համար հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ՝ 18 (տասնութ) տոկոս դրույքաչափով:

#### *Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց հարկումը*

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը: Համաձայն Հարկային օրենսգրքի՝ հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտներին են դասվում նաև ոչ ռեզիդենտի՝ ռեզիդենտից կամ ոչ ռեզիդենտից ստացված պասիվ եկամուտները: Ընդ որում, ոչ ռեզիդենտի ստացված պասիվ եկամուտներ են համարվում ոչ ռեզիդենտի կողմից իր գույքի կամ այլ ակտիվների ներդրմամբ (տրամադրելով) ՀՀ տարածքում բացառապես այլ անձանց գործունեությունից ստացված եկամուտները, այսինքն՝ շահաբաժիններ, տոկոսներ, ռոյալթիներ և այլ պասիվ եկամուտներ:

ՀՀ-ում ոչ ռեզիդենտի կողմից հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտների հարկումը կատարում է հարկային գործակալը՝ եկամտի վճարման աղբյուրի մոտ: ՀՀ-ում ոչ ռեզիդենտի ստացած եկամտից վճարման աղբյուրի մոտ Հարկային օրենսգրքով սահմանված կարգով հարկային գործակալները շահութահարկը պահում են 10 (տասը) տոկոս դրույքաչափով:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) 2025թ.-ի հունվարի 1-ից մինչև 2027թ.-ի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) պարտատոմսերից մինչև 2027թ.-ի դեկտեմբերի 31-ը ներառյալ ստացված տոկոսների կամ մարելիս գեղչի ձևով ստացվող եկամուտների, ինչպես նաև նշյալ պարտատոմսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտների մասով ազատվում են շահութահարկի վճարումից:

#### ***2.3.13.2 Պարտատոմսերից ստացվող եկամտի՝ եկամտային հարկով հարկման կարգը և նկարագիրը***

ՀՀ-ում եկամտային հարկ են վճարում (հարկատու են) ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ընդ որում, Հարկային օրենսգրքի համաձայն ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ) սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է ՀՀ-ում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում, ինչպես նաև ՀՀ-ում պետական ծառայության մեջ գտնվող ժամանակավորապես ՀՀ տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձը: Կենսական շահերի կենտրոն է համարվում այն վայրը, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Մասնավորապես, համարվում է, որ ֆիզիկական անձի կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում, եթե ՀՀ-ում է գտնվում նրա տունը կամ այլ բնակարանը, ընտանիքը, մասնագիտական կամ այլ գործունեության հիմնական վայրը:

*Ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկում*

Ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող եկամուտը:

Տոկոսագումարների համար եկամտային հարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով: Ռեզիդենտ ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս եկամտային հարկը պահում (զանձում) է հարկային գործակալը:

Արժեկտրոնային պարտատոմսերի դեպքում եկամտային հարկի պահումը (զանձումը) իրականացվում է տոկոսագումարների (արժեկտրոնային եկամուտների) յուրաքանչյուր վճարման դեպքում:

Զեղչատոկոսային (գրոյական արժեկտրոնով) պարտատոմսերի դեպքում եկամտային հարկը հաշվարկվում և պահվում է մարման ժամանակ ստացվող գեղջի նկատմամբ: Վերջինս հաշվարկվում է, որպես անվանական արժեքի և թողարկման գնի տարբերություն:

ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) 2025թ.-ի հունվարի 1-ից մինչև 2027թ.-ի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) պարտատոմսերից մինչև 2027թ.-ի դեկտեմբերի 31-ը ներառյալ ստացված տոկոսների կամ մարելիս գեղջի ձևով ստացվող եկամուտները ազատվում են եկամտային հարկից: Բացառություն են կազմում միայն բանկերի թողարկած այն պարտատոմսերը, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է երկու տարուց:

### *Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկում*

Ոչ ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող եկամուտը: Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և Հարկային օրենսգրքի դրույթներին համաձայն իրականացված նվազեցումների դրական տարբերությունն է:

Պարտատոմսերից ստացված եկամուտների հարկման կանոնները և եկամտային հարկի կիրառվող դրույքաչափը նույնն են ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար:

Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (եկամտային հարկի գծով), ինչպես նաև ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց (շահութահարկի գծով) համար հարկային գործակալ է հանդիսանում Թողարկողը:

## **2.4 Առաջարկի ժամկետները և պայմանները**

### **2.4.1 Առաջարկի պայմանները և վիճակագրությունը**

Պարտատոմսերը տեղաբաշխվելու են կարգավորվող շուկայից դուրս, ուղիղ վաճառքի միջոցով:

Պարտատոմսերի տեղաբաշխումը սկսվելու է Ազդագիրը գրանցելու մասին ՀՀ ԿԲ նախագահի որոշման օրվան հաջորդող 10-րդ (տասներորդ) աշխատանքային օրը և ավարտվելու է տեղաբաշխման սկիզբը համարվող օրվան հաջորդող 40-րդ (քառասուներորդ) աշխատանքային օրը (կամ ավելի վաղ, եթե Պարտատոմսերն ամբողջությամբ վաճառվեն ավելի կարճ ժամկետում):

Տեղաբաշխման ընթացքում գործում են առաջարկից օգտվելու հետևյալ պայմանները.

*Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողը վճարումը պետք է կատարի մինչև Պարտատոմսերի ձեռքբերման օրվա ավարտը՝ Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի ներկայացման հիմքով: Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը համարվում է պատշաճ կերպով կատարված համապատասխան բանկային հաշվին դրամական միջոցների մուտքագրման պահից:*

*Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական ներկայացնողները պետք է տեղյակ լինեն, որ իրենց հայտ-հանձնարարականները չբավարարվելու կամ մասնակի բավարարվելու դեպքում Պարտատոմսերի ձեռքբերման համար վճարված գումարների՝ բանկային հաշվի վրա մնալը՝ մինչև Պարտատոմսերի թողարկման պայմանների համաձայն դրանք իրենց վերադարձնելու պահը, միջոցների ապօրինի պահում կամ դրանք վերադարձնելուց խուսափել չի հանդիսանում և դրանց վրա տոկոսներ չեն հաշվարկվում:*

*Բանկային փոխանցման միջոցով Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջոցները հետ կապված ծախսերը:*

*Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի ներկայացումից հետո սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր:*

*Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականում նշված քանակի Պարտատոմսեր ձեռք բերելու դիմաց վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝*

$V = P * Q$ , որտեղ՝

- *V-ն Պարտատոմսերի ձեռքբերման հայտում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու դիմաց վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծությունն է:*
- *P-ն Պարտատոմսերի ձեռք բերման հայտի Բանկ ներկայացման օրվա դրությամբ Պարտատոմսի գինն է, որը հաշվարկվում է [Ազդագրի 2.4.3.1](#) կետի համաձայն:*
- *Q-ն Պարտատոմսերի այն քանակն է, որը ներդրողը ցանկանում է ձեռք բերել:*

#### 2.4.1.1 *Առաջարկի ընդհանուր ծավալը*

Պարտատոմսերի թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը կազմում է 1,500,000,000 (մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ:

#### 2.4.1.2 *Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը*

Պարտատոմսերի տեղաբաշխումը սկսվելու է Ազդագիրը գրանցելու մասին ՀՀ ԿԲ նախագահի որոշման օրվան հաջորդող 10-րդ (տասներորդ) աշխատանքային օրը և ավարտվելու է տեղաբաշխման սկիզբը համարվող օրվան հաջորդող 40-րդ (քառասուներորդ) աշխատանքային օրը (կամ ավելի վաղ, եթե Պարտատոմսերն ամբողջությամբ վաճառվեն ավելի կարճ ժամկետում):

Թողարկողի կողմից Պարտատոմսերի առաջարկը, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է հետաձգվել կամ չեղյալ հայտարարվել անհատթահարելի ուժի ազդեցության դեպքում (Ֆորս մաժոր):

Եթե առկա են հետ վերադարձման ենթակա դրամական միջոցներ, ապա դրանք վերադարձվում են Թողարկողի կողմից՝ հետաձգման կամ չեղյալ հայտարարման որոշումն ընդունելուց հետո՝ 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով:

Տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշման կայացման և տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները ներդրողներին վերադարձվում են կուտակված արժեկտրոնային եկամուտների հետ միասին: Արժեկտրոնային եկամուտը նման դեպքում հաշվարկվում է տեղաբաշխման առաջին օրվա և այն դադարեցնելու մասին որոշման կայացման օրերի միջև ընկած ժամանակամիջոցի համար:

Եթե Թողարկողը տեղաբաշխման ընթացքում ներկայացնում է Ազդագրի լրացում, որը կապված է Ազդագրում ներառված տեղեկատվության էական փոփոխության, նոր էական հանգամանքի կամ փաստի ի հայտ գալու հետ, ապա նա ներդրողի պահանջով պարտավոր է չեղյալ համարել ներդրողի տված ակցեպտը և հետ վերադարձնել տեղաբաշխման ընթացքում նրանից ստացված միջոցները կամ հետ գնել մինչև լրացման ներկայացումը ներդրողին վաճառված արժեթղթերը՝ առնվազն նրա կողմից արժեթղթերի ձեռքբերման գնով: Սահմանված հետգնման պահանջը պետք է Տեղաբաշխողին ներկայացվի գրավոր: Հետգնման պահանջի ներկայացման ժամկետը չի կարող ավելի կարճ լինել, քան 5 (հինգ) աշխատանքային օրը՝ Ազդագրի լրացման հրապարակումից հետո, իսկ արժեթղթերի հետգնումը և տեղաբաշխման ընթացքում ստացված դրամական միջոցների վերադարձը պետք է իրականացվեն հետգնման պահանջը ներկայացնելուց հետո՝ առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՀ ԿԲ-ն իր որոշմամբ կարող է կասեցնել Պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքը՝ Օրենքի համաձայն:

Տեղաբաշխողի նախաձեռնությամբ տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել միայն ՀՀ ԿԲ համաձայնությամբ՝ առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրով:

Եթե կասեցման ժամկետն ավարտվելու պահից՝ 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում, տեղաբաշխումը չի շարունակվում, սպա Տեղաբաշխողը պարտավոր է կայացնել տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշում և վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցներն արժեթղթերը ձեռք բերած անձանց Օրենքով սահմանված կարգով՝ կասեցման ժամկետի ավարտից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

#### 2.4.1.3 Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացը

Տեղաբաշխմանը մասնակցելու համար ներդրողները պետք է կատարեն հետևյալ քայլերը.

*Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն և պատշաճ կերպով Տեղաբաշխողին ներկայացնեն Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը, որով կհավաստեն Պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը, և որով այդ պայմանները կդառնան ներդրողների համար պարտադիր:*

*Պարտատոմսերի ձեռքբերման համար ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք լրացնում են հայտ-հանձնարարականում նշված դաշտերը, որոնց լրացումը պարտադիր է հայտ-հանձնարարականի վավերականությունն ապահովելու համար:*

*Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականները կիրառարակվեն Տեղաբաշխողի և/կամ Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքերում: Հայտ-հանձնարարականն առնվազն պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.*

- *Հայտ-հանձնարարականի ներկայացման ամսաթիվը,*
- *Գործարքի օրը (ձեռքբերման դիմաց փաստացի վճարման օրն է),*
- *Ներդրողի տվյալները.*
  - *Ֆիզիկական անձանց (անհատ ձեռնկարկատերերի) դեպքում՝ անունը և ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, գրանցման վայրը, ռեզիդենտությունը*
  - *իրավաբանական անձանց դեպքում՝ անվանումը, գրանցման համարը, գտնվելու վայրը, ՀՎՀՀ-ն, ռեզիդենտությունը*
- *Ներդրողի բանկային վավերապայմանները*
  - *արժեթղթերի հաշվի համարը և արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը*
- *Ձեռքբերվող պարտատոմսերի տվյալները*
  - *պարտատոմսի գինը*
  - *պարտատոմսերի քանակը*
  - *վճարման ենթակա ընդհանուր գումարը*

*Լրացված և պատշաճ կերպով Տեղաբաշխողին առաքված ձեռքբերման հայտ-հանձնարարականում նշված ծավալի Պարտատոմսերի ձեռքբերման համար*

համապատասխան դրամական միջոցները ներդրողների կողմից պետք է մուտքագրվեն թողարկման նպատակով բացված հաշվեհամարին (այսուհետ՝ Թողարկման հաշվեհամար) մինչև հայտ-հանձնարարականի ձեռքբերման օրվա ավարտը: Հայտ-հանձնարարականը կհամարվի վավեր պատշաճ առաքման և համապատասխան վճարի կատարման հիմքով (այսուհետ՝ Վավեր հայտ-հանձնարարական):

Մահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականում ներկայացված ձեռքբերման օրվա ավարտից հետո, ինչպես նաև Պարտատոմսերի տեղաբաշխման նախատեսված վերջնաժամկետից հետո Թողարկման հաշվեհամարին ստացված գումարները ենթակա են ետ վերադարձման, իսկ դրանց համապատասխան հայտ-հանձնարարականները չեն կարող բավարարվել:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը կհամարվի պատշաճ կերպով առաքված Տեղաբաշխողին, եթե այն առաքվել է Տեղաբաշխողի հետ ներքոնշյալ կապի միջոցներից որևէ մեկի միջոցով:

<b>Օնլայն եղանակով՝</b> Տեղաբաշխողի MyAmeria հավելվածի MyInvest հարթակի միջոցով էլեկտրոնային հայտ ներկայացնելու միջոցով
<b>Առձեռն՝</b> այցելելով Տեղաբաշխողի որևէ մասնաճյուղ <sup>1</sup> և հաճախորդի մենեջերների միջոցով լրացնելով համապատասխան հայտ-հանձնարարականը
<b>Էլեկտրոնային փոստ՝</b> <a href="mailto:CapitalMarkets@ameriabank.am">CapitalMarkets@ameriabank.am</a>

Տեղաբաշխողը Վավեր հայտ-հանձնարարական ներկայացրած անձին նույնականացնելու նպատակով վերջինից կարող է պահանջել հավելյալ տեղեկատվություն/փաստաթղթեր:

Վավեր հայտ-հանձնարարականները բավարարվում կամ մերժվում են այն ներկայացնելու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

Վավեր հայտ-հանձնարարականները կարող են մերժվել, եթե փոխանցված դրամական միջոցները չեն համապատասխանում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ոլորտը կարգավորող միջազգային և/կամ ՀՀ օրենսդրության պահանջներին և/կամ Տեղաբաշխողի ներքին նորմատիվ ակտերին, ինչպես նաև Ազդագրով նշված դեպքերում:

<sup>1</sup> Մասնաճյուղերի գործառնական օրերը և ժամերը ներկայացված են հետևյալ հղմամբ՝ <https://ameriabank.am/service-network>:

*Պարտատոմսերի ձեռքբերմանը մասնակցել ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք կարող են ներկայացնել մեկից ավելի հայտ-հանձնարարականներ:*

#### **2.4.1.4 Առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորությունը**

Տեղաբաշխման ընթացքում առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորություն չի նախատեսվում:

Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է ըստ Պարտատոմսերի ձեռքբերման հայտերի հերթականության և դրանց դիմաց կատարված վճարման ստացման առկայության. առաջնահերթություն ունի այն հայտը, որն ավելի վաղ է ստացվել, և միաժամանակ հայտի դիմաց վճարումը Թողարկման հաշվեհամարին առկա է:

Տեղաբաշխման կարգով պայմանավորված՝ հնարավոր է Պարտատոմսերի ձեռքբերման որևէ հայտ-հանձնարարականի և/կամ հայտ-հանձնարարականների մասնակի բավարարում:

Մասնակի բավարարման դեպք կարող է առաջանալ, երբ հայտ-հանձնարարականում նշված ձեռքբերվող Պարտատոմսերի քանակը գերազանցում է տեղաբաշխման ենթակա Պարտատոմսերի մնացորդային քանակը:

Այն դեպքում, եթե Պարտատոմսերի ձեռքբերման վավեր հայտ-հանձնարարականները միաժամանակ են ներկայացվել և ձեռքբերվող Պարտատոմսերի ընդհանուր քանակը գերազանցում է տեղաբաշխման ենթակա Պարտատոմսերի մնացորդային քանակը, ապա տվյալ հայտ-հանձնարարականները բավարարվում են համամասնորեն՝ ըստ հայտ-հանձնարարականներում նշված ձեռքբերվող Պարտատոմսերի ընդհանուր քանակում յուրաքանչյուր հայտ-հանձնարարականով նշված ձեռքբերվող Պարտատոմսերի քանակի մասնաբաժնի:

Հայտ-հանձնարարականի մասնակի բավարարման դեպքում, եթե առկա է լինում ներդրողին հետ վերադարձման ենթակա գումար, ապա տեղաբաշխման ավարտից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում նշված գումարը Թողարկողի կողմից ենթակա է վերադարձման, ինչն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ համապատասխան ներդրողի բանկային հաշվին փոխանցմամբ:

#### **2.4.1.5 Հայտը հետ կանչելու ժամանակաշրջանը**

Հայտ-հանձնարարականի ներկայացումից հետո սահմանված ժամկետում (մինչև Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի ներկայացման օրվա ավարտը) համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր և չեն մասնակցում տեղաբաշխմանը:

Ներդրողները Պարտատոմսերի հայտ-հանձնարարականները պատշաճ կերպով առաքելուց և Տեղաբաշխողի կողմից հայտ-հանձնարարականի ստացման հաստատումը/ծանուցումը ստանալուց հետո դրանք չեն կարող ետ կանչել:

#### **2.4.1.6 *Նվազագույն և առավելագույն գումարները***

Սույն թողարկման և տեղաբաշխման ընթացքում գոյություն ունեն Պարտատոմսերի ձեռքբերման քանակական սահմանափակումներ: Պարտատոմսերի ձեռքբերման նվազագույն քանակը մեկ գործարքի համար 5 (հինգ) հատ է՝ բացառությամբ այն դեպքի երբ հասանելի պարտատոմսերի քանակը փոքր է 5 (հինգ) հատից:

#### **2.4.1.7 *Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելը***

Թողարկողի կողմից թողարկվող Պարտատոմսերի ձեռքբերման համար իրավաբանական և/կամ ֆիզիկական անձինք վճարումը կատարում են Թողարկման հաշվեհամարին: Վճարումը համարվում է պատշաճ կերպով կատարված համապատասխան բանկային հաշվին դրամական միջոցների մուտքագրման պահից:

Համապատասխան հայտ-հանձնարարականները բավարարվելուց հետո ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի Օպերատորից՝ Տեղաբաշխողից իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին տեղեկացվելուց հետո:

Տեղաբաշխողն իրավունք ունի Պարտատոմսեր ձեռք բերել ցանկացող անձի կողմից Պարտատոմսերի ձեռքբերման հայտում նշված քանակի Պարտատոմսեր ձեռք բերելու համար Թողարկման հաշվեհամարին փոխանցված դրամական միջոցները չկրեդիտագրել Թողարկման հաշվեհամարին, չտալ համապատասխան հանձնարարական Դեպոզիտարիային Պարտատոմսերի թողարկման հաշվից Պարտատոմսերը ձեռք բերել ցանկացողի արժեթղթերի հաշվին փոխանցելու համար, եթե փոխանցված դրամական միջոցները չեն համապատասխանում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ոլորտը կարգավորող միջազգային և/կամ ՀՀ օրենսդրության պահանջներին և/կամ Տեղաբաշխողի ներքին նորմատիվ ակտերին: Նման իրավիճակում Տեղաբաշխողն իրավունք ունի մերժել հայտ-հանձնարարականը, իսկ փոխանցված դրամական միջոցները ետ փոխանցել, որի հետ կապված ֆինանսական ծախսերը կրում է Պարտատոմսեր ձեռք բերել ցանկացող անձը: Տեղաբաշխողի կողմից բանկային փոխանցմամբ ստացված և չընդունված դրամական միջոցների ետփոխանցման/ետդարձման ծառայության սակագինը հրապարակված է Տեղաբաշխողի ինտերնետային կայքում: Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ բացի Տեղաբաշխողի կողմից գանձվող ծառայության վճարից, Թողարկման հաշվեհամարին փոխանցված դրամական միջոցները Տեղաբաշխողի կողմից նույն վավերապայմաններով ետ փոխանցելու դեպքում հնարավոր են նաև ծառայության դիմաց գանձումներ միջնորդ բանկերի և շահառուի բանկի կողմից:

Ներդրողի՝ ձեռքբերված Պարտատոմսի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված այլ պահառուի մոտ ներդրողի անունով այդ Պարտատոմսի գրանցման պահից:

Պարտատոմսերը փոխանցվում են ներդրողի արժեթղթերի հաշվին համապատասխան հայտ-հանձնարարականի բավարարման օրը:

#### **2.4.1.8 Առաջարկի արդյունքների հրապարակումը**

Տեղաբաշխման արդյունքները կհրապարակվեն տեղաբաշխման ավարտից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Տեղաբաշխողի և/կամ Թողարկողի պաշտոնական կայքում:

#### **2.4.1.9 Նախապատվության իրավունքը**

Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է՝ ըստ Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականների հերթականության և դրանց դիմաց կատարված վճարման առկայության: Այսինքն առաջնահերթություն ունի այն ներդրողը, ում հայտ-հանձնարարականն ավելի վաղ է ստացվել, և միաժամանակ վճարումը թողարկման նպատակով Տեղաբաշխողի կողմից բացված Թողարկման հաշվեհամարին առկա է:

Թողարկվող Պարտատոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեցող անձինք չկան:

### **2.4.2 Տեղաբաշխման պլանը**

#### **2.4.2.1 Ներդրողների խմբերը**

Առաջարկն արվում է ՀՀ-ում՝ առանց ներդրողների մասով որևէ սահմանափակումների:

#### **2.4.2.2 Հայտերի բավարարման մասին տեղեկացումը**

Ներդրողները Տեղաբաշխողից տեղեկացվում են իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին մինչև հայտ-հանձնարարականի ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը: Հայտ-հանձնարարականների բավարարման մասին ներդրողին տեղեկացումը տրամադրվում է այն կապի միջոցով, որով ներդրողը Տեղաբաշխողին է ներկայացրել Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը/երը: Բացառություն է կազմում միայն Տեղաբաշխողի MyInvest հարթակի միջոցով տրամադրված էլեկտրոնային հայտերի դեպքը, երբ հայտերի բավարարման մասին տեղեկացումը տրամադրվում է ներդրողի՝ համակարգում գրանցված էլեկտրոնային հասցեին:

## 2.4.3 Առաջարկի գինը

### 2.4.3.1 Արժեթղթերի գինը

Պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց, տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$DP = \frac{C}{f} \sum_{t=1}^N \frac{1}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{t-1+\tau}} + \frac{100}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{N-1+\tau}}$$

որտեղ՝

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

DP - Պարտատոմսի գինն է,

DSN - գործարքի կատարման օրից (settlement/trade date) մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

DCC - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է,

N - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը,

C - տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց,

Y - մինչև մարում եկամտաբերություն:

Մինչև տեղաբաշխման սկիզբը տեղաբաշխման ամբողջ ժամանակահատվածի համար՝ ըստ օրերի, Պարտատոմսերի վաճառքի գինը կհրապարակվի առնվազն Տեղաբաշխողի ինտերնետային կայքում:

Բանկային փոխանցման միջոցով Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:

Ներդրողները պարտավոր են նաև Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշվառման անձնական արժեթղթերի հաշիվ և կրել վերջինիս հետ կապված ծախսերը:

## 2.4.4 **Տեղաբաշխումը**

### 2.4.4.1 **Երաշխավորված տեղաբաշխում իրականացնողները**

Ազդագրի գրանցման ներկայացման պահին երաշխավորված տեղաբաշխում իրականացնելու համաձայնություն առկա չէ Թողարկողի և Տեղաբաշխողի միջև:

### 2.4.4.2 **Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնողները**

Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնելու կապակցությամբ Թողարկողը կնքել է «Պարտատոմսերի տեղաբաշխման ծառայությունների մատուցման մասին» պայմանագիր «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի հետ (ՀՀ, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2):

Համաձայն կնքված պայմանագրի՝ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ն իրականացնելու է Պարտատոմսերի տեղաբաշխում չերաշխավորված եղանակով:

Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ

- հայտարարված տեղաբաշխման ծավալը կարող է ամբողջությամբ չտեղաբաշխվել, այսինքն կարող է տեղի ունենալ թերտեղաբաշխում,
- անկախ տեղաբաշխման ավարտին Պարտատոմսերի փաստացի տեղաբաշխված ծավալից՝ տեղաբաշխումը համարվում է կայացած:

### 2.4.4.3 **Տեղաբաշխման պայմանները**

Համաձայն «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի հետ կնքած «Պարտատոմսերի տեղաբաշխման ծառայությունների մատուցման մասին» պայմանագրի՝ Թողարկողը պարտավորվել է Տեղաբաշխողին վճարել Տեղաբաշխման վճար՝ տեղաբաշխված Պարտատոմսերի անվանական ծավալի 0.85%-ի (գրո ամբողջ ութսունհինգ հարյուրերորդական տոկոսի) չափով:

### 2.4.4.4 **Երաշխավորված տեղաբաշխման պայմանագիրը**

Երաշխավորված տեղաբաշխման պայմանագիր չի կնքվել:

### 2.4.4.5 **Վճարում ընդունող քանկերը և պահառուները**

Պարտատոմսերի դիմաց անհրաժեշտ է վճարում կատարել թողարկման նպատակով «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ում (ՀՀ, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2) բացված Թողարկման հաշվեհամարին: Եթե ներդրողը Պարտատոմսերի ձեռքբերումը իրականացնելու է իր բրոքերային ընկերության միջոցով, ապա հարկավոր է վճարման գործընթացի մանրամասները հստակեցնել ներդրողի բրոքերային ընկերության հետ:

Թողարկողի Պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումն ու (կամ) գրանցումն (սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի վարում) իրականացվելու է Դեպոզիտարիայի միջոցով, որը հանդես է գալու որպես անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրավար՝ վերջինիս համակարգում գործող որևէ Հաշվի օպերատորի միջնորդությամբ:

Պարտատոմսերը կարող են հաշվառվել նաև ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված որևէ պահառուի կողմից (Դեպոզիտարիայի ենթապահառու)՝ այդ պահառուի մոտ Պարտատոմսերի սեփականատիրոջ/անվանատիրոջ համար արժեթղթերի հաշիվ բացելու և վարելու միջոցով:

Դեպոզիտարիայի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 26/1, 5-րդ հարկ (հեռ.՝ (+374) 60 615555):

Պարտատոմսերի ռեեստրի վարման Հաշվի օպերատորը լինելու է Ամերիաբանկ ՓԲԸ-ն:

Մինչև Պարտատոմսերի ձեռքբերումը ներդրողները պարտավոր են Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշիվ:

Տեղաբաշխողն իրավունք ունի Պարտատոմսեր ձեռք բերել ցանկացող անձի կողմից Պարտատոմսերի ձեռքբերման հայտում նշված քանակի Պարտատոմսեր ձեռք բերելու համար Թողարկման հաշվեհամարին փոխանցված դրամական միջոցները չկրեդիտագրել Թողարկման հաշվեհամարին, չտալ համապատասխան հանձնարարական Դեպոզիտարիային Պարտատոմսերի թողարկման հաշվից Պարտատոմսերը ձեռք բերել ցանկացողի արժեթղթերի հաշվին փոխանցելու համար, եթե փոխանցված դրամական միջոցները չեն համապատասխանում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ոլորտը կարգավորող միջազգային և/կամ ՀՀ օրենսդրության պահանջներին և/կամ Տեղաբաշխողի ներքին նորմատիվ ակտերին: Նման իրավիճակում Տեղաբաշխողն իրավունք ունի մերժել հայտ-հանձնարարականը, իսկ փոխանցված դրամական միջոցները ետ փոխանցել, որի հետ կապված ֆինանսական ծախսերը կրում է Պարտատոմսեր ձեռք բերել ցանկացող անձը: Տեղաբաշխողի կողմից բանկային փոխանցմամբ ստացված և չընդունված դրամական միջոցների ետփոխանցման/վերադարձման ծառայության սակագինը հրապարակված է Տեղաբաշխողի ինտերնետային կայքում: Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ բացի Տեղաբաշխողի կողմից գանձվող ծառայության վճարից, Թողարկման հաշվեհամարին փոխանցված դրամական միջոցները Տեղաբաշխողի կողմից նույն վավերապայմաններով ետ փոխանցելու դեպքում հնարավոր են նաև ծառայության դիմաց գանձումներ միջնորդ բանկերի և շահառուի բանկի կողմից:

## **2.5 Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը**

### **2.5.1 Առևտրին թույլտվությունը**

Պարտատոմսերը տեղաբաշխելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Թողարկողը պարտադիր դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ին տեղաբաշխված Պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և/կամ առևտրին թույլատրելու համար: Ընդ որում Պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և/կամ առևտրին թույլատրելու հայտը կարող է չբավարարվել Բորսայի կողմից:

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո 6-ամսյա ժամկետում առևտրի թույլտվություն չստանալու դեպքում տեղաբաշխումը կհամարվի չեղյալ: Չեղյալ համարելու վերաբերյալ Թողարկողի որոշումն ուժի մեջ մտնելու պահից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Թողարկողը ետ է գնելու Պարտատոմսերն իրենց առաջարկի գնով (ներառյալ մինչ չեղյալ համարելու որոշման ուժի մեջ մտնելու օրը հաշվեգրված արժեկտրոնի գումարները):

### **2.5.2 Շուկաները**

Այս պահին Թողարկողի կողմից Ազդագրով գրանցվող Պարտատոմսերը թույլատրված չեն հրապարակային առևտրի ոչ մի շուկայում:

### **2.5.3 Շուկա ստեղծողները**

Թողարկողը մասնագիտացված անձանց հետ դեռ չի կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի (մարքեթ մեյքերի) ծառայություններից օգտվելու վերաբերյալ պայմանագիր:

Տեղաբաշխված Պարտատոմսերը «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի կողմից ցուցակվելու և առևտրին թույլատրվելու դեպքում Թողարկողը պարտավորվում է մասնագիտացված անձի/անձանց հետ կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի պայմանագիր:

## **2.6 Լրացուցիչ տեղեկատվություն**

### **2.6.1 Խորհրդատուներ**

Ազդագրի պատրաստման ընթացքում Թողարկողը չի օգտվել այլ խորհրդատուների ծառայություններից, բացի Տեղաբաշխողի կողմից մատուցվող տեղաբաշխման ծառայություններից:

## 2.6.2 Աուդիտորական եզրակացությունը

Բացի Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվություններից (2023-2024թթ. համար)՝ Ազդագրում ներկայացված այլ ֆինանսական տեղեկատվությունը չի ենթարկվել անկախ աուդիտի Թողարկողի աուդիտորի կողմից: Թողարկողի հաշվետվությունների և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական կազմակերպության կողմից տրված եզրակացությունների պատճենները ներկայացված են [Հավելված 4](#)-ում:

## 2.6.3 Թողարկողի վարկանիշը

Թողարկողն իր պատմական գործունեության ընթացքում չի ստացել վարկանիշ:

# ՄԱՍ 3 ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## 3.1 Անկախ աուդիտորներ

Թողարկողի 2023 և 2024 թթ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտին իրականացրել է «ՓրայստոթերիաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ-ն:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2

հեռ.՝ +374 10 512151

կայք՝ [www.pwc.com/am](http://www.pwc.com/am)

## 3.2 Ռիսկային գործոններ

Ցանկացած ներդրող մինչև Պարտատոմսերում ներդրում անելը պետք է ամբողջությամբ ուսումնասիրի Թողարկողի գործունեությանը հատուկ ռիսկային գործոնները, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ վերջինիս ֆինանսական վիճակի և արդյունքների վրա:

Սույն բաժնում ներկայացված են այն ռիսկերը, որոնք Թողարկողը Ազդագրի ներկայացման պահի դրությամբ համարում է էական, սակայն կարող են լինել լրացուցիչ ռիսկեր, որոնք Թողարկողին այս պահին հայտնի չեն կամ Թողարկողը դրանք համարում է ոչ էական. ստորև նկարագրված ռիսկային գործոնների ցանկը պետք է օգտագործվի միայն որպես ուղեցույց:

### 3.2.1 Մրցակցության ռիսկ

ՀՀ-ում դեղերի շուկան բավականին մրցակցային է: Դեղամիջոցների ներկրմամբ, մեծածախ և մանրածախ վաճառքով են զբաղվում բազմաթիվ ընկերություններ: Խիստ մրցակցության պայմաններում մրցակից ընկերությունների կողմից նույնիսկ փոքր գնային կամ ծախսային առավելություններ ունենալու դեպքում Թողարկողը կարող է բախվել հաճախորդների թվի նվազման, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ Ընկերության դրամական հոսքերի վրա:

### 3.2.2 Մատակարարման շղթաների հետ կապված ռիսկ

Թողարկողի կողմից վերջնական սպառողին անհրաժեշտ դեղերով ապահովելու համար ձևավորված մատակարարման շղթան ունի բավականին բարդ կառուցվածք, որը ներառում է դեղամիջոցների ավելի քան 100 արտադրողներ (որոնցից որ ներմուծվում են դեղերը), դեղերի ժամանակին և անհրաժեշտ պայմաններում տեղափոխումն ու պահպանումն ապահովող համակարգեր, ինչպես նաև

Ընկերության ավելի քան 200 դեղատներից բաղկացած դեղատնային ցանցը, 900-ից ավելի այլ դեղատներ (ներառված չեն Ընկերության դեղատները) և ավելի քան 160 բուժհաստատություններ: Արտադրողից մինչև վերջնական սպառողին անհրաժեշտ դեղամիջոցներով ապահովելիս կարող են առաջանալ բազմաթիվ խոչընդոտներ՝ կապված դեղեր արտադրողների գործունեության խաթարումների, իրենց գործունեության երկրներում դեղերի արտադրության և շրջանառության կարգավորման խստացումների, դեղերի տեղափոխման ուշացումների, դրանց պահպանման պայմանների խաթարումների, ինչպես նաև դեղերի որակի հսկողության ձախողումների հետ: Նշված իրադարձությունները կարող են հանգեցնել անհրաժեշտ դեղորայքի պակասուրդի, ներմուծված դեղերի պիտանելիության կորստի, ինչպես նաև Ընկերության համար տարաբնույթ ծախսերի մեծացման, որոնք էլ հետևաբար կարող են պատճառ հանդիսանալ շուկայում Թողարկողի մասնաբաժնի կրճատման և վերջինիս նկատմամբ վստահության կորստի համար:

### **3.2.3 Պաշարների կառավարման ռիսկ**

Դեղերն ունեն պիտանելիության հստակ ժամկետներ և պահպանման խիստ պայմաններ: Ուստի պաշարների օպտիմալ կառավարումն ունի կարևորագույն նշանակություն: Թողարկողի կողմից շուկայում դեղերի պահանջարկի ոչ ճշգրիտ գնահատումն ու կանխատեսումը կարող է հանգեցնել պաշարների ավելցուկի (ինչը կարող է մեծացնել պահպանման ծախսերը ու բացասաբար ազդել դեղերի պիտանելիության վրա) կամ պակասուրդի (ինչը կարող է կրճատել շուկայում Ընկերության մասնաբաժինը և վտանգել Ընկերության հեղինակությունը):

### **3.2.4 Արտաբժույթի ռիսկ**

Թողարկողն իրականացնում է դեղերի ներմուծում օտարերկրյա արտադրողներից, որոնց գծով վճարումները կատարվում են արտաբժույթով: Իսկ Ընկերության եկամուտները մեծամասամբ ստացվում են դեղերի վաճառքից՝ ստացված ՀՀ դրամով: Արդյունքում տվյալ երկրների արժույթների՝ ՀՀ դրամի նկատմամբ փոխարժեքների տատանումները կարող են հանգեցնել եկամուտների նվազմանը կամ ծախսերի մեծացմանը:

### **3.2.5 Ոլորտի կարգավորման դաշտի փոփոխությունների հետ կապված ռիսկ**

ՀՀ-ում դեղերի շրջանառության ոլորտը ենթարկվում է պետական խիստ կարգավորման: «Դեղերի մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության տեսակների լիցենզավորման, դեղերի ներմուծման, դեղերի պետական գրանցման և նույն օրենքով նախատեսված այլ պահանջների, ինչպես նաև ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված դրույթների և բնակչությանը դեղերով ապահովելու և դեղագործությունը զարգացնելու պետական քաղաքականության փոփոխությունները կարող են բացասաբար ազդել Թողարկողի եկամտի հիմնական

աղբյուրների, ինչպես նաև ծախսերի վրա՝ այդպիսով վտանգելով Թողարկողի մրցունակությունը:

### **3.2.6 Կիբերհարձակումների ռիսկ**

Թողարկողը կիրառում է տարաբնույթ տեղեկատվական տեխնոլոգիաներ դեղերի ներմուծումն ու մատակարարումն ապահովելու, դեղերի գրանցումներն ու որակի վերահսկողությունն իրականացնելու, ինչպես նաև դեղերի և դեղատոմսերի վերաբերյալ տեղեկատվությունը պահպանելու և օնլայն դեղատոմսը գործարկելու համար: Կիբերհարձակումները կարող են Ընկերության նորմալ գործունեության խաթարման պատճառ հանդիսանալ, ինչպես նաև հանգեցնել հաճախորդների, դեղերի, դեղատոմսերի վերաբերյալ և այլ գաղտնի տեղեկատվության արտահոսքի՝ այդպիսով վտանգելով Թողարկողի հեղինակությունը:

### **3.2.7 Տնտեսական, քաղաքական, սոցիալական և առողջապահական ռիսկեր**

Դեղերի մանրամեծածախ վաճառքի գործունեության հաջողությունը սերտորեն կապված է ՀՀ-ում ընդհանուր տնտեսական, սոցիալական և քաղաքական զարգացումների հետ: ՀՀ-ում տնտեսական կամ սոցիալական վիճակի վատթարացումը և քաղաքական անկայունությունները կարող են բացասաբար ազդել հաճախորդների վճարունակության և ընդհանուր վաճառքի ծավալների վրա: Բացի այդ, առողջապահական խնդիրների (այդ թվում՝ համաճարակների, պանդեմիաների) անսպասելի տարածումն Ընկերության համար լուրջ մարտահրավերներ կարող է ստեղծել՝ կապված անհրաժեշտ դեղորայքի պահանջարկն ապահովելու և մատակարարման շղթայի անխափան գործունեությունը պահպանելու հետ:

## **3.3 Տեղեկատվություն թողարկողի մասին**

### **3.3.1 Թողարկողի պատմությունը և զարգացումը**

Ալֆա-Ֆարմը ՀՀ առաջատար դեղագործական ընկերությունն է, որը հիմնադրվել է 1996թ-ին: Ընկերության հիմնադիրներ են հանդիսանում Հայաստանի դեղագործական ոլորտում բազմամյա փորձ ունեցող անձինք, ում մասնագիտական և կազմակերպչական ունակությունների շնորհիվ Ընկերությունը բարձրորակ ծառայություններ է մատուցում հանրությանը: 2005-2017 թթ.-ին որպես Ընկերության բաժնետեր է եղել «Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը» (EBRD), իսկ ներկայումս Ընկերության բաժնետեր է հանդիսանում արևելյան Եվրոպայի խոշորագույն դեղագործական ընկերություններից Ալտա Ֆարմապայութիքըրլս» ՄՊԸ-ն (Alta Pharmaceuticals OOD):

Ընկերությունը զբաղեցնում է առաջատար դիրքեր ինչպես մեծածախ, այնպես էլ մանրածախ վաճառքում՝ ունենալով ամենամեծ դեղատնային ցանցը Հայաստանում: 2018թ.-ից սկսած գործում է Ալֆա-Ֆարմի շուրջօրյա առաքման ծառայությունը, որը, որպես օնլայն շուրջօրյա դեղատուն, Հայաստանում առաջինն է հիմնադրվել:

Ըստ ՀՀ օրենսդրության՝ 2019թ. անհրաժեշտություն է առաջացել տրոհել մեծածախ դեղագործական գործունեությունը մանրածախ գործունեությունից, հետևաբար Ընկերությունը սկսել է զբաղվել միայն մանրածախ գործունեությամբ, իսկ մեծածախ գործունեությամբ զբաղվել է նորաստեղծ «Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ն, որի 100% բաժնետերն է հանդիսանում Ընկերությունը: 2021թ.-ին Ընկերությունը ձեռք է բերել նաև դեղարտադրող «Էյ Լաբ ֆարմասյուրթիքալս» ՍՊԸ-ն, և հանդիսանում է վերջինիս 100% բաժնետեր:

### 3.3.1.1 Թողարկողի անվանումը և կազմակերպատիպական ձևը

Թողարկողի անվանումն է՝

	Լրիվ ֆիրմային անվանումը	Գրճատ անվանումը
հայերեն՝	«Ալֆա-Ֆարմ» փակ բաժնետիրական ընկերություն	«Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ
ռուսերեն՝	Закрытое акционерное общество “Альфа-Фарм”	ЗАО “Альфа-Фарм”
անգլերեն՝	“Alfa-Pharm” closed joint-stock company	“Alfa-Pharm” CJSC

Գրանցված ապրանքանիշերն են.

	Ապրանքանիշը	Անվանումը	Գրանցման համարը	Գրանցման ամսաթիվը
1		AlfaPharm	36442	13.01.2023
2	Ալֆա-Ֆարմ	Ալֆա - Ֆարմ	37247	29.05.2023
3	Միշտ հոգատար	Միշտ հոգատար	37248	29.05.2023
4		α	37246	29.05.2023
5		α Online դեղատուն (060) 700 500 առաքում Մեկ քայլ ավելի մոտ	37555	13.07.2023
6		AlfaPharm Online դեղատուն	37626	26.07.2023

### 3.3.1.2 Թողարկողի պետական գրանցումը և գործունեության վայրը

Թողարկողի հիմնադրման երկիրն է՝

Հայաստանի Հանրապետությունը

Թողարկողի պետական գրանցման վայրն է՝	ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ, 0043, Շիրակի փ. 1/68
Թողարկողի պետական գրանցման համարն է՝	273.120.04865
Թողարկողի պետական գրանցման ամսաթիվն է՝	2008-04-11
Թողարկողի գործունեության վայրն է՝	Հայաստանի Հանրապետությունը
Կապի միջոցները՝	Հեռ.՝ +374 11 700 500
	Էլ. փոստ՝ <a href="mailto:alfapharm@alfapharm.am">alfapharm@alfapharm.am</a>
	Կայք՝ <a href="https://alfapharm.am/hy/">https://alfapharm.am/hy/</a>

Ընկերության պետական գրանցման վայրը և համարը, գրանցման ամսաթիվը և փաստացի գործունեություն ծավալելու վայրը, թողարկողի հիմնադրման երկիրը և այլ տվյալները հասանելի են ՀՀ կառավարության էլեկտրոնային ռեգիստրի շտեմարանում՝ [www.e-register.am](http://www.e-register.am):

### 3.3.2 Նշանակալի դեպքերը

Վերջին տարիների ընթացքում Ընկերության հիմնական ներդրումային գործունեությունն ուղղված է եղել նոր, ավելի ֆունկցիոնալ ու ժամանակակից դեղատնների բացմանը, եղած դեղատների նորացմանը և դեղատնային ցանցի ընդլայնմանը: Ընկերությունը զգալիորեն մեծացրել է իր դեղատնային ցանցը՝ ընդլայնելով և աշխարհագրությունը և բաշխվածությունը արդեն գոյություն ունեցող տարածաշրջաններում: Այսպես՝ վերջին տարվա ընթացքում Ընկերությունն իր մանրածախ գործունեությունն էլ ավելի է ընդլայնել Լոռու մարզում և Արարատի մարզում, համապատասխանաբար Ալավերդի, Մտեփանավան և Մասիս քաղաքներում: Վերջին տարվա ընթացքում մանրածախ գործունեությունում Ընկերությունն արձանագրել է 11% օրգանական աճ, իսկ նոր դեղատների հաշվին ապահովել է ևս 10% աճ: Այս ցուցանիշները նպաստել են Ընկերության կայուն զարգացմանը և դրամական հոսքերի աճին: Միևնույն ժամանակ Ընկերությունն աճ է գրանցել նաև մեծածախ առևտրում՝ ընդլայնելով իր գործունեությունը անհատ դեղատների և դեղատնային ցանցերի հետ:

Պատմական ժամանակաշրջանում տեղի ունեցած այլ նշանակալի դեպքերից են.

- պահեստի աշխատանքների ավտոմատացման համար ձեռքբերված սարքավորումների ուղղությամբ ներդրումները, որոնք նպաստում են պահեստի անխոչընդոտ և արդյունավետ աշխատանքին.
- տրանսպորտային պարկի թարմացման և համապատասխան ջերմային ապահովվածություն ունեցող բեռնատարներով հազեցման ուղղությամբ ներդրումները, որոնք ուղղված են առաքման գործընթացը անհրաժեշտ ստանդարտներին համապատասխանեցնելուն.
- Էլեկտրոնային առևտրի հարթակի զարգացման համար կատարված ներդրումները, որոնք ուղղված են եղել Հայաստանում առաջին օնլայն

դեղատան ստեղծմանը և այդ պլատֆորմի զարգացմանն ու ավելի հարմարավետ դարձնելուն.

- սերվերային համակարգի արդիականացման ուղղված ներդրումները, որոնց նպատակը համակարգի հուսալիությունը, անվտանգությունը և մասշտաբայնությունն ապահովելն է:

Ընկերությունն իրականացնում է նաև շահութաբեր ուղղությունների շարունակական զարգացում, որն իր մեջ ներառում է կոսմետիկայի և բիոակտիվ հավելումների թիրախային աճն, ինչպես նաև ակտիվորեն զբաղվում է նոր դեղերի գրանցմամբ և դրանց զարգացմամբ, որոնք կնպաստեն թողարկողի համար կայուն, շահութաբեր ուղղության զարգացմանը:

### **3.3.3 Ներդրումները**

Վերջին տարիներին Ընկերության կողմից կատարվել են մի շարք ներդրումներ նոր դեղատների բացման, դեղատնային ցանցի նորացման և ընդլայնման, պահեստի աշխատանքների ավտոմատացման համար սարքավորումների ձեռքբերման, տրանսպորտային պարկի թարմացման, էլեկտրոնային առևտրի հարթակի զարգացման և այլ ուղղություններով:

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի ընթացքում և դրանից հետո մինչև Ազդագիրը ՀՀ ԿԲ գրանցման ներկայացնելու պահը Ընկերության կողմից էական ներդրումներ չեն կատարվել:

## **3.4 Բիզնեսի նկարագիրը**

### **3.4.1 Հիմնական գործունեությունը**

Թողարկողը ՀՀ առաջատար դեղագործական ընկերությունն է, որը գործում է շուկայի մեծածախ և մանրածախ հատվածներում: Մանրածախ ոլորտում Թողարկողն իր գործունեությունն իրականացնում է ավելի քան 200 սեփական դեղատների միջոցով (Ազդագիրը ՀՀ ԿԲ գրանցման ներկայացնելու օրվա դրությամբ դեղատների քանակը 213 է):

Թողարկողի հիմնական գործունեությունը կապված է դեղորայքի ներկրման և վաճառքի հետ, որը կազմում է տարեկան հասույթի ավելի քան 60%-ը: Պորտֆելը լրացվում է կոսմետիկայի, բիոակտիվ հավելումների, մանկական և օրթոպրոդուկտներով: Թողարկողը համագործակցում է գրեթե բոլոր խոշոր միջազգային և տեղական դեղագործական արտադրողների հետ՝ ապահովելով բարձրորակ և հուսալի արտադրանքի լայն տեսականի: Այսպիսով Ընկերության գործունեության հիմնական ուղղություններն են.

- **Ղեղամիջոցներ** - դեղատոմսով և առանց դեղատոմսի դեղերի լայն տեսականի, որոնք մատակարարվում են համաշխարհային ճանաչում ունեցող դեղագործական ընկերությունների կողմից: Թողարկողը վաճառում է բացառապես գրանցված դեղամիջոցներ և կարևորում որակը և դեղամիջոցների պահպանման համար սահմանված ստանդարտները:
- **Կոսմետիկա** - բժշկական կոսմետիկա, կոսմետիկա և գեղեցկության համար նախատեսված պարագաներ: Սա Ընկերության գործունեության կարևոր շահութաբեր ճյուղերից է: Այս գործունեության համար Թողարկողը համագործակցում է ոլորտի առաջատար ընկերությունների հետ, որոնցից են՝ Pierre Fabre-ը, L'Oréal-ը և այլ ընկերություններ:
- **Բիոակտիվ հավելումներ** - այս ոլորտը ևս Ընկերության համար ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող ճյուղերից մեկն է: Թողարկողը վերջին տարիներին սերտորեն համագործակցում է Nature's Bounty, Jarrow Formulas, Kvadrat C, Aqvion, New Nordic, Nature's Plus, Tilman և այլն ընկերությունների հետ:
- **Մանկական սեզմենտ** - Թողարկողն իրականացնում է նաև մանկական սննդի, հիգիենայի պարագաների և մանկական այլ պարագաների վաճառք:
- **Օրթոպրոդուկտներ** - վերջին տարվա ընթացքում այս ոլորտը դարձել է Ընկերության համար ռազմավարական նշանակություն ունեցող ուղղություն, որի զարգացման և հետագա աճի համար Թողարկողը կատարում է էական մարկետինգային գործողություններ և համագործակցում է բժիշկների լայն խմբի հետ:

Իր բնականոն գործունեության նպատակով Ընկերությունը ստացել է հետևյալ հիմնական լիցենզիաները/թույլտվությունները.

Թույլտվություն/Լիցենզիա	Համար	Տրված է	Գործում է մինչև
Ղեղատնային գործունեության իրականացման լիցենզիա <sup>2</sup>	Կ-ԴԳ-000082	07.11.2024թ.	անժամկետ
Հոգեմետ նյութերի իրացման լիցենզիա <sup>3</sup>	Կ-ԲԲ-000050	26.01.2010թ.	անժամկետ
Դեղերի մեծածախ իրացման լիցենզիա	Կ-ԴՄԻ-000022	13.03.2020թ.	անժամկետ
Հոգեմետ նյութերի և պրեկուրսորների արտահանման, ներմուծման և մեծածախ առևտրի լիցենզիա	Կ-XX-000075	09.12.2016թ.	անժամկետ


### 3.4.2 Հիմնական շուկաները

Թողարկողն իր գործունեությունն իրականացնում է Երևանում և մարզերում, ինչպես մեծածախ, այնպես էլ մանրածախ առևտրում:

<sup>2</sup> Յուրաքանչյուր դեղատան համար Ընկերությունը ստանում է առանձին լիցենզիա: Նշված լիցենզիան բացված առաջին դեղատան համար է, որը երկարաձգվել է: Ազդագիրը ՀՀ ԿԲ գրանցման ներկայացնելու օրվա դրությամբ Ընկերության դեղատների քանակը 213 է:


<sup>3</sup> Յուրաքանչյուր դեղատան համար Ընկերությունը ստանում է առանձին լիցենզիա: Ընկերությունն ունի հոգեմետ նյութ վաճառող 9 դեղատուն:

2024թ.-ին Ընկերության ընդհանուր հասույթը կազմել է շուրջ 34.6 մլրդ ՀՀ դրամ, որի աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 3.2%: EBITDA<sup>4</sup> ցուցանիշը կազմել է 3.7 մլրդ ՀՀ դրամ, որի նախորդ տարվա համեմատ նվազել է շուրջ 7.5%-ով: 2025թ.-ի 1-ին կիսամյակի դրությամբ Ընկերության ընդհանուր հասույթը և EBITDA ցուցանիշը կազմել են համապատասխանաբար 18.6 և 1.3 մլրդ ՀՀ դրամ: Նշենք, որ նախորդ տարիների համեմատ հասույթի աճի տեմպը որոշ չափով դանդաղել է՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով, մասնավորապես՝ դեղերի վաճառքի աճի տեմպի և մանկական սեգմենտի ապրանքների վաճառքների որոշակի նվազմամբ: Բացի այդ, 2024թ.-ին ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունների համաձայն՝ արգելվել է դեղատներից մի շարք դեղամիջոցների ձեռքբերումն առանց բժշկի կողմից տրված էլեկտրոնային դեղատոմսի: Մրա հետևանքով Ընկերությունը կրել է մրցակցային դիրքի որոշակի կորուստ այն դեղատների համեմատ, որոնք, միգուցե օրենքի պահանջներին հետևում են ոչ ամբողջությամբ: Այնուամենայնիվ, 2021-2024թթ. Ընկերությանը հաջողվել է ապահովել ընդհանուր եկամուտների և EBITDA ցուցանիշի միջինում տարեկան համապատասխանաբար 5.7% և 6.6% աճ:



2024թ. հասույթի շուրջ 54%-ը ստացվել է մեծածախ վաճառքից: Ընդհանուր առմամբ, վերջին տարիներին մեծածախ վաճառքից եկամուտները կազմել են Ընկերության ընդհանուր հասույթի ավելի քան 50%-ը:

<sup>4</sup> EBITDA (Earnings before interest, taxes, depreciation and amortization) - շահույթ՝ մինչև տոկոսավճարները, հարկերը, մաշվածությունը և ամորտիզացիան:



2024թ. հասույթի գերակշիռ մասը (շուրջ 70%) ստացվել է դեղորայքի վաճառքից: Մնացած 30%-ը ստացվել է կոսմետիկայի և բիոակտիվ հավելումների, ինչպես նաև մանկական սեզմենտի, բժշկական սարքավորումների և այլ կատեգորիայի ապրանքների վաճառքից: Վերջին տարիներին դեղորայքից եկամուտների մասնաբաժինը որոշ չափով նվազել է՝ տեղը զիջելով կոսմետիկային, բիոակտիվ հավելումներին և այլ ապրանքատեսակներին, ինչը համահունչ է Ընկերության որդեգրած ռազմավարությանը: Նման քաղաքականությունը նպատակ ունի ընդլայնել Ընկերության գործունեության շուկաները և ապահովել եկամուտների տարատեսականացում:



Թողարկողի հիմնական շուկան հանդիսանում է Երևանը, որտեղ այն ունի դեղատների և գնորդների ամենամեծ բաշխվածությունը: Երևանում գոյանում է Թողարկողի հասույթի 60%-ից ավելին, ինչպես մանրածախ, այնպես էլ մեծածախ ոլորտներում: Երևանից բացի՝ մանրածախ ոլորտում Թողարկողի հիմնական շուկաներն են Շիրակի մարզը (հասույթի շուրջ 10.2%), Արմավիրի մարզը (հասույթի շուրջ 7.6%) և Լոռու մարզը (հասույթի շուրջ 6.2%): Մանրածախ ոլորտում Ընկերության հիմնական մրցակիցներն են՝ «Նատալի Ֆարմ դեղատուն» ՍՊԸ-ն, «Տոնուս-Լես» ՍՊԸ-ն, «Առնիկա» ՍՊԸ-ն և «Գեդեոն Ռիխտեր» ՍՊԸ-ն:

Երևանից բացի՝ մեծածախ ոլորտում Թողարկողի հիմնական շուկաներն են՝ Գեղարքունիքի մարզը (հասույթի շուրջ 5%), Արարատի մարզը (հասույթի շուրջ 4.6%), և Լոռու մարզը (հասույթի շուրջ 4.3%): Մեծածախ ոլորտում Ընկերության հիմնական մրցակիցներն են՝ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն, «Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ն և «Ֆարմ Սիսար» ՍՊԸ-ն:

### 3.4.3 Ոլորտի կանոնակարգում և վերահսկողություն

Թողարկողը գործունեություն է ծավալում դեղերի շրջանառության գրեթե բոլոր ուղղություններով, մասնավորապես՝ դեղերի ներմուծում, մեծածախ և մանրածախ վաճառք, ինչպես նաև դեղերի արտադրություն: Դեղերի շրջանառության ոլորտի կանոնակարգման (պետական կարգավորման) հետ կապված լիազորություններն իրականացնում է ՀՀ առողջապահության նախարարությունը: Վերջինս, ի թիվս այլնի, իրականացնում է հետևյալ գործառնությունները.

- 1) ՀՀ կառավարության քաղաքականության իրականացում դեղերի շրջանառության ոլորտում.
- 2) իր իրավասության շրջանակներում դեղերի շրջանառության կարգավորում.
- 3) դեղերի շրջանառության ոլորտի՝ «Դեղերի մասին» օրենքով նախատեսված գործունեության տեսակների լիցենզավորում և այլն:

### 3.4.4 Ոլորտի Օրենսդրական կարգավորում

Դեղերի շրջանառության ոլորտը կարգավորող հիմնական օրենսդրական ակտերն են *(ներկայացված է ոչ սպառիչ ցանկը)*.

#### 3.4.4.1 ՀՀ օրենքներ

- «Դեղերի մասին» օրենք,
- «Լիցենզավորման մասին» օրենք,
- «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» օրենք,
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք,
- «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենք,
- «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» օրենք:

#### 3.4.4.2 ՀՀ կառավարության որոշումներ

- ՀՀ կառավարության 29.06.2002թ.-ի թիվ 867 որոշում «Հայաստանի Հանրապետությունում դեղերի արտադրության, դեղատնային գործունեության,

կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացման, դեղերի մեծածախ իրացման, բժշկական արտադրատեսակների արտադրության, բժշկական արտադրատեսակների սպասարկման լիցենզավորման կարգերը և նշված գործունեությունների իրականացման լիցենզիայի ձևերը հաստատելու մասին»,

- ՀՀ կառավարության 15.08.2019թ.-ի որոշում «Դեղատոմսեր գրելու, դեղեր բաց թողնելու (ներառյալ՝ էլեկտրոնային եղանակով) կարգը, դեղատոմսերի ձևերը, ինչպես նաև դեղերի և դեղանյութերի հաշվառման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 9-ի N 1402-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:

### 3.4.5 Ոլորտի վերահսկողություն

#### 3.4.5.1 *ՀՀ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին*

Դեղերի շրջանառության ոլորտում պետական վերահսկողությունն իրականացնում է ՀՀ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը (այսուհետ՝ նաև ԱԱՏՄ): ԱԱՏՄ նպատակն է օրենքով սահմանված դեպքերում և կարգով առողջապահության, անձի ֆունկցիոնալության գնահատման բնագավառի իրավական ակտերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների պահպանման ապահովումը:

ԱԱՏՄ խնդիրներն են բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության և հանրային առողջապահության ապահովման, բժշկական օգնության և սպասարկման, դեղերի շրջանառության, անձի ֆունկցիոնալության գնահատման, աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտներում ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենքների ու այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության և հանրային առողջապահության ապահովման, բժշկական օգնության և սպասարկման, դեղերի շրջանառության, անձի ֆունկցիոնալության գնահատման, աշխատողների անվտանգության ապահովման, առողջության պահպանման և աշխատանքային հարաբերությունների կարգավորման ոլորտներում:

#### 3.4.5.2 *Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովը*

Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովն իր իրավասության շրջանակներում սեփական նախաձեռնությամբ կամ դիմումի հիմքով


ուսումնասիրում է տնտեսավարող սուբյեկտների այն գործողությունները կամ վարքագիծը, որոնք կարող են կանխել, սահմանափակել կամ արգելել ազատ տնտեսական մրցակցությունը կամ վնասել սպառողների շահերին:

### 3.4.5.3 *ՀՀ կենտրոնական բանկ*

Պարտատոմսերի հրապարակային առաջարկի, տեղաբաշխման և պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու փաստով Թողարկողը ՀՀ օրենսդրությամբ մեկնաբանվում է հաշվետու թողարկող և դառնում արժեթղթերի շուկայի մասնակից, որի գործունեությունը կարգավորվում է համապատասխան օրենսդրությամբ, ենթաօրենսդրական ակտերով և այլ կարգավորումներով: ՀՀ արժեթղթերի շուկան ներառում է ՀՀ տարածքում արժեթղթեր թողարկող և արժեթղթերում ներդրումներ իրականացնող անձանց, ներդրումային ծառայություններ մատուցող անձանց (ներդրումային ընկերությունները, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաձյուղերը, ներդրումային ֆոնդի կառավարիչները, ներդրումային ֆոնդի օտարերկրյա կառավարչի մասնաձյուղերը, բանկերը), Կենտրոնական դեպոզիտարիան, արժեթղթերի կարգավորվող շուկայի օպերատորը և արժեթղթերի չկարգավորվող առևտրի ոլորտը: ՀՀ արժեթղթերի շուկայի կարգավորման և վերահսկողության գործառույթն իրականացնում է ՀՀ կենտրոնական բանկը՝ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով: Արժեթղթերի շուկայի կարգավորման և վերահսկողության հիմնական նպատակներն են. ներդրողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, արժեթղթերի շուկայի թափանցիկության, կայուն և արդյունավետ զարգացման ապահովումը, արժեթղթերի գնագոյացման համակարգի արժանահավատության ապահովումը, արժեթղթերի շուկայում համակարգային ռիսկերի նվազեցումը: Համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի՝ թողարկող է համարվում այն անձը, որն արժեթուղթ է թողարկում (թողարկել) կամ իր անունից արժեթուղթ թողարկելու առաջարկություն է անում: Թողարկողի կողմից իրականացվող արժեթղթի թողարկումն անձի գործողությունների ամբողջությունն է՝ ուղղված նույն դասի արժեթղթերի համախմբի առաջացմանը: Ընդ որում, արժեթղթերի թողարկումը թողարկողի միևնույն որոշման հիման վրա, սակայն տարբեր ժամանակահատվածներում (սերիաներով) համարվում է մեկ թողարկում: Հաշվետու թողարկողն այն թողարկողն է, որի կողմից թողարկված որևէ դասի արժեթուղթը թույլատրված է ՀՀ տարածքում գործող կարգավորվող շուկայում առևտրին: ՀՀ արժեթղթերի շուկան կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով, «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով, դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով, այլ օրենքներով և իրավական ակտերով:

### 3.5 Թողարկողի կառուցվածքը

#### 3.5.1 Խմբի կառուցվածքը



Ընկերությունն ունի թվով 7 մասնակից, որոնցից 6-ը ֆիզիկական անձ են, իսկ մեկը՝ «Ալտա Ֆարմասյութիքըլս» ՍՊԸ-ը՝ իրավաբանական անձ: Ընկերության բաժնետոմսերի շուրջ 82%-ը պատկանում է Ռազմիկ Հովհաննիսյանին (35.54% մասնակցությամբ), «Ալտա Ֆարմասյութիքըլս» ՍՊԸ-ին (28.86% մասնակցությամբ) և Սամվել Շիլաջյանին (17.56% մասնակցությամբ):

Ընկերության դուստր կազմակերպություններն են ՀՀ-ում հիմնադրված «Ալֆա-Ֆարմ Ինվոլոն» ՓԲԸ-ն և «Էյ Լաբ ֆարմասյութիքալս» ՍՊԸ-ն (նախկինում՝ «Թուֆենկջի Գրուպ» ՍՊԸ), որոնց կապիտալում Ընկերությունն ունի 100% մասնակցություն:

«Ալֆա-Ֆարմ Ինվոլոն» ՓԲԸ-ն զբաղվում է դեղերի ներմուծմամբ և մեծածախ վաճառքով, իսկ «Էյ Լաբ ֆարմասյութիքալս» ՍՊԸ-ն՝ դեղերի արտադրությամբ:

#### 3.5.2 Վերահսկող անձինք

##### 3.5.2.1 Վերջնական իրական շահառուներ

Թողարկողի իրական շահառուներ են հանդիսանում՝

- Ռազմիկ Հովհաննիսյանը, ով ուղղակի տիրապետում է Թողարկողի բաժնետոմսերի 35.54%-ին,
- Բայան Դոտչևը, Կալոյան Դոտչևը, Օլյա Դոտչևար, Վանդա Դոտչևար, Տրայանա Դոտչևան, ովքեր միասին անուղղակի տիրապետում են Թողարկողի բաժնետոմսերի 28.86%-ին (յուրաքանչյուրը՝ 5.77-ական տոկոս):
- Սամվել Շիլաջյանը, ով ուղղակի տիրապետում է Թողարկողի բաժնետոմսերի 17.56%-ին,

- Արմեն Ղահրամանյանը, ով ուղղակի տիրապետում է Թողարկողի բաժնետոմսերի 9.23%-ին,
- Հարություն Շատվորյանը, ով ուղղակի տիրապետում է Թողարկողի բաժնետոմսերի 3.08%-ին,
- Անժելա Սուլախյանը, ով ուղղակի տիրապետում է Թողարկողի բաժնետոմսերի 3.08%-ին,
- Կարապետ Ունուպողյանը, ով ուղղակի տիրապետում է Թողարկողի բաժնետոմսերի 2.65%-ին:

### 3.6 Թողարկողի հիմնական միջոցները

Թողարկողի տրամադրության տակ գտնվող էական մեծություն կազմող հիմնական միջոցները ներկայացված են ստորև նշված աղյուսակում.

Հիմնական միջոցներն առ 31.12.24թ.	Զուտ հաշվեկշռային արժեքը (հազար ՀՀ դրամ)
Հող և շենքեր	2,041,466
Հարմարանքներ և կցամասեր	547,395
Այլ (այդ թվում՝ մեքենաներ և սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ)	468,286
<b>Ընդամենը</b>	<b>3,057,147</b>

Նշված հիմնական միջոցների մի մասը (ընդհանուր՝ 1.2 մլրդ ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով) գրավադրված է որպես Ընկերության վարկերի ապահովության միջոց:

Բացի վերոնշյալ հիմնական միջոցներից՝ Ընկերությունն ունի վարձակալված տարածքներ (2024թ. դրությամբ ընդհանուր 2.6 մլրդ ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով): Վարձակալված տարածքները հիմնականում օգտագործվում են դեղատնային գործունեության նպատակով:

### 3.7 Զարգացման վերջին միտումները

2025թ.-ի 1-ին կիսամյակի դրությամբ Ընկերության ընդհանուր հասույթը կազմել է 18.6 մլրդ ՀՀ դրամ, իսկ համախառն շահույթը՝ 4.2 մլրդ ՀՀ դրամ՝ մոտ 23% մարժայի պահպանմամբ: Հասույթի շուրջ 53%-ը ստացված է մեծածախ վաճառքից, ինչը համահունչ է վերջին տարիներին մեծածախ վաճառքից ստացված եկամուտների մասնաբաժնին (հասույթի ավելի քան 50%-ը):

Չնայած ոլորտում առկա ուժեղ մրցակցությանը, դեղերի ներմուծմամբ և դեղատնային գործունեությամբ զբաղվող անձանց մեծ թվի, ինչպես նաև դրանով պայմանավորված համախառն շահույթի և զուտ շահույթի փոքր մարժաների՝ Ընկերությունն ակնկալում է պահպանել եկամուտների, շահույթի և դրամական հոսքերի կայուն աճը ինչպես 2025թ.-ին, այնպես էլ մոտակա տարիների ընթացքում:


Թողարկողի 2025թ. 1-ին կիսամյակի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների վերջին օրվանից (2025թ. հունիսի 30-ից) մինչև Ազդագիրը ՀՀ ԿԲ գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում տեղի չեն ունեցել հասույթի, ինքնարժեքի, վաճառքի գների կամ ծավալների էական փոփոխություններ, որոնք կարող են զգալի ազդեցություն ունենալ 2025թ. ընդհանուր ֆինանսական ցուցանիշների վրա:

### 3.8 Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը

2024թ.-ին Ընկերության գուտ շահույթը կազմել է շուրջ 1.88 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ տարիների համեմատ որոշակի անկում է ունեցել՝ պայմանավորված հիմնականում շուկայում առկա գնային ուժեղ մրցակցությամբ: Զուտ շահույթի մարժան կազմել է շուրջ 5%: Սակայն պետք է նշել, որ 2021-2024թթ. Ընկերությունը կարողացել է ապահովել գուտ շահույթի միջինում տարեկան 4.6% աճ:

Վերջին տարիներին Ընկերությանը հաջողվել է ապահովել ակտիվների (ROA) և կապիտալի (ROE) շահութաբերության երկնիշ ցուցանիշներ՝ համապատասխանաբար 11-13% և 18-23% միջակայքում:

2025թ.-ի 1-ին կիսամյակի դրությամբ գուտ շահույթը կազմել է 873.8 մլն ՀՀ դրամ՝ մոտ 5% մարժայի պահպանմամբ:



Չնայած ոլորտում առկա ուժեղ մրցակցության, դեղերի ներմուծմամբ և դեղատնային գործունեությամբ զբաղվող անձանց մեծ թվի, ինչպես նաև շահույթի փոքր մարժաների՝ Ընկերությունն ակնկալում է պահպանել եկամուտների, շահույթի և դրամական հոսքերի չափավոր և կայուն աճը (2021-2024թթ.-ին ապահովված միջին տարեկան աճի շրջակայքում) մոտակա տարիների ընթացքում՝ պայմանավորված Ընկերության կողմից ներմուծվող և վաճառվող արտադրանքների տեսականու ընդլայնման, եկամուտների և ապրանքների տարատեսականացման,

նորարարությունների ակտիվ կիրառման, էլեկտրոնային առևտրի աճի, դեղատնային ցանցի ընդլայնման և այլ ռազմավարական ուղղությունների զարգացումներով:

### 3.9 Թողարկողի կառավարման մարմինները և անդամները

#### 3.9.1 Կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը



Թողարկողի կառավարման մարմիններն են Ընդհանուր Ժողովը, Խորհուրդը և Գլխավոր տնօրենը:

Ընկերության Ընդհանուր Ժողովը կառավարման բարձրագույն մարմինն է: Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողով ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում:

Բաժնետերերի տարեկան ժողովից բացի գումարվող ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ: Ընկերության արտահերթ ժողովներ գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության Գլխավոր տնօրենը: Ընկերության Գլխավոր տնօրենի իրավասությանն են պատկանում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ ժողովի և խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերի: Խորհրդի կողմից ընկերության Գլխավոր տնօրենին նշանակելուց հետո, Ընկերությունը նրա հետ կնքում է պայմանագիր, որը Ընկերության անունից ստորագրում է Խորհրդի նախագահը:

#### 3.9.2 Կառավարման մարմինների իրավասությունները

##### 3.9.2.1 Ընդհանուր Ժողով

Ընկերության Ընդհանուր Ժողովը կառավարման բարձրագույն մարմինն է: Ընդհանուր ժողովի իրավասություններն են՝

- (1) Ընկերության Կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխություններ կամ լրացումներ կատարելը.
- (2) Ընկերության վերակազմակերպումը.
- (3) Ընկերության լուծարումը,
- (4) Լուծարային հանձնաժողովի նշանակումը, միջանկյալ և լուծարային հաշվեկշիռների հաստատումը.
- (5) Հայտարարված բաժնետոմսերի ծավալի, անվանական արժեքի, դասի և տեսակի սահմանումը.
- (6) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը, և նրանց լիազորությունների դադարեցումը.
- (7) Բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.
- (8) Բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.
- (9) Ժողովի վարման կարգի հաստատումը.
- (10) Հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.
- (11) Ընկերության վերստուգողի ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
- (12) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.
- (13) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, ինչպես նաև տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.
- (14) Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.
- (15) Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց (խորհրդի անդամների և վերստուգողի) աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը և նրանց գործունեության արդյունավետության գնահատումը.
- (16) Ընկերության կողմից հոլդինգային ընկերությունների, ասոցիացիաների և այլ միությունների ստեղծումը, ինչպես նաև դրանցում մասնակցությունը.
- (17) Շահագրգռվածության առկայության դեպքում, գործարքների կնքման մասին որոշումների ընդունումը.
- (18) Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքման մասին որոշումների ընդունումը.
- (19) Բաժնետոմսերի համախմբումը կամ բաժանումը.

- (20) Ընկերության տնօրենների խորհրդի և վերստուգողի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.
- (21) «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ որոշումների ընդունումը:

### 3.9.2.2 *Խորհուրդ*

Ընկերության Խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և սույն կանոնադրությամբ վերապահված են Ընդհանուր Ժողովի բացառիկ իրավասությանը:

Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

- (1) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների, ներառյալ՝ քաղաքականության որոշումը, ռազմավարական և տարեկան գործարար ծրագրերի ու բյուջեի, ներառյալ՝ դրանց ֆինանսական, մարկետինգային և արտադրական բաղկացուցիչ մասերի, ինչպես նաև Ընկերության քաղաքականությունների, ֆինանսական տարվա ընթացքում բյուջեով նախատեսված ընդհանուր կապիտալ ծախսերի և ընդհանուր ադմինիստրատիվ և գործառնական ծախսերի 5%-ը, ինչպես նաև ընդհանուր կապիտալ ծախսերի մեջ յուրաքանչյուր նախագծի մասով բյուջեով հաստատված գումարի 10,000 եվրոն գերազանցող գումարի տատանումների ցանկացած փոփոխությունների հաստատումը.
- (2) տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ սույն կանոնադրության 61 կետով սահմանված դեպքերի.
- (3) բաժնետերերի ժողովների օրակարգի հաստատումը.
- (4) ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը՝ Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համապատասխան.
- (5) սույն կանոնադրության 50-րդ կետի (1), (2), (3), (4), (5), (7), (8), (9), (11), (12), (13), (14), (15), (16), (17), (18), (19), և (20), ենթակետերով նախատեսված հարցերի նախագծերի հաստատումը և ներկայացումը ժողովի քննարկմանը.
- (6) գույքի շուկայական արժեքի որոշումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.
- (7) Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով և դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը, պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը.

- (8) Ընկերության վերատուգողի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.
- (9) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատմանը վերաբերող առաջարկությունների ներկայացումը ժողովին և նրա վճարման չափի սահմանումը, պրոֆեսիոնալ խորհրդատուների, ներառյալ՝ բանկիրների հաստատումը.
- (10) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.
- (11) Ընկերության բաժնետոմսերով վճարվող միջանկյալ շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.
- (12) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.
- (13) Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին այն փաստաթղթերի հաստատումը, որոնք վերապահված չեն բաժնետերերի ժողովի կամ գործադիր մարմնի իրավասությանը.
- (14) Ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների ու հիմնարկների ստեղծումը, և այլ կազմակերպություններին մասնակցելու վերաբերյալ որոշումների ընդունումը.
- (15) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը, դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը.
- (16) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում գործարքների կնքումը կամ հաստատումը, ինչպես նաև հետևյալ գործարքների հաստատումը, եթե դրանցից որևէ մեկի հաստատումը չի հանդիսանում ժողովի բացառիկ իրավասությունը համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.

Ա) ցանկացած պայմանագրի, համաձայնության կամ ծախսերի կատարում ենթադրող գործարքի հաստատումը, որը դուրս է Ընկերության սովորական տնտեսական գործունեության շրջանակներից կամ գերազանցում է 100000 (մեկ հարյուր հազար) եվրո մեծությունը, բացառությամբ սովորական գործունեության շրջանակներում հումքի ձեռքբերման գծով կատարվող ծախսերը.

Բ) ցանկացած ոչ ընթացիկ ակտիվի կամ ակտիվների օտարմանը հանգեցնող մեկ կամ մի քանի փոխկապակցված գործարքի (վաճառքի, վարձակալության կամ նմանատիպ այլ գործարքի միջոցով) հաստատումը, որի կամ որոնց հաշվեկշռային արժեքը գերազանցում է Ընկերության ոչ ընթացիկ ակտիվների 5 (հինգ) տոկոսը.

Գ) ցանկացած ակտիվի գրավադրման գործարքի.

Դ) Ընկերությունը պարտքով ծանրաբեռնման, փոխառության գումարների վաղաժամկետ վերադարձման, ինչպես նաև երաշխավորության կամ փոխառության պայմանագրերի հաստատումը.

Ե) որևէ այլ անձի պարտավորությունը կատարելու երաշխավորության կամ փոխառության պայմանագրերի, կամ որևէ պարտավորության գնման կամ այլ կերպ ձեռքբերման կամ պարտատատիքոջ վնասների՝ պայմանական կամ որևէ այլ հիմքով ապահովագրման գործարքների հաստատումը:

- (17) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.
- (18) Ընկերության գլխավոր տնօրենի, տեղակալների, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների նշանակումը կամ ազատումը, նրանց աշխատավարձի, աշխատանքային պայմանների, ներառյալ՝ նպատակային առաջադրանքների սահմանումը, Ընկերության աշխատակիցներին դրամական պարգևավճարների սահմանումը, ինչպես նաև Ընկերության հաստիքացուցակի հաստատումը, տնօրենների խորհրդի նախագահի և տեղակալի ընտրությունը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
- (19) շահագրգիռ գործարքների հաստատումը, որոնք դուրս են Ընկերության սովորական տնտեսական գործունեության շրջանակներից, ինչպես նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում շահագրգիռ այլ գործարքների հաստատումը,
- (20) Ընկերության անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստր վարող անձի հաստատումը կամ նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև պայմանագրի պայմանների որոշումը
- (21) ներքին քաղաքականությունների, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների հաստատումը
- (22) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ իր իրավասությանը վերապահված այլ հարցերի լուծումը:

### 3.9.2.3 *Գլխավոր Տնօրեն*

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության Գլխավոր տնօրենը:

Գլխավոր տնօրենը՝

- (1) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից.
- (2) առանց լիազորագրի գործում է Ընկերության անունից.
- (3) ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.

- (4) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում աշխատանքային.
- (5) տալիս է լիազորագրեր.
- (6) բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ.
- (7) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.
- (8) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
- (9) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին, ինչպես նաև աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

### 3.9.3 Թողարկողի կառավարման մարմինների անդամները

Թողարկողի կառավարմանը մասնակցող յուրաքանչյուր անձի վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են ստորև բերված աղյուսակում՝

#### 3.9.3.1 Թողարկողի Ընդհանուր Ժողովի մասնակիցները

Թողարկողի Ընդհանուր ժողովն ունի հետևյալ կառուցվածքը՝

Մասնակից	Բաժնեմաս (ՀՀ դրամ)	Բաժնեմաս (%)
Ռազմիկ Հովհաննիսյան	207,909,000	35.54
«Ալտա Ֆարմասյութիքըլս» ՍՊԸ	168,831,000	28.86
Սամվել Շիլաջյան	102,726,000	17.56
Արմեն Ղահրամանյան	53,995,500	9.23
Հարություն Շատվորյան	18,018,000	3.08
Անժելա Սոլախյան	18,018,000	3.08
Կարապետ Ունուպողյան	15,502,500	2.65

- **Ռազմիկ Հովհաննիսյան (35.54%)** –
  - բնակության/հաշվառման հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի,

- մասնագիտությունը/որակավորումը՝ Լեինիգրադի դեղագործական ինստիտուտ, «Դեղագիտություն», Դեղագետի որակավորում,
  - թողարկողի կազմից դուրս այլ գործունեություն՝ «ԱՖՏ—Սիստեմ» ՍՊԸ տնօրեն:
- **«Ալտա Ֆարմասյութիքըլս» ՍՊԸ ի դեմս՝ Բայան Դոտչևի (անուղղակի՝ 5.77%), «Ալտա Ֆարմասյութիքըլս» ՍՊԸ-ում 20% մասնակցությամբ-**
    - բնակության հասցե/ հաշվառման հասցե՝ Բուլղարիայի Հանրապետություն, ք. Սոֆիա,
    - մասնագիտությունը/որակավորումը – մենեջմենթ,
    - թողարկողի կազմից դուրս այլ գործունեություն՝ «Սուբրա» պրեմիում դեղատների գործադիր տնօրեն, «Ալտա Ֆարմասյութիքըլս» ՍՊԸ-ի տնօրեն,
    - նախորդ 5 տարվա ընթացքում զբաղեցրած ղեկավար պաշտոններ՝ «Սուբրա» պրեմիում դեղատների գործադիր տնօրեն, «Ալտա Ֆարմասյութիքըլս» ՍՊԸ-ի տնօրեն:
- **Սամվել Շիլաջյան (17.56%) –**
    - բնակության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, հաշվառման հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի,
    - մասնագիտությունը/որակավորումը՝ Երևանի պետական բժշկական ինստիտուտ (Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան), «Դեղագիտություն», Դեղագետի որակավորում,
    - թողարկողի կազմից դուրս այլ գործունեություն՝ «Էյ Լաբ Ֆարմասյութիքալս» ՍՊԸ տնօրեն,
    - նախորդ 5 տարվա ընթացքում զբաղեցրած ղեկավար պաշտոններ՝ «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի անդամ, «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի դեղատնային ցանցի տնօրեն:
- **Արմեն Ղահրամանյան (9.23%) –**
    - բնակության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, հաշվառման հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի,
    - մասնագիտությունը/որակավորումը՝ Ռուսաստանի Դաշնության կառավարությանը կից ֆինանսական ակադեմիա, "Ֆինանսներ և վարկ", տնտեսագետի որակավորում,
    - թողարկողի կազմից դուրս այլ գործունեություն՝ "ԿՎԱՐՏԱԼ ԳՐՈՒՊ" ՍՊԸ-ի 90% բաժնեմասի սեփականատեր, "ԿՎԱՐՏԱԼ ԳՐՈՒՊ" ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն:

- **Հարություն Շատվորյան (3.08%)** –
  - բնակության հասցե/ հաշվառման հասցե՝ ՀՀ, ք. Երևան,
  - մասնագիտությունը/որակավորումը՝ Պյատիգորսկի բժշկադեղագործական ինստիտուտ, «Դեղագիտություն», Դեղագետի որակավորում,
  - նախորդ 5 տարվա ընթացքում զբաղեցրած ղեկավար պաշտոններ՝ «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի անդամ, «Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ի կոմերցիոն տնօրեն, «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի կոմերցիոն տնօրեն:
  
- **Անժելա Սոլախյան (3.08%)** –
  - բնակության հասցե/ հաշվառման հասցե՝ ՀՀ, ք. Երևան,
  - մասնագիտությունը/որակավորումը՝ Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտ, "Անգլերեն լեզու", "Անգլերեն լեզվի ուսուցիչ" որակավորում:
  
- **Կարապետ Ունուպոլյան (2.65%)** –
  - բնակության հասցե/հաշվառման հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի,
  - մասնագիտությունը/որակավորումը՝ Երևանի պետական բժշկական ինստիտուտ (Երևանի Մխիթար Հեքացու անվան պետական բժշկական համալսարան), «Դեղագիտություն», Դեղագետի որակավորում,
  - թողարկողի կազմից դուրս այլ գործունեություն՝ «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի աշխատակից,
  - նախորդ 5 տարվա ընթացքում զբաղեցրած ղեկավար պաշտոններ՝ «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի վերստուգող:

### 3.9.3.2 *Թողարկողի Խորհրդի անդամները*

Թողարկողի Խորհուրդն ունի հետևյալ կառուցվածքը՝

Անունը, ազգանունը	Պաշտոնը	Փորձառությունը ոլորտում
Արսյոմ Հովհաննիսյան	Խորհրդի նախագահ	Ավելի քան 20 տարի
Սամվել Շիրաջյան	Խորհրդի անդամ, Ընկերության դեղատնային ցանցի տնօրեն	Ավելի քան 30 տարի
Հարություն Շատվորյան	Խորհրդի անդամ, Ընկերության կոմերցիոն տնօրեն	Ավելի քան 30 տարի
Բայան Դոտչև	Խորհրդի անդամ	Ավելի քան 11 տարի
Գեորգի Հորոզով	Խորհրդի անդամ	Ավելի քան 15 տարի

- **Արտյում Հովհաննիսյան (Խորհրդի նախագահ) –**
  - բնակության հասցե/հաշվառման հասցե՝ ՀՀ, ք. Երևան,
  - մասնագիտությունը/որակավորումը՝ Պյատիգորսկի պետական դեղագիտական ակադեմիա, «Դեղագիտություն», Դեղագետի որակավորում,
  - թողարկողի կազմից դուրս այլ գործունեություն՝ «Ռեստ Ինվեստ» ՍՊԸ-ի 50% բաժնետեր, «Ռեստ Կոնցեպտ» ՍՊԸ-ի բաժնետեր, «Ռեստ Թիմ» ՍՊԸ-ի բաժնետեր, «Կվարտալ Գրուպ» ՍՊԸ-ի բաժնետեր, «Ալֆա-Վետ» ՍՊԸ-ի տնօրեն,
  - նախորդ 5 տարվա ընթացքում զբաղեցրած ղեկավար պաշտոններ՝ «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի նախագահ, «Ռեստ Ինվեստ» ՍՊԸ-ի տնօրեն:
- **Սամվել Շիլաջյան (Բաժնետեր, Խորհրդի անդամ, Դեղատնային ցանցի տնօրեն) –**
  - բնակության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, հաշվառման հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի,
  - մասնագիտությունը/որակավորումը՝ Երևանի պետական բժշկական ինստիտուտ (Երևանի Մխիթար Հեռացու անվան պետական բժշկական համալսարան), «Դեղագիտություն», Դեղագետի որակավորում,
  - թողարկողի կազմից դուրս այլ գործունեություն՝ «Էյ Լաբ Ֆարմասյութիքալս» ՍՊԸ տնօրեն,
  - նախորդ 5 տարվա ընթացքում զբաղեցրած ղեկավար պաշտոններ՝ «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի անդամ, «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի դեղատնային ցանցի տնօրեն:
- **Հարություն Շատվորյան (Բաժնետեր, Խորհրդի անդամ, Կոմերցիոն տնօրեն) –**
  - բնակության հասցե/ հաշվառման հասցե՝ ՀՀ, ք. Երևան,
  - մասնագիտությունը/որակավորումը՝ Պյատիգորսկի բժշկադեղագործական ինստիտուտ, «Դեղագիտություն», Դեղագետի որակավորում,
  - նախորդ 5 տարվա ընթացքում զբաղեցրած ղեկավար պաշտոններ՝ «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի անդամ, «Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ի կոմերցիոն տնօրեն, «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի կոմերցիոն տնօրեն:
- **Բայան Դոտչև (Խորհրդի անդամ) –**
  - բնակության հասցե/ հաշվառման հասցե՝ Բուլղարիայի Հանրապետություն, ք. Սոֆիա,
  - մասնագիտությունը/որակավորումը – մենեջմենթ,

- նախորդ 5 տարվա ընթացքում զբաղեցրած ղեկավար պաշտոններ՝ «Սուբրա» պրեմիում դեղատների գործադիր տնօրեն, «Ալտա Ֆարմասյութիքըլս» ՍՊԸ-ի տնօրեն:
- **Գեորգի Հորոզով (Խորհրդի անդամ) –**
  - բնակության հասցե/ հաշվառման հասցե՝ Շվեյցարիա, ք. Յյուրիխ,
  - մասնագիտությունը/որակավորումը՝ Բիզնեսի կառավարման մագիստրոս (INSEAD),
  - թողարկողի կազմից դուրս այլ գործունեություն՝ «PTL GmbH» ընկերության (Շվեյցարիա) խորհրդի նախագահ/ տնօրեն,
  - նախորդ 5 տարվա ընթացքում զբաղեցրած ղեկավար պաշտոններ՝ տնօրեն «RCM GmbH» և «PTL GmbH» ընկերությունների տնօրեն:

### 3.9.3.3 Թողարկողի Գլխավոր տնօրենը

Անունը, ազգանունը	Պաշտոնը	Փորձառությունը ոլորտում
Միքայել Մացակյան	Գլխավոր տնօրեն	10 տարի

- **Միքայել Մացակյան (Գլխավոր տնօրեն) –**
  - բնակության հասցե/ հաշվառման հասցե՝ ՀՀ, ք. Երևան,
  - մասնագիտությունը/որակավորումը՝ ՀՊՏՀ, Ֆինանսներ և վարկ, տնտեսագիտություն, տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան,
  - թողարկողի կազմից դուրս այլ գործունեություն՝ «Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ի տնօրեն,
  - նախորդ 5 տարվա ընթացքում զբաղեցրած ղեկավար պաշտոններ՝ «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն, «Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ի տնօրեն:

### 3.9.4 Շահերի բախումը

Թողարկողի կառավարման մարմնի անդամների՝ Թողարկողի նկատմամբ իրենց պարտականությունների և իրենց անձնական շահերի միջև բախման ռիսկերը բացակայում են՝ պայմանավորված Ընկերությունում ներդրված շահերի բախումը նվազեցնելու/բացառելու քաղաքականությամբ:

### **3.10 Կառավարման մարմինների գործունեությունը**

#### **3.10.1 Թողարկողի աուդիտի կոմիտեն**

Թողարկողը չունի ձևավորված աուդիտի կոմիտե:

#### **3.10.2 Կորպորատիվ կառավարման սկզբունքները**

Ընկերության կորպորատիվ կառավարման համակարգը հիմնված է Ընկերության կանոնադրության և Խորհրդի կանոնակարգի վրա: Խորհրդի կանոնակարգի ընդունմամբ Խորհուրդն արտահայտել է իր դիրքորոշումն՝ առաջնորդվելով կորպորատիվ կառավարման լավագույն պրակտիկայի սկզբունքներով, կատարելագործել Ընկերության կորպորատիվ կառավարման համակարգը, բարձրացնել Ընկերության գործունեության արդյունավետությունը և ներդրումային գրավչությունը, բարելավել Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները, նպաստել Ընկերության երկարաժամկետ կայուն աճին:

Ընկերությունը չի բացառում, մինչույն ժամանակ նաև չի հաստատում Ընկերության կորպորատիվ կառավարման համակարգի համապատասխանությունը ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2024թ. հուլիսի 30-ի N 1955-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագրքին», քանի որ դրանց անկախ մասնագիտական համեմատական վերլուծություն դեռևս չի իրականացվել:

### **3.11 Հսկող անձինք**

Թողարկողն ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի գտնվում հսկողության տակ (չունի հսկող անձ):

### **3.12 Տեղեկատվություն թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին**

#### **3.12.1 Պատմական ֆինանսական տեղեկատվություն**

Ընկերության 2023 և 2024 ֆինանսական տարիների համար աուդիտորական եզրակացությամբ հաստատված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են [Հավելված 4](#)-ում:

### 3.12.2 Միջանկյալ ֆինանսական տեղեկատվություն

Ընկերության 2025թ. 1-ին կիսամյակի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են [Հավելված 4](#)-ում:

### 3.12.3 Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները

Թողարկողի 2025թ. 1-ին կիսամյակի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների վերջին օրվանից (2025թ. հունիսի 30-ից) մինչև Ազդագիրը ՀՀ ԿԲ գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում տեղի չեն ունեցել այնպիսի իրադարձություններ, որոնք ունեցել կամ կարող են ունենալ էական ազդեցություն Ընկերության ֆինանսական վիճակի վրա:

### 3.12.4 Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն

Թողարկողը ներգրավված չէ դատական, արբիտրաժային և (կամ) վարչական որևէ վարույթում, որը ունեցել կամ կարող է ունենալ էական ազդեցություն Թողարկողի ֆինանսական վիճակի կամ արդյունքների վրա:

ՀՀ դատարաններում Ընկերության ներգրավվածությամբ բոլոր դատական և (կամ) վարչական իրավական վարույթների ամփոփ նկարագրի հետ կարելի է ծանոթանալ <https://datalex.am/> դատական տեղեկատվական համակարգում:

## 3.13 Լրացուցիչ տեղեկատվություն

### 3.13.1 Կանոնադրական կապիտալը

#### 3.13.1.1 Կանոնադրական կապիտալի մեծությունը

Ընկերության կանոնադրական կապիտալն առ 30/06/2025թ. կազմել է 1,229,844,833 (մեկ միլիարդ երկու հարյուր քսանհինը միլիոն ութ հարյուր քառասունչորս հազար ութ հարյուր երեսուներեք) ՀՀ դրամ:

#### 3.13.1.2 Հայտարարված բաժնետոմսերի քանակը

Ընկերության հայտարարված, տեղաբաշխված և լրիվ վճարված բաժնետոմսերի քանակն առ 30/06/2025թ. կազմել է 932,407 (ինը հարյուր երեսուներկու հազար չորս հարյուր յոթ) հատ՝ յուրաքանչյուրը 1,319 (մեկ հազար երեք հարյուր տասնինը) ՀՀ դրամ անվանական արժեքով:

Ընկերությունը չունի հայտարարված, սակայն չտեղաբաշխված կամ լրիվ չվարձված բաժնետոմսեր:

#### 3.13.1.3 *Թողարկված բաժնետոմսերի քանակը*

Ընկերության կանոնադրական կապիտալը բաղկացած է 932,407 (ինը հարյուր երեսուններկու հազար չորս հարյուր յոթ) հատ տեղաբաշխված բաժնետոմսից:

#### 3.13.1.4 *Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը*

Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1,319 (մեկ հազար երեք հարյուր տասնինը) ՀՀ դրամ:

### 3.13.2 **Կանոնադրությունը**

Համաձայն Ալֆա-Ֆարմի կանոնադրության 4-րդ կետի՝ Ընկերությունը կարող է իրականացնել ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով չարգելված ցանկացած ձեռնարկատիրական և տնտեսական գործունեություն: Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում: Ըստ Ալֆա-Ֆարմի կանոնադրության 9-րդ կետի՝ Ընկերության գործունեության հիմնական ֆինանսական ցուցանիշը շահույթն է:

### 3.14 **Էական պայմանագրերը**

Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 1 տարվա ընթացքում Թողարկողը չի ունեցել իր բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող այնպիսի էական պայմանագրեր, որոնց գինը գերազանցում է Թողարկողի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5%-ը:

### 3.15 **Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը**

Ազդագրի որևէ մասում չի օգտագործվել հաշվապահի, գնահատողի, խորհրդատուի կամ ցանկացած այլ փորձագետի մասնագիտական կարծիք, բացի աուդիտորական եզրակացությամբ հաստատված ֆինանսական հաշվետվություններից, որոնք ներկայացված են [Հավելված 4](#)-ում:

Ազդագրում ներառված որևէ տեղեկատվության համար աղբյուր չեն հանդիսացել երրորդ անձինք:

### 3.16 **Այլ տեղեկատվություն**

Թողարկողի կանոնադրությունը, տարեկան ֆինանսական հաշվետվությունները, աուդիտորական եզրակացությունները և եռամսյակային հաշվետվությունները մշտապես հասանելի են հանրությանը էլեկտրոնային տարբերակով: Նշված

փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են Թողարկողի պաշտոնական կայքում՝ <https://alfapharm.am/hy/> հասցեով:

Ազդագիրը կարող է ներառել որոշակի ֆինանսական ցուցանիշներ կամ ֆինանսական գործակիցների հաշվարկներ, որոնք չեն հանդիսանում ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ) կողմից սահմանված ցուցանիշներ («Ոչ ՖՀՄՍ ցուցանիշներ»):

Նաև հարկ է նշել, Ազդագրում ներկայացված մյուս բոլոր ցուցանիշները և գործակիցները չեն հաստատվել ֆինանսական հաշվետվությունների արտաքին աուդիտն իրականացրած ընկերության կողմից՝ բացառությամբ այն ցուցանիշների, որոնց համար կա համապատասխան նշում:

ՆԵՐԴՐՈՂԸ, ԾԱՆՈԹԱՆԱԼՈՎ ՍՈՒՅՆ ԱԶԴԱԳՐԻՆ, ՊԵՏՔ Է  
ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՆԱՀԱՏԻ ՏՎՅԱԼ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՍԵՓԱԿԱՆ  
ՆԵՐԴՐՄԱՆ ՌԻՍԿԸ՝ ՄԻՆՉԵՎ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ:

## ՄԱՍ 4 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

### 4.1 ՀԱՎԵԼՎԱԾ 1: Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը

Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Բաժնետոմսերի միջին կշռված թիվը

Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Սեփական կապիտալի միջին մեծություն

Ակտիվների շահութաբերություն (ROA) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Ընդհանուր ակտիվների միջին մեծություն

Զուտ շահույթի մարժա (NPM) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ

Կապիտալի համարժեքության գործակից = Սեփական կապիտալ / Ընդհանուր ակտիվներ

Ֆինանսական կախվածության գործակից = Ընդամենը պարտավորություններ / Սեփական կապիտալ

Բացարձակ իրացվելիության գործակից = (Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ + Ընթացիկ ֆինանսական ներդրումներ) / Ընթացիկ պարտավորություններ

Ընթացիկ իրացվելիության գործակից = (Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ + Ընթացիկ ֆինանսական ներդրումներ + Ընթացիկ դեբիտորական պարտքեր և կանխավճարներ) / Ընթացիկ պարտավորություններ

Ընդհանուր իրացվելիության գործակից = Ընթացիկ ակտիվներ / Ընթացիկ պարտավորություններ

Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից = Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ / Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի միջին արժեքը

Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով = 365 / (Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ / Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի միջին արժեքը)


Պաշարների շրջանառելիության գործակից = Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Պաշարների միջին արժեքը

Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով = 365 / (Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Պաշարների միջին արժեքը)

Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից = Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Կրեդիտորական պարտքերի միջին արժեքը

Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով = 365 / (Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Կրեդիտորական պարտքերի միջին արժեքը):

4.2 ՀԱՎԵԼՎԱԾ 2: Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը



**4.3 ՀԱՎԵԼՎԱԾ 3: Սահմանումներ<sup>6</sup>**

<p><b>դեղ</b></p>	<p>դեղաբանական և (կամ) իմունաբանական և (կամ) նյութափոխանակային ակտիվությամբ օժտված մարդկային և (կամ) կենդանական և (կամ) բուսական և (կամ) քիմիական և (կամ) կենսատեխնոլոգիական ծագման միջոց՝ համապատասխան դեղաչափով և դեղաձևով, անհրաժեշտ փաթեթավորմամբ և մակնշմամբ, որը նախատեսված է կիրառել մարդկանց և կենդանիների հիվանդությունները բուժելու, կանխարգելելու և (կամ) օրգանիզմի ֆիզիոլոգիական ֆունկցիաները փոփոխելու, վերականգնելու, կարգավորելու համար կամ ներմուծվում է մարդու և կենդանու օրգանիզմ հիվանդությունը ախտորոշելու նպատակով.</p>
<p><b>դեղերի շրջանառություն</b></p>	<p>դեղի ստեղծում կամ նախակլինիկական հետազոտություն կամ կլինիկական փորձարկում կամ ստանդարտացում կամ արտադրություն կամ պատրաստում կամ դեղաբուսական հումքի մշակում կամ որակի հսկողություն կամ գրանցում կամ ներմուծում կամ արտահանում կամ փոխադրում, պահպանում կամ իրացում կամ բաշխում կամ կիրառում կամ արդյունավետության, անվտանգության և կողմնակի ազդեցությունների դիտարկում կամ տեղեկատվության կամ գովազդի տարածում կամ ոչնչացում</p>
<p><b>դեղատոմս</b></p>	<p>դեղի՝ թղթային կամ էլեկտրոնային կարգով գրավոր նշանակում այդ իրավասությունն ունեցող բժշկի կողմից՝ դեղը պատրաստելու և (կամ) պատրաստի դեղը բաց թողնելու նպատակով</p>
<p><b>դեղերի մեծածախ իրացում</b></p>	<p>գործունեության տեսակ, որը ներառում է մատակարարի կողմից դեղ արտադրողից կամ դեղի գրանցման հավաստագրի իրավատիրոջից կամ այլ մատակարարից դեղեր ձեռք բերելը կամ ներմուծելը կամ արտահանելը կամ պահպանելը կամ իրացնելը (բաշխելը), բացառությամբ սպառողներին դեղերի իրացման.</p>
<p><b>դեղերի մանրածախ իրացում՝</b></p>	<p>դեղերի իրացում կամ բաց թողնում սպառողներին.</p>
<p><b>դեղատնային գործունեություն</b></p>	<p>օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան՝ դեղերի և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած այլ ապրանքատեսակների մեծածախ ձեռքբերում, պահպանում և մանրածախ իրացում կամ բաց թողնում, տեղեկատվություն և խորհրդատվություն, առողջ ապրելակերպի քարոզչություն, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմանների առկայության դեպքում դեղերի պատրաստում կամ առաքում.</p>
<p><b>դեղատուն</b></p>	<p>դեղատնային գործունեության իրականացման վայր</p>

<sup>6</sup> Նշված հասկացությունները սահմանված են «Դեղերի մասին» ՀՀ օրենքով:



## Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Ցուցանիշի անվանումը	2025թ. 2-րդ եռ.	2024թ.
Հասույթ	18 624 635	34 593 602
Վաճառքի ինքնարժեք	-14 408 716	-27 072 318
Համախառն շահույթ (վնաս)	4 215 919	7 521 284
Այլ եկամուտ	142 189	359 266
Վաճառքի և առաքման ծախսեր	-2 736 852	-4 566 589
Ընդհանուր և վարչական ծախսեր	-407 658	-685 817
Արտարժույթի փոխարկումից զուտ օգուտ/(վնաս)	-21 193	33 317
Այլ օգուտ/(վնաս),զուտ	-34928	-89 221
Հնարավոր պարտքային կորուստների զուտ հակադարձում/(հատկացում)	-13 576	-51 042
<b>Գործառնական շահույթ (վնաս)</b>	<b>1 143 901</b>	<b>2 521 198</b>
Ֆինանսական եկամուտ	-	-
Ֆինանսական ծախսեր	-51 652	-232 106
<b>Շահույթ մինչև շահութահարկով հարկումը</b>	<b>1 092 249</b>	<b>2 289 092</b>
Շահութահարկի գծով ծախս	-218 450	-411 870
<b>Տարվա շահույթ</b>	<b>873 799</b>	<b>1 877 222</b>
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՍԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ</b>	<b>873 799</b>	<b>1 877 222</b>

Միքայել Մացակյան

Գլխավոր տնօրեն



Լիանա Ղևոնդյան

Ֆինանսական տնօրեն



## Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Ցուցանիշի անվանումը	2025թ. 2-րդ եռ.	2024թ.
Հիմնական միջոցներ	3 177 374	3 057 147
Ներդրումային գույք	133 718	135 258
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	2 623 672	2 623 672
Գուղվիլ	121 573	121 573
Հետաձգված հարկային ակտիվ	97 443	97 443
Այլ ակտիվներ	5 376	10 727
Այլ ոչ նյութական ակտիվներ	130 800	102 972
<b>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</b>	<b>6 289 956</b>	<b>6 148 792</b>
Պաշարներ	9 334 485	9 789 807
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	4 523 481	2 682 773
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	179 210	259 455
<b>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</b>	<b>14 037 176</b>	<b>12 732 035</b>
<b>Ընդամենը ակտիվներ</b>	<b>20 327 131</b>	<b>18 880 827</b>
Կանոնադրական կապիտալ	1 229 845	1 229 845
Զբաղիված շահույթ	9 505 917	9 715 118
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>	<b>10 735 762</b>	<b>10 944 963</b>
Վարկեր և փոխառություններ	42 171	85 978
Վարձակալության գծով պարտավորություններ	1 955 319	1 955 319
Հետաձգված հարկային պարտավորություններ	180 245	180 245
<b>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</b>	<b>2 177 735</b>	<b>2 221 542</b>
Վարկեր և փոխառություններ	1 680 614	1 075 888
Վարձակալության գծով պարտավորություններ	825 549	825 549
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4 708 823	3 650 780
Պայմանագրային պարտավորություններ	154 958	139 958
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն	43 690	22 147
<b>Ընդամենը ընթացիկ պարտավորություններ</b>	<b>7 413 634</b>	<b>5 714 322</b>
<b>Ընդամենը պարտավորություններ</b>	<b>9 591 369</b>	<b>7 935 864</b>
<b>Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ</b>	<b>20 327 131</b>	<b>18 880 827</b>

Միքայել Մացակյան  
Գլխավոր տնօրեն



Լիանա Ղևոնդյան  
Ֆինանսական տնօրեն



**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ**

**Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին  
համապատասխան՝**

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններ և  
Անկախ աուդիտորական եզրակացություն**

**31 դեկտեմբերի 2024թ.**

## Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն .....	1
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն .....	2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն .....	3
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն .....	4

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ն և նրա գործունեությունը .....	5
2 Խմբի գործառնական միջավայրը .....	5
3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ .....	6
4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության Էական գնահատականներ և դատողություններ .....	19
5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին .....	22
6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ .....	23
7 Հիմնական միջոցներ .....	26
8 Ներդրումային գույք .....	27
9 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ .....	28
10 Պաշարներ .....	29
11 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր .....	29
12 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ .....	31
13 Կանոնադրական կապիտալ .....	31
14 Վարկեր և փոխառություններ .....	31
15 Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորությունների համեմատություն .....	33
16 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր .....	33
17 Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ .....	34
18 Եկամուտներ և ծախսեր .....	34
19 Ֆինանսական ծախսեր .....	35
20 Շահութահարկ .....	35
21 Պայմանական դեպքեր և պարտավորություններ .....	37
22 Դուստր ընկերություններ .....	38
23 Ֆինանսական ռիսկերի կառավարում .....	39
24 Կապիտալի կառավարում .....	42
25 Իրական արժեքի բացահայտումներ .....	42
26 Ֆինանսական գործիքների ներկայացում ըստ չափման կատեգորիաների .....	43
27 Փոխկապակցված կողմերի հետ մնացորդներ և գործարքներ .....	43



## Անկախ աուդիտորական եզրակացություն

«Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ Բաժնետերերին և Տնօրենների խորհրդին

### Մեր կարծիքը

Մեր կարծիքով, կից ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ (այսուհետ՝ խումբ) և դուստր կազմակերպությունների (այսուհետ միասին՝ խումբ) համախմբված ֆինանսական վիճակն 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև, խմբի նույն ամսաթվին ավարտված տարվա՝ համախմբված ֆինանսական արդյունքներն ու համախմբված դրամական միջոցների հոսքերը համաձայն ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

### Աուդիտի առարկան

Մենք աուդիտի ենք ենթարկել խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են.

- ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 2024թ. դեկտեմբերի 31-ը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, և
- համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են էական հաշվապահական հաշվառման քաղականության տեղեկատվություն և այլ բացատրական տեղեկատվություն:

### Կարծիքի հիմքը

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք կարծում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

### Անկախություն

Մենք անկախ ենք խմբից՝ համաձայն Հանրապետության Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից թողարկված՝ Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտների) («ՀԷՄՍԻՎ Վարքագիր») սկզբունքների, ինչպես նաև Էթիկական պահանջների, որոնք կիրառելի են Հայաստանի Հանրապետությունում համախմբված ֆինանսական հաշվետվություններին մեր աուդիտի նկատմամբ: Մենք կատարել ենք Էթիկայի գծով մեր այլ պարտականությունները այդ պահանջներին և ՀԷՄՍԻՎ Վարքագրին համապատասխան:

«Փրայտութերիաուս Կուպերս Արմենիա» ՍՊԸ  
ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Մարգարյան 2, «Կամար» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ  
Հեռ.՝ (37410) 512151, ֆաքս՝ (37410) 521000, [www.pwc.com/am](http://www.pwc.com/am)



## Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՀՖՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է իսբի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի հունվը լուծարելու կամ իսբի գործունեությանը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են իսբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

## Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները՝ ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալների հետևանքով առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կբացահայտի էական խեղաթյուրումը, երբ այն ամկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով, և համարվում են էական, երբ ողջամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կարող են ազդեցություն ունենալ օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կանխածանոթություն: Ի լրումն՝

- որոշում և գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումների ռիսկը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր աուդիտորական կարծիքը արտահայտելու համար: Խարդախության հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացում կամ ներքին հսկողության չարաշահում,
- ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե իսբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը,
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ



իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել իմբի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է Էական անորոշություն, մենք պարտավոր ենք մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են միևնույն մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են հանգեցնել նրան, որ խումբը դադարեցնի անընդհատության սկզբունքով գործունեությունը,

- գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, այդ թվում՝ բացահայտումները և այն, թե արդյոք համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են հիմնական գործարքներն ու դեպքերն այնպես, որ ապահովվում է ճշմարիտ ներկայացումը,
- Ձեռք ենք բերում բավարար չափով պատշաճ աուդիտորական ապացույցներ իմբի կազմում գտնվող կազմակերպությունների կամ տնտեսական միավորների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ որպես համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու հիմք: Մենք պատասխանատու ենք իմբի աուդիտի նպատակով իրականացվող աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկողության և ստուգման համար: Մենք հանդիսանում ենք պատասխանատու միայն մեր արտահայտած աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

5  
  
Նինո Կարապետյանի  
Տնօրեն


26 մայիսի 2025թ.  
Երևան, Հայաստանի Հանրապետություն

*PricewaterhouseCoopers Armenia LLC*

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ**  
**Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն**

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	31 դեկտեմբերի 2024թ	31 դեկտեմբերի 2023թ
<b>Ակտիվներ</b>			
<b>Ոչ ընթացիկ ակտիվներ</b>			
Հիմնական միջոցներ	7	3,057,147	2,898,299
Ներդրումային գույք	8	135,258	138,591
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	9	2,623,672	1,588,025
Գուղվիլ	22	121,573	121,573
Հետաձգված հարկային ակտիվ	20	97,443	127,640
Այլ ակտիվներ		10,727	14,898
Այլ ոչ նյութական ակտիվներ		102,972	129,745
<b>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</b>		<b>6,148,792</b>	<b>5,018,771</b>
<b>Ընթացիկ ակտիվներ</b>			
Պաշարներ	10	9,789,807	8,193,698
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	11	2,682,773	3,049,948
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	259,455	308,815
<b>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</b>		<b>12,732,035</b>	<b>11,552,461</b>
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<b>18,880,827</b>	<b>16,571,232</b>
<b>Սեփական կապիտալ</b>			
Կանոնադրական կապիտալ	13	1,229,845	1,229,845
Չբաշխված շահույթ		9,715,118	9,237,896
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>		<b>10,944,963</b>	<b>10,467,741</b>
<b>Պարտավորություններ</b>			
<b>Ոչ ընթացիկ պարտավորություններ</b>			
Վարկեր և փոխառություններ	14	85,978	51,494
Վարձակալության գծով պարտավորություններ	9	1,955,319	1,160,165
Հետաձգված հարկային պարտավորություններ	20	180,245	197,186
<b>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</b>		<b>2,221,542</b>	<b>1,408,845</b>
<b>Ընթացիկ պարտավորություններ</b>			
Վարկեր և փոխառություններ	14	1,075,888	429,293
Վարձակալության գծով պարտավորություններ	9	825,549	525,765
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	16	3,650,780	3,437,572
Պայմանագրային պարտավորություններ		139,958	141,991
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		22,147	160,025
<b>Ընդամենը ընթացիկ պարտավորություններ</b>		<b>5,714,322</b>	<b>4,694,646</b>
<b>Ընդամենը պարտավորություններ</b>		<b>7,935,864</b>	<b>6,103,491</b>
<b>Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ</b>		<b>18,880,827</b>	<b>16,571,232</b>

Տնօրենների խորհրդի կողմից հաստատվել է հրապարակման համար և ստորագրվել է 2025թ. մայիսի 26-ին:



*[Signature]*  
 Լիանա Անտոյան  
 Ֆինանսական տնօրեն

5-44 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ**

**Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն**

<b>Հազ. ՀՀ դրամ</b>	<b>Ծան.</b>	<b>2024թ.</b>	<b>2023թ.</b>
Հասույթ	17	34,593,602	33,516,715
Վաճառքի ինքնարժեք	10	(27,072,318)	(25,404,479)
<b>Համախառն շահույթ</b>		<b>7,521,284</b>	<b>8,112,236</b>
Այլ եկամուտ	18	359,266	200,298
Վաճառքի և առաքման ծախսեր	18	(4,566,589)	(4,485,699)
Ընդհանուր և վարչական ծախսեր	18	(685,817)	(782,086)
Արտարժույթի փոխարկումից զուտ օգուտ/(վնաս)		33,317	(11,255)
Այլ օգուտ/(վնաս),զուտ	18	(89,221)	(117,879)
Հնարավոր պարտքային կորուստների զուտ հակադարձում/(հատկացում)		(51,042)	(2,776)
<b>Գործառնական շահույթ</b>		<b>2,521,198</b>	<b>2,912,839</b>
Ֆինանսական եկամուտ		-	6,642
Ֆինանսական ծախս	19	(232,106)	(152,892)
<b>Շահույթ մինչև շահութահարկով հարկումը</b>		<b>2,289,092</b>	<b>2,766,589</b>
Շահութահարկի գծով ծախս	20	(411,870)	(538,296)
<b>ՏԱՐՎԱ ՇԱՀՈՒՅԹ</b>		<b>1,877,222</b>	<b>2,228,293</b>
<b>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</b>		<b>-</b>	<b>-</b>
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ</b>		<b>1,877,222</b>	<b>2,228,293</b>

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ**

**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն**

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	Կանոնադրական կապիտալ	Զբաղիված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
<b>Մնացորդն առ 1 հունվարի 2023թ.</b>		<b>1,229,845</b>	<b>8,272,603</b>	<b>9,502,448</b>
Տարվա շահույթ		-	2,228,293	<b>2,228,293</b>
<b>Ընդամենը 2023թ. համապարփակ ֆինանսական արդյունք</b>		-	<b>2,228,293</b>	<b>2,228,293</b>
Գործարքներ սեփականատերերի հետ, որոնցում նրանք հանդես են գալիս սեփականատիրոջ կարգավիճակում.				
Հայտարարված շահաբաժիններ	13	-	(1,263,000)	<b>(1,263,000)</b>
<b>Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2023թ.</b>		<b>1,229,845</b>	<b>9,237,896</b>	<b>10,467,741</b>
Հաշվետու տարվա շահույթ		-	1,877,222	<b>1,877,222</b>
<b>Ընդամենը 2024թ. համապարփակ ֆինանսական արդյունք</b>		-	<b>1,877,222</b>	<b>1,877,222</b>
Գործարքներ սեփականատերերի հետ, որոնցում նրանք հանդես են գալիս սեփականատիրոջ կարգավիճակում.				
Հայտարարված շահաբաժին	13	-	(1,400,000)	<b>(1,400,000)</b>
<b>Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2024թ.</b>		<b>1,229,845</b>	<b>9,715,118</b>	<b>10,944,963</b>

5-44 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ**

**Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն**

Հազ. ՀՀ դրամ	Ճան.	2024թ.	2023թ.
<b>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>			
<b>Շահույթ նախքան հարկումը</b>		<b>2,289,092</b>	<b>2,766,589</b>
<i>Ճշգրտումներ.</i>			
Շահույթում կամ վնասում ճանաչվող ֆինանսական ծախս	19	232,106	146,250
Արտաթուղթի փոխանակումից զուտ օգուտ		33,317	11,255
Ոչ ընթացիկ ակտիվների ամորտիզացիա և արժեզրկում		1,213,135	1,122,559
Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից (օգուտ)/վնաս		(51,510)	2,311
Պաշարների իրացման արժեքի փոփոխություն (զուտ)		-	(7,500)
Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի հատկացում/(հակադարձում)		(51,042)	2,776
Վարձակալության փոփոխություն	18	13,266	(45,391)
Չօգտագործված արձակուրդային օրերի պահուստ (դուրսգրում)/հատկացում		(147,471)	1,222
<b>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր նախքան շրջանառու կապիտալի ճշգրտումները</b>		<b>3,530,893</b>	<b>4,000,071</b>
Առևտրային և այլ դեբիտորական պարտքի նվազում /(աճ)		431,388	(666,748)
Պաշարների ավելացում		(1,596,109)	(484,793)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքի աճ/(նվազում)		303,831	(131,067)
Պայմանագրային պարտավորության նվազում		(2,033)	(2,048)
<b>Փոփոխություններ շրջանառու կապիտալում</b>		<b>(862,923)</b>	<b>(1,284,656)</b>
Վճարված շահութահարկ		(536,512)	(651,318)
<b>Գործառնական գործունեությամբ ստացված զուտ դրամական միջոցներ</b>		<b>2,131,458</b>	<b>2,064,097</b>
<b>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>			
Հիմնական միջոցների ձեռքբերում		(527,371)	(386,791)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր		166,878	7,220
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(13,001)	(95,324)
<b>Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ</b>		<b>(373,494)</b>	<b>(474,895)</b>
<b>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>			
Վարկերից և փոխառություններից մուտքեր	15	25,584,746	21,688,920
Վարկերի և փոխառությունների մարում	15	(24,905,865)	(21,779,797)
Վճարված տոկոսներ	15	(229,908)	(145,703)
Վարձակալության պարտավորությունների մայր գումարի մարում	15	(857,102)	(809,683)
Վճարված շահաբաժիններ	13	(1,400,000)	(1,263,000)
<b>Ֆինանսական գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ</b>		<b>(1,808,129)</b>	<b>(2,309,263)</b>
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա			
		805	(2,325)
<b>Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին</b>		<b>12</b>	<b>308,815</b>
<b>Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին</b>		<b>12</b>	<b>259,455</b>

5-44 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ**

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ  
առ 31 դեկտեմբերի 2024թ.**

**1 «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ն և նրա գործունեությունը**

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան, «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») և նրա դուստր ընկերությունների (այսուհետ՝ «Խումբ») համար: Դուստր ընկերությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 22-ում:

Ընկերությունը գրանցվել և իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ «ՀՀ»): Ընկերությունը փակ բաժնետիրական ընկերություն է և ստեղծվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության թողարկված բաժնետոմսերի սեփականատերերի կազմը հետևյալն էր.

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ռազմիկ Հովհաննիսյան “Alta Pharmaceuticals” EOOD («Ալտա Ֆարմայութիքըլս ԷՕՕԴ»)	35.54%	35.54%
Սամվել Շիլաջյան	28.86%	28.86%
Այլ	17.56%	17.56%
	18.04%	18.04%
<b>Ընդամենը</b>	<b>100.00%</b>	<b>100.00%</b>

Խումբը չունի վերջնական վերահսկողություն իրականացնող կողմ, և ղեկավարությունն իրականացվում է բարձրագույն կառավարման խորհրդի՝ Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից: Փոխկապակցված կողմերի հետ գործարքները բացահայտված են Ծանոթագրություն 25-ում:

**Հիմնական գործունեությունը.** Խմբի հիմնական գործունեությունը դեղերի մեծածախ և մանրածախ առևտուրն է Հայաստանի տարածքում գործող դեղատների ցանցի միջոցով: 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը Հայաստանում ուներ 184 գործող դեղատուն (2023թ. դեկտեմբերի 31-ին՝ 168 դեղատուն):

**Իրավաբանական հասցեն և գործունեության վայրը.** Ընկերության գրանցման հասցեն է՝ ՀՀ, Երևան, Շիրակի փողոց, 1/68:

**Ներկայացման արժույթը.** Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը Հայաստանի Հանրապետության դրամն է (այսուհետև՝ «ՀՀ դրամ»), եթե այլ կերպ նշված չէ:

**2 Խմբի գործառնական միջավայրը**

**Հայաստանի Հանրապետություն.** Նախորդ տարիների համեմատ, 2024 թվականը Հայաստանի համար համեմատաբար անցցում էր՝ առանց պատերազմի: Այնուամենայնիվ, երկիրը շարունակել է առերեսվել մարտահրավերներին՝ կապված Լեռնային Ղարաբաղից տեղահանված ավելի քան 100,000 հայրենակիցների հետ, ովքեր, 2023թ. տեղահանության արդյունքում կորցնելով իրենց տները, վերաբնակություն են հաստատել Հայաստանում: Նախորդ տարիների համեմատ որոշ չափով նվազել է երկրի տնտեսական ակտիվությունը, որը հիմնականում պայմանավորված էր ռուս-ուկրաինական պատերազմով, երբ Հայաստանը դարձավ հատուկ գոտի: Հաշվի առնելով, որ ՌԴ քաղաքացիների մեծ մասը լքել է երկիրը, հասույթի անկումը անխուսափելի էր մի շարք ուղղություններով՝ հիմնականում մանրածախ առևտրի և որոշակի ապրանքային կատեգորիաներում, հատկապես բարձրարժեք կոսմետիկ միջոցների կատեգորիայում: Կարելի է առանձնացնել մի շարք մարտահրավերներ, որոնք բացասաբար են անդրադարձել 2024թ. արդյունքների վրա: Առաջին մարտահրավերը կայանում է նրանում, որ երկրում աճել են դեպքերը, երբ մեծածախ առևտրի հաճախորդները վաճառք են իրականացրել առանց եկամուտը հավաստող փաստաթղթերի:

## **2 Խմբի գործառնական միջավայրը (շարունակություն)**

Սա խնդիրներ է առաջացրել խմբի համար, քանի որ այն կարող էր կորցնել մրցակցային առավելությունը՝ առանց փաստաթղթի վաճառք իրականացնելու հնարավորություն ունեցող ընկերությունների համեմատ: 2024թ. մարտից ուժի մեջ է մտել օրենքը, որով արգելվում է դեղատներից մի շարք դեղամիջոցների ձեռքբերումը առանց բժշկի կողմից տրված էլեկտրոնային դեղատոմսի: Օրենքի պահպանումը հիմնականում վերահսկվել է դեղատնային ցանցերում, ինչը հանգեցրել է մրցակցային դիրքի որոշակի կորստի՝ օրենքը չպահպանող դեղատների համեմատ:

**Պատերազմ Ռուսաստանի և Ուկրաինայի միջև.** 2022թ. փետրվարին Ուկրաինայում Ռուսաստանի սանձազերծած պատերազմը տարբեր ուղղություններով ազդեցություն է ունեցել ՀՀ տնտեսության վրա: Մի կողմից, Հայաստանը դարձել է տասնյակ հազարավոր այցելուների ժամանակավոր բնակության վայր և տնտեսական հետաքրքրությունների եզակի կենտրոն, ինչը, մասնավորապես, լրացուցիչ հնարավորություններ է ստեղծում ֆինանսական գործառնությունների համար: Ավելին, Ռուսաստանի տնտեսությունում առաջանում են ազատ շուկայական սեզմենտներ, որոնք լայն հնարավորություն են ընձեռում արտահանումը խթանելու և ՀՀ-ից վերաարտահանման գործառնություններ իրականացնելու համար: Ավելին, Հայաստանի տնտեսական համակարգի վրա միանշանակ ազդում են Ռուսաստանի Դաշնության դեմ կիրառվող պատժամիջոցները: Բացի այդ, Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի ազդեցությունը կարելի է դիտարկել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի հարթություններում: Հայկական արժույթը շարունակել է արժևորվել 2024թ. , ինչը հիմնականում պայմանավորված է եղել հայաստանյան շուկա արտարժույթի մեծածավալ փոխանցումներով:

## **3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ**

**Պատրաստման հիմունքները.** Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՍ») պահանջներին համապատասխան, սկզբնական արժեքի հիմունքով: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական սկզբունքները ներկայացված են ստորև: Այդ սկզբունքները հետևողականորեն կիրառվել են այն բոլոր ժամանակաշրջանների համար, որոնք ներկայացված հաշվետվություններում, եթե այլ բան նշված չէ:

ՖՀՄՍ-ին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար պահանջվում են հաշվապահական հաշվառման էական գնահատումներ: Բացի այդ, խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ ղեկավարությանն անհրաժեշտ է առաջնորդվել իր դատողություններով: Այն ոլորտները, որոնք ենթադրում են դատողությունների կամ բարդության ավելի բարձր աստիճան, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատականները էական են համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են Ծանոթագրություն 4-ում:

**Անընդհատության հիմունք.** Ղեկավարության կողմից սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքով:

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններ.** Դուստր ձեռնարկություններն այն ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպություններն են, որոնք խումբը վերահսկում է, քանի որ խումբը (i) իրավասություն ունի ուղղորդել ներդրման օբյեկտների գործունեության կոնկրետ ուղղությունները, որոնք էականորեն ազդում են նրանց շահութաբերության վրա, (ii) ներդրման օբյեկտներում իր ներգրավվածության հետևանքով կրում է փոփոխական շահույթի չստացման ռիսկը, ինչպես նաև նման շահույթի ստացման իրավունքը, (iii) հնարավորություն ունի ներդրման օբյեկտների նկատմամբ իր իրավասությունները օգտագործելու միջոցով ազդել ներդրումային եկամտի մեծության վրա: Գնահատելիս, թե արդյոք խումբը իրավասություն ունի այլ կազմակերպության նկատմամբ, հաշվի են առնվում նման իրավունքների, այդ թվում՝ հնարավոր ձայնի իրավունքների փաստացի առկայությունը և ազդեցությունը: Իրավունքը փաստացի առկա է, եթե դրա կրողն ունի այդ իրավունքը իրացնելու գործնական հնարավորություն այն դեպքում, երբ անհրաժեշտ է որոշում կայացնել ներդրման օբյեկտի համապատասխան գործունեության ուղղության վերաբերյալ: Խումբը կարող է իրավասություն ունենալ ներդրման օբյեկտի նկատմամբ նույնիսկ այն դեպքում, երբ այն չի տիրապետում է ներդրման օբյեկտի քվեարկող ձայների մեծամասնությանը: Նման դեպքում, խումբը իր ձայնի իրավունքի չափը գնահատում է մյուս ձայնի իրավունք ունեցողների չափի և բաշխվածության հետ համեմատությամբ՝ որոշելու համար, թե արդյոք խումբը դե-ֆակտո իրավունք ունի ներդրման օբյեկտի նկատմամբ:

**3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ  
(շարունակություն)**

Այլ ներդրողների պաշտպանությանն առնչվող իրավունքները, մասնավորապես՝ այն իրավունքները, որոնք վերաբերում են ներդրման օբյեկտի գործունեության հիմնարար փոփոխություններին կամ որոնք կիրառվում են բացառիկ հանգամանքներում, չեն խոչընդոտում իսկի կողմից ներդրման օբյեկտի վերահսկողությանը: Դուստր ձեռնարկությունները համախմբվում են այն պահից, երբ վերահսկողությունը փոխանցվում է իսկին (ձեռքբերման ամսաթիվը), և համախմբումը դադարում է այն պահից, երբ խումբը կորցնում է նշված վերահսկողությունը:

Դուստր ձեռնարկությունների ձեռքբերումը հաշվառելու համար օգտագործվում է հաշվապահական հաշվառման ձեռքբերման մեթոդը: Ձեռք բերված որոշելի ակտիվները և ձեռնարկատիրական գործունեության միավորմամբ ստանձնած պարտավորությունները և պայմանական պարտավորությունները չափվում են ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրենց իրական արժեքներով՝ անկախ որևէ չվերահսկող բաժնեմասի չափից:

Գուղվիլը չափվում է՝ ձեռք բերվող միավորի զուտ ակտիվները ձեռք բերվող միավորի համար վճարված հատուցման հանրագումարից, ձեռք բերվող միավորում չվերահսկող բաժնեմասի գումարից և ձեռք բերվող միավորում բաժնեմասի իրական արժեքից, որը գործում էր ձեռքբերման ամսաթվից անմիջապես առաջ: Ցանկացած բացասական գումար («բացասական գուղվիլ») կամ «սակարկային ձեռքբերում») ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ այն բանից հետո, երբ ղեկավարությունը կատարում է վերագնահատում՝ պարզելու համար, թե արդյոք նա նույնականացրել է ձեռք բերված բոլոր ակտիվները և ստանձնած բոլոր պարտավորությունները և պայմանական պարտավորությունները, և վերանայում է դրանց չափման համապատասխանությունը:

Ձեռք բերվող կողմի համար փոխանցված հատուցումը չափվում է հանձնած ակտիվների, թողարկված բաժնային գործիքների և առաջացած կամ ստանձնած պարտավորությունների իրական արժեքով, ներառյալ ակտիվների կամ պարտավորությունների իրական արժեքը պայմանական հատուցման պայմանավորվածությունների գծով, սակայն հաշվի չի առնում ձեռքբերման հետ կապված ծախսումները, ինչպիսիք են խորհրդատվական, իրավաբանական, գնահատման և նմանատիպ մասնագիտական ծառայությունները:

Իսկի ընկերությունների միջև գործարքները, մնացորդները և գործարքների չիրացված օգուտները բացառված են. չիրացված վնասները նույնպես բացառված են, բացառությամբ այն դեպքերի, երբ ծախսը հնարավոր չէ վերականգնել: Ընկերությունը և նրա դուստր ձեռնարկությունները օգտագործում են հաշվապահական հաշվառման միասնական քաղաքականություն, որը համահունչ է իսկի քաղաքականությանը:

**Արտարժույթի փոխարկում.** Իսկի ֆունկցիոնալ արժույթը Ընկերության հիմնական գործունեության իրականացման տնտեսական միջավայրի արժույթն է: Իսկի ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը:

**Գործարքներ և մնացորդներ.** Դրամական ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են իսկի ֆունկցիոնալ արժույթի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ «ՀՀ ԿԲ») պաշտոնական փոխարժեքով: Գործարքների վճարումները կատարելու և դրամական ակտիվները և պարտավորությունները ՀՀ ԿԲ տարեվերջի պաշտոնական փոխարժեքով իսկի ֆունկցիոնալ արժույթի փոխարկելու արդյունքում ստացված՝ արտարժույթի փոխարկումից եկամուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, ֆինանսական եկամուտների կամ ծախսերի կազմում: Տարեվերջի փոխարժեքով փոխարկումը չի կիրառվում ոչ դրամական հոդվածների նկատմամբ, որոնք չափվում են սկզբնական արժեքով: Արտարժույթով արտահայտված և իրական արժեքով չափված ոչ դրամական հոդվածները, ներառյալ բաժնեմասնակցային ներդրումները փոխարկվում են իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ հաստատված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված և իրական արժեքով չափվող ոչ դրամական հոդվածների վրա արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը գրանցվում է որպես իրական արժեքի շահույթի կամ վնասի մաս:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտարժույթով արտահայտված մնացորդների փոխարկման համար օգտագործվող հիմնական փոխարժեքներն են՝ 1 ԱՄՆ դոլար = 396.56 ՀՀ դրամ (2023թ.՝ 1 ԱՄՆ դոլար = 404.79 ՀՀ դրամ), 1 եվրո = 413.89 ՀՀ դրամ (2023թ.՝ 1 եվրո = 447.9 ՀՀ դրամ), 1 ՌԴ ռուբլի = 3 . 71 դրամ (2023թ. 1 ՌԴ ռուբլի = 4.50 ՀՀ դրամ), 1 անգլիական ֆունտ ստեռլինգ = 499.27 ՀՀ դրամ (2023թ. 1 անգլիական ֆունտ ստեռլինգ = 515.38 ՀՀ դրամ):

**3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ  
(շարունակություն)**

**Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունում արտարժույթային տարբերությունների ներկայացում.** Խուճաբանում է կայացրել արտարժույթի տարբերությունները բացառել դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշիվների փոփոխությունների գումարներից և դրանց գումարները ներկայացնել որպես ճշգրտում՝ անկանխիկ հոդվածներից ստացված շահույթում՝ նախքան հարկումը:

**Վարկերից և փոխառություններից մուտքերի և մարումների ներկայացումը դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունում.** Բարձր շրջանառու և կարճ մարման ժամկետ ունեցող վարկերի (փաստացի՝ վերականգնվող վարկային գծերի) մասով Խուճաբանում դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացնում է վարկերից, փոխառություններից մուտքերի և մարումների գուտ գումարները: Մնացած վարկերն ու փոխառությունները ներկայացված են համախառն արժեքով:

**Հիմնական միջոցներ.** Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումը, եթե վերջինս պահանջվում է:

Հետագա ծախսերը համապատասխանաբար ընդգրկվում են ակտիվի հաշվեկշռային արժեքում կամ ճանաչվում են որպես առանձին ակտիվ, միայն այն ժամանակ, երբ հավանական է, որ հիմնական միջոցների համապատասխան միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Խուճաբան և վերջինիս արժեքը կարող է արժանահավատորեն չափվել: Վերանորոգման և պահպանման գծով ընթացիկ ծախսումները ծախսագրվում են, երբ դրանք տեղի են ունենում: Հիմնական միջոցների միավորների խոշոր մասերի կամ բաղադրիչների փոխարինման ծախսումները կապիտալացվում են, իսկ փոխարինված մասը դուրս է գրվում:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում ղեկավարությունը գնահատում է, թե արդյոք առկա է հիմնական միջոցների արժեզրկման հատկանիշ: Եթե որևէ նման հատկանիշ գոյություն ունի, ղեկավարությունը գնահատում է փոխհատուցվող գումարը, որը որոշվում է որպես հետևյալ երկու արժեքներից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը, և արժեզրկումից կորուստը ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում: Նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում ակտիվի համար ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է (անհրաժեշտության դեպքում), եթե տեղի են ունեցել գնահատումներում փոփոխություններ, որոնք կիրառվել են՝ որոշելու համար ակտիվի օգտագործման արժեքը կամ իրական արժեքը՝ հանած վաճառքի ծախսերը:

Հիմնական միջոցների օտարումից շահույթը կամ վնասը որոշվում է որպես դրանց իրացումից ստացված հասույթի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում այլ ծախսերի կազմում:

**Մաշվածություն.** Հողի և անավարտ շինարարության համար մաշվածություն չի հաշվարկվում: Հիմնական միջոցների այլ միավորների մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդի կիրառմամբ՝ բաշխելով դրանց սկզբնական արժեքը մինչև մնացորդային արժեքը՝ օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Օգտակար ծառայության ժամկետ՝ արտահայտված տարիներով

Շենքեր	20-60
Մեքենաներ և սարքավորումներ	5-12
Տրանսպորտային միջոցներ	7-8
Հարմարանքներ և կցամասեր	1-8
Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր	5-8*

\* - բայց ոչ ավելի, քան վարձակալության ժամկետը

**3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ  
(շարունակություն)**

Ակտիվի մնացորդային արժեքն այն գնահատված գումարն է, որը խումբը ներկա պահին կստանար ակտիվի օտարումից՝ հանած օտարման գնահատված ծախսումները, եթե ակտիվն արդեն լիներ դրա օգտակար ծառայության վերջում ակնկալվող տարիքի և վիճակի: Ակտիվների մնացորդային արժեքները և օգտակար ծառայության ժամկետները վերանայվում և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

**Ներդրումային գույք.** Ներդրումային գույքը պահվում է հսկի կողմից՝ վարձակալությունից եկամուտ ստանալու կամ կապիտալի աճի համար, կամ երկուսը միասին, և որը զբաղեցված չէ հսկի կողմից: Ներդրումային գույքը չափվում է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները: Մաշվածությունը շահույթում կամ վնասում հաշվարկվում է գծային հիմունքով՝ ներդրումային գույքի գնահատված օգտակար ծառայության ընթացքում, որը կազմում է 54 տարի: Մաշվածությունը մեկնարկում է՝ ակտիվները որպես ներդրումային գույք դասակարգման ամսաթվից:

**Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ.** Խումբը վարձակալում է տարբեր դեղատներ: Պայմանագրերը կարող են պարունակել ինչպես վարձակալական, այնպես էլ ոչ վարձակալական բնույթի բաղադրիչներ: Խումբը պայմանագրային հատուցումը բաշխում է վարձակալության բաղադրիչների և այն բաղադրիչների միջև, որոնք վարձակալությունն չեն հանդիսանում հիմք ընդունելով այդ բաղադրիչների առանձնացված գործարքի հարաբերական գինը:

Վարձակալության պայմանագրերից բխող ակտիվները սկզբնական ճանաչման պահին չափվում են ներկա արժեքով:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով, որը ներառում է.

- վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափման գումարը,
- վարձակալության վճարումները, որոնք կատարվել են վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ մինչ այդ ամսաթիվը, հանած ստացված վարձակալության խրախուսումները,
- ցանկացած սկզբնական ուղղակի ծախսումները,
- վարձակալության պայմանագրով ակտիվի նախատեսված վիճակը վերականգնելու համար պահանջվող ծախսումները:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է գծային հիմունքով, հետևյալ ժամանակահատվածներից նվազագույնով՝ ակտիվի օգտակար ծառայության ժամկետ և վարձակալության ժամկետ: Եթե խումբը գնման օպցիոնն իրագործելու բավարար չափով վստահություն ունի, այն օգտագործման իրավունքի ձևով ակտիվը ամորտիզացնում է հիմնական ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Խումբը օգտագործման իրավունքի ձևով ակտիվների ամորտիզացիան հաշվարկում է գծային մեթոդով դրանց գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, մասնավորապես.

Օգտակար ծառայության ժամկետ՝ արտահայտված  
տարիներով

Տարածքներ

3 - 10

**Գուղվիլ.** Գուղվիլը հաշվառվում է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված արժեզրկման կորուստները, եթե այդպիսիք կան: Գուղվիլը բաշխվում է դրամաստեղծ միավորներին, որոնք ակնկալվում է, որ կստանան ձեռնարկատիրական գործունեության միավորման համօգուտ արդյունք: Այդ միավորները ներկայացնում են ամենացածր մակարդակը, որով խումբը վերահսկում է գուղվիլը և չեն գերազանցում գործառնական սեզմենտը:

Խումբը առնվազն տարեկան մեկ անգամ անցկացնում է գուղվիլի արժեզրկման ստուգում, ինչպես նաև յուրաքանչյուր անգամ, երբ կան գուղվիլի արժեզրկման հայտանիշներ: Գուղվիլ պարունակող դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը համեմատվում է վերականգնվող գումարի հետ, որն իրենից ներկայացնում է հետևյալ մեծություններից առավելագույնը՝ օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած օտարման ծախսերը: Ցանկացած արժեզրկում անմիջապես ճանաչվում է որպես ծախս և հետագայում չի հակադարձվում:

**3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ  
(շարունակություն)**

Օգուտները կամ վնասները, որոնք առաջանում են այն դրամաստեղծ միավորի շրջանակներում գործողության օտարումից, որին հատկացվել է գուղվիլը, ներառում են օտարված գործառնության հետ կապված գուղվիլի հաշվեկշռային արժեքը, որը սովորաբար չափվում է օտարված գործառնության հարաբերական արժեքների և դրամաստեղծ միավորի այն մասի հիման վրա, որը պահպանվում է:

**Ոչ նյութական ակտիվներ.** Խմբի ոչ նյութական ակտիվները ունեն որոշակի օգտակար ծառայության ժամկետ և հիմնականում ներառում են կապիտալացված համակարգչային ծրագրային ապահովումը և լիցենզիաները: Ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան: Ձեռք բերված համակարգչային ծրագրակազմի լիցենզիաները կապիտալացվում են՝ հիմք ընդունելով դրանց ձեռքբերման և օգտագործման համար կատարված ծախսերը:

Ոչ նյութական ակտիվները ամորտիզացվում են գծային մեթոդով՝ դրանց օգտակար ծառայության ընթացքում:

Օգտակար ծառայության ժամկետ՝ արտահայտված  
տարիներով  
8-10 տարի

Ծրագրակազմի լիցենզիաներ

Արժեզրկվելիս, ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև հետևյալ արժեքներից առավելագույնը՝ օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը:

**Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում.** Մաշվածության և ամորտիզացիայի ենթակա ակտիվները դիտարկվում են արժեզրկման հայտանիշների առկայության տեսանկյունից, երբ իրադարձությունները կամ հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ հաշվեկշռային արժեքը չի կարող փոխհատուցվել: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը: Վերականգնվող գումարը հետևյալ երկու մեծություններից առավելագույնն է՝ ակտիվի իրական արժեք հանած օտարման ծախսումները և օգտագործման արժեք: Արժեզրկումը գնահատելու նպատակով ակտիվները խմբավորվում են հիմնականում անկախ դրամական միջոցների մուտքեր ապահովող ամենափոքր խմբերի մակարդակում (դրամաստեղծ միավորներ): Ոչ ֆինանսական ակտիվների նախկին արժեզրկումները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ հնարավոր հակադարձման համար:

**Ֆինանսական գործիքներ. հիմնական չափման մոտեցումները.** Իրական արժեքը այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության դիմաց, շուկայի մասնակիցների միջև բնականոն գործարքի արդյունքում: Իրական արժեքի ամենաարժանահավատ վկայությունն է հանդիսանում ակտիվ շուկայում գնանշվող գինը: Ակտիվ շուկան այն շուկան է, որում շարունակական հիմունքով տեղի են ունենում ակտիվի կամ պարտավորության հետ կապված գործարքները՝ անհրաժեշտ գնային տեղեկատվություն ապահովելու համար բավարար հաճախականությամբ և ծավալով:

Ակտիվ շուկայում շրջանառվող ֆինանսական գործիքների իրական արժեքը չափվում է որպես առանձին ակտիվի կամ պարտավորության գնանշվող շուկայական գնի և Ընկերության կողմից պահվող գործիքների քանակության արտադրյալ: Նշվածը տեղի է ունենում նույնիսկ այն դեպքում, երբ շուկայի սովորական օրական առջուվաճառքի ծավալը բավարար չէ այդ քանակությունը կլանելու համար, և մեկ գործարքում դիրքը վաճառելու հայտի ներկայացումը կարող է ազդել գնանշվող գնի վրա:

Գնահատման մեթոդները, ինչպիսիք են գեղչված դրամական հոսքերի մոդելները կամ վերջերս կատարված «պարզած ձեռքի հեռավորության գործարքները» կամ ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպությունների ֆինանսական տվյալների ստացման վրա հիմնված մոդելները, օգտագործվում են որոշելու այն ֆինանսական գործիքների իրական արժեքը, որոնց համար արտաքին շուկայական գնանշման տեղեկատվությունը հասանելի չէ: Իրական արժեքի գնահատումների վերլուծությունը կատարվում է ըստ իրական արժեքի հիերարխիայում մակարդակի, հետևյալ կերպ՝ (i) մակարդակ 1՝ չափումներ ակտիվ շուկայում նույնական ակտիվների կամ պարտավորությունների գնանշվող գներով (չճշգրտվող), (ii) մակարդակ 2՝ չափման գնահատման մեթոդներ, որոնցում ակտիվի կամ պարտավորության համար բոլոր էական ելակետային տվյալներն ուղղակիորեն (գներ) կամ անուղղակիորեն (գների հիման վրա ստացված) դիտելի են, (iii) մակարդակ 3՝ գնահատումներ, որոնք հիմնված չեն բացառապես շուկայի դիտելի տվյալների վրա (այն է՝ գնահատման համար անհրաժեշտ են նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալներ):

**3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ  
(շարունակություն)**

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև փոխանցումները համարվում են տեղի ունեցած հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

*Գործարքի հետ կապված ծախսումները* լրացուցիչ ծախսումներն են, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական գործիքի ձեռքբերմանը, թողարկմանը կամ օտարմանը: Լրացուցիչ ծախսումն այն ծախսումն է, որը կազմակերպությունը չէր կրի, եթե գործարքը տեղի չունենար: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են գործակալներին (ներառյալ՝ որպես վաճառքի գործակալ հանդես եկող աշխատակիցներին), խորհրդատուներին, միջնորդներին, դիլերներին վճարված միջնորդավճարները և կոմիսիոն վճարները, կարգավորող մարմինների և արժեթղթերի փոխանակման գործակալությունների կողմից գանձումները, սեփականության իրավունքի փոխանցման հետ կապված հարկերը և վճարները: Գործարքի հետ կապված ծախսումները չեն ներառում պարտատոմսերի հավելավճարները և գեղչերը, ֆինանսական ծախսերը, ներքին վարչական կամ պահպանման ծախսերը:

*Ամորտիզացված արժեքն* այն գումարն է, որով ֆինանսական գործիքը գնահատվել է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած հաշվեգրված տոկոսները և ֆինանսական ակտիվների համար՝ հանած հնարավոր պարտքային կորուստների (ԱՊԿ) գծով ցանկացած նվազեցում: Հաշվեգրված տոկոսները ներառում են սկզբնական ճանաչման ժամանակ գործարքի հետ կապված հետաձգված ծախսումների և հավելավճարի կամ գեղչի ամորտիզացիան՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հաշվեգրված տոկոսային եկամուտը և հաշվեգրված տոկոսային ծախսը, ներառյալ հաշվեգրված արժեկտրոնը և ամորտիզացված գեղչը կամ հավելավճարը (ներառյալ՝ առաջացման պահին հետաձգված վճարները, եթե կան այդպիսիք) առանձին չեն ներկայացվում և ներառվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության համապատասխան հոդվածի հաշվեկշռային արժեքում:

*Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը* համապատասխան ժամանակահատվածի կտրվածքով տոկոսային եկամտի կամ տոկոսային ծախսի բաշխման այնպիսի մեթոդ է, որը հանգեցնում է հաշվեկշռային արժեքի նկատմամբ կիրառվող հաստատուն պարբերական տոկոսադրույքի (արդյունավետ տոկոսադրույք): Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ համապատասխան դեպքերում ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները (չներառելով ապագա պարտքային կորուստները) գեղչում է ճշգրիտ մինչև ֆինանսական գործիքի զուտ հաշվեկշռային արժեքը: Արդյունավետ տոկոսադրույքը գեղչում է փոփոխական տոկոսադրույք ունեցող գործիքների դրամական միջոցների հոսքերը մինչև հաջորդ տոկոսադրույքի վերագնանշման ամսաթիվը, բացառությամբ այն հավելագնի կամ գեղչի, որն արտացոլում է գործիքում սահմանված լողացող տոկոսադրույքի կամ շուկայական դրույքներով չսահմանված այլ փոփոխականների նկատմամբ վարկային սփրեդը: Այդպիսի պարզեցվածները կամ գեղչերն ամորտիզացվում են գործիքի ողջ գործողության ակնկալվող ժամանակահատվածի ընթացքում: Ներկա արժեքի հաշվարկումը ներառում է պայմանագրի կողմերի միջև վճարված կամ ստացված բոլոր վճարները, որոնք արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասն են կազմում:

**Ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչում.** Բոլոր ֆինանսական գործիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ ճշգրտված գործարքի հետ կապված ծախսումներով: Սկզբնական ճանաչման ժամանակ իրական արժեքի լավագույն վկայությունն է գործարքի գինը: Սկզբնական ճանաչման ժամանակ շահույթ կամ վնաս ճանաչվում է միայն այն ժամանակ, երբ կա իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերություն, որը կարող է ապացուցվել միևնույն գործիքում դիտելի ընթացիկ շուկայական այլ գործարքներով կամ գնահատման մեթոդով, որի էլակետային տվյալները ներառում են միայն դիտելի շուկայական տվյալները: Սկզբնական ճանաչումից հետո ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքների գծով ճանաչվում է հնարավոր պարտքային կորուստ անմիջապես հանգեցնելով հաշվապահական վնասի:

**Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում. Գնահատման կատեգորիաները** Խումբը ֆինանսական ակտիվները դասակարգում է ամորտիզացված արժեքով:

**3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ  
(շարունակություն)**

**Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում. Բիզնես մոդել.** Բիզնես մոդելն արտացոլում է այն մեթոդը, որի միջոցով խումբը կառավարում է իր ակտիվները՝ դրամական հոսքերի հավաքագրման նպատակով. արդյո՞ք խմբի նպատակն է՝ (i) ակտիվներից հավաքագրել բացառապես պայմանագրային դրամական միջոցների հոսքերը («ակտիվների պահում պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով»), թե (ii) ակտիվներից հավաքագրել և՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը, և՛ ակտիվների վաճառքից առաջացող դրամական միջոցների հոսքերը («ակտիվների պահում պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման և վաճառքի նպատակով»), կամ, եթե (i) կամ (ii) պարբերությունները կիրառելի չեն, ֆինանսական ակտիվները դասակարգվում են «այլ» բիզնես մոդելի և չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Բիզնես մոդելը որոշվում է ակտիվների խմբի համար (պորտֆելի մակարդակով), հիմնվելով այն գործողությունների բոլոր պատշաճ ապացույցների վրա, որոնք խումբը մտադիր է իրականացնել գնահատման ամսաթվի դրությամբ առկա պորտֆելի համար սահմանված նպատակին հասնելու համար:

**Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում. դրամական միջոցների հոսքերի բնութագրերը.** Եթե բիզնես մոդելը նախատեսում է ակտիվների պահում պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի ստացման կամ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի և վաճառքի համար, ապա խումբը գնահատում է, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերն իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և տոկոսի վճարումներ: Պարունակվող ածանցյալ գործիքներով ֆինանսական ակտիվները դիտարկվում են ամբողջ ծավալով՝ որոշելու, թե արդյոք նրանց դրամական միջոցների հոսքերը համապատասխանում են միայն մայր գումարի և տոկոսի վճարումների հատկանիշներին: Նման գնահատումն իրականացնելիս՝ խումբը հաշվի է առնում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը համապատասխանում են բազային վարկային համաձայնագրին, այսինքն՝ տոկոսները ներառում են միայն պարտքային ռիսկը, փողի ժամանակային արժեքը, այլ բազային պարտքային ռիսկերը և շահույթի մարժան:

Այն դեպքերում, երբ պայմանագրային պայմաններն առաջացնում են ռիսկի ենթարկվածություն կամ անկայունություն, որն անհամատեղելի է վարկավորման բազային մեխանիզմի հետ, ֆինանսական ակտիվը դասակարգվում և չափվում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Միայն մայր գումարի և տոկոսի վճարումների գնահատումը կատարվում է ակտիվի սկզբնական ճանաչման ժամանակ և հետագայում այն չի վերանայվում:

**Ֆինանսական ակտիվների արժեզրկում. հնարավոր պարտքային կորուստների գնահատված պահուստ.** Խումբը կանխատեսումային հիմունքով գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների, ինչպես նաև վարկային պարտավորությունների և ֆինանսական երաշխիքների պայմանագրերի գծով հնարավոր հնարավոր պարտքային կորուստները: Խումբը գնահատում է պարտքային գործիքների հետ կապված հնարավոր պարտքային կորուստը և ճանաչում է կորստի պահուստը հաշվետու յուրաքանչյուր ամսաթվի դրությամբ: Հնարավոր պարտքային կորուստների գնահատումը արտացոլում է. i) անաչառ և հավանականությամբ կշռված գումարը, որը որոշվում է հնարավոր արդյունքների տիրույթի գնահատման միջոցով. (ii) փողի ժամանակային արժեքը, և (iii) տեղի ունեցած իրադարձությունների, ընթացիկ պայմանների և կանխատեսվող ապագա տնտեսական պայմանների վերաբերյալ ողջ հիմնավոր և հավաստի տեղեկությունները, որոնք հաշվետու ամսաթվի դրությամբ հասանելի են առանց անհարկի միջոցների և ռեսուրսների ծախսման:

Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքները, առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, և տրված փոխառությունները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում արտացոլվում են՝ նվազեցված հնարավոր պարտքային կորուստի:

Խումբը ճանաչում է հնարավոր պարտքային կորուստների պահուստը հետևյալ ֆինանսական գործիքների վերաբերյալ, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ,
- Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր:

Հնարավոր պարտքային կորուստները կորստի պահուստի միջոցով պետք է չափվեն հետևյալ մեծություններով.

**3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ  
(շարունակություն)**

- 12-ամսյա հնարավոր պարտքային կորուստներ, այսինքն՝ ակտիվի ժամկետի ընթացքում հնարավոր պարտքային կորուստներ, որոնք կարող են առաջանալ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում ֆինանսական գործիքի դեֆոլտի իրադարձությունների արդյունքում, (ներկայացվում է որպես Փուլ 1), կամ
- Հնարավոր պարտքային կորուստներ ակտիվի ողջ ժամկետի ընթացքում, որոնք կարող են առաջանալ ֆինանսական գործիքի ողջ տևողության ընթացքում բոլոր դեֆոլտի իրադարձությունների արդյունքում (ներկայացվում է որպես Փուլ 2 և Փուլ 3):

Հնարավոր պարտքային կորուստների չափման համար հունվրը կիրառում է ՀՖՄՍ 9-ի պարզեցված մոտեցում, որն օգտագործում է ակտիվի տևողության ողջ ընթացքում հնարավոր պարտքային կորուստի պահուստ բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար (Ծանոթագրություն 11):

**Ֆինանսական ակտիվների դուրսագրում.** Ֆինանսական ակտիվները ամբողջությամբ կամ մասամբ դուրս են գրվում այն ժամանակ, երբ հունվրը սպառել է դրանց վերականգնման բոլոր գործնական հնարավորությունները և եզրակացրել է, որ չկան այդպիսի ակտիվների վերականգնման հիմնավորված ակնկալիքներ: Դուրսագրումն իրենից ներկայացնում է ակտիվի ապաճանաչում: Խունվրը կարող է դուրս գրել դեռևս հարկադիր բռնագանձման գործընթացում գտնվող ֆինանսական ակտիվները, այն դեպքում, երբ հունվրը փորձում է բռնագանձել պայմանագրային պարտավորության գումարները՝ առանց վերականգնման ողջամիտ ակնկալիքի:

**Ֆինանսական ակտիվների ապաճանաչում.** Խունվրը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ. (ա) ակտիվը մարվել է կամ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը կամ (բ) Խունվրը փոխանցել է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի նկատմամբ իրավունքները կամ կնքել է ակտիվների փոխանցման պայմանագիր, միաժամանակ (i) փոխանցելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները կամ (ii) չփոխանցելով և նաև չպահպանելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները, սակայն չպահպանելով նաև ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Վերահսկողությունը պահպանվում է, եթե գործընկերը չունի չկապակցված երրորդ կողմին ակտիվը ամբողջությամբ վաճառելու հնարավորություն՝ առանց վաճառքի սահմանափակումներ կիրառելու:

**Ֆինանսական ակտիվների փոփոխություն.** Ֆինանսական ակտիվի փոփոխությունը տեղի է ունենում այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվի դրամական միջոցների հոսքերը կարգավորող պայմանագրային պայմանները վերանայվում են կամ այլ կերպ փոփոխվում ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման և մարման ժամկետի միջև ընկած ժամանակահատվածում: Փոփոխությունն ազդում է պայմանագրային դրամական միջոցների հոսքերի գումարի և/կամ ժամանակի վրա՝ անմիջապես կամ ապագա ամսաթվով:

**Ֆինանսական պարտավորություններ. չափման կատեգորիաներ.** Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես հետագայում ամորտիզացված արժեքով չափվող:

**Ֆինանսական պարտավորություններ. ապաճանաչում.** Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են դրանց մարման պարագայում (այսինքն, երբ պարտավորությունը կատարվում է, կամ պայմանագրով նշված պարտավորությունը դադարում է կամ սպառվում է դրա իրականացման ժամկետը):

Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված ու վճարման ենթակա հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

**Ֆինանսական գործիքների հաշվանցում.** Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և զուտ գումարը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում միայն այն դեպքում, երբ առկա է ճանաչված գումարները հաշվանցելու համար իրավաբանորեն ամրագրված իրավունք և կա մտադրություն կամ մարելու զուտ արժեքը, կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը: Այդ հաշվանցման իրավունքը (ա) չպետք է կախված լինի ապագա իրադարձությունից և (բ) պետք է իրավաբանական ուժ ունենա բոլոր հետևյալ հանգամանքներում՝ (i) բնականոն գործունեության ընթացքում, (ii) դեֆոլտի դեպքում և (iii) անվճարունակության կամ սևանկության դեպքում:

**3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ  
(շարունակություն)**

**Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ.** Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են առձեռն դրամական միջոցները, բանկերում պահվող ցպահանջ ավանդները և այլ կարճաժամկետ բարձր իրացվելիություն ունեցող ներդրումները՝ երեք ամիս կամ դրանից պակաս սկզբնական մարման ժամկետով: Դրամական միջոցները և դրամական միջոցների համարժեքները հաշվառվում են ԱՀ-ում, քանի որ. (i) դրանք պահվում են պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով, և այդ դրամական միջոցների հոսքերն իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և տոկոսագումարի վճարում, և (ii) դրանք չեն որոշված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

**Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր.** Առևտրային դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ հետագա չափումը իրականացվում է ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ:

**Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր.** Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, երբ գործընկերը կատարում է պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները: Հետագա չափումն իրականացվում է ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

**Փոխառություններ.** Փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց կատարված գործարքի ծախսումների, և հետագայում հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

**Վարձակալության գծով պարտավորություններ.** Վարձակալության պայմանագրերից բխող պարտավորությունները սկզբնական ճանաչման պահին չափվում են ներկա արժեքով: Վարձակալության գծով պարտավորությունները ներառում են հետևյալ վարձակալության վճարների գումարները ներկա արժեքը.

- հաստատուն վճարներ (ներառյալ, ըստ էության, հաստատուն վճարումները) հանած ստացման ենթակա վարձակալության խրախուսումները,
- փոփոխական վարձակալական վճարումները, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքաչափից և սկզբնապես չափվում են օգտագործելով մեկնարկի ամսաթվի դրությամբ գործող ինդեքսը կամ դրույքաչափը, և
- վարձակալության պայմանագրերը դադարեցնելու համար տուգանքների վճարները, եթե վարձակալության ժամկետը արտացոլում է իմբի կողմից այդ օպցիոնի իրագործումը:

Վարձակալության երկարաձգման և դադարեցման օպցիոնները նախատեսված են իմբի մի շարք պայմանագրերում: Այս պայմաններն օգտագործվում են իմբի գործունեության մեջ օգտագործվող ակտիվները կառավարելիս առավելագույն գործառնական ճկունությունն ապահովելու համար: Երկարաձգման օպցիոնները (կամ դադարեցման օպցիոններին հաջորդող ժամկետները) ներառվում են վարձակալության ժամկետում միայն այն դեպքում, եթե առկա է ողջամիտ վստահություն, որ վարձակալությունը երկարաձգվելու է (կամ չի դադարեցվելու): Պարտավորության գնահատումը ներառում է նաև վարձակալության վճարներ, որոնք կկատարվեն որպես երկարաձգման օպցիոնների իրագործման մաս, եթե բավարար վստահություն կա, որ վարձակալությունը կերկարաձգվի:

Վարձակալության վճարները զեղչվում են՝ օգտագործելով վարձակալության պայմանագրով ենթադրվող տոկոսադրույքը: Եթե այս տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել, ինչը, որպես կանոն, տեղի է ունենում իմբի մոտ առկա վարձակալության պայմանագրերի դեպքում, ապա խումբն օգտագործում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, որը այն դրույքաչափն է, որով խումբը կարող էր համանման ժամանակահատվածում և համանման ապահովությամբ ներգրավել փոխառու միջոցներ, որոնք անհրաժեշտ կլինեին համանման տնտեսական պայմաններում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի արժեքին համարժեք ակտիվ ձեռք բերելու համար:

**3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ  
(շարունակություն)**

Լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը որոշելու համար հստակվել է:

- հնարավորության դեպքում, որպես նախնական տեղեկատվություն օգտագործում է Խմբի կողմից վերջերս երրորդ անձանցից ստացված ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվությունը և ճշգրտում է այն, հաշվի առնելով ֆինանսավորումը ստանալու պահից հետո տեղի ունեցած ֆինանսավորման պայմանների փոփոխությունները,
- օգտագործում է ձևավորման այնպիսի մոտեցում, որի դեպքում հաշվարկը սկսվում է առանց ռիսկի տոկոսադրույքից, որը ճշգրտվում է պարտքային ռիսկի չափով, և
- կատարում է ճշգրտումներ հաշվի առնելով վարձակալության պայմանագրի առանձնահատկությունները, օրինակ, վարձակալության ժամկետը, երկիրը, արժույթը և ապահովությունը:

Վարձակալության վճարները բաժանվում են պարտավորությունների հիմնական գումարի և ֆինանսական ծախսերի: Ֆինանսական ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում վարձակալության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում՝ յուրաքանչյուր ժամանակաշրջանի պարտավորության մնացորդի վրա հաստատուն պարբերական տոկոսադրույքն ապահովելու համար:

**Շահութահարկ.** Համախմբված ֆինանսական հաշվետվություններում շահութահարկը ներկայացվում է համաձայն օրենսդրության, որն, ըստ երկրանի, գործում է կամ ուժի մեջ է մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից և ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ այն ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ անմիջապես սեփական կապիտալում, քանի որ վերաբերում է այնպիսի գործարքների, որոնք տվյալ կամ այլ ժամանակաշրջանում ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ անմիջապես սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկն այն գումարն է, որը ենթակա է վճարման կամ փոխհատուցման և վերաբերում է ընթացիկ կամ նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթներին կամ վնասներին: Հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է գնահատումների վրա, եթե համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատված են մինչև համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացումը: Շահութահարկից տարբերվող այլ հարկերը, ճանաչվում են գործառնական ծախսերում:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են՝ կիրառելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը հետագա տարիներին փոխանցվող հարկային վնասի և ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առկա են ֆինանսական հաշվետվությունների նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները և հարկային նպատակով օգտագործվող արժեքները համեմատելիս: Համաձայն սկզբնական ճանաչման վերաբերյալ բացառության, հետաձգված հարկը չի գրանցվում այն ժամանակավոր տարբերությունների դեպքում, երբ ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումը կատարվում է այնպիսի գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որը սկզբնապես գրանցվելիս, ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական, և ո՛չ էլ հարկվող շահույթի վրա: Հետաձգված հարկային մնացորդները չափվում են կիրառելով հարկային դրույքները, որոնք, ըստ երկրանի, գործում են կամ ուժի մեջ են մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ և որոնք ակնկալվում է կիրառել այն ժամանակահատվածներում, երբ ժամանակավոր տարբերությունները հակադարձվեն կամ նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասն օգտագործվի:

Նվազեցվող ժամանակավոր տարբերությունների և նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասի մասով հետաձգված հարկային ակտիվը գրանցվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա իրավաբանորեն ամրագրված իրավունք հաշվանցել ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց և, երբ հետաձգված շահութահարկի ակտիվներն ու պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկվող անձից կամ տարբեր հարկատուներից, որտեղ կա մնացորդները զուտ հիմունքով կարգավորելու մտադրություն:

**3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ  
(շարունակություն)**

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները մարվում են միայն խմբի առանձին ընկերություններում:

Խումբը վերահսկում է այն ժամանակավոր տարբերությունների հակադարձումը, որոնք վերաբերում են դուստր կազմակերպությունների շահաբաժինների գծով հարկերին կամ դրանց վաճառքից շահույթին: Խումբը չի արտացոլում հետաձգված հարկային պարտավորությունները նման ժամանակավոր տարբերությունների գծով, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունն ակնկալում է ժամանակավոր տարբերությունների հակադարձում տեսանելի ապագայում:

**Անորոշ հարկային դիրքեր.** Խմբի անորոշ հարկային դիրքերը վերագնահատվում են ղեկավարության կողմից յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Շահութահարկի գծով պարտավորությունները հաշվի են առնվում այն դեպքում, երբ ղեկավարությունը գտնում է, որ լրացուցիչ հարկային պարտավորությունների առաջացման հավանականությունը ավելի մեծ է, քան դրանց բացակայությունը, եթե Խմբի հարկային գործունեությունը վիճարկվի հարկային մարմինների կողմից: Չնայած, Գնահատումը հիմնված է այն հարկային օրենքների և համապատասխան իրավական ակտերի մեկնաբանությունների վրա, որոնք, ըստ Էուլթյան, գործում են կամ ուժի մեջ են մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, ինչպես նաև նմանատիպ հարցերի շուրջ ցանկացած հայտնի դատական կամ այլ որոշումների վրա: Տուգանքների, տուկոսների և հարկերի, բացառությամբ շահութահարկի, գծով պարտավորությունները ճանաչվում են ղեկավարության կողմից՝ հիմք ընդունելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պարտավորությունների մարման համար պահանջվող ծախսերի լավագույն գնահատականը: Շահութահարկի անորոշության գծով ճշգրտումները՝ բացառությամբ տույժերի և տուգանքների, արտացոլվում են շահութահարկի գծով ծախսերում: Շահութահարկի անորոշության գծով ճշգրտումները՝ կապված տույժերի և տուգանքների հետ, արտացոլվում են համապատասխանաբար ֆինանսական ծախսերի և Այլ ծախսերի կազմում, զուտ հիմունքով:

**Ավելացված արժեքի հարկ.** Վաճառքին վերաբերող ավելացված արժեքի հարկը հաշվեգրվում է հաճախորդներին ապրանքների առաքման կամ ծառայությունների մատուցման ամսում, և ենթակա է վճարման հարկային մարմիններին մինչև հաջորդ ամսվա 20-ը: Գնմանը վերաբերող ԱԱՀ-ը սովորաբար հաշվանցվում է վաճառքին վերաբերող ԱԱՀ-ի դիմաց, ԱԱՀ-ի հարկային հաշիվը ստանալուց և հաստատելուց հետո: Հարկային մարմինները թույլատրում են ԱԱՀ-ը հաշվարկել զուտ հիմունքով: Վաճառքին և գնումներին վերաբերող ԱԱՀ-ի գումարները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչվում են զուտ հիմունքով: Հնարավոր պարտքային կորուստների արժեզրկման համար պահուստ ստեղծելու դեպքում արժեզրկումից կորուստը ճանաչվում է պարտավորության համախառն գումարի չափով, ներառյալ ԱԱՀ-ը:

**Պաշարներ.** Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Պաշարների արժեքը որոշվում է որոշակի միավորների հաշվառման միջոցով (հաշվապահության մեջ դուրս գրված միավորները փաստացի ուղարկված միավորներն են), ինչը, ըստ Էուլթյան, Էական տարբերության չի հանգեցնում «առաջինը մուտք, առաջինը ելք» (FIFO) մեթոդի համեմատ: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համարման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում Խումբը կատարում է ժամկետանց և դանդաղ իրացվելի պաշարների մոտավոր պլանավորում:

**Վաճառված ապրանքների ինքնարժեք.** Վաճառված ապրանքների ինքնարժեքը ներառում է վաճառված ապրանքների ձեռքբերման գինը և պաշարները վաճառքի համար նախատեսված վայր հասցնելու և վաճառքի համար պատրաստ վիճակի բերելու համար կատարված այլ ծախսերը:

Խումբը մատակարարներից ստանում է տարբեր տեսակի հատուցումներ՝ առաջխաղացման վճարների, ծավալային զեղչերի և այլ խրախուսական վճարների տեսքով: Խմբի կողմից ստացված մատակարարների խրախուսական վճարները հաշվարկելիս Խումբը այդ խրախուսական վճարները դիտում է որպես ապրանքի համար վճարված գների իջեցում, և հաշվառում է դրանք վաճառված ապրանքների ինքնարժեքի կազմում կամ նվազեցնում է հաշվետու ամսաթվի դրությամբ առկա պաշարների ինքնարժեքից:

**3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ  
(շարունակություն)**

**Կանխավճարներ.** Կանխավճարները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեքկման գծով պահուստը: Կանխավճարները դասակարգվում են որպես ոչ ընթացիկ, երբ կանխավճարին վերաբերող ապրանքներն ու ծառայությունները ակնկալվում է ստանալ մեկ տարի հետո կամ երբ կանխավճարը վերաբերում է այնպիսի ակտիվի, որը սկզբնական ճանաչման ժամանակ կդասակարգվի որպես ոչ ընթացիկ: Ակտիվներ ձեռք բերելու գծով կանխավճարները փոխանցվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ խումբը ստանում է ակտիվի նկատմամբ վերահսկողություն և հավանական է, որ ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի խումբ: Այլ կանխավճարները ծախսագրվում են շահույթի կամ վնասի կազմում, երբ կանխավճարի հետ կապված ծառայությունը ստացվում է: Եթե առկա է հայտանիշ, որ կանխավճարին վերաբերող ակտիվները, ապրանքները կամ ծառայությունները չեն ստացվի, ապա կանխավճարի հաշվեկշռային արժեքը համապատասխանաբար դուրս է գրվում և արժեզրկումից կորուստը ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում:

**Կանոնադրական կապիտալ.** Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Լրացուցիչ ծախսերը, որոնք անմիջականորեն վերագրելի են նոր բաժնետոմսերի թողարկմանը, սեփական կապիտալում ցույց են տրվում որպես ստացված մուտքերից նվազեցում՝ հարկումից հետո: Իրական արժեքի այն մասը, որը գերազանցում է թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքը, սեփական կապիտալում գրանցվում է որպես Էմիսիոն եկամուտ:

**Շահաբաժիններ.** Շահաբաժինները ներկայացվում են որպես պարտավորություն և նվազեցվում են սեփական կապիտալից այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվել և հաստատվել են: Շահաբաժինները, որոնք հայտարարված են հաշվետու ժամանակաշրջանից հետո և մինչև ֆինանսական հաշվետվությունների թողարկման համար հաստատումը, բացահայտվում են հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքերի վերաբերյալ ծանոթագրությունում: Ընկերության՝ ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն պատրաստված հաշվետվությունները հիմք են հանդիսանում շահույթի բաշխման և այլ հատկացումների համար:

**Պարտավորությունների և վճարների գծով պահուստներ.** Պարտավորությունների և վճարների գծով պահուստները անորոշ ժամկետներով կամ չափով ոչ ֆինանսական պարտավորություններ են: Դրանք հաշվեզրկվում են, երբ խումբը, անցյալ դեպքերի արդյունքում ունի իրավաբանորեն ամրագրված կամ ենթադրվող պարտավորություն և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող ռեսուրսների արտահոսք, ինչպես նաև պարտավորության չափը հնարավոր է արժանահավաստորեն գնահատել: Պահուստները գնահատվում են՝ ելնելով ծախսերի ներկա արժեքից, որն, ինչպես ակնկալվում է, կպահանջվի պարտավորության մարման համար՝ զեղչված մինչև հարկումը տոկոսադրույքով, որն արտացոլում է սվյալ պարտավորությունների գծով գումարների և ռիսկերի ներկա արժեքը: Ժամանակի ընթացքում պահուստի աճը ճանաչվում է որպես տոկոսային ծախս ֆինանսական ծախսերի կազմում:

Տուրքերը և վճարները, ինչպիսիք են, օրինակ, շահութահարկից բացի այլ հարկերը կամ կանոնակարգային վճարները, որոնք հիմնված են վճարման պարտավորության առաջացմանը նախորդող ժամանակահատվածի տեղեկատվության վրա, ճանաչվում են որպես պարտավորություն, երբ տեղի է ունենում օրենսդրությամբ սահմանված կարգով տուրքի վճարում առաջացնող պարտավորեցնող դեպք, որն առաջ է բերում տուրք վճարելու պարտավորություն: Եթե տուրքի վճարումը կատարվել է մինչև պարտավորեցնող դեպքը տեղի ունենալը, այն ճանաչվում է որպես կանխավճար:

**Հասույթի ճանաչումը.** Հասույթը խմբի սովորական գործունեության ընթացքում առաջացող եկամուտն է: Հասույթը ճանաչվում է գործարքի գնի չափով: Գործարքի գինն այն հատուցման գումարն է, որի իրավունքը խումբն ակնկալում է հաճախորդին խոստացված ապրանքների կամ ծառայությունների նկատմամբ վերահսկողությունը փոխանցելու դիմաց՝ բացառությամբ երրորդ անձանց անունից հավաքագրված գումարները:

Եկամուտը ճանաչվում է զեղչերից, վերադարձներից և ավելացված արժեքի հարկերից գուտ:

Խումբը ճանաչում է հասույթը այն կերպով, որն արտացոլում է խոստացված ապրանքների կամ ծառայությունների փոխանցումը հաճախորդին, և այն գումարով, որն իրենից ներկայացնում է հատուցման չափը, որի իրավունքը խումբն ակնկալում է ստանալ այդ ապրանքների կամ ծառայությունների փոխանցման դիմաց:

**3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ  
(շարունակություն)**

**Դեղագործական ապրանքների մեծածախ վաճառք.** Վաճառքը ճանաչվում է այն ժամանակ, երբ ապրանքների նկատմամբ վերահսկողությունը փոխանցվել է, այսինքն՝ երբ ապրանքները փոխանցվել են հաճախորդին, վերջինս ունի ապրանքներն իր հայեցողությամբ տնօրինելու լիակատար հնարավորություն, և չկան չմարված պարտավորություններ, որոնք կազդեին հաճախորդի կողմից ապրանքների ընդունման վրա:

Մեծածախ վաճառքից հասույթի գծով կատարողական պարտականությունը ներառում է ապրանքների առաքումը հաճախորդի պահեստ կամ դեղատուն:

Չեղչված հիմունքով վաճառքից ստացված հասույթը ճանաչվում է պայմանագրում նշված գնի հիման վրա՝ առանց գեղչերի:

**Դեղագործական ապրանքների մանրածախ վաճառք.** Մանրածախ վաճառքն իրականացվում է հմբի դեղատների միջոցով: Վաճառքի գրանցումը կատարվում է ապրանքների շտրիխ կոդերի միջոցով: Մանրածախ վաճառքից հասույթը ճանաչվում է ավտոմատ կերպով և անմիջապես, իրացման պահին՝ հաշվապահական հաշվառման ծրագրի և հսկիչ-դրամարկային մեքենայի միջոցով:

**Հաճախորդների լոյալության ծրագիր.** Խումբը իրականացնում է հաճախորդների լոյալության ծրագիր, որը թույլ է տալիս հաճախորդներին միավորներ կուտակել հմբի ցանկացած դեղատներում կատարված յուրաքանչյուր գնման համար: Վաստակած միավորները հաճախորդներին հնարավորություն են տալիս կանխիկ գեղչ ստանալ ապագա գնումների ժամանակ, պայմանով, որ գնումն իրականացվում է միավորները վաստակելուց հետո մեկ տարվա ընթացքում:

Լոյալության միավորներին հատկացված հատուցումը չափվում է՝ ելնելով դրանց իրական արժեքից, այսինքն՝ այն գումարից, որի դիմաց լոյալության միավորները կարող էին առանձին վաճառվել: Այս գումարը հետաձգվում է և ճանաչվում է որպես հասույթ այն ժամանակաշրջանում, երբ միավորները մարվում են: Ակնկալվող տարբերությունը ճանաչվում է որպես հասույթ սկզբնական վաճառքի պահին, քանի որ այն չի ներառվում լոյալության միավորներին հատկացված գումարում:

Լոյալության միավորների գծով պայմանագրային պարտավորությունը ճանաչվում է վաճառքի պահին:

**Ենթավարձակալությունից եկամուտ.** Գործառնական վարձակալությամբ ստացված վարձակալությունից եկամուտը ճանաչվում է գծային հիմունքով՝ համապատասխան վարձակալության ժամկետի ընթացքում: Գործառնական վարձակալության պայմանագրերի կնքման և բանակցությունների ընթացքում կատարված սկզբնական ուղղակի ծախսերը գումարվում են վարձակալված ակտիվի հաշվեկշռային արժեքին և ճանաչվում են գծային հիմունքով՝ վարձակալության ժամկետի ընթացքում: Ենթավարձակալությունից եկամուտը ներկայացվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ հմբի ոչ հիմնական գործունեության կազմում:

**Դետական շնորհներ.** Ծախսերի գծով ստացված պետական շնորհները ճանաչվում են տարվա շահույթում կամ վնասում և դրա ստացման հետ կապված ծախսերի դիմաց մարվում են այն ժամանակահատվածում, որն անհրաժեշտ է դրանք վերագրելու համար այն ծախսերին, որոնք նախատեսվում է փոխհատուցել տվյալ շնորհների հաշվին: Դրամաշնորհների տեսքով եկամուտը հաշվանցվում է տոկոսային ծախսի միջոցով՝ տարվա շահույթում կամ վնասում:

**Բարտերային գործարքներ և փոխադարձ չեղարկումներ.** Վաճառքների և գնումների մի մասը կարգավորվում է փոխադարձ չեղարկումներով, բարտերային կամ անկանխիկ հաշվարկների միջոցով: Այս գործարքները, ընդհանուր առմամբ, իրենցից ներկայացնում են անմիջական փոխհաշվարկ վերջնական հաճախորդի կողմից ոչ համանման ապրանքների և ծառայությունների (բարտեր), փոխադարձ մնացորդների չեղարկման, կամ մի քանի ընկերությունների ներգրավմամբ անկանխիկ գործարքների շղթայի միջոցով: Անկանխիկ հաշվարկները ներառում են մուրհակներ կամ փոխարկելի պարտատոմսեր, որոնք բանակցելի պարտքային գործիքներ են:

Վաճառքներն ու գնումները, որոնք ակնկալվում է մարել փոխադարձ հաշվարկների, բարտերի կամ այլ անկանխիկ հաշվարկների միջոցով, ճանաչվում են անկանխիկ հաշվարկներում ստացվող կամ զիջվող իրական արժեքի վերաբերյալ ղեկավարության գնահատման հիման վրա: Իրական արժեքը որոշվում է դիտարկելի շուկայական տեղեկատվության հիման վրա:

**3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի դրույթներ (շարունակություն)**

Անկանխիկ գործարքները չեն ներառվել դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունում: Ներդրումային և ֆինանսավորման գործունեությանը և գործառնական գործունեության ընդհանուր մեծությունը ներկայացնում են փաստացի դրամական հոսքերը:

**Հատուցումներ աշխատակիցներին.** Աշխատավարձերը, գործավարձերը, ՀՀ պետական կենսաթոշակային և սոցիալական ապահովագրության հիմնադրամներին կատարված վճարումները, տարեկան վճարովի և հիվանդության արձակուրդները, պարգևավճարները և ոչ դրամական նպաստները (օրինակ՝ առողջապահական ծառայությունները) հաշվարկվում են այն տարում, երբ համբի աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Կենսաթոշակային հատկացումներից բացի, Խումբը չունի կենսաթոշակային կամ համանման այլ վճարումներ կատարելու իրավական կամ կառուցողական պարտավորություն:

Կարճաժամկետ աշխատակիցների հատուցումների գծով պարտավորությունները չափվում են չգեղչված հիմունքով և ծախսագրվում են համապատասխան ծառայության մատուցմանը զուգընթաց: Ճանաչվում է պարտավորություն այն գումարի չափով, որը նախատեսվում է վճարել կարճաժամկետ դրամական պարգևավճարի տեսքով, եթե Խումբը ունի այդ գումարը վճարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտավորություն՝ աշխատողի կողմից անցյալում մատուցված ծառայության արդյունքում, և պարտավորությունը կարող է արժանահավատորեն չափվել:

**Համախմբված ֆինանսական հաշվետվությունների փոփոխություն թողարկումից հետո.** Թողարկումից հետո սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների ցանկացած փոփոխության համար պահանջվում է հաստատում համբի Տնօրենների խորհրդի կողմից, որը հաստատել է սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները հրապարակման համար:

**4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության Եական գնահատականներ և դատողություններ**

Խումբը կատարում է գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների և հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա: Գնահատականներն ու դատողությունները շարունակական կերպով վերանայվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ինչպիսիք են հետագա իրադարձությունների ակնկալիքները, որոնք առկա պայմաններում տրամաբանական են համարվում: Գնահատականներից բացի, ղեկավարությունը կատարում է նաև որոշակի այլ դատողություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գործընթացում: Դատողությունները, որոնք առավել նշանակալի ազդեցություն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված արժեքների վրա, և գնահատականները, որոնք կարող են հիմք հանդիսանալ հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներում նշանակալի ճշգրտման համար, հետևյալն են.

**Հետաձգված հարկային ակտիվի ճանաչում.** Ճանաչված հետաձգված հարկային ակտիվները ներկայացնում են շահութահարկի այն գումարը, որը կարող է հաշվանցվել ապագա հարկվող շահույթից նվազեցումների դիմաց և ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա համապատասխան հարկային արտոնության իրացման բարձր հավանականություն: Սա ենթադրում է ժամանակավոր տարբերությունների առկայություն, որոնք ապագայում ակնկալվում է վերականգնել, և բավարար ապագա հարկվող շահույթ, որոնց դիմաց ակնկալվում է օգտագործել նվազեցումները: Ապագա հարկվող շահույթի և ապագայում ամենայն հավանականությամբ հաշվանցման ենթակա հարկային նվազեցումների չափը որոշվում է ղեկավարության կողմից մշակված միջնաժամկետ գործարար ծրագրի և ապագայի նկատմամբ դրա արտարկման/էքստրապոլյացիայի/ արդյունքների հիման վրա: Գործարար ծրագիրը հիմնված է ղեկավարության՝ տվյալ հանգամանքներում հիմնավորված ակնկալիքների վրա:

**Հարկային օրենսդրություն.** ՀՀ հարկային և մաքսային օրենսդրությունը ենթակա են տարբեր մեկնաբանումների: Տես Ծանոթագրություն 20-21:

**4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական գնահատականներ և դատողություններ (շարունակություն)**

**Կապակցված կողմերի հետ գործարքների սկզբնական ճանաչում.** Բնականոն գործունեության ընթացքում խումբը գործարքի մեջ է մտնում իր կապակցված կողմերի հետ: ՖՀՄՍ 9-ը պահանջում է ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչում հիմնված նրանց իրական արժեքի վրա: Դատողությունը կիրառվում է որոշելու, թե արդյոք գործարքները գնահատված են շուկայական կամ ոչ շուկայական տոկոսադրույքներով, երբ չկա ակտիվ շուկա այդպիսի գործարքների համար: Դատողության համար հիմք է հանդիսանում չկապակցված կողմերի հետ նմանատիպ գործարքների գնահատումը և արդյունավետ տոկոսադրույքով վերլուծությունները: Կապակցված կողմերի հաշվեկշիռի պայմաններն ու դրույթները բացահայտվում են Ծանոթագրություն 25-ում:

**Հնարավոր պարտքային կորուստների գնահատում.** Հնարավոր պարտքային կորուստների գնահատումը կարևոր գնահատական է, որը ներառում է մեթոդաբանության, մոդելների և ելակետային տվյալների սահմանումը: ԱՊԿ չափման մեթոդաբանության մանրամասները բացահայտված են Ծանոթագրություն 3-ում և 11-ում: Հետևյալ բաղադրիչներն ունեն էական ազդեցություն պարտքային կորստի պահուստի վրա՝ դեֆոլտի սահմանումը, վարկային ռիսկերի նշանակալի աճը, դեֆոլտի հավանականությունը, դեֆոլտով պայմանավորված կորուստը, ինչպես նաև մակրոտնտեսական սցենարների մոդելները: Խումբը պարբերաբար վերանայում և հաստատում է մոդելները և ելակետային տվյալները՝ գնահատված հնարավոր պարտքային կորուստների և փաստացի պարտքային կորուստների միջև եղած տարբերությունները նվազեցնելու նպատակով:

**Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը.** Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը կատարվում է՝ ելնելով մասնագիտական դատողությունից, հիմք ընդունելով համանման ակտիվների գծով առկա փորձը: Այս ակտիվներում մարմնավորվող ապագա տնտեսական օգուտները հիմնականում կստացվեն դրանց օգտագործումից: Սակայն մի շարք այլ գործոններ, ինչպիսիք են՝ տեխնիկական կամ առևտրային տեսանկյունից մաշվածությունը, հաճախ հանգեցնում են տվյալ ակտիվների հետ կապված տնտեսական շահույթի նվազմանը: Դեկավարությունը գնահատում է հիմնական միջոցների օգտակար ծառայության մնացորդային ժամկետը՝ հիմք ընդունելով ակտիվների տեխնիկական վիճակը, և հաշվի առնելով հաշվարկային ժամանակահատվածը, որի ընթացքում տվյալ ակտիվները խմբի համար կառաջացնեն տնտեսական շահույթ: Հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոնները. ա) ակտիվների ակնկալվող օգտագործման ժամկետը, բ) սարքավորումների ակնկալվող մաշվածությունը, որը կախված է շահագործման բնութագրերից և տեխնիկական սպասարկման ծրագրից, և գ) տեխնիկական կամ առևտրային տեսանկյունից մաշվածությունը, որն առաջանում է շուկայի պայմանների փոփոխության հետևանքով:

Եթե գնահատված օգտակար ծառայության ժամկետները 10%-ով տարբերվեին դեկավարության գնահատականներից, ապա 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար մաշվածության վրա ազդեցությունը կկազմեր 34,239 հազ. ՀՀ դրամի չափով աճ կամ 34,239 հազ. դրամի նվազում (2023թ.՝ 26,505 հազ. ՀՀ դրամի չափով աճ կամ 26,505 հազ. ՀՀ դրամի չափով նվազում):

**Հիմնական միջոցների մնացորդային արժեքները.** Դեկավարությունը հիմնական միջոցների մնացորդային արժեքները սահմանել է զրոյական:

**Օգտագործման իրավունքով ակտիվների օգտակար ծառայության ժամկետը.** Վարձակալության ժամկետը որոշելիս դեկավարությունը հաշվի է առնում բոլոր փաստերն ու հանգամանքները, որոնք տնտեսական դրդապատճառ են ստեղծում երկարաձգման օպցիոնը կիրառելու կամ դադարեցման օպցիոնը չկիրառելու համար: Երկարաձգման օպցիոնները (կամ դադարեցման օպցիոններին հաջորդող ժամկետները) ներառվում են վարձակալության ժամկետում միայն այն դեպքում, եթե առկա է ողջամիտ վստահություն, որ վարձակալությունը երկարաձգվելու է (կամ չի դադարեցվելու):

Դեղատների և տրանսպորտային միջոցների վարձակալության դեպքում սովորաբար առավել կարևոր են հետևյալ գործոնները.

- Եթե վարձակալությունը դադարեցնելու (կամ չերկարաձգելու համար) նախատեսված են էական տույժեր, խումբը, որպես կանոն, ունի ողջամիտ համոզվածություն, որ վարձակալությունը երկարաձգվելու է (կամ չի դադարեցվելու):

**4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական գնահատականներ և դատողություններ (շարունակություն)**

- Եթե ակնկալվում է, որ վարձակալված ակտիվի կապիտալացվող բարելավման արդյունքում կառաջանա զգալի մնացորդային արժեք, ապա Խումբը, որպես կանոն, ունի ողջամիտ համոզվածություն, որ վարձակալությունը երկարաձգվելու է (կամ չի դադարեցվելու):

Հակառակ դեպքում, Խումբը հաշվի է առնում այլ գործոններ, ներառյալ վարձակալության նախկին տևողությունները և ծախսերը և բիզնեսի ընդհատումները, որոնք անհրաժեշտ են վարձակալված ակտիվը փոխարինելու համար: Դեղատների և տրանսպորտային միջոցների վարձակալության երկարաձգման տարբերակների մեծ մասը ներառված չեն վարձակալության գծով պարտավորության մեջ, քանի որ Խումբը կարող է փոխարինել ակտիվները առանց էական ծախսերի կամ գործունեության ընդհատման:

Դադարեցման օպցիոնները ներառված են Խմբի հիմնական միջոցների մի շարք վարձակալական պայմանագրերում: Այս պայմաններն օգտագործվում են Խմբի գործունեության մեջ օգտագործվող ակտիվները կառավարելիս առավելագույն գործառնական ճկունություն ապահովելու համար:

Գրասենյակների և տրանսպորտային միջոցների վարձակալության երկարաձգման տարբերակների մեծ մասը ներառված չէ վարձակալության պարտավորության մեջ:

**Վարձակալության պարտավորությունների որոշման համար օգտագործվող գեղչային դրույքաչափեր.** Խումբը գեղչման տոկոսադրույքը հաշվարկելու համար որպես հիմք է օգտագործում իր փոխառության աճող տոկոսադրույքը, քանի որ վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը չի կարող անմիջականորեն որոշվել:

Հետևյալ գործոններով որոշվել է աճողական փոխառության 8.14% դրույքաչափի օգտագործումը (2023թ.՝ 8.25%). օգտագործվել է Խմբի փոխառությունների ՀՀ դրամով միջին կշռված տոկոսադրույքը:

2024թ. դեկտեմբերի 31-ին գեղչման դրույքի 10% հարաբերական աճը կամ նվազումը կհանգեցնի վարձակալության գծով պարտավորությունների աճի կամ նվազման 30,508 հազ. ՀՀ դրամի չափով (31 դեկտեմբերի 2023թ.՝ 18,230 հազ. ՀՀ դրամի չափով):

**Լոյալության ծրագրին վերագրվող եկամուտ.** Խումբը հաշվառում է հաճախորդների լոյալության միավորները՝ որպես առանձին բաղադրիչ այն վաճառքի գործարքի շրջանակներում, որում դրանք շնորհվում են: Հաճախորդներից ստացված հատուցման իրական արժեքի մի մասը բաշխվում է կուտակային միավորներին և հետաձգվում՝ ճանաչվելով որպես եկամուտ այն ժամանակաշրջանի ընթացքում, երբ կուտակային միավորները մարվում են: Հետևաբար, դեկավարությունը պետք է ենթադրություններ կատարի մարման ակնկալվող դրույքաչափերի վերաբերյալ, որոնք հնարավոր է կատարել նախորդ ժամանակաշրջանների վիճակագրական տվյալների առկայության դեպքում, և հաշվետու ամսաթվի դրությամբ ենթակա են նշանակալի անորոշության:

**5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին**

2024թ. հունվարի 1-ից ուժի մեջ են մտել հետևյալ նոր ստանդարտները և փոփոխությունները.

**Փոփոխություններ ՖՀՄՍ 16-ում Վարձակալություն. Վարձակալության պարտավորություն վաճառքի և հետադարձ վարձակալության ժամանակ (թողարկվել է 2022թ. սեպտեմբերի 22-ին և ուժի մեջ է մտնում 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):** Փոփոխությունները վերաբերում են վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքներին, որոնք բավարարում են ՖՀՄՍ 15-ի պահանջները՝ վաճառք հաշվառվելու համար: Փոփոխությունները պահանջում են, որ վաճառող-վարձակալը հետագայում չափի գործարքից բխող պարտավորությունները այն կերպ, որ չճանաչի իր կողմից պահպանված օգտագործման իրավունքի հետ կապված որևէ շահույթ կամ վնաս: Սա նշանակում է նման շահույթի հետաձգում, նույնիսկ եթե պարտավորության էությունը կայանում է փոփոխական վճարումներում, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքաչափից:

**Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների դասակարգումը – ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ (ի սկզբանե թողարկվել է 2020թ. հունվարի 23-ին և հետագայում թողարկման ամսաթիվը փոփոխվել է 2020թ. հուլիսի 15-ին և 2022թ. հոկտեմբերի 31-ին, ուժի մեջ է մտնում 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):** Այս փոփոխություններով հստակեցվում է, որ պարտավորությունների՝ որպես կարճաժամկետ կամ երկարաժամկետ դասակարգումը պայմանավորված է հաշվետու ժամանակաշրջանի վերջում գոյություն ունեցող իրավունքներով: Պարտավորությունները երկարաժամկետ են, եթե կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ըստ էության ունի դրանց մարումն առկա լինելու 12 ամսով հետաձգելու իրավունք: Ուղեցույցն այլևս չի սահմանում այդ իրավունքի անվերապահ լինելու պահանջ: 2022թ. հոկտեմբերի փոփոխությունը սահմանեց, որ վարկային պայմանագրերը, որոնք պետք է կատարվեն հաշվետու ամսաթվից հետո, չեն ազդում հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքի՝ որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգման վրա: Մարումը ապագայում հետաձգելու իրավունքի իրացման առումով ղեկավարության ակնկալիքները ազդեցություն չունեն պարտավորությունների դասակարգման վրա: Պարտավորությունը դասակարգվում է որպես կարճաժամկետ, եթե պայմանը խախտվել է հաշվետու ամսաթվի դրությամբ կամ դրանից առաջ, նույնիսկ եթե հաշվետու ժամանակաշրջանի վերջում պարտատիրոջից ստացվել է պայմանի կատարման պարտավորությունից ազատում: Մինևնույն ժամանակ, վարկը դասակարգվում է որպես երկարաժամկետ, եթե վարկային պայմանագրի պայմանը խախտվում է միայն հաշվետու ամսաթվից հետո: Բացի այդ, փոփոխությունները հստակեցնում են պարտքի դասակարգման պահանջները, որոնք կազմակերպությունը կարող է մարել՝ այն սեփական կապիտալի վերածելու միջոցով: «Մարում» հասկացությունը սահմանվում է որպես պարտավորության դադարեցում՝ դրամական միջոցների, տնտեսական օգուտները մարմնավորող այլ ռեսուրսների կամ կազմակերպության սեփական բաժնային գործիքների միջոցով կատարված վերջնահաշվարկի արդյունքում: Բացառություն է սահմանվում փոխարկելի գործիքների համար, որոնք կարող են վերածվել սեփական կապիտալի, բայց միայն այն գործիքների համար, երբ փոխարկման օպցիոնը դասակարգվում է որպես բարդ ֆինանսական գործիքի առանձին բաղադրիչ հանդիսացող բաժնային գործիք:

**Փոփոխություններ ՀՀՄՍ 7-ում «Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն» և ՀՀՄՍ 7-ում «Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ. Մատակարարների ֆինանսական պայմանագրեր» (Թողարկվել է 2023թ. մայիսի 25-ին):** Ի պատասխան ֆինանսավորման պայմանագրերի ոչ համարժեք կամ ապակողմորոշիչ բացահայտման վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների մտահոգություններին, 2023թ. մայիսին ՀՀՄՍ-ն փոփոխություններ է կատարել ՀՀՄՍ 7-ում և ՀՀՄՍ 7-ում՝ պահանջելով բացահայտել կազմակերպության մատակարարների ֆինանսական պայմանագրերը (ՄՖՊ): Այս փոփոխություններով պահանջվում է, որպեսզի կազմակերպությունը բացահայտի մատակարարների այն ֆինանսական պայմանագրերը, որոնք ֆինանսական հաշվետվություններ օգտագործողներին հնարավորություն կտան գնահատել այդ պայմանագրերի ազդեցությունը կազմակերպության պարտավորությունների և դրամական միջոցների հոսքերի վրա և կազմակերպության իրացվելիության ռիսկի վրա: Լրացուցիչ բացահայտման պահանջների նպատակն է բարձրացնել մատակարարների ֆինանսական պայմանագրերի թափանցիկությունը: Փոփոխությունները չեն ազդում ճանաչման կամ չափման սկզբունքների վրա, այլ միայն բացահայտման պահանջների վրա:

Փոփոխությունների կիրառումը Եական ազդեցություն չի ունեցել խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

**6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ**

Հրապարակվել են 2025թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո տարեկան ժամանակահատվածների համար պարտադիր մի շարք նոր ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնց վաղ կիրառումը չի իրականացվել Ընկերության կողմից:

**Փոփոխություններ ՀՀՍՍ 21-ում «Փոխանակելիության բացակայություն» (թողարկվել է 2023թ. օգոստոսի 15-ին և ուժի մեջ է մտնում 2025թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):** 2023թ. օգոստոսին ՀՀՍՍԽ-ն փոփոխություններ է կատարել ՀՀՍՍ 21-ում, որը նպատակ ունի օգնել կազմակերպություններին գնահատելու երկու արժույթների միջև փոխանակելիությունը և որոշել սփոթ փոխարժեքն այն դեպքում, երբ փոխանակելիություն ամբողջով է գործարք կամ գործառնություն արտարժույթով, որը չափման ամսաթվին որոշակի նպատակով չի կարող փոխանակվել այլ արժույթի: ՀՀՍՍ 21-ի փոփոխությունները չեն ներկայացնում սփոթ փոխարժեքը գնահատելու վերաբերյալ մանրամասն պահանջներ: Փոխարենը, սահմանվում է շրջանակ, որի համաձայն կազմակերպությունը կարող է որոշել սփոթ փոխարժեքը գնահատման ամսաթվի դրությամբ: Նոր պահանջները կիրառելիս չի թույլատրվում համեմատական տեղեկատվության վերաներկայացում: Անհրաժեշտ է ազդեցության ենթարկվող գումարները փոխարկել սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ գնահատված սփոթ փոխարժեքներով՝ չբաշխված շահույթի կամ կուտակային փոխարժեքային տարբերությունների պահուստի ճշգրտմամբ:

**Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ . ՀՀՍՍ 9-ի և ՀՀՍՍ 7-ի փոփոխություններ (հրապարակվել է 2024թ. մայիսի 30-ին և ուժի մեջ է մտնում 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):** 2024թ. մայիսի 30-ին ՀՀՍՍԽ-ն հրապարակել է ՀՀՍՍ 9-ի և ՀՀՍՍ 7-ի փոփոխություններ՝ հետևյալ նպատակներով.

- (ա) պարզաբանել որոշ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ճանաչման և ապաճանաչման ամսաթիվը, սահմանելով նոր բացառություն էլեկտրոնային դրամական փոխանցումների համակարգի միջոցով մարվող որոշ ֆինանսական պարտավորությունների համար.
- (բ) պարզաբանել և լրացուցիչ ուղեցույց ներկայացնել՝ բացառապես մայր գումարի և տոկոսների վճարման չափանիշին ֆինանսական ակտիվի համապատասխանությունը գնահատելու համար.
- (գ) ավելացնել նոր բացահայտումներ պայմանագրային ժամկետներ ունեցող որոշակի գործիքների գծով, որոնք կարող են առաջացնել դրամական միջոցների հոսքերի փոփոխություն (օրինակ՝ բնապահպանական, սոցիալական և կառավարման (ԲՍԿ) նպատակների իրագործմանը կապակցված որոշ գործիքներ). և
- (դ) թարմացնել իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով (FVOCI) չափվող բաժնային գործիքների բացահայտումները:

**ՀՀՍՍ 18 «Ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում» (թողարկվել է 2024թ. ապրիլի 9-ին և ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):** 2024թ. ապրիլին ՀՀՍՍԽ-ն հրապարակել է Նոր ստանդարտ՝ ՀՀՍՍ 18 «Ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում», որը առանձնահատուկ անդրադառնում է շահույթի կամ վնասի մասին հաշվետվություններին առնչվող թարմացումներին: ՀՀՍՍ 18-ում ներկայացված առանցքային նոր հասկացությունները առնչվում են հետևյալին՝

- շահույթի կամ վնասի հաշվետվության կառուցվածքը.
- ֆինանսական հաշվետվություններում պահանջվող բացահայտումները շահույթի կամ վնասի չափման որոշակի դիրքերի գծով, որոնք ներկայացվում են կազմակերպության ֆինանսական հաշվետվություններից դուրս (այսինքն՝ ղեկավարության կողմից սահմանված չափման դիրքերը). և
- համախմբման և տարանջատման ընդլայնված սկզբունքները, որոնք կիրառելի են հիմնական ֆինանսական հաշվետվությունների, և ընդհանուր առմամբ ծանոթագրությունների նկատմամբ:

ՀՀՍՍ 18-ը կփոխարինի ՀՀՍՍ 1-ին. ՀՀՍՍ 1-ում ներառված սկզբունքներից շատերը պահպանվում են՝ սահմանափակ փոփոխություններով: ՀՀՍՍ 18-ը չի ազդի ֆինանսական հաշվետվությունների հողվածների ճանաչման կամ չափման վրա, սակայն կարող են փոփոխվել կազմակերպության կողմից որպես «գործառնական շահույթ կամ վնաս» ներկայացվող դիրքերը: ՀՀՍՍ 18-ը կկիրառվի 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Այն կիրառելի է նաև համեմատական տեղեկատվության նկատմամբ:

**6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)**

**ՖՀՄՍ 19 «Հրապարակային հաշվետվողականության պահանջ չունեցող դուստր ձեռնարկություններ. Բացահայտումներ» (թողարկվել է 2024 թվականի մայիսի 9-ին և ուժի մեջ է 2027 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):** Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը (ՀՀՄՍԽ) թողարկել է նոր ՖՀՄՍ հաշվառման ստանդարտ դուստր ձեռնարկությունների համար: ՖՀՄՍ 19-ը իրավասու դուստր ձեռնարկություններին հնարավորություն է տալիս ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտները կիրառել կրճատված բացահայտումներով: ՖՀՄՍ 19-ի կիրառումը թույլ կտա նվազեցնել դուստր ձեռնարկությունների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ծախսերը՝ միաժամանակ ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար պահպանելով տեղեկատվության օգտակարությունը: Իրենց առանձնացված ֆինանսական հաշվետվությունների համար ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներ օգտագործող դուստր կազմակերպությունները ներկայացնում են բացահայտումներ, որոնք կարող են անհամաչափ լինել օգտագործողների տեղեկատվական կարիքներին: ՖՀՄՍ 19-ը նպատակ ունի հասցեագրել այս մարտահրավերները՝

- հնարավորություն տալով դուստր ձեռնարկություններին վարել հաշվապահական հաշվառման միայն մեկ լրակազմ, որը բավարար է ինչպես մայր ընկերության, այնպես էլ իրենց սեփական ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների կարիքների տեսանկյունից.
- Բացահայտման պահանջների կրճատում. ՖՀՄՍ 19-ը հնարավորություն է տալիս ներկայացնել կրճատված բացահայտումներ, որոնք ավելի պատշաճ կերպով են համապատասխանում ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների կարիքներին:

**ՖՀՄՍ 14 «Կարգավորող հետաձգված հաշիվներ» (թողարկվել է 2014թ. հունվարի 30-ին):** ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտները առաջին անգամ կիրառող կազմակերպություններին ՖՀՄՍ 14-ը հնարավորություն է ընձեռում շարունակել դրույքաչափերի կարգավորման հետ կապված գումարների ճանաչումը իրենց նախորդ հաշվապահական հաշվառման ստանդարտի պահանջների համաձայն: Այնուամենայնիվ, ՖՀՄՍ Հաշվապահական հաշվառման ստանդարտներն արդեն կիրառող և այդ գումարները չճանաչող կազմակերպությունների հետ համադրելիությունը մեծացնելու նպատակով, ստանդարտը պահանջում է դրույքաչափերի կարգավորման ազդեցությունը ներկայացնել այլ հողվածներից առանձին: Այն կազմակերպությունը, որն իր ֆինանսական հաշվետվությունները արդեն ներկայացնում է ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն, իրավասու չէ կիրառել ստանդարտը: Այս ստանդարտի ուժի մեջ մտնելու ամսաթիվը դեռ պետք է որոշվի ՀՀՄՍԽ-ի կողմից:

**«Ակտիվների վաճառք կամ հատկացում՝ ներդրողի և ասոցիացված կազմակերպությունների կամ համատեղ ձեռնարկումների միջև» - փոփոխություններ ՖՀՄՍ 10-ում և ՀՀՄՍ 28-ում (թողարկված են 2014թ. սեպտեմբերի 11-ին, և ուժի մեջ են մտնում ՀՀՄՍԽ-ի կողմից որոշվելիք ամսաթվին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):** Այս փոփոխությունները վերաբերում են ներդրողի և իր ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկումների միջև ակտիվների վաճառքին կամ հատկացմանը վերաբերող՝ ՖՀՄՍ 10-ի և ՀՀՄՍ 28-ի պահանջների միջև գոյություն ունեցող անհամապատասխանությանը: Փոփոխությունների կիրառման հիմնական հետևանքն այն է, որ շահույթը կամ վնասը ճանաչվում է ամբողջությամբ այն դեպքում, երբ գործարքը առնչվում է ձեռնարկատիրական գործունեությանը: Շահույթը կամ վնասը ճանաչվում է մասնակիորեն այն դեպքում, երբ ակտիվը չի առնչվում ձեռնարկատիրական գործունեությանը, նույնիսկ եթե այդ ակտիվները պատկանում են դուստր կազմակերպությանը: 2015թ. ՀՀՄՍԽ-ն որոշել է անորոշ ժամանակով հետաձգել այս փոփոխությունների ուժի մեջ մտնելու ժամկետը:

**Բնությունից կախված էլեկտրաէներգիային հղում կատարող պայմանագրեր. Փոփոխություններ ՖՀՄՍ 9-ում և ՖՀՄՍ 7-ում (հրապարակվել է 2024թ. դեկտեմբերի 18-ին և ուժի մեջ է մտել 2026 թվականի հունվարի 1-ից):** ՀՀՄՍԽ կողմից հրապարակվել են մի շարք փոփոխություններ, որոնց նպատակն է՝ օժանդակել ընկերություններին բարելավել բնությունից կախված էլեկտրաէներգիայի պայմանագրերի ֆինանսական հետևանքների գծով իրենց հաշվետվողականությունը, հաշվի առնելով, որ այդ պայմանագրերը որպես կանոն կազմված են որպես էլեկտրաէներգիայի գնման պայմանագրեր (ԷԳԴ): Ընթացիկ հաշվապահական հաշվառման պահանջները կարող են բավարար չափով չարտացոլել ընկերության գործունեության վրա այս պայմանագրերի ազդեցության եղանակը:

**6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)**

Որպեսզի ընկերությունները հնարավորություն ունենան այս պայմանագրերն ավելի պատշաճ կերպով արտացոլել ֆինանսական հաշվետվություններում, ՀՀՄՍԽ-ն թիրախային փոփոխություններ է կատարել ՖՀՄՍ 9՝ «Ֆինանսական գործիքներ», և ՖՀՄՍ 7՝ «Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ» ստանդարտներում: Փոփոխությունները ներառում են՝ (ա) «սեփական օգտագործման» պահանջների կիրառման պարզաբանում, (բ) որոշակի հեջային հաշվառման պահանջների մեղմացում այն դեպքերում, երբ տվյալ պայմանագրերն օգտագործվում են որպես հեջավորման գործիքներ, և (գ) նոր բացահայտման պահանջների ավելացում, որոնց նպատակն է՝ ներդրողներին հնարավորություն տալ ընկալել այս պայմանագրերի ազդեցությունը ընկերության ֆինանսական ցուցանիշների և դրամական միջոցների հոսքերի վրա:

**ՖՀՄՍ հաշվառման ստանդարտների տարեկան բարելավումներ (թողարկվել է 2024թ, հուլիսին և ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ից):** ՖՀՄՍ 1-ով պարզաբանվել է, որ ՖՀՄՍ հաշվառման ստանդարտներին անցնելուց հետո հեջը պետք է դադարեցվի, եթե այն չի համապատասխանում «որակավորման չափանիշներին», այլ ոչ թե հեջի հաշվառման «պայմաններին»: Սա նպատակ ունի լուծել ՖՀՄՍ 1-ի և ՖՀՄՍ 9-ի հեջի հաշվառման պահանջների միջև անհամապատասխանության հետևանքով առաջացող հնարավոր տարբերությունը: ՖՀՄՍ 7-ով պահանջվում են օգուտի կամ վնասի բացահայտումներ՝ կապված այն ֆինանսական ակտիվների ապաճանաչման հետ, որտեղ կազմակերպությունը ունի ընթացիկ մասնակցություն, այդ թվում, պահանջվում է բացահայտել՝ արդյոք իրական արժեքի չափումները ներառում են «նշանակալի ծավալով ոչ դիտարկելի մուտքային տվյալներ»: Այս նոր ձևակերպումը փոխարինում է «նշանակալի մուտքային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա» արտահայտությանը: Փոփոխության նպատակն է՝ ձևակերպումը համապատասխանեցնել ՖՀՄՍ 13-ին: Բացի այդ, պարզաբանվել են ՖՀՄՍ 7-ի կիրառման ուղեցույցի որոշ օրինակներ և ավելացվել է տեքստ առ այն, որ օրինակները հնարավոր է՝ չարտացոլեն ՖՀՄՍ 7-ի նշված պարբերությունների բոլոր պահանջները: ՖՀՄՍ 16-ում կատարվել է փոփոխություն՝ պարզաբանելով, որ երբ վարձակալը որոշում է, որ վարձակալության գծով պարտավորությունը մարվել է համաձայն ՖՀՄՍ 9-ի, ապա վարձակալը պետք է կիրառի ՖՀՄՍ 9-ի ուղեցույցը՝ արդյունքում առաջացող շահույթը կամ վնասը ճանաչելու համար: Այս պարզաբանումը վերաբերում է վարձակալության գծով պարտավորություններին, որոնք մարվել են կազմակերպության կողմից այդ փոփոխությունը առաջին անգամ կիրառելու հաշվետու տարեկան ժամանակաշրջանի սկզբում կամ դրանից հետո: ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 15-ի միջև անհամապատասխանությունը վերացնելու նպատակով այժմ պահանջվում է, որ առևտրային դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվեն «ՖՀՄՍ 15-ի կիրառման միջոցով որոշված գումարով» այլ ոչ թե «գործարքի գևով» (ինչպես սահմանված է ՖՀՄՍ 15-ում): ՖՀՄՍ 10-ի փոփոխությամբ օգտագործելով պակաս միանշանակ ձևակերպում «դե-ֆակտո գործակալ» հանդիսացող կազմակերպության համար, և պարզաբանվել է, որ ՖՀՄՍ 10-ի Բ74 պարագրաֆում նկարագրված հարաբերությունը միայն մեկ օրինակ է այն հանգամանքներից, որոնց դեպքում պահանջվում է դատողություն՝ որոշելու, թե արդյոք կողմը հանդես է գալիս որպես դե ֆակտո գործակալ: ՀՀՄՍ 7-ում կատարվել է ճշտում՝ հեռացվել են «ինքնարժեքի մեթոդի» վկայակոչումները, որը հանվել է ՖՀՄՍ հաշվառման ստանդարտներից 2008թ. մայիսին, երբ ՀՀՄՍԽ-ն հրապարակեց «Ներդրման արժեքը դուստր ձեռնարկությունում, համատեղ վերահսկվող կազմակերպությունում կամ ասոցիացված կազմակերպությունում»:

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ**

**Համախմբված ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ  
առ 31 դեկտեմբերի 2024թ.**

**7 Հիմնական միջոցներ**

Հազ. ՀՀ դրամ	Հոդ և շենքեր	Մեքենաներ և սարքա- վորումներ	Տրանսպոր- տային միջոցներ	Հարմարանք- ներ և կցամասեր	Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր	Անավարտ շինարա- րություն	Ընդամենը
Սկզբնական արժեքն առ 1 հունվարի 2023թ.	2,299,122	384,448	465,938	1,302,736	118,405	-	<b>4,570,649</b>
Կուտակված մաշվածություն առ 1 հունվարի 2023թ.	(288,586)	(311,304)	(238,697)	(928,886)	(65,454)	-	<b>(1,832,927)</b>
<b>Հաշվեկշռային արժեքն առ 1 հունվարի 2023թ.</b>	<b>2,010,536</b>	<b>73,144</b>	<b>227,241</b>	<b>373,850</b>	<b>52,951</b>	-	<b>2,737,722</b>
Ավելացումներ	106,443	37,372	82,750	163,856	22,029	-	<b>412,450</b>
Վերադասակարգում ներդրումային գույքից հիմնական միջոցներին	17,847	-	-	-	-	-	<b>17,847</b>
Օտարումներ	-	-	(2,626)	(6,905)	-	-	<b>(9,531)</b>
Մաշվածության գծով ծախս	(40,601)	(32,053)	(50,915)	(122,461)	(14,159)	-	<b>(260,189)</b>
<b>Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2023թ.</b>	<b>2,094,225</b>	<b>78,463</b>	<b>256,450</b>	<b>408,340</b>	<b>60,821</b>	-	<b>2,898,299</b>
Սկզբնական արժեքն առ 31 դեկտեմբերի 2023թ.	2,423,412	421,820	546,062	1,459,687	140,434	-	<b>4,991,415</b>
Կուտակված մաշվածություն առ 31 դեկտեմբերի 2023թ.	(329,187)	(343,357)	(289,612)	(1,051,347)	(79,613)	-	<b>(2,093,116)</b>
<b>Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2023թ.</b>	<b>2,094,225</b>	<b>78,463</b>	<b>256,450</b>	<b>408,340</b>	<b>60,821</b>	-	<b>2,898,299</b>
Ավելացումներ	51,634	61,401	39,873	294,694	125,896	-	<b>573,498</b>
Օտարումներ	(61,438)	-	(15,651)	(7,873)	(30,472)	-	<b>(115,434)</b>
Մաշվածության գծով ծախս	(42,955)	(37,740)	(54,730)	(147,766)	(16,025)	-	<b>(299,216)</b>
<b>Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2024թ.</b>	<b>2,041,466</b>	<b>102,124</b>	<b>225,942</b>	<b>547,395</b>	<b>140,220</b>	-	<b>3,057,147</b>
Սկզբնական արժեքն առ 31 դեկտեմբերի 2024թ.	2,413,608	483,221	570,284	1,746,508	235,858	-	<b>5,449,479</b>
Կուտակված մաշվածություն առ 31 դեկտեմբերի 2024թ.	(372,142)	(381,097)	(344,342)	(1,199,113)	(95,638)	-	<b>(2,392,332)</b>
<b>Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2024թ.</b>	<b>2,041,466</b>	<b>102,124</b>	<b>225,942</b>	<b>547,395</b>	<b>140,220</b>	-	<b>3,057,147</b>

**7 Հիմնական միջոցներ (շարունակություն)**

Մաշվածության գծով ծախսը՝ 200,497 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 183,108 հազ. ՀՀ դրամ) վերագրվել է վաճառքի և առաքման ծախսերին (Ծանոթագրություն 18), 63,366 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 60,426 հազ. ՀՀ դրամ)՝ վարչական ծախսերին (Ծանոթագրություն 18) և 35,353 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 31,813 հազ. ՀՀ դրամ)՝ վաճառքի ինքնարժեքին:

2024. դեկտեմբերի 31-ի դրությամբ որպես վարկերի և փոխառությունների ապահովվածության միջոց գրավադրվել է 875,029 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 1,409,828 հազ. ՀՀ դրամ) հաշվեկշռային արժեքով հիմնական միջոց (Ծանոթագրություն 14):

2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար խմբի ղեկավարությունը չի բացահայտել արժեզրկման որևէ հայտանիշ:

Կան ամբողջությամբ մաշված հիմնական միջոցների միավորներ, որոնք դեռևս օգտագործվում են խմբի կողմից.

*Հազ. ՀՀ դրամ*

<b>Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի</b>	<b>2024թ.</b>	<b>2023թ.</b>
Հարմարանքներ և կցամասեր	585,519	781,998
Մեքենաներ և սարքավորումներ	54,039	12,811
Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր	36,271	-
Տրանսպորտային միջոցներ	5,300	21,085
<b>Ընդամենը</b>	<b>681,129</b>	<b>815,894</b>

**8 Ներդրումային գույք**

*Հազ. ՀՀ դրամ*

	<b>2024թ.</b>	<b>2023թ.</b>
<b>Հաշվեկշռային արժեքն առ 1 հունվարի</b>	<b>138,591</b>	<b>159,298</b>
Վերադասակարգում հիմնական միջոցների (Ծան. 7)	-	(17,847)
Մաշվածության գծով ծախս	(3,333)	(2,860)
<b>Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի</b>	<b>135,258</b>	<b>138,591</b>

Ներդրումային գույքը բաղկացած է կոմերցիոն գույքից, որը վարձակալությամբ տրված է երրորդ անձանց, որպես գրասենյակային տարածք:

2023 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում խումբը վերանայել է իր գույքի մի մասի օգտագործման եղանակը՝ վարձակալվող գույքից սեփական օգտագործման գույքի, հետևաբար, Ներդրումային գույքի արժեքի համապատասխան մասը վերադասակարգվել է որպես հիմնական միջոցներ:

2024. դեկտեմբերի 31-ի դրությամբ որպես վարկերի և փոխառությունների ապահովվածության միջոց գրավադրվել է 135,258 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 138,591 հազ. ՀՀ դրամ) հաշվեկշռային արժեքով ներդրումային գույք (Ծանոթագրություն 14):

Ըստ ղեկավարության գնահատման, հաշվետու ամսաթվի դրությամբ ներդրումային գույքի իրական արժեքը մոտ է դրա հաշվեկշռային արժեքին: Ներդրումային գույքի իրական արժեքի որոշումը իրական արժեքի հիերարխիայում դասակարգվում է 3-րդ մակարդակով:

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ****Համախմբված ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ  
առ 31 դեկտեմբերի 2024թ.****8 Ներդրումային գույք (շարունակություն)**

Ներդրումային գույքի վարձակալությունից եկամուտը կազմել է 9,332 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 5,973 հազ. ՀՀ դրամ):

Շահույթում կամ վնասում ճանաչված ուղղակի գործառնական ծախսումները, որոնք վերաբերում են վարձակալական եկամուտ ստեղծող ներդրումային գույքին, էական չեն եղել (2023. թ՝ էական չեն եղել):

**9 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ**

Խումբը վարձակալում է տարբեր տարածքներ և տրանսպորտային միջոցներ: Վարձակալության պայմանագրերը սովորաբար կնքվում են 3-ից 8 տարի ժամկետով, բայց կարող են ունենալ երկարաձգման հնարավորություն:

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>Ընդամենը</b>
<b>Հաշվեկշռային արժեքն առ 1 հունվարի 2023թ.</b>	<b>1,797,667</b>
Ավելացումներ	686,895
Օտարումներ	(51,350)
Մաշվածության գծով ծախս	(845,187)
<b>Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2023թ.</b>	<b>1,588,025</b>
Ավելացումներ	1,937,262
Օտարումներ	(30,870)
Մաշվածության գծով ծախս	(870,745)
<b>Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2024թ.</b>	<b>2,623,672</b>

2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար Խմբի ղեկավարությունը չի բացահայտել արժեզրկման որևէ հայտանիշ:

Խումբը ճանաչում է վարձակալության գծով պարտավորությունները հետևյալ կերպ.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2024թ.</b>	<b>2023թ.</b>
Վարձակալության գծով կարճաժամկետ պարտավորություններ	825,549	525,765
Վարձակալության գծով երկարաժամկետ պարտավորություններ	1,955,319	1,160,165
<b>Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ</b>	<b>2,780,868</b>	<b>1,685,930</b>

2024թ. ֆինանսական ծախսերում ներառված տոկոսային ծախսերը կազմել են 183,230 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 152,892 հազ. ՀՀ դրամ):

Կարճաժամկետ վարձակալության գծով ծախսերը (ներառված վաճառքի և առաքման ծախսերում).

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2024թ.</b>	<b>2023թ.</b>
<b>Կարճաժամկետ վարձակալության հետ կապված ծախսեր</b>	<b>19,102</b>	<b>14,876</b>

2024թ. ընթացքում վարձակալության դիմաց կատարված վճարումների ընդհանուր գումարը կազմել է 1,053,975 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 998,079 հազ. ՀՀ դրամ):

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ****Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ  
առ 31 դեկտեմբերի 2024թ.****9 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ (շարունակություն)**

Վարձակալության պայմանագրերը բացի ապահովության տոկոսներից, այլ պարտավորություններ չեն սահմանում վարձատուի մոտ պահվող վարձակալված ակտիվների գծով: Վարձակալված ակտիվները չեն կարող օգտագործվել որպես փոխառության դիմաց գրավի միջոց:

**10 Պաշարներ**

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2024թ.</b>	<b>2023թ.</b>
Վերավաճառքի համար ապրանքներ Այլ	9,674,148 115,659	8,063,548 130,150
<b>Ընդամենը պաշարներ</b>	<b>9,789,807</b>	<b>8,193,698</b>

Վաճառքի արժեքը ներկայացնող ժամանակաշրջանում որպես ծախս ճանաչված պաշարների հիքնարժեքը կազմել է 27,072,318 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 25,404,479 հազ. ՀՀ դրամ):

2024. դեկտեմբերի 31-ի դրությամբ որպես վարկերի և փոխառությունների ապահովվածության միջոց գրավադրվել է 1,000,000 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 1,000,000 հազ. ՀՀ դրամ) արժեքով շրջանառվող պաշար (Ծանոթագրություն 14):

**11 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր**

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2024թ.</b>	<b>2023թ.</b>
Առևտրային դեբիտորական պարտքեր Այլ ֆինանսական պարտավորություններ Հանած՝ պարտքերի կորստի գծով պահուստ	2,083,191 190,474 (131,237)	2,411,392 94,968 (182,279)
<b>Ընդամենը ֆինանսական ակտիվներ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի կազմում</b>	<b>2,142,428</b>	<b>2,324,081</b>
Վերականգնման ենթակա ԱԱՀ Տրված կանխավճարներ Հարկային կանխավճարներ Այլ	29,950 453,773 55,209 1,413	13,352 685,854 21,001 5,660
<b>Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր առ 31 դեկտեմբերի</b>	<b>2,682,773</b>	<b>3,049,948</b>

Հնարավոր պարտքային կորուստների գնահատման համար Խուլմբն օգտագործում է ՖՀՄՍ 9-ով նախատեսված պարզեցված մոտեցումը, համաձայն որի օգտագործվում է բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի գծով հնարավոր կորուստների համար գնահատված պահուստը ամբողջ ժամկետի համար:

Հնարավոր պարտքային կորուստների չափման համար առևտրային դեբիտորական պարտքերը խմբավորվել են՝ ելնելով ընդհանուր պարտքային ռիսկի բնութագրերից և ժամկետանց օրերի քանակից:

Հնարավոր կորուստի դրույքաչափերի համար հիմք են ծառայում յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին նախորդող 36-ամսյա ժամանակահատվածում հաճախորդների վճարման օրինաչափությունները և այդ ժամանակահատվածում համապատասխան վարկային կորուստների պատմական տվյալները: Կորուստների պատմական տվյալները ճշգրտվում են՝ արտացոլելու համար ընթացիկ և կանխատեսումային տեղեկատվությունը մակրոտնտեսական գործոնների վերաբերյալ, որոնք ազդում են հաճախորդների դեբիտորական պարտքերի մարման կարողության վրա:

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ**

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ  
առ 31 դեկտեմբերի 2024թ.**

**11 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (շարունակություն)**

Առևտրային դեբիտորական պարտքերի համար պարտքային կորստի պահուստը որոշվում է ստորև բերված աղյուսակում ներկայացված պահուստի ժամկետայնության հաշվարկի միջոցով: Պահուստի ժամկետայնության հաշվարկը հիմնված է ակտիվի մարման ժամկետանց օրերի քանակի վրա՝ ճշգրտված հաճախորդների դեբիտորական պարտքերի մարման կարողության վրա ազդեցություն ունեցող մակրոտնտեսական գործոնների վերաբերյալ ընթացիկ և կանխատեսումային տեղեկատվությամբ:

Համախառն գումարի նկատմամբ %-ային արտահայտությամբ (հազ. ՀՀ դրամ)	31 դեկտեմբերի 2024թ.			
	Կորստի դրույքաչափ	Համախառն հաշվեկշռային արժեք	ԱՊԿ ամբողջ ժամկետի համար	Չուտ հաշվեկշռային արժեք
<b>Առևտրային դեբիտորական պարտքեր</b>				
- ընթացիկ	1.46%	1,394,678	20,418	1,374,286
- Մինչև 30 օր ժամկետանց	5.40%	286,520	15,460	271,059
- 31-60 օր ժամկետանց	8.56%	93,532	8,002	85,529
- 61-90 օր ժամկետանց	9.31%	45,933	4,275	41,658
- 91-120 օր ժամկետանց	2.19%	93,416	2,043	91,373
- 121-ից 150 օր ժամկետանց	9.65%	28,820	2,782	26,038
- 151-ից 180 օր ժամկետանց	11.28%	46,401	5,233	41,168
- 181-ից 211 օր ժամկետանց	56.71%	41,065	23,288	17,778
- ավելի քան 211 օր ժամկետանց	94.15%	52,826	49,736	3,065
<b>Ընդամենը</b>	<b>6.30%</b>	<b>2,083,191</b>	<b>131,237</b>	<b>1,951,954</b>

Համախառն գումարի նկատմամբ %-ային արտահայտությամբ (հազ. ՀՀ դրամ)	31 դեկտեմբերի 2023թ.			
	Կորստի դրույքաչափ	Համախառն հաշվեկշռային արժեք	ԱՊԿ ամբողջ ժամկետի համար	Չուտ հաշվեկշռային արժեք
<b>Առևտրային դեբիտորական պարտքեր</b>				
- ընթացիկ	1.51%	1,526,245	23,039	1,503,206
- Մինչև 30 օր ժամկետանց	5.27%	449,490	23,667	425,824
- 31-60 օր ժամկետանց	12.35%	217,090	26,801	190,289
- 61-90 օր ժամկետանց	18.86%	67,593	12,748	54,846
- 91-120 օր ժամկետանց	31.26%	36,323	11,353	24,970
- 121-ից 150 օր ժամկետանց	50.26%	11,729	5,895	5,835
- 151-ից 180 օր ժամկետանց	76.84%	6,290	4,833	1,457
- 181-ից 211 օր ժամկետանց	74.95%	1,014	760	253
- ավելի քան 211 օր ժամկետանց	76.54%	95,618	73,183	22,433
<b>Ընդամենը</b>	<b>7.56%</b>	<b>2,411,392</b>	<b>182,279</b>	<b>2,229,113</b>

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է առևտրային դեբիտորական պարտքերի համար ձևավորված պարտքային կորստի պահուստի շարժը ըստ հնարավոր պարտքային կորստի պարզեցված մոդելի, տարեկան ժամանակահատվածի սկզբից մինչև վերջ ընկած ժամանակահատվածի համար.

Հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
<b>Արժեզրկման կորուստի գծով պահուստ առ 1 հունվարի</b>	<b>182,279</b>	<b>218,590</b>
Տարվա ընթացքում կատարված դուրսգրումներ	(61,750)	(39,087)
Տարվա ընթացքում պահուստի ավելացում	10,708	2,776
<b>Արժեզրկման կորուստի պահուստ առ 31 դեկտեմբերի</b>	<b>131,237</b>	<b>182,279</b>

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ**

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2024թ.**

**12 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2024թ.</b>	<b>2023թ.</b>
Ցպահանջ բանկային մնացորդներ	7,504	51,898
Դրամական միջոցներ դրամարկղում	116,862	126,702
Դրամական միջոցներ ճանապարհին	135,089	130,215
<b>Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ առ 31 դեկտեմբերի</b>	<b>259,455</b>	<b>308,815</b>

Դրամական միջոցները դրամարկղում ներկայացնում են հաշվետու ամսաթվի դրությամբ խմբի ղեկատների ցանցում և գլխավոր գրասենյակում պահվող դրամական միջոցները:

Ստորև աղյուսակը բացահայտում է ցպահանջ բանկային մնացորդների վարկային որակը՝ հիմնված վարկային ռիսկի վարկանշման վրա առ 31 դեկտեմբերի 2024թ. և 31 դեկտեմբերի 2023թ.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2024թ.</b>	<b>2023թ.</b>
B1 (Moody's)	2	5,517
B2 (Moody's)	7,113	43,738
Ba3 (Moody's)	389	2,643
Չվարկանշված	-	-
<b>Ընդամենը ցպահանջ բանկային մնացորդներ</b>	<b>7,504</b>	<b>51,898</b>

**13 Կանոնադրական կապիտալ**

2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետոմսերի ընդհանուր հաստատված թիվը կազմել է 932,407 բաժնետոմս (2023թ.՝ 932,407 բաժնետոմս)՝ մեկ բաժնետոմսի համար 1.32 ՀՀ դրամ անվանական արժեքով (2023թ.՝ 1.32 ՀՀ դրամ մեկ բաժնետոմսի համար): Բոլոր թողարկված սովորական բաժնետոմսերը ամբողջությամբ վճարված են:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժիններ և քվեարկել խմբի ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

Համաձայն ՀՀ օրենսդրության, խմբի բաշխման ենթակա պահուստային միջոցները սահմանափակվում են չբաշխված շահույթի մնացորդով, որն արտացոլված է խմբի՝ համախմբված ֆինանսական հաշվետվություններում, որոնք պատրաստվում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան:

2024 թվականին խումբը հայտարարել և վճարել է 1,400,000 հազ. ՀՀ դրամի շահաբաժիններ, այդ թվում՝ 70,000 հազ. ՀՀ դրամ հարկ կամ 1.5 հազ. ՀՀ դրամ մեկ բաժնետոմսի դիմաց (2023թ.՝ 1,263,000 հազ. ՀՀ դրամ կամ 1.35 հազ. ՀՀ դրամ մեկ բաժնետոմսի դիմաց):

**14 Վարկեր և փոխառություններ**

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2024թ.</b>	<b>2023թ.</b>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>		
Գրավով ապահովված բանկային վարկեր	85,978	51,494
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>		
Գրավով ապահովված բանկային վարկեր	1,075,888	429,293
<b>Ընդամենը փոխառություններ</b>	<b>1,161,866</b>	<b>480,787</b>

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ**

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ  
առ 31 դեկտեմբերի 2024թ.**

**14 Վարկեր և փոխառություններ (շարունակություն)**

Չմարված վարկերի ժամկետները ներկայացված են ստորև.

Արժույթ	Անվանական տոկոսադրույք	Մարման տարեթիվ	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
ՀՀ դրամ	8.00%	2025թ.	1,075,888	259,538
ՀՀ դրամ	10%	2027թ.	24,046	
ՀՀ դրամ	(սուբսիդավորված) 11.35%	2025թ.	28,585	221,249
ՀՀ դրամ	(սուբսիդավորված) 11.4%	2028թ.	12,010	-
ՀՀ դրամ	(սուբսիդավորված) 9.5%	2028թ.	21,337	
<b>Ընդամենը փոխառություններ</b>			<b>1,161,866</b>	<b>480,787</b>

2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հսումբն ունեցել է որոշակի վարկեր, որոնք սուբսիդավորված են Հայաստանի Հանրապետության կողմից: Այս վարկերը համար որևէ պահանջներ կամ պայմաններ չեն առաջացրել: Սուբսիդավորման շնորհիվ համարի համար վարկերի փաստացի տոկոսադրույքը զրո է, և հսումբը որևէ տոկոս չի վճարել:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տեղական բանկերի վարկերի գծով որպես ապահովման միջոց գրավադրվել է 1,359,798 հազ. ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,409,828 հազ. ՀՀ դրամ) հաշվեկշռային արժեքով գույք:

հսումբն ունի մի շարք վարկային գծերի պայմանագրեր տեղական բանկերի հետ և սկսել է ավելի ակտիվորեն օգտագործել այդ վարկային գծերը՝ իր դրամական միջոցների և գործառնությունների կառավարման գործընթացների շրջանակում: Վարկային գծերը հիմնականում կարճաժամկետ են՝ երկարաձգման կամ վերանայման հնարավորությամբ: Հաշվետու ամսաթվի դրությամբ չօգտագործված վարկային գծի ընդհանուր գումարը կազմել է 676,310 հազ. ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ին՝ 740,462 հազ. ՀՀ դրամ):

Տարվա ընթացքում վարկերից և փոխառություններից առաջացած տոկոսային ծախսերը կազմել են 63,356 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 40,594 հազ. ՀՀ դրամ): Տարվա ընթացքում սուբսիդավորված վարկերի և փոխառությունների համար ստացված դրամաշնորհային եկամուտը կազմել է 14,480 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 34,036 հազ. ՀՀ դրամ):

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ**

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ  
առ 31 դեկտեմբերի 2024թ.**

**15 Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորությունների համեմատություն**

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական գործունեությունից բխող պարտավորությունների և ֆինանսական գործունեությունից բխող՝ Ընկերության պարտավորությունների շարժի վերլուծությունը ներկայացված ժամանակաշրջաններից յուրաքանչյուրի համար: Սրանք այն պարտավորություններն են, որոնք դրամական միջոցների հոսքերի հաշվետվությունում ներկայացվում են որպես ֆինանսական պարտավորություններ:

	31 դեկտեմբերի 2024թ.			31 դեկտեմբերի 2023թ.		
	Վարկեր և փոխառություններ	Վարձակալության գծով պարտավորություններ	Ընդամենը	Վարկեր և փոխառություններ	Վարձակալության գծով պարտավորություններ	Ընդամենը
<i>Հազ. ՀՀ դրամ</i>						
<b>Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորություններ առ 1 հունվարի</b>	<b>480,787</b>	<b>1,685,930</b>	<b>2,166,717</b>	<b>571,117</b>	<b>1,905,459</b>	<b>2,476,576</b>
<b>Դրամական միջոցների հոսքեր</b>						
Չուտ ստացված / (վճարված) դրամական միջոցների հոսքեր	678,881	(857,102)	<b>(178,221)</b>	(90,877)	(809,683)	<b>(900,560)</b>
Տոկոսավճարներ	(46,678)	(183,230)	<b>(229,908)</b>	7,189	(152,892)	<b>(145,703)</b>
<b>Ոչ դրամական փոփոխություններ</b>						
Տոկոսային ծախս	48,876	183,230	<b>232,106</b>	(6,642)	152,892	<b>146,250</b>
Ավելացումներ	-	1,952,040	<b>1,952,040</b>	-	590,154	<b>590,154</b>
<b>Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորություններ առ 31 դեկտեմբերի</b>	<b>1,161,866</b>	<b>2,780,868</b>	<b>3,942,734</b>	<b>480,787</b>	<b>1,685,930</b>	<b>2,166,717</b>

**16 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր**

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2024թ.	2023թ.
Առևտրային կրեդիտորական պարտքեր	3,134,653	2,707,612
Այլ կրեդիտորական պարտքեր	57,473	65,653
<b>Ընդամենը ֆինանսական կրեդիտորական պարտք առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի կազմում</b>	<b>3,192,126</b>	<b>2,773,265</b>
Հարկեր, բացի շահութահարկից	232,400	255,474
Աշխատավարձի գծով կրեդիտորական պարտքեր	204,075	402,194
Ստացված կանխավճարներ	22,179	6,639
<b>Ընդամենը այլ կրեդիտորական պարտքեր</b>	<b>458,654</b>	<b>664,307</b>
<b>Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր առ դեկտեմբերի 31-ի</b>	<b>3,650,780</b>	<b>3,437,572</b>

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ****Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ  
առ 31 դեկտեմբերի 2024թ.****17 Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ**

Խումբը հասույթ է ստանում որոշակի ժամանակային կետում Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում ապրանքների տեղափոխումից: Հիմնական հասույթի աղբյուրները հետևյալն են.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2024թ.</b>	<b>2023թ.</b>
<i>Ապրանքների վաճառք</i>		
Մանրածախ	15,926,627	15,179,800
Մեծածախ	18,666,975	18,336,915
<b>Ընդամենը հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ</b>	<b>34,593,602</b>	<b>33,516,715</b>

**18 Եկամուտներ և ծախսեր****Վաճառքի և բաշխման ծախսեր**

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2024թ.</b>	<b>2023թ.</b>
Աշխատավարձեր և աշխատանքի վարձատրության այլ վճարումներ	2,833,128	2,767,805
Մաշվածություն և ամորտիզացիա	1,087,990	1,028,294
Տրանսպորտ	149,348	122,594
Կոմունալ ծառայություններ և կապ	136,480	132,135
Տնտեսական ծախսեր	86,211	88,910
Բանկային սպասարկման վճարներ	85,181	77,917
Սպասարկման ծախսեր	40,871	37,326
Մարկետինգ և գովազդ	28,295	72,806
Կարճաժամկետ վարձակալության գծով ծախսեր	19,102	25,324
Գրասենյակային ծախսեր	6,085	8,400
Այլ	93,898	124,188
<b>Ընդամենը վաճառքի և բաշխման ծախսեր</b>	<b>4,566,589</b>	<b>4,485,699</b>

Անձնակազմի գծով ծախսերը ներառում են պարտադիր կենսաթոշակային հիմնադրամի հատկացումներ՝ 125,456 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 124,952 հազ. ՀՀ դրամ):

**Ընդհանուր և վարչական ծախսեր**

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2024թ.</b>	<b>2023թ.</b>
Աշխատավարձեր և աշխատանքի վարձատրության այլ վճարումներ	428,157	532,929
Մաշվածություն և ամորտիզացիա	89,724	60,426
Մասնագիտական ծառայություններ	79,538	75,651
Կոմունալ ծառայություններ և կապ	25,902	42,195
Աշխատակիցներին առնչվող ծախսեր	19,113	21,231
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	14,029	21,762
Գրասենյակային ծախսեր	5,358	6,163
Սպասարկման ծախսեր	4,561	4,512
Այլ	19,435	17,217
<b>Ընդամենը ընդհանուր և վարչական ծախսեր</b>	<b>685,817</b>	<b>782,086</b>

Անձնակազմի գծով ծախսերը ներառում են պարտադիր կենսաթոշակային հիմնադրամի հատկացումներ՝ 34,153 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 21,263 հազ. ՀՀ դրամ):

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ**

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ  
առ 31 դեկտեմբերի 2024թ.**

**18 Եկամուտներ և ծախսեր (շարունակություն)****Այլ օգուտներ / (վնասներ), զուտ**

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2024թ.</b>	<b>2023թ.</b>
Կորուստ արժույթի փոխարկումից	(53,594)	(68,516)
Ծախսագրված ԱԱՀ	(39,466)	(45,226)
Վարձակալության փոփոխության գծով (վնաս)/օգուտ	(13,266)	45,231
Բարեգործական ծախսեր	(11,993)	(21,393)
Այլ պաշարների դուրսգրումներ	(1,049)	(9,052)
Այլ	30,147	(18,923)
<b>Ընդամենը այլ օգուտներ / (վնասներ), զուտ</b>	<b>(89,221)</b>	<b>(117,879)</b>

**Այլ եկամուտներ**

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2024թ.</b>	<b>2023թ.</b>
Մարքեթինգային գործունեության գծով եկամուտ	143,412	-
Ենթավարձակալության գծով եկամուտ	140,203	110,924
Խրախուսական վճարների դուրսգրումից ստացված եկամուտ	43,914	43,594
Առաքման ծառայություններից ստացված եկամուտ	22,609	14,261
Մատուցված ծառայություններից ստացված եկամուտ	9,128	31,519
<b>Ընդամենը այլ եկամուտներ</b>	<b>359,266</b>	<b>200,298</b>

**19 Ֆինանսական ծախսեր**

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2024թ.</b>	<b>2023թ.</b>
Տոկոսային ծախս	232,106	152,892
<b>Ընդամենը ֆինանսական ծախս</b>	<b>232,106</b>	<b>152,892</b>

**20 Շահութահարկ****(ա) Շահութահարկի գծով ծախսի բաղադրիչները**

Շահութահարկի գծով ծախսի կազմը հետևյալն է.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2024թ.</b>	<b>2023թ.</b>
Ընթացիկ հարկ	398,614	536,133
Չետաձգված հարկ	13,256	2,163
<b>Տարվա շահութահարկի գծով ծախս</b>	<b>411,870</b>	<b>538,296</b>

**(բ) Կիրառելի հարկադրույքով բազմապատկած շահույթի կամ վնասի և շահութահարկի գծով ծախսի համադրում**

Խմբի համար գործող շահութահարկի դրույքաչափը 18% է: Հարկերի գծով ծախսի ակնկալվող և իրական մեծությունների միջև համեմատագրումը ներկայացված է ստորև.

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ**

**Համախմբված ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2024թ.**

**20 Շահութահարկ (շարունակություն)**

Հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
<b>Շահույթ մինչև հարկումը</b>	<b>2,289,092</b>	<b>2,766,589</b>
Տեսական հարկային (ծախս)/կրեդիտ` սահմանված 18% դրույքաչափով	(412,037)	(497,986)
Հարկային առումով չնվազեցվող կամ չհարկվող գործարքների ազդեցությունը.		
- Գուղավիլի գծով չճանաչված ժամանակավոր տարբերություն	-	-
- Չհարկվող եկամուտ	(5,997)	(2,852)
- Չնվազեցվող ծախսեր	6,164	(37,458)
<b>Տարվա շահութահարկի գծով ծախս</b>	<b>(411,870)</b>	<b>(538,296)</b>

**(գ) Հետաձգված հարկերի վերլուծությունն ըստ ժամանակավոր տարբերության տեսակի**

ՖՀՄՍ-ի և ՀՀ հարկային օրենսդրության միջև եղած տարբերություններն առաջացնում են ժամանակավոր տարբերություններ` ֆինանսական հաշվետվությունների ներկայացման նպատակով որոշվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկման նպատակով որոշվող դրանց գումարների միջև: Այդ ժամանակավոր տարբերություններում շարժի հարկային հետևանքը մանրամասն ներկայացված է ստորև և համեմատագրումը կատարված է 18% դրույքաչափով (2023թ. ` 18%):

Ժամանակավոր տարբերություններում շարժի հարկային հետևանքը 2024թ. դեկտեմբերի 31-ի համար մանրամասն ներկայացված է ստորև.

Հազ. ՀՀ դրամ	1 հունվարի 2024թ.	Ծախսագրված/ (կրեդիտագրված) շահույթին կամ վնասին	31 դեկտեմբերի 2024թ.
<b>Նվազեցվող/(հարկվող) ժամանակավոր տարբերությունների հարկային հետևանքը</b>			
Հիմնական միջոցներ	(214,808)	30,614	(184,194)
Ներդրումային գույք	-	(24,346)	(24,346)
Այլ ոչ նյութական ակտիվներ	537	628	1,165
Պաշարներ	35,272	27,210	62,482
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	23,218	(25,425)	(2,207)
Վարձակալության գծով պարտավորություն	17,622	10,673	28,295
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	43,055	(32,244)	10,811
Պայմանագրային պարտավորություն	25,558	(366)	25,192
<b>Չուտ հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)</b>	<b>(69,546)</b>	<b>(13,256)</b>	<b>(82,802)</b>
Հետաձգված հարկային ակտիվներ	127,640	(30,197)	97,443
Հետաձգված հարկային պարտավորություններ	(197,186)	16,941	(180,245)

Ժամանակավոր տարբերություններում շարժի հարկային հետևանքը 2023թ. դեկտեմբերի 31-ի համար մանրամասն ներկայացված է ստորև.

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ**

**Համախմբված ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ  
առ 31 դեկտեմբերի 2024թ.**

**20 Շահութահարկ (շարունակություն)**

	1 հունվարի 2023թ.	Ծախսագրված/ (կրեդիտագրված) շահույթին կամ վնասին	31 դեկտեմբերի 2023թ.
<i>Հազ. ՀՀ դրամ</i>			
<b>Նվազեցվող/(հարկվող) ժամանակավոր տարբերությունների հարկային հետևանքը</b>			
Հիմնական միջոցներ	(246,939)	32,131	(214,808)
Այլ ակտիվներ	19,902	(19,902)	-
Այլ ոչ կյուրթական ակտիվներ	(994)	1,531	537
Պաշարներ	33,913	1,359	35,272
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	39,729	(16,511)	23,218
Վարձակալության գծով պարտավորություն	19,403	(1,781)	17,622
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	42,109	946	43,055
Պայմանագրային պարտավորություն	25,494	64	25,558
<b>Զուտ հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)</b>	<b>(67,383)</b>	<b>(2,163)</b>	<b>(69,546)</b>
Հետաձգված հարկային ակտիվներ	115,751	11,889	127,640
Հետաձգված հարկային պարտավորություններ	(183,134)	(14,052)	(197,186)

Խմբի ներկա կառուցվածքի համատեքստում, Խմբի մեկ ընկերության հարկային վնասները և ընթացիկ հարկային ակտիվները չեն կարող փոխհատուցվել Խմբի մյուս ընկերության ընթացիկ հարկային պարտավորությունների և հարկվող շահույթի դիմաց, և, համապատասխանաբար, հարկերը կարող են հաշվեգրվել նույնիսկ այն դեպքում, երբ կա համախմբված հարկային վնաս: Հետևաբար, հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները փոխհատուցվում են միայն այն դեպքում, երբ դրանք վերաբերում են նույն հարկվող կազմակերպությանը:

**21 Պայմանական դեպքեր և պարտավորություններ**

**Իրավական գործընթացներ.** Ժամանակ առ ժամանակ բնականոն գործունեության ընթացքում Խմբի դեմ կարող են ներկայացվել հայցեր: Իր գնահատականների, ինչպես նաև ներքին մասնագիտական խորհրդատվության հիման վրա դեկավարությունը կարծում է, որ պահանջների գծով ոչ մի Էական վնաս չի կարող կրել, որը կգերազանցի սույն համախմբված ֆինանսական հաշվետվություններում նախատեսված պահուստները:

**Հարկային պայմանական պարտավորություններ.** Հաշվետու ժամանակաշրջանի վերջում ընդունված կամ ըստ Էության ընդունված Հայաստանի հարկային և մաքսային օրենսդրությունը ենթակա է տարբեր մեկնաբանությունների՝ Խմբի գործունեության և գործարքների նկատմամբ դրանք կիրառելիս: Հետևաբար, դեկավարության հարկային դիրքորոշումը և այդ դիրքորոշումը հիմնավորող պաշտոնական թղթակցությունը կարող են վիճարկվել համապատասխան մարմինների կողմից:

Հարկային մարմիններն օրենսդրության մեկնաբանման և հարկային ստուգումների ընթացքում կարող են կիրառել առավել խիստ և բարդ մոտեցում: Բյուջեի կատարմանն ուղղված հարկային մուտքերի ավելացման ջանքերի հետ համատեղ, վերոնշյալը կարող է հանգեցնել հարկային մարմինների կողմից իրականացվող ստուգումների հաճախականությանն ու խորության աճի: Մասնավորապես, հնարավոր է, որ անցյալում խնդրահարույց չհամարված գործարքներն ու գործունեությունը վիճարկվեն: Որպես հետևանք, կարող են առաջադրվել Էական ծավալի լրացուցիչ հարկեր, տուգանքներ և տոկոսներ:

Ներկայումս Խումբը գտնվում է պետական մարմինների կողմից ստուգման գործընթացում՝ ստուգման տարվան նախորդող երեք օրացուցային տարիների հարկերի գծով:

**21 Պայմանական դեպքեր և պարտավորություններ (շարունակություն)**

**Բնապահպանական հարցեր.** Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական կանոնակարգերի կիրարկումը գարգանում է, և պետական մարմինների կիրարկման դիրքորոշումը շարունակաբար վերանայվում է: Խումբը պարբերաբար գնահատում է բնապահպանական կանոնակարգերով նախատեսված իր պարտավորությունները: Երբ պարտավորությունները որոշվում են, դրանք անմիջապես ճանաչվում են հաշվետվությունում: Հնարավոր պարտավորությունները, որոնք կարող են ծագել գործող կանոնակարգերի, քաղաքացիական իրավական համակարգի կամ օրենսդրության փոփոխման հետևանքով, չեն կարող գնահատվել, սակայն կարող են էական լինել: Գործող օրենսդրության կիրառման պայմաններում ղեկավարությունը կարծում է, որ չկան շոջակա միջավայրին վնաս հասցնելու հետևանքով առաջացող նշանակալի պարտավորություններ:

**Գրավադրված և սահմանափակված ակտիվներ.** Դեկտեմբերի 31-ի դրությամբ որպես գրավի ապահովության միջոց գրավադրված են Խմբի հետևյալ ակտիվները (հարակից պարտավորության գումարները ներկայացնելիս դրանք չեն տարանջատվել ըստ ապահովվածության տեսակների)։

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	2024թ.		2023թ.	
		Գրավադրված ակտիվ	Հարակից պարտավորություն	Գրավադրված ակտիվ	Հարակից պարտավորություն
Ներդրումային գույք	8	135,258	783,176	138,591	480,787
Հիմնական միջոցներ	7	875,029	1,161,866	1,409,828	480,787
Շրջանառվող պաշարներ	10	1,000,000	783,176	1,000,000	480,787
<b>Ընդամենը գրավադրված և սահմանափակված ակտիվներ առ 31 դեկտեմբերի</b>		<b>2,010,287</b>	<b>1,566,353</b>	<b>2,548,419</b>	<b>480,787</b>

**Համապատասխանություն պայմանագրերին.** Խումբը ունի պարտավորություններ որոշակի պայմանագրերի գծով, որոնք հիմնականում վերաբերում են իր փոխառություններին: Այդպիսի պայմանագրերի չկատարումը կարող է բացասական հետևանքներ ունենալ Խմբի համար, ներառյալ փոխառությունների արժեքի աճը և պարտազանցում հայտարարելը: 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը համապատասխանել է բոլոր պայմանագրերին:

**22 Դուստր ընկերություններ**

2021 թվականի սեպտեմբերի 14-ին, կնքելով բաժնետոմսերի առջուվաճառքի պայմանագիր, Խումբը ձեռք է բերել «Թուֆենկջի Գրուպ» ՍՊԸ-ի բաժնետիրական կապիտալի 100%-ը, այդպիսով՝ ձեռք է բերել վերջինիս հանդեպ վերահսկողությունը՝ բաժնետերերի ընդհանուր ժողովում ձայների 100%-ով քվեարկելու հնարավորության միջոցով: 2021 թվականի դեկտեմբերի 16-ին «ձայնի իրավունքի Գրուպ» ՍՊԸ-ն վերանվանվել է «Էյ Լաբ Ֆարմասյուլթիքալս» ՍՊԸ-ի:

Այս ձեռքբերման արդյունքում ճանաչվել է 121,573 հազ. ՀՀ դրամի չափով գույքի, որը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեզրկված չի եղել:

Անվանումը	Գործունեության բնույթը	Քվեարկող իրավունքի տոկոսը	Սեփականության տոկոսը	Գրանցման երկիրը
«Ալֆա-Ֆարմ Ինվորտ» ՓԲԸ	Դեղերի ներմուծում և մեծածախ վաճառք	100%	100%	Հայաստան
«Էյ Լաբ Ֆարմասյուլթիքալս» ՍՊԸ	Դեղերի արտադրություն	100%	100%	Հայաստան

**23 Ֆինանսական ռիսկերի կառավարում**

Խմբի ռիսկերի կառավարումն իրականացվում է ֆինանսական, գործառնական և իրավական ռիսկերի ուղղություններով: Ֆինանսական ռիսկը կազմված է շուկայական ռիսկից (ներառյալ՝ արժույթային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկը), պարտքային ռիսկից և իրացվելիության ռիսկից: Ֆինանսական ռիսկերի կառավարման առաջնային գործառնությունն է ռիսկերի սահմանաչափ սահմանելը և այնուհետև ցանկացած տեսակի ռիսկերի ազդեցությունն այդ սահմանաչափում պահելը: Գործառնական և իրավական ռիսկերի կառավարման գործառնությունները նպատակ ունեն ապահովել ներքին քաղաքականության և ընթացակարգերի պատշաճ իրականացումը՝ գործառնական և իրավական ռիսկերը նվազագույնի հասցնելու համար:

**Պարտքային ռիսկ.** Խումբը ենթարկվում է պարտքային ռիսկի, այսինքն՝ ռիսկ, երբ ֆինանսական գործիքի մի կողմը ֆինանսական վնաս է պատճառում մյուս կողմին՝ պարտավորությունները չկատարելու հետևանքով:

Պարտքային ռիսկի ենթարկվածությունը ծագում է խմբի կողմից վարկավորման և գործընկերների հետ այլ գործարքների արդյունքում, որոնք առաջ են բերում ֆինանսական ակտիվներ և հետիազվելի շառային վարկային բնույթի պարտավորություններ: Խմբի առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկի արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում:

**Պարտքային ռիսկի կառավարում.** Պարտքային ռիսկը հանդիսանում է խմբի բիզնեսի համար միակ առավել էական ռիսկը: Հետևաբար, ղեկավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում պարտքային ռիսկի կառավարմանը:

Ռիսկերի կառավարման նպատակով պարտքային ռիսկի գնահատումը բարդ է և ենթադրում է մոդելների կիրառում, քանի որ ռիսկը փոփոխվում է՝ կախված շուկայական պայմաններից, ակնկալվող դրամական հոսքերից և ժամանակի ընթացքից: Ակտիվների պորտֆելի գծով պարտքային ռիսկի գնահատումը ենթադրում է դեֆոլտի առաջացման հավանականության գնահատում, կորուստների համապատասխան գործակիցների և գործընկերների միջև դեֆոլտի հարաբերակցության հետագա գնահատում:

**Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր.** Խմբի վարկային ռիսկի ենթարկվածության վրա հիմնականում ազդեցություն ունեն յուրաքանչյուր հաճախորդի անհատական բնութագրերը: Լյևուամենայնիվ, ղեկավարությունը հաշվի է առնում նաև այն գործոնները, որոնք կարող են ազդել խմբի հաճախորդների բազայի վարկային ռիսկի վրա, ներառյալ հայկական արտադրության ոլորտի և երկրի դեֆոլտի ռիսկը, մասնավորապես՝ հաշվի առնելով ներկայումս վատթարացող տնտեսական միջավայրը և այն հանգամանքը, որ բոլոր վաճառքներն իրականացվում են ՀՀ տարածքում:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի մասով որպես այդպիսին գրավ չի պահանջվում: Բոլոր դեբիտորական պարտքերի կողմ հանդիսացող գործընկերները երկրի ներսում են:

Խումբը վարկային ռիսկը կառավարելու նպատակով սահմանել է վարկային սահմանաչափեր իր մեծածախ հաճախորդների համար: Դրա շրջանակներում, ի թիվս այլ միջոցառումների, Խումբը եռամսյակային պարբերականությամբ վերանայում է և սահմանափակում կամ դադարեցնում վաճառքները այն գործընկերների հետ, որոնց դեբիտորական պարտքի մնացորդը վերանայման ամսաթվի դրությամբ գերազանցում է վերանայված ժամանակահատվածի շրջանառությունը տվյալ գործընկերոջ գծով: Բացի այդ, Խմբի քաղաքականության համաձայն, գործընկերոջ հետ եռամսյակի ընթացքում վաճառքի գումարը գերազանցող դեբիտորական պարտքերի մնացորդների համար ստեղծվում է արժեզրկման պահուստ:

2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, 10 առաջատար գործընկերների գծով ռիսկը կազմում է առևտրային դեբիտորական պարտքերի ընդհանուր մնացորդի համապատասխանաբար 44%-ը և 45%-ը:

**Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ.** Խումբը 2024թ. դեկտեմբերի 31-ին ունեցել է 7,504 հազ. ՀՀ դրամի բանկային մնացորդներ (2023թ.: 126,702 հազ. ՀՀ դրամ), որը ներկայացնում է այդ ակտիվների գծով նրա առավելագույն վարկային ռիսկը: Բանկային մնացորդները պահվում են հայկական հեղինակավոր բանկերում, և Խումբը չի ակնկալում, որ բանկերը չկատարեն իրենց պարտավորությունները:

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ**

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ  
առ 31 դեկտեմբերի 2024թ.**

**23 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)**

**Շուկայական ռիսկ.** Խումբը ենթարկվում է շուկայական ռիսկերին: Շուկայական ռիսկերն առաջանում են. (ա) արժույթի, (բ) տոկոսային ակտիվների և պարտավորությունների բաց դիրքերից, որոնք բոլորն էլ ենթարկվում են ընդհանուր և առանձնահատուկ շուկայական շարժերի: Դեկավարությունը սահմանում է ռիսկի այն մակարդակը, որը կարող է ընդունվել, ինչն էլ վերահսկվում է օրական կտրվածքով:

Այնուհանդերձ, այս մոտեցման կիրառումը չի կանխում այս սահմանաչափերից դուրս վնասների առաջացումն այն դեպքերում, երբ տեղի են ունենում ավելի նշանակալի շուկայական շարժեր:

Ստորև ներկայացված շուկայական ռիսկերի նկատմամբ զգայունությունը որոշվել է հիմք ընդունելով մեկ գործոնի փոփոխությունը՝ անփոփոխ պահելով մնացած այլ գործոնները: Գործնականում այս իրավիճակի տեղի ունենալը հավանական չէ, և մի շարք գործոններում փոփոխությունները կարող են փոխկապակցված լինել, օրինակ՝ տոկոսադրույքի և արտարժույթի դրույքաչափի փոփոխությունները:

**Արժույթային ռիսկ.** Խումբը ենթարկվում է արժույթային ռիսկի, որը պայմանավորված է գնումների և փոխառությունների գնանշման արժույթների և խմբի կազմակերպությունների ֆունկցիոնալ արժույթի միջև տարբերությամբ: Այս գործարքները հիմնականում կատարվում են եվրոյով, ԱՄՆ դոլարով և ՌԴ ռուբլով: Խումբը չի հեջավորում իր արժույթային ռիսկը:

Ստորև բերված աղյուսակը ամփոփում է հաշվետու ժամանակաշրջանի վերջում խմբի արտարժույթի փոխարժեքի ռիսկի ենթարկվածությունը:

Հազ. ՀՀ դրամ	2024թ.			2023թ.		
	Դրամական ֆինանսական ակտիվներ	Դրամական ֆինանսական պարտավորություններ	Չուտ հաշվեկշռային դիրք	Դրամական ֆինանսական ակտիվներ	Դրամական ֆինանսական պարտավորություններ	Չուտ հաշվեկշռային դիրք
ԱՄՆ դոլար եվրո	57,105	(685,652)	<b>(628,547)</b>	19,835	(471,176)	<b>(451,341)</b>
ԱՄԷ դիրհամ	89,814	(524,813)	<b>(434,999)</b>	57,331	(441,629)	<b>(384,298)</b>
ՌԴ ռուբլի	324	-	<b>324</b>	331	-	<b>331</b>
	12,740	(79,980)	<b>(67,240)</b>	16,402	(29,313)	<b>(12,911)</b>
<b>Ընդամենը</b>	<b>159,983</b>	<b>(1,290,445)</b>	<b>(1,130,462)</b>	<b>93,899</b>	<b>(942,118)</b>	<b>(848,219)</b>

Վերոնշյալ վերլուծությունը ներառում է միայն դրամական ակտիվները և պարտավորությունները: Ոչ դրամական ակտիվները չեն համարվում էական արժույթային ռիսկ առաջացնող ակտիվներ:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է շահույթի և վնասի զգայունությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կիրառվող փոխարժեքի հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ խմբի ֆունկցիոնալ արժույթի հետ հարաբերակցությամբ, բոլոր այլ փոփոխականները հաստատուն պահելով:

Հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
<b>Շահույթի կամ վնասի վրա ազդեցությունը.</b>		
ԱՄՆ դոլարի արժևորում 25%-ով	(157,137)	(112,835)
ԱՄՆ դոլարի անկում 25%-ով	157,137	112,835
Եվրոյի արժևորում 25%-ով	(108,750)	(96,075)
Եվրոյի անկում 25%-ով	108,750	96,075
ՌԴ ռուբլու արժևորում 5%-ով	(3,362)	(646)
ՌԴ ռուբլու անկում 5%-ով	3,362	646

**Տոկոսադրույքի ռիսկ.** Փոխառությունները ֆիքսված տոկոսադրույքներով են: Ըստ այդմ, Խումբը չի ենթարկվում իր ֆինանսական դիրքի և դրամական հոսքերի գծով շուկայական տոկոսադրույքների գերակշռող մակարդակների տատանումների ազդեցության:

**23 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)**

**Իրացվելիության ռիսկ.** Իրացվելիության ռիսկ՝ նշանակում է, որ կազմակերպությունը կարող է դժվարանալ կատարելու պարտականությունները ֆինանսական պարտավորությունների գծով:

Խմբի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման մոտեցումն է՝ մշտապես ապահովել հնարավորինս բավարար իրացվելիություն պահանջվող ժամկետներում պարտավորությունները մարելու համար՝ թե՛ սովորական, թե՛ արտասովոր պայմաններում առանց անընդունելի վնասների հանգեցնելու կամ Խմբի համբավը վտանգի ենթարկելու: Հետևյալ աղյուսակներում մանրամասն ներկայացված են Խմբի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային ժամկետները՝ ըստ համաձայնեցված մարման ժամկետների: Աղյուսակները կազմվել են՝ հիմնվելով ֆինանսական պարտավորությունների չգեղջված դրամական հոսքերի վրա, ելնելով ամենավաղ ամսաթվից, երբ Խմբից կարող է պահանջվել վճարման կատարում:

Աղյուսակները ներառում են ինչպես տոկոսադրույքներ, այնպես էլ մայր դրամական միջոցների հոսքեր: Պայմանագրային մարման ժամկետի հիմքում ընկած է ամենավաղ ամսաթիվը, երբ Խմբից կարող է պահանջվել վճարման կատարում:

Ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն է

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>Ցպահանջ և մինչև 2 ամիս</b>	<b>2-12 ամիս</b>	<b>12 ամիս – 5 տարի</b>	<b>Ավելի քան 5 տարի</b>	<b>Ընդամենը</b>
<b>Պարտավորություններ</b>					
Փոխառություններ	-	1,075,888	85,978	-	<b>1,161,866</b>
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	3,192,126	-	-	-	<b>3,192,126</b>
Վարձակալության գծով պարտավորություններ	173,722	689,160	1,493,180	516,870	<b>2,872,932</b>
<b>Ընդամենը ապագա վճարներ, ներառյալ ապագա մայր գումարի և տոկոսագումարների վճարներ</b>					
	<b>3,365,848</b>	<b>1,765,048</b>	<b>1,579,158</b>	<b>516,870</b>	<b>7,226,924</b>

Ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն է.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>Ցպահանջ և մինչև 2 ամիս</b>	<b>2-12 ամիս</b>	<b>12 ամիս – 5 տարի</b>	<b>Ավելի քան 5 տարի</b>	<b>Ընդամենը</b>
<b>Պարտավորություններ</b>					
Փոխառություններ (Ծանոթագրություն 14)	-	429,293	51,494	-	<b>480,787</b>
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր (Ծանոթագրություն 16)	2,773,265	-	-	-	<b>2,773,265</b>
Վարձակալության գծով պարտավորություններ (Ծանոթագրություն 9)	106,562	457,768	942,776	254,280	<b>1,761,386</b>
<b>Ընդամենը ապագա վճարներ, ներառյալ ապագա մայր գումարի և տոկոսագումարների վճարներ</b>					
	<b>2,879,827</b>	<b>887,061</b>	<b>994,270</b>	<b>254,280</b>	<b>5,015,438</b>

Չի ակնկալվում, որ այս աղյուսակներում ներկայացված դրամական հոսքերը կարող են տեղի ունենալ Էապես ավելի վաղ, կամ Էապես տարբեր գումարներով:

**23 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)**

Խմբի ֆինանսական պարտավորությունները մարելու համար հասանելի ֆինանսական ակտիվները ներառում են առևտրային դեբիտորական պարտքերը և դրամական միջոցները դրամարկղում: Խումբն ունի նաև տեղական բանկերի հետ պայմանավորվածություններ մի շարք վարկային գծերի վերաբերյալ, որոնք նույնպես հասանելի են դրամական միջոցների կառավարման նպատակով օգտագործման համար: Հաշվետու ամսաթվի դրությամբ վարկային գծերի չօգտագործված մասը կազմել է 676,310 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 740,462 հազ. ՀՀ դրամ):

**24 Կապիտալի կառավարում**

Կապիտալի կառավարման ժամանակ Խմբի նպատակներն են՝ պահպանել ընկերության՝ գործունեությունը անընդհատության սկզբունքով շարունակելու կարողությունը, ապահովելով բաժնետերերի համար եկամտաբերություն, և օգուտներ այլ շահառուների համար և պահպանելով կապիտալի օպտիմալ կառուցվածք՝ կապիտալի արժեքը նվազեցնելու համար: Կապիտալի կառուցվածքը պահպանելու և ճշգրտելու համար Խումբը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվելիք շահաբաժինների չափերը, բաժնետերերին վերադարձվող կապիտալը, ինչպես նաև թողարկել նոր բաժնետոմսեր կամ վաճառել ակտիվները՝ նվազեցնելով պարտքը: 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի կողմից տնօրինվող կապիտալի չափը կազմել է 10,944,963 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 10,467,741 հազ. ՀՀ դրամ):

Խումբը 2024թ. ընթացքում արտաքին կապիտալի պահանջներ չի ունեցել:

**25 Իրական արժեքի բացահայտումներ**

Իրական արժեքի չափման վերլուծությունը կատարվում է ըստ իրական արժեքի հիերարխիայում մակարդակի հետևյալ կերպ՝ (i) մակարդակ 1՝ չափումներ ակտիվ շուկայում նույնական ակտիվների կամ պարտավորությունների գնանշվող (չճշգրտվող) գներով, (ii) մակարդակ 2՝ չափման գնահատման մեթոդներ, որոնցում ակտիվի կամ պարտավորության համար բոլոր էական ելակետային տվյալներն ուղղակիորեն (օրինակ՝ գներ) կամ անուղղակիորեն (օրինակ՝ գների հիման վրա ստացված) դիտելի են, (iii) մակարդակ 3՝ գնահատումներ, որոնք հիմնված չեն բացառապես շուկայի դիտելի տվյալների վրա (այն է՝ գնահատման համար անհրաժեշտ են նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալներ): Ֆինանսական գործիքները իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակին վերագրելիս՝ ղեկավարությունը կիրառում է դատողություն Եթե իրական արժեքի չափման համար օգտագործվում են էական ճշգրտում պահանջող դիտարկելի տվյալներ, ապա իրական արժեքի տվյալ չափումը վերաբերում է մակարդակ 3-ին: Օգտագործվող տվյալների նշանակալիությունը գնահատվում է իրական արժեքով չափվող ամբողջության համար:

**Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ** Լողացող տոկոսադրույքով գործիքների իրական արժեքը սովորաբար դրանց հաշվեկշռային արժեքն է: Ֆիքսված տոկոսադրույքով գործիքների գնահատված իրական արժեքը հիմնված է գնահատված ապագա դրամական հոսքերի վրա, որոնք ակնկալվում է, որ կստացվեն ընթացիկ տոկոսադրույքներով համանման պարտքային ռիսկեր ունեցող և մնացորդային մարման ժամկետներով նոր գործիքների դեպքում: Օգտագործված զեղչային դրույքաչափերը կախված են գործընկերոջ պարտքային ռիսկից: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի և դրամական միջոցների և դրանց համարժեքների կազմում ընդգրկված ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքները մոտ են դրանց իրական արժեքին:

**Ամորտիզացված արժեքով հաշվառվող պարտավորություններ:** Այլ պարտավորությունների իրական արժեքները որոշվել են գնահատման մեթոդների կիրառմամբ: Սահմանված մարման ժամկետով ֆիքսված տոկոսադրույքներով գործիքների իրական արժեքը գնահատվել է՝ հիմնվելով ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա, որոնք զեղչվել են համանման պարտքային ռիսկ և մարման մնացորդային ժամկետ ունեցող նոր գործիքների համար գործող ընթացիկ տոկոսադրույքներով: Ցպահանջ կամ ծանուցման ժամկետից հետո մարման ենթակա պարտավորությունների իրական արժեքը («ցպահանջ պարտավորություններ») գնահատվել է որպես ցպահանջ վճարման ենթակա գումար՝ զեղչված գումարի վճարման պահանջի ներկայացման առաջին հնարավոր ամսաթվից սկսած: Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի կազմում ընդգրկված փոխառությունների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքները մոտ են դրանց իրական արժեքին:

**23 Իրական արժեքի բացահայտումներ (շարունակություն)**

**Իրական արժեքով չգնահատվող ակտիվներ և պարտավորություններ, որոնք իրական արժեքը բացահայտվում է** Իրական արժեքների վերլուծությունն ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների և իրական արժեքով չչափվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի, վերաբերում են Խմբի ներդրումային գույքին: 2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ներդրումային գույքի հաշվեկշռային արժեքները մոտ են եղել դրանց իրական արժեքին:

**26 Ֆինանսական գործիքների ներկայացում ըստ չափման կատեգորիաների**

Ընկերությունը, ՖՀՄՍ 9-ի «Ֆինանսական գործիքներ» համաձայն, դասակարգում է ֆինանսական ակտիվները հետևյալ կատեգորիաների. (ա) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, (բ) այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ և (գ) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներն ունեն երկու ենթակատեգորիա. (i), պարտադիր կերպով իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ակտիվներ և (ii) ակտիվներ, որոնք սահմանվել են որպես այդպիսիք սկզբնական ճանաչման ժամանակ: Բացի այդ, ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերը կազմում են առանձին կատեգորիա:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների համադրումը վերը նշված չափման կատեգորիաներով:

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>31 դեկտեմբերի 2024թ.</b>	<b>31 դեկտեմբերի 2023թ.</b>
	<b>Ամորտիզացված արժեք</b>	<b>Ամորտիզացված արժեք</b>
<b>Ակտիվներ</b>		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	259,455	308,816
Առևտրային և այլ ֆինանսական դեբիտորական պարտքեր	2,273,665	2,506,360
<b>Ընդամենը ֆինանսական ակտիվներ</b>	<b>2,533,120</b>	<b>2,815,176</b>

2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի բոլոր ֆինանսական պարտավորությունները ներկայացված են ամորտիզացված արժեքով

**27 Փոխկապակցված կողմերի հետ մնացորդներ և գործարքներ**

Կողմերը սովորաբար համարվում են փոխկապակցված, եթե դրանք գտնվում են ընդհանուր վերահսկողության տակ կամ եթե կողմերից մեկն ունի կարողություն վերահսկելու մյուս կողմին կամ կարող է ունենալ նշանակալի ազդեցություն կամ համատեղ վերահսկողություն մեկ այլ կողմի նկատմամբ՝ ֆինանսատնտեսական որոշումներ կայացնելիս: Յուրաքանչյուր հնարավոր փոխկապակցված կողմի հարաբերություն դիտարկելիս ուշադրություն է դարձվում հարաբերության բնույթի, այլ ոչ միայն իրավական ձևի վրա:

Փոխկապակցված կողմերի հետ չմարված մնացորդները 2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն են.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>31 դեկտեմբերի 2024թ.</b>	<b>31 դեկտեմբերի 2023թ.</b>
	<b>Այլ փոխկապակցված կողմեր</b>	<b>Այլ փոխկապակցված կողմեր</b>
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	35,568	50,576
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	52,916	50,916

Փոխկապակցված կողմերի գծով եկամուտների և ծախսերի հոդվածները, 2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում հետևյալն են.

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ**

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ  
առ 31 դեկտեմբերի 2024թ.**

**27 Փոխկապակցված կողմերի հետ մնացորդներ և գործարքներ (շարունակություն)**

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
	Այլ փոխկապակցված կողմեր	Այլ փոխկապակցված կողմեր
Ապրանքների վաճառք	324,825	272,609
Ենթավարձակալության գծով եկամուտ	76,099	68,104
Ապրանքների ձեռքբերում	385,860	400,312

Առանցքային ղեկավար անձնակազմի գծով ծախսերի և մնացորդների կազմում ներառված են գործարքներ և մնացորդներ երկու առանցքային դիրքերի գծով.

Հազ. ՀՀ դրամ	2024թ.		2023թ.	
	Ծախս	Հաշվեգրված պարտավորություն	Ծախս	Հաշվեգրված պարտավորություն
Կարճաժամկետ հատուցումներ - Աշխատավարձ	171,802	17,799	177,561	17,799

Առանցքային ղեկավար անձնակազմի աշխատավարձերը ներառում են պարտադիր կենսաթոշակային ֆոնդի հատկացումներ՝ 2,614 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 2,597 հազ. ՀՀ դրամ):

Առանցքային ղեկավար անձնակազմը ներառում է հետևյալ պաշտոնները՝ գործադիր տնօրեն, ֆինանսական տնօրեն, Կոմերցիոն տնօրեն, դեղատների ցանցի տնօրեն

Նոտարական ակտի կոդ: 855-20251029-67-9527808  
Նոտարական ակտի գաղտնագիր: HSY0GB



*Թարգմանություն անգլերենից*

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ**

**Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին  
համապատասխան`  
համախմբված ֆինանսական հաշվետվություններ և  
Անկախ աուդիտորական եզրակացություն**

**31 դեկտեմբերի 2023թ** □



**Բովանդակություն**

Անկախ աուդիտորական եզրակացություն

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն .....	1
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն .....	2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն .....	3
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն .....	4

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ն և նրա գործունեությունը.....	5
2 Խմբի գործառնական միջավայրը .....	5
3 Պատրաստման հիմունքները .....	6
4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական գնահատականներ և դատողություններ .....	19
5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին .....	21
6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ .....	25
7 Հիմնական միջոցներ .....	27
8 Ներդրումային գույք .....	28
9 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ ..	29
10 Պաշարներ .....	30
11 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր .....	30
12 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ .....	32
13 Կանոնադրական կապիտալ .....	32
14 Վարկեր և փոխառություններ .....	32
15 Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորությունների համեմատություն .....	34
16 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր .....	35
17 Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ .....	35
18 Եկամուտները և ծախսերը ըստ բնույթի .....	35
19 Ֆինանսական ծախսեր .....	36
20 Շահութահարկ .....	37
21 Պայմանական դեպքեր և պարտավորություններ .....	39
22 Դուստր ընկերություններ .....	40
23 Ֆինանսական ռիսկերի կառավարում .....	40
24 Կապիտալի կառավարում .....	43
25 Իրական արժեքի բացահայտումներ .....	44
26 Ֆինանսական գործիքների ներկայացում ըստ չափման կատեգորիաների .....	44
27 Փոխկապակցված կողմերի հետ մնացորդներ և գործարքներ .....	45
28 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող իրադարձություններ .....	46

**Անկախ աուդիտորական եզրակացություն**

«Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ Բաժնետերերին և Տնօրենների խորհրդին

**Մեր կարծիքը**

Մեր կարծիքով, կից ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ (այսուհետ՝ Խումբ) և դուստր կազմակերպությունների (այսուհետ միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական վիճակն 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև Խմբի նույն ամսաթվին ավարտված տարվա՝ համախմբված ֆինանսական արդյունքներն ու համախմբված դրամական միջոցների հոսքերը համաձայն ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

**Աուդիտի առարկան**

Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունները բաղկացած են.

- ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 2023թ. դեկտեմբերի 31-ը, այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, և
- համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են էական հաշվապահական հաշվառման քաղականության տեղեկատվություն և այլ բացատրական տեղեկատվություն:

**Կարծիքի հիմքերը**

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք կարծում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

**Անկախություն**

Մենք անկախ ենք խմբից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից թողարկված՝ Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտների) («ՀԵՄՍԻ Վարքագիր») սկզբունքների, ինչպես նաև Էթիկական պահանջների, որոնք կիրառելի են Հայաստանի Հանրապետությունում համախմբված ֆինանսական հաշվետվություններին մեր աուդիտի նկատմամբ: Մենք կատարել ենք Էթիկայի գծով մեր այլ պարտականությունները այդ պահանջներին և ՀԵՄՍԻ Վարքագրին համապատասխան:

**Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար**

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՐՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ընտրված ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էակ խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է խմբի անընդհատ գործելու կարողության գնահատման համար անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերին չպետք է նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար եթե ղեկավարությունը չունի խումբը լուծարելու կամ խմբի գործունեությանը դադարեցնել մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

**Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները՝ ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախություն կամ սխալների հետևանքով առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել մեզ կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է. սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ները համապատասխան իրականացված աուդիտը միշտ կբացահայտի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով, և համարվում են էական, երբ ողջամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կարող են ազդեցություն ունենալ օգտագործողներ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մեկ կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի յրոմն՝

- որոշում և գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումների ռիսկը մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր աուդիտորական կարծիքը արտահայտելու համար խարդախության հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման դիսին ավելի բարձր է, քան սրտայի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացում կամ ներքին հսկողության չարաշահում
- ձեռք ենք բերում պատկերացում ուղիային վերաբերող ներքին հարության մասին տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումներ ողջամտությունը.
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք



Հազ. ՀՀ դրամ	Ծան.	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
<b>Ակտիվներ</b>			
<b>Ոչ ընթացիկ ակտիվներ</b>			
Հիմնական միջոցներ	7	2,898,299	2,737,722
Ներդրումային գույք	8	138,591	159,298
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	9	1,588,025	1,797,667
Գուդվիլ	22	121,573	121,573
Հետաձգված հարկային ակտիվ	20	127,640	115,751
Այլ ակտիվներ		14,898	29,101
Այլ ոչ նյութական ակտիվներ		129,744	48,744
<b>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</b>		<b>5,018,770</b>	<b>5,009,856</b>
<b>Ընթացիկ ակտիվներ</b>			
Պաշարներ	10	8,193,698	7,701,405
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	11	3,049,948	2,370,934
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	308,816	1,031,201
<b>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</b>		<b>11,552,462</b>	<b>11,103,540</b>
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<b>16,571,232</b>	<b>16,113,396</b>
<b>Սեփական կապիտալ</b>			
Կանոնադրական կապիտալ	13	1,229,845	1,229,845
Չբաշխված շահույթ		9,237,896	8,272,603
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>		<b>10,467,741</b>	<b>9,502,448</b>
<b>Պարտավորություններ</b>			
<b>Ոչ ընթացիկ պարտավորություններ</b>			
Վարկեր և փոխառություններ	14	51,494	332,417
Վարձակալության գծով պարտավորություններ	9	1,160,165	1,176,141
Հետաձգված հարկային պարտավորություններ	20	197,186	183,134
<b>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</b>		<b>1,408,845</b>	<b>1,691,692</b>
<b>Ընթացիկ պարտավորություններ</b>			
Վարկեր և փոխառություններ	14	429,293	238,700
Վարձակալության գծով պարտավորություններ	9	525,765	729,318
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	16	3,437,572	3,550,661
Պայմանագրային պարտավորություն		141,991	144,039
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		160,025	256,538
<b>Ընդամենը ընթացիկ պարտավորություններ</b>		<b>4,694,646</b>	<b>4,919,256</b>
<b>Ընդամենը պարտավորություններ</b>		<b>6,103,491</b>	<b>6,610,948</b>
<b>Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ</b>		<b>16,571,232</b>	<b>16,113,396</b>

Տնօրենների խորհրդի կողմից հաստատվել է հրապարակման համար և ստորագրվել է 2024թ. մայիսի 13-ին:

Միքայել Մացակյան  
Գլխավոր տնօրեն

Լիանա Ղևոնդյան  
Ֆինանսական տնօրեն

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ**

**Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն**

<b>Հազ. ՀՀ դրամ</b>	<b>Ծան.</b>	<b>2023թ.</b>	<b>2022թ.</b>
Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ	17	33,516,715	31,307,520
Վաճառքի ինքնարժեք	10	(25,404,479)	(24,238,419)
<b>Համախառն շահույթ</b>		<b>8,112,236</b>	<b>7,069,101</b>
Այլ եկամուտ	18	200,298	171,190
Վաճառքի և բաշխման ծախսեր	18	(4,485,699)	(3,853,265)
Ընդհանուր և վարչական ծախսեր	18	(782,086)	(702,599)
Արտարժույթի փոխանակումից զուտ (վնաս)/ օգուտ		(11,255)	172,192
Այլ օգուտ/(վնաս), զուտ	18	(117,879)	(122,394)
Ակնկալվող պարտքային կորուստների գծով ծախս, զուտ		(2,776)	(93,324)
<b>Գործառնական շահույթ</b>		<b>2,912,839</b>	<b>2,640,901</b>
Ֆինանսական եկամուտ		6,642	7,892
Ֆինանսական ծախս	19	(152,892)	(150,431)
<b>Շահույթ մինչև շահույթահարկով հարկումը</b>		<b>2,766,589</b>	<b>2,498,362</b>
Շահույթահարկի գծով ծախս	20	(538,296)	(466,835)
<b>ՏԱՐՎԱ ՇԱՀՈՒՅԹ</b>		<b>2,228,293</b>	<b>2,031,527</b>
<b>Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք</b>		<b>-</b>	<b>-</b>
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԸ</b>		<b>2,228,293</b>	<b>2,031,527</b>

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ**

**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն**

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	Կանոնադրական կապիտալ	Զբաղիված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
<b>Մնացորդն առ 1 հունվարի 2022թ.</b>		<b>1,229,845</b>	<b>7,141,076</b>	<b>8,370,921</b>
Տարվա շահույթ		-	2,031,527	2,031,527
<b>Ընդամենը 2022թ. համապարփակ ֆինանսական արդյունք</b>		<b>-</b>	<b>2,031,527</b>	<b>2,031,527</b>
Գործարքներ սեփականատերերի հետ, որոնցում նրանք հանդես են գալիս սեփականատիրոջ կարգավիճակում.				
Հայտարարված շահաբաժիններ	13	-	(900,000)	(900,000)
<b>Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2022թ.</b>		<b>1,229,845</b>	<b>8,272,603</b>	<b>9,502,448</b>
Հաշվետու տարվա շահույթ		-	2,228,293	2,228,293
<b>Ընդամենը 2023թ. համապարփակ ֆինանսական արդյունք</b>		<b>-</b>	<b>2,228,293</b>	<b>2,228,293</b>
Գործարքներ սեփականատերերի հետ, որոնցում նրանք հանդես են գալիս սեփականատիրոջ կարգավիճակում.				
Հայտարարված շահաբաժիններ	13	-	(1,263,000)	(1,263,000)
<b>Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2023թ.</b>		<b>1,229,845</b>	<b>9,237,896</b>	<b>10,467,741</b>

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ**

**Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն**

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2023թ.</b>	<b>2022թ.</b>
<b>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>		
<b>Շահույթ մինչև շահութահարկով հարկումը</b>	<b>2,766,589</b>	<b>2,498,362</b>
<i>Ճշգրտումներ.</i>		
Շահույթում կամ վնասում ճանաչվող զուտ ֆինանսական ծախս	146,250	150,431
Արտարժույթի փոխանակումից զուտ օգուտ /(վնաս)	11,255	(172,190)
Ոչ ընթացիկ ակտիվների ամորտիզացիա և արժեզրկում	1,122,559	945,790
Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից վնաս	2,311	9,033
Պաշարների զուտ իրացման արժեքի փոփոխություն (զուտ)	(7,500)	-
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստին հատկացում	2,776	93,323
Փոփոխություն ըստ ՖՀՄՍ 16-ի	(45,391)	-
Զօգտագործված արձակուրդային օրերի պահուստի հատկացում	1,222	46,755
<b>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր նախքան շրջանառու կապիտալի ճշգրտումները</b>	<b>4,000,071</b>	<b>3,571,504</b>
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի աճ	(666,748)	(251,007)
Պաշարների աճ	(484,794)	(278,998)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի (սվազում)/աճ	(131,067)	706,451
Պայմանագրային պարտավորության (սվազում)/աճ	(2,048)	777
<b>Փոփոխություններ շրջանառու կապիտալում</b>	<b>(1,284,657)</b>	<b>177,223</b>
Վճարված շահութահարկ	(651,318)	(399,422)
<b>Գործառնական գործունեությամբ ստացված զուտ դրամական միջոցներ</b>	<b>2,064,096</b>	<b>3,349,305</b>
<b>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(386,791)	(280,592)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	7,220	3,968
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(95,324)	(17,205)
<b>Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ</b>	<b>(474,896)</b>	<b>(293,829)</b>
<b>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>		
Վարկերից և փոխառություններից մուտքեր	21,688,920	14,904,929
Վարկերի և փոխառությունների մարում	(21,779,797)	(15,392,485)
Վճարված տոկոսներ	(145,703)	(150,997)
Վճարված վարձակալության վճարներ	(809,683)	(727,848)
Վճարված շահաբաժիններ	(1,263,000)	(900,000)
<b>Ֆինանսական գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ</b>	<b>(2,309,263)</b>	<b>(2,266,401)</b>
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(2,322)	31,065
<b>Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին</b>	<b>1,031,201</b>	<b>211,061</b>
<b>Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին</b>	<b>308,816</b>	<b>1,031,201</b>

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ**

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ  
առ 31 դեկտեմբերի 2023թ.**

**1 «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ն և նրա գործունեությունը**

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան, «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») և նրա դուստր ընկերությունների (այսուհետ՝ «Խումբ») համար: Դուստր ընկերությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 22-ում:

Ընկերությունը գրանցվել և իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ «ՀՀ»): Ընկերությունը փակ բաժնետիրական ընկերություն է և ստեղծվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության թողարկված բաժնետոմսերի սեփականատերերի կազմը հետևյալն էր.

	<b>31 դեկտեմբերի 2023թ.</b>	<b>31 դեկտեմբերի 2022թ.</b>
Ռազմիկ Յովհաննիսյան	35.54%	35.54%
«Alta Pharmaceuticals» EOOD («Ալտա Ֆարմապոլիթիքըլս ԷՕՕԴ»)	28.86%	28.86%
Սամվել Շիլաջյան	17.56%	17.56%
Այլ	18.04%	18.04%
<b>Ընդամենը</b>	<b>100.00%</b>	<b>100.00%</b>

Խումբը չունի վերջնական վերահսկողություն իրականացնող կողմ, և ղեկավարությունն իրականացվում է բարձրագույն կառավարման խորհրդի՝ Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից: Փոխկապակցված կողմերի հետ գործարքները բացահայտված են Ծանոթագրություն 25-ում:

**Հիմնական գործունեությունը.** Խմբի հիմնական գործունեությունը դեղերի մեծածախ և մանրածախ առևտուրն է Հայաստանի տարածքում գործող դեղատների ցանցի միջոցով: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը Հայաստանում ուներ 168 գործող դեղատուն (2022թ. դեկտեմբերի 31-ին՝ 167 դեղատուն):

**Իրավաբանական հասցեն և գործունեության վայրը.** Ընկերության գրանցման հասցեն է՝ ՀՀ, Երևան, Շիրակի փողոց, 1/68:

**Ներկայացման արժույթը.** Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը Հայաստանի Հանրապետության դրամն է (այսուհետև՝ «ՀՀ դրամ»), եթե այլ կերպ նշված չէ:

**2 Խմբի գործառնական միջավայրը**

**Հայաստանի Հանրապետություն.** Հայաստանի Հանրապետության տնտեսությունը ցուցաբերում է զարգացող շուկաներին բնորոշ որոշակի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական դաշտը շարունակում է զարգանալ և ենթարկվել հաճախակի փոփոխությունների, ինչպես նաև կարող է ենթակա լինել տարաբնույթ մեկնաբանումների (Ծանոթագրություն 21): Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմը տարբեր ուղղություններով ազդեցություն է ունեցել ՀՀ տնտեսության վրա: Մի կողմից, Հայաստանը դարձել է տասնյակ հազարավոր այցելուների ժամանակավոր բնակության վայր և տնտեսական հետաքրքրությունների եզակի կենտրոն, ինչը, մասնավորապես, լրացուցիչ հնարավորություններ է ստեղծում ֆինանսական գործառնականությունների համար: Ավելին, Ռուսաստանի տնտեսությունում առաջանում են ազատ շուկայական սեգմենտներ, որոնք լայն հնարավորություն են ընձեռում արտահանումը խթանելու և ՀՀ-ից վերաարտահանման գործառնականություններ իրականացնելու համար: Ավելին, Հայաստանի տնտեսական համակարգի վրա միանշանակ ազդում են Ռուսաստանի Դաշնության դեմ կիրառվող պատժամիջոցները:

## **2 Խմբի գործառնական միջավայրը (շարունակություն)**

Բացի այդ, Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի ազդեցությունը կարելի է դիտարկել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի հարթություններում: Հայկական արժույթը շարունակել է արժևորվել 2023թ., ինչը հիմնականում պայմանավորված է եղել հայաստանյան շուկա արտարժույթի մեծածավալ փոխանցումներով:

2022թ. սկզբին Հայաստանի տնտեսությունը շարունակել է դրսևորել դրական դինամիկա՝ համաճարակի և Լեռնային Ղարաբաղում պատերազմից հետո վերականգնման ժամանակաընթացքում: Այս միտումը զգալիորեն խթանվել է նաև՝ պայմանավորված Ռուսաստանի և Ուկրաինայի միջև պատերազմի հետևանքով ՌԴ բազմաթիվ քաղաքացիների՝ Հայաստան տեղափոխմամբ: Այս ներհույսը մեծապես խթանել է Հայաստանի տնտեսությունը և նպաստել է Խմբի գործունեության զարգացմանը՝ հաշվի առնելով առաջացած բարձր գնողունակությունը և Խմբի կողմից վաճառվող կոսմետիկայի տեսականու օգտագործման աճը: Այնուամենայնիվ, 2022թ. դեկտեմբերին Լեռնային Ղարաբաղի շրջափակումը հսկայական բացասական ազդեցություն թողեց Հայաստանի տնտեսական, ինչպես նաև քաղաքական իրավիճակի վրա: 2023թ. սեպտեմբերին Ադրբեյջանի սանձազերծած պատերազմից հետո ավելի քան հարյուր հազար մարդ՝ այսինքն, Լեռնային Ղարաբաղի գրեթե ողջ բնակչությունը, մեկ շաբաթվա ընթացքում արտագաղթեց Հայաստան: Ըստ այդ, որպես տարածաշրջան, Լեռնային Ղարաբաղը Հայաստանի համար յ կորուստ հանդիսացավ, այդ թվում՝ ձևավորված տնտեսական կապերի առումով:

## **3 Պատրաստման հիմունքները**

**Պատրաստման հիմքը.** Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀՄՍԽ կողմից հրապարակված՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՀՅՄՍ»), պահանջներին համապատասխան («ՀՅՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներ»), սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության էական սկզբունքները ներկայացված են յուրաքանչյուր համապատասխան Ծանոթագրությունում: Բացի 2023թ. հունվարի 1-ից գործող հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններից, այս քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է ներկայացված բոլոր ժամանակաշրջանների նկատմամբ, եթե այլ բան նշված չէ (տես Ծանոթագրություն 5):

ՀՅՄՍ-ին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար պահանջվում են հաշվապահական հաշվառման էական գնահատումներ: Բացի այդ, Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ ղեկավարությանն անհրաժեշտ է առաջնորդվել իր դատողություններով: Այն ոլորտները, որոնք ենթադրում են դատողությունների կամ բարդության ավելի բարձր աստիճան, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատականները էական են համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են Ծանոթագրություն 4-ում:

**Անընդհատության հիմունքը.** Ղեկավարության կողմից սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքով:

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններ.** Դուստր ձեռնարկություններն այն ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպություններն են, որոնք Խումբը վերահսկում է, քանի որ Խումբը (i) իրավասություն ունի ուղղորդել ներդրման օբյեկտների գործունեության կոնկրետ ուղղությունները, որոնք էականորեն ազդում են նրանց շահութաբերության վրա, (ii) ներդրման օբյեկտներում իր ներգրավվածության հետևանքով կրում է փոփոխական շահույթի չստացման ռիսկը, ինչպես նաև նման շահույթի ստացման իրավունքը, (iii) հնարավորություն ունի ներդրման օբյեկտների նկատմամբ իր իրավասությունները օգտագործելու միջոցով ազդել ներդրումային եկամտի մեծության վրա: Գնահատելիս, թե արդյոք Խումբը իրավասություն ունի այլ կազմակերպության նկատմամբ, հաշվի են առնվում նման իրավունքների, այդ թվում՝ հնարավոր ձայնի իրավունքների փաստացի առկայությունը և ազդեցությունը: Իրավունքը փաստացի առկա է, եթե դրա կրողն ունի այդ իրավունքը իրացնելու գործնական հնարավորություն այն դեպքում, երբ անհրաժեշտ է որոշում կայացնել ներդրման օբյեկտի համապատասխան գործունեության ուղղության վերաբերյալ:

## **3 Պատրաստման հիմունքները (շարունակություն)**

Խումբը կարող է իրավասություն ունենալ ներդրման օբյեկտի նկատմամբ նույնիսկ այն դեպքում, երբ այն չի տիրապետում է ներդրման օբյեկտի քվեարկող ձայների մեծամասնությանը: Նման դեպքում, Խումբը իր ձայնի իրավունքի չափը գնահատում է մյուս ձայնի իրավունք ունեցողների չափի և բաշխվածության հետ համեմատությամբ՝ որոշելու համար, թե արդյոք Խումբը դե-ֆակտո իրավունք ունի ներդրման օբյեկտի նկատմամբ: Այլ ներդրողների պաշտպանությանն առնչվող իրավունքները, մասնավորապես՝ այն իրավունքները, որոնք վերաբերում են ներդրման օբյեկտի գործունեության հիմնարար փոփոխություններին կամ որոնք կիրառվում են բացառիկ բացառիկ հանգամանքներում, չեն խոչընդոտում Խմբի կողմից ներդրման օբյեկտի վերահսկողությանը: Դուստր ձեռնարկությունները համախմբվում են այն պահից, երբ վերահսկողությունը փոխանցվում է Խմբին (ձեռքբերման ամսաթիվը), և համախմբումը դադարում է այն պահից, երբ Խումբը կորցնում է նշված վերահսկողությունը:

Դուստր ձեռնարկությունների ձեռքբերումը հաշվառելու համար օգտագործվում է հաշվապահական հաշվառման ձեռքբերման մեթոդը: Ձեռք բերված որոշելի ակտիվները և ձեռնարկատիրական գործունեության միավորմամբ ստանձնած պարտավորությունները և պայմանական պարտավորությունները չափվում են ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրենց իրական արժեքներով՝ անկախ որևէ չվերահսկող բաժնեմասի չափից:

Գուդվիլը չափվում է՝ ձեռք բերվող միավորի գուտ ակտիվները ձեռք բերվող միավորի համար վճարված հատուցման հանրագումարից, ձեռք բերվող միավորում չվերահսկող բաժնեմասի գումարից և ձեռք բերվող միավորում բաժնեմասի իրական արժեքից, որը գործում էր ձեռքբերման ամսաթվից անմիջապես առաջ: Ցանկացած բացասական գումար («բացասական գուդվիլ») կամ «սակարկային ձեռքբերում») ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ այն բանից հետո, երբ դեկավարությունը կատարում է վերագնահատում՝ պարզելու համար, թե արդյոք նա նույնականացրել է ձեռք բերված բոլոր ակտիվները և ստանձնած բոլոր պարտավորությունները և պայմանական պարտավորությունները, և վերանայում է դրանց չափման համապատասխանությունը:

Ձեռք բերվող կողմի համար փոխանցված հատուցումը չափվում է հանձնած ակտիվների, թողարկված բաժնային գործիքների և առաջացած կամ ստանձնած պարտավորությունների իրական արժեքով, ներառյալ ակտիվների կամ պարտավորությունների իրական արժեքը պայմանական հատուցման պայմանավորվածությունների գծով, սակայն հաշվի չի առնում ձեռքբերման հետ կապված ծախսումները, ինչպիսիք են խորհրդատվական, իրավաբանական, գնահատման և նմանատիպ մասնագիտական ծառայությունները:

Խմբի ընկերությունների միջև գործարքները, մնացորդները և գործարքների չիրացված օգուտները բացառված են. չիրացված վնասները նույնպես բացառված են, բացառությամբ այն դեպքերի, երբ ծախսը հնարավոր չէ վերականգնել: Ընկերությունը և նրա դուստր ձեռնարկությունները օգտագործում են հաշվապահական հաշվառման միասնական քաղաքականություն, որը համահունչ է Խմբի քաղաքականությանը:

**Արտարժույթի փոխարկում.** Խմբի ֆունկցիոնալ արժույթը Ընկերության հիմնական գործունեության իրականացման տևտեսական միջավայրի արժույթն է: Խմբի ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը:

**Գործարքներ և մնացորդներ.** Դրամական ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են Խմբի ֆունկցիոնալ արժույթի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ «ՀՀ ԿԲ») պաշտոնական փոխարժեքով: Գործարքների վճարումները կատարելու և դրամական ակտիվները և պարտավորությունները ՀՀ ԿԲ տարեվերջի պաշտոնական փոխարժեքով Խմբի ֆունկցիոնալ արժույթի փոխարկելու արդյունքում ստացված՝ արտարժույթի փոխարկումից եկամուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, ֆինանսական եկամուտների կամ ծախսերի կազմում: Տարեվերջի փոխարժեքով փոխարկումը չի կիրառվում ոչ դրամական հոդվածների նկատմամբ, որոնք չափվում են սկզբնական արժեքով: Արտարժույթով արտահայտված և իրական արժեքով չափված ոչ դրամական հոդվածները, ներառյալ բաժնեմասնակցային ներդրումները փոխարկվում են իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ հաստատված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված և իրական արժեքով չափվող ոչ դրամական հոդվածների վրա արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը գրանցվում է որպես իրական արժեքի շահույթի կամ վնասի մաս:

**3 Պատրաստման հիմունքները (շարունակություն)**

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտարժույթով արտահայտված մնացորդների փոխարկման համար օգտագործվող հիմնական փոխարժեքներն են՝ 1 ԱՄՆ դոլար = 404.79 ՀՀ դրամ (2022թ.՝ 1 ԱՄՆ դոլար = 393.57 ՀՀ դրամ), 1 եվրո = 447.9 ՀՀ դրամ (2022թ.՝ 1 եվրո = 420.06 ՀՀ դրամ), 1 ՌԴ ռուբլի = 4.5 դրամ (2022թ. 1 ռուբլ = 5.59 ՀՀ դրամ) անգլիական ֆունտ ստեռլինգ = 515.38 ՀՀ դրամ (2022թ. 1 անգլիական ֆունտ ստեռլինգ = 474.13 ՀՀ դրամ):

**Պրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունում արտարժույթային տարբերությունների ներկայացում.** Խումբը որոշում է կայացրել արտարժույթի տարբերությունները բացառել դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշիվների փոփոխությունների գումարներից և դրանց գումարները ներկայացնել որպես ճշգրտում՝ անկանխիկ հոդվածներից ստացված շահույթում՝ նախքան հարկումը:

**Վարկերից և փոխառություններից մուտքերի և մարումների ներկայացումը դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունում.** Բարձր շրջանառու և կարճ մարման ժամկետ ունեցող վարկերի (փաստացի՝ վերականգնվող վարկային գծերի) մասով Խումբը դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացնում է տալիս վարկերից, փոխառություններից մուտքերի և մարումների գուտ գումարները: Մնացած վարկերն ու փոխառությունները ներկայացված են համախառն արժեքով:

**Հիմնական միջոցներ.** Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումը, եթե վերջինս պահանջվում է:

Հետագա ծախսերը համապատասխանաբար ընդգրկվում են ակտիվի հաշվեկշռային արժեքում կամ ճանաչվում են որպես առանձին ակտիվ, միայն այն ժամանակ, երբ հավանական է, որ հիմնական միջոցների համապատասխան միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Խումբ և վերջինիս արժեքը կարող է արժանահավատորեն չափվել: Վերանորոգման և պահպանման գծով ընթացիկ ծախսումները ծախսագրվում են, երբ դրանք տեղի են ունենում: Հիմնական միջոցների միավորների խոշոր հիմնամասերի կամ բաղադրիչների փոխարինման ծախսումները կապիտալացվում են, իսկ փոխարինված մասը դուրս է գրվում:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում ղեկավարությունը գնահատում է, թե արդյոք առկա է հիմնական միջոցների արժեզրկման հատկանիշ: Եթե որևէ նման հատկանիշ գոյություն ունի, ղեկավարությունը գնահատում է փոխհատուցվող գումարը, որը որոշվում է որպես հետևյալ երկու արժեքներից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը, և արժեզրկումից կորուստը ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում: Նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում ակտիվի համար ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է (անհրաժեշտության դեպքում), եթե տեղի են ունեցել գնահատումներում փոփոխություններ, որոնք կիրառվել են՝ որոշելու համար ակտիվի օգտագործման արժեքը կամ իրական արժեքը՝ հանած վաճառքի ծախսերը:

Հիմնական միջոցների օտարումից շահույթը կամ վնասը որոշվում է որպես դրանց իրացումից ստացված հասույթի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում այլ ծախսերի կազմում:

**Մաշվածություն.** Հողի և անավարտ շինարարության համար մաշվածությունն չի հաշվարկվում: Հիմնական միջոցների այլ միավորների մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդի կիրառմամբ՝ բաշխելով դրանց սկզբնական արժեքը մինչև մնացորդային արժեքը՝ օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Օգտակար ծառայության ժամկետ՝ արտահայտված տարիներով

Շենքեր	20-60
Մեքենաներ և սարքավորումներ	5-12
Տրանսպորտային միջոցներ	7-8
Հարմարանքներ և կցամասեր	1-8
Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր	5-8*

\* - բայց ոչ ավելի, քան վարձակալության ժամկետը

### **3 Պատրաստման հիմունքները (շարունակություն)**

Ակտիվի մնացորդային արժեքն այն գնահատված գումարն է, որը խումբը ներկա պահին կստանար ակտիվի օտարումից՝ հանած օտարման գնահատված ծախսումները, եթե ակտիվն արդեն լիներ դրա օգտակար ծառայության վերջում ակնկալվող տարիքի և վիճակի: Ակտիվների մնացորդային արժեքները և օգտակար ծառայության ժամկետները վերանայվում և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

**Ներդրումային գույք.** Ներդրումային գույքը պահվում է խմբի կողմից՝ վարձակալությունից եկամուտ ստանալու կամ կապիտալի աճի համար, կամ երկուսը միասին, և որը զբաղեցված չէ խմբի կողմից: Ներդրումային գույքը չափվում է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները: Մաշվածությունը շահույթում կամ վնասում հաշվարկվում է գծային հիմունքով՝ ներդրումային գույքի գնահատված օգտակար ծառայության ընթացքում, որը կազմում է 68 տարի: Մաշվածությունը մեկնարկում է՝ ակտիվները որպես ներդրումային գույք դասակարգման ամսաթվից:

**Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ.** Խումբը վարձակալում է տարբեր դեղատներ: Պայմանագրերը կարող են պարունակել ինչպես վարձակալական, այնպես էլ ոչ վարձակալական բնույթի բաղադրիչներ: Խումբը պայմանագրային հատուցումը բաշխում է վարձակալության բաղադրիչների և այն բաղադրիչների միջև, որոնք վարձակալությունն չեն հանդիսանում՝ հիմք ընդունելով այդ բաղադրիչների առանձնացված գործարքի հարաբերական գինը:

Վարձակալության պայմանագրերից բխող ակտիվները սկզբնական ճանաչման պահին չափվում են ներկա արժեքով:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով, որը ներառում է.

- վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափման գումարը,
- վարձակալության վճարումները, որոնք կատարվել են վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ մինչ այդ ամսաթիվը, հանած ստացված վարձակալության խրախուսումները,
- ցանկացած սկզբնական ուղղակի ծախսումները,
- վարձակալության պայմանագրով ակտիվի նախատեսված վիճակը վերականգնելու համար պահանջվող ծախսումները:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների մաշվածությունը հաշվարկվում գծային հիմունքով, հետևյալ ժամանակահատվածներից նվազագույնով՝ ակտիվի օգտակար ծառայության ժամկետ և վարձակալության ժամկետ: Եթե խումբը գնման օպցիոնն իրագործելու բավարար չափով վստահություն ունի, այն օգտագործման իրավունքի ձևով ակտիվը ամորտիզացնում է հիմնական ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Խումբը օգտագործման իրավունքի ձևով ակտիվների ամորտիզացիան հաշվարկում է գծային մեթոդով դրանց գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, մասնավորապես.

Օգտակար ծառայության ժամկետ՝ արտահայտված տարիներով

Տարածքներ

3 - 10

**Գուղվիլ.** Գուղվիլը հաշվառվում է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված արժեզրկման կորուստները, եթե այդպիսիք կան: Գուղվիլը բաշխվում է դրամաստեղծ միավորներին, որոնք ակնկալվում է, որ կստանան ձեռնարկատիրական գործունեության միավորման համօգուտ արդյունք: Այդ միավորները ներկայացնում են ամենացածր մակարդակը, որով խումբը վերահսկում է գուղվիլը և չեն գերազանցում գործառնական սեզմենտը:

Խումբը առնվազն տարեկան մեկ անգամ անցկացնում է գուղվիլի արժեզրկման ստուգում, ինչպես նաև յուրաքանչյուր անգամ, երբ կան գուղվիլի արժեզրկման հայտանիշներ: Գուղվիլ պարունակող դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը համեմատվում է վերականգնվող գումարի հետ, որն իրենից ներկայացնում է հետևյալ մեծություններից առավելագույնը՝ օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած օտարման ծախսերը: Ցանկացած արժեզրկում անմիջապես ճանաչվում է որպես ծախս և հետագայում չի հակադարձվում:

### **3 Պատրաստման հիմունքները (շարունակություն)**

Օգուտները կամ վնասները, որոնք առաջանում են այն դրամաստեղծ միավորի շրջանակներում գործողության օտարումից, որին հատկացվել է գույքվիլը, ներառում են օտարված գործառնության հետ կապված գույքվիլի հաշվեկշռային արժեքը, որը սովորաբար չափվում է օտարված գործառնության հարաբերական արժեքների և դրամաստեղծ միավորի այն մասի հիման վրա, որը պահպանվում է:

**Ոչ նյութական ակտիվներ.** Խմբի ոչ նյութական ակտիվները ունեն որոշակի օգտակար ծառայության ժամկետ և հիմնականում ներառում են կապիտալացված համակարգչային ծրագրային ապահովումը և լիցենզիաները: Ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան: Ձեռք բերված համակարգչային ծրագրակազմի լիցենզիաները կապիտալացվում են՝ հիմք ընդունելով դրանց ձեռքբերման և օգտագործման համար կատարված ծախսերը:

Ոչ նյութական ակտիվները ամորտիզացվում են գծային մեթոդով՝ դրանց օգտակար ծառայության ընթացքում:

Օգտակար ծառայության ժամկետ՝ արտահայտված  
տարիներով  
8-10 տարի

Ծրագրակազմի լիցենզիաներ

Արժեզրկվելիս, ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև հետևյալ արժեքներից առավելագույնը՝ օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը:

**Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում.** Մաշվածության և ամորտիզացիայի ենթակա ակտիվները դիտարկվում են արժեզրկման հայտանիշների առկայության տեսանկյունից, երբ իրադարձությունները կամ հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ հաշվեկշռային արժեքը չի կարող փոխհատուցվել: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը: Վերականգնվող գումարը հետևյալ երկու մեծություններից առավելագույնն է՝ ակտիվի իրական արժեք հանած օտարման ծախսումները և օգտագործման արժեք: Արժեզրկումը գնահատելու նպատակով ակտիվները խմբավորվում են հիմնականում անկախ դրամական միջոցների մուտքեր ապահովող ամենափոքր խմբերի մակարդակում (դրամաստեղծ միավորներ): Ոչ ֆինանսական ակտիվների նախկին արժեզրկումները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ հնարավոր հակադարձման համար:

**Ֆինանսական գործիքներ. հիմնական չափման մոտեցումները.** Իրական արժեքը այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության դիմաց, շուկայի մասնակիցների միջև բնականոն գործարքի արդյունքում: Իրական արժեքի ամենաարժանահավատ վկայությունն է հանդիսանում ակտիվ շուկայում գնանշվող գինը: Ակտիվ շուկան այն շուկան է, որում շարունակական հիմունքով տեղի են ունենում ակտիվի կամ պարտավորության հետ կապված գործարքները՝ անհրաժեշտ գնային տեղեկատվություն ապահովելու համար բավարար հաճախականությամբ և ծավալով:

Ակտիվ շուկայում շրջանառվող ֆինանսական գործիքների իրական արժեքը չափվում է որպես առանձին ակտիվի կամ պարտավորության գնանշվող շուկայական գնի և Ընկերության կողմից պահվող գործիքների քանակության արտադրյալ: Նշվածը տեղի է ունենում նույնիսկ այն դեպքում, երբ շուկայի սովորական օրական առքուվաճառքի ծավալը բավարար չէ այդ քանակությունը կլանելու համար, և մեկ գործարքում դիրքը վաճառելու հայտի ներկայացումը կարող է ազդել գնանշվող գնի վրա:

Գնահատման մեթոդները, ինչպիսիք են գեղչված դրամական հոսքերի մոդելները կամ վերջերս կատարված «պարզած ձեռքի հեռավորության գործարքները» կամ ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպությունների ֆինանսական տվյալների ստացման վրա հիմնված մոդելները, օգտագործվում են որոշելու այն ֆինանսական գործիքների իրական արժեքը, որոնց համար արտաքին շուկայական գնանշման տեղեկատվությունը հասանելի չէ: Իրական արժեքի գնահատումների վերլուծությունը կատարվում է ըստ իրական արժեքի հիերարխիայում մակարդակի, հետևյալ կերպ՝ (i) մակարդակ 1՝ չափումներ ակտիվ շուկայում և նույնական ակտիվների կամ պարտավորությունների գնանշվող գներով (չձգրտվող), (ii) մակարդակ 2՝ չափման գնահատման մեթոդներ, որոնցում ակտիվի կամ պարտավորության համար բոլոր էական ելակետային տվյալներն ուղղակիորեն (գներ) կամ անուղղակիորեն (գների հիման վրա ստացված) դիտելի են, (iii) մակարդակ 3՝ գնահատումներ, որոնք հիմնված չեն բացառապես շուկայի դիտելի տվյալների վրա (այն է՝ գնահատման համար անհրաժեշտ են նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալներ): Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև փոխանցումները համարվում են տեղի ունեցած հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

### **3 Պատրաստման հիմունքները (շարունակություն)**

Գործարքի հետ կապված ծախսումները լրացուցիչ ծախսումներն են, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական գործիքի ձեռքբերմանը, թողարկմանը կամ օտարմանը: Լրացուցիչ ծախսումն այն ծախսումն է, որը կազմակերպությունը չէր կրի, եթե գործարքը տեղի չունենար: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են գործակալներին (ներառյալ՝ որպես վաճառքի գործակալ հանդես եկող աշխատակիցներին), խորհրդատուներին, միջնորդներին, դիլերներին վճարված միջնորդավճարները և կոմիսիոն վճարները, կարգավորող մարմինների և արժեթղթերի փոխանակման գործակալությունների կողմից գանձումները, սեփականության իրավունքի փոխանցման հետ կապված հարկերը և վճարները: Գործարքի հետ կապված ծախսումները չեն ներառում պարտատոմսերի հավելավճարները և գեղչերը, ֆինանսական ծախսերը, ներքին վարչական կամ պահպանման ծախսերը:

Ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական գործիքը գնահատվել է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած հաշվեգրված տոկոսները և ֆինանսական ակտիվների համար՝ հանած ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) գծով ցանկացած նվազեցում: Հաշվեգրված տոկոսները ներառում են սկզբնական ճանաչման ժամանակ գործարքի հետ կապված հետաձգված ծախսումների և հավելավճարի կամ գեղչի ամորտիզացիան՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հաշվեգրված տոկոսային եկամուտը և հաշվեգրված տոկոսային ծախսը, ներառյալ հաշվեգրված արժեկտրոնը և ամորտիզացված գեղչը կամ հավելավճարը (ներառյալ՝ առաջացման պահին հետաձգված վճարները, եթե կան այդպիսիք) առանձին չեն ներկայացվում և ներառվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության համապատասխան հոդվածի հաշվեկշռային արժեքում:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը համապատասխան ժամանակահատվածի կտրվածքով տոկոսային եկամտի կամ տոկոսային ծախսի բաշխման այսպիսի մեթոդ է, որը հանգեցնում է հաշվեկշռային արժեքի նկատմամբ կիրառվող հաստատուն պարբերական տոկոսադրույքի (արդյունավետ տոկոսադրույք): Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ համապատասխան դեպքերում ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները (չներառելով ապագա պարտքային կորուստները) գեղչում է ճշգրիտ մինչև ֆինանսական գործիքի զուտ հաշվեկշռային արժեքը: Արդյունավետ տոկոսադրույքը գեղչում է փոփոխական տոկոսադրույք ունեցող գործիքների դրամական միջոցների հոսքերը մինչև հաջորդ տոկոսադրույքի վերագնանշման ամսաթիվը, բացառությամբ այն հավելագնի կամ գեղչի, որն արտացոլում է գործիքում սահմանված լողացող տոկոսադրույքի կամ շուկայական դրույքներով չսահմանված այլ փոփոխականների նկատմամբ վարկային սփրեդը: Այդպիսի պարզակազմարները կամ գեղչերն ամորտիզացվում են գործիքի ողջ գործողության ակնկալվող ժամանակահատվածի ընթացքում: Ներկա արժեքի հաշվարկումը ներառում է պայմանագրի կողմերի միջև վճարված կամ ստացված բոլոր վճարները, որոնք արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասն են կազմում:

**Ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչում.** Բոլոր ֆինանսական գործիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ ճշգրտված գործարքի հետ կապված ծախսումներով: Սկզբնական ճանաչման ժամանակ իրական արժեքի լավագույն վկայությունն է գործարքի գինը: Սկզբնական ճանաչման ժամանակ շահույթ կամ վնաս ճանաչվում է միայն այն ժամանակ, երբ կա իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերություն, որը կարող է ապացուցվել միևնույն գործիքում դիտելի ընթացիկ շուկայական այլ գործարքներով կամ գնահատման մեթոդով, որի ելակետային տվյալները ներառում են միայն դիտելի շուկայական տվյալները: Սկզբնական ճանաչումից հետո ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքների գծով ճանաչվում է ակնկալվող պարտքային կորուստ անմիջապես հանգեցնելով հաշվապահական վնասի:

**Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում. Գնահատման կատեգորիաները.** Խումբը ֆինանսական ակտիվները դասակարգում է ամորտիզացված արժեքով:

**Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում. Բիզնես մոդել.** Բիզնես մոդելն արտացոլում է այն մեթոդը, որի միջոցով Խումբը կառավարում է իր ակտիվները՝ դրամական հոսքերի հավաքագրման նպատակով. արդյո՞ք Խմբի նպատակն է՝ (i) ակտիվներից հավաքագրել բացառապես պայմանագրային դրամական միջոցների հոսքերը («ակտիվների պահում պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով»), թե (ii) ակտիվներից հավաքագրել և՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը, և՛ ակտիվների վաճառքից առաջացող դրամական միջոցների հոսքերը («ակտիվների պահում պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման և վաճառքի նպատակով»), կամ, եթե (i) կամ (ii) պարբերությունները կիրառելի չեն, ֆինանսական ակտիվները դասակարգվում են «այլ» բիզնես մոդելի և չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

### 3 Պատրաստման հիմունքները (շարունակություն)

Բիզնես մոդելը որոշվում է ակտիվների խմբի համար (պորտֆելի մակարդակով), հիմնվելով այն գործողությունների բոլոր պատշաճ ապացույցների վրա, որոնք խումբը մտադիր է իրականացնել գնահատման ամսաթվի դրությամբ առկա պորտֆելի համար սահմանված նպատակին հասնելու համար:

**Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում.** դրամական միջոցների հոսքերի **ընթացադրերը.** Եթե բիզնես մոդելը նախատեսում է ակտիվների պահում պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի ստացման կամ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի և վաճառքի համար, ապա խումբը գնահատում է, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերն իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և տոկոսի վճարումներ: Պարունակվող ածանցյալ գործիքներով ֆինանսական ակտիվները դիտարկվում են ամբողջ ծավալով՝ որոշելու, թե արդյոք նրանց դրամական միջոցների հոսքերը համապատասխանում են միայն մայր գումարի և տոկոսի վճարումների հատկանիշներին: Նման գնահատումն իրականացնելիս՝ խումբը հաշվի է առնում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը համապատասխանում են բազային վարկային համաձայնագրին, այսինքն՝ տոկոսները ներառում են միայն պարտքային ռիսկը, փողի ժամանակային արժեքը, այլ բազային պարտքային ռիսկերը և շահույթի մարժան:

Այն դեպքերում, երբ պայմանագրային պայմաններն առաջացնում են ռիսկի ենթարկվածություն կամ անկայունություն, որն անհամատեղելի է վարկավորման բազային մեխանիզմի հետ, ֆինանսական ակտիվը դասակարգվում և չափվում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Միայն մայր գումարի և տոկոսի վճարումների գնահատումը կատարվում է ակտիվի սկզբնական ճանաչման ժամանակ և հետագայում այն չի վերանայվում:

**Ֆինանսական ակտիվների արժեզրկում. ակնկալվող պարտքային կորուստների գնահատված պահուստ.** Խումբը կանխատեսումային հիմունքով գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների, ինչպես նաև վարկային պարտավորությունների և ֆինանսական երաշխիքների պայմանագրերի գծով հնարավոր ակնկալվող պարտքային կորուստները: Խումբը գնահատում է պարտքային գործիքների հետ կապված ակնկալվող պարտքային կորուստը և ճանաչում է կորստի պահուստը հաշվետու յուրաքանչյուր ամսաթվի դրությամբ: Ակնկալվող պարտքային կորուստների գնահատումը արտացոլում է. i) անաչառ և հավանականությամբ կշռված գումարը, որը որոշվում է հնարավոր արդյունքների տիրույթի գնահատման միջոցով. (ii) փողի ժամանակային արժեքը, և (iii) տեղի ունեցած իրադարձությունների, ընթացիկ պայմանների և կանխատեսվող ապագա տնտեսական պայմանների վերաբերյալ ողջ հիմնավոր և հավաստի տեղեկությունները, որոնք հաշվետու ամսաթվի դրությամբ հասանելի են առանց անհարկի միջոցների և ռեսուրսների ծախսման:

Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքները, առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, և տրված փոխառությունները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում արտացոլվում են՝ նվազեցված ակնկալվող պարտքային կորուստի:

Խումբը ճանաչում է ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հետևյալ ֆինանսական գործիքների վերաբերյալ, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ,
- Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր:

Ակնկալվող պարտքային կորուստները կորստի պահուստի միջոցով պետք է չափվեն հետևյալ մեծություններով.

- 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ, այսինքն՝ ակտիվի ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ, որոնք կարող են առաջանալ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում ֆինանսական գործիքի դեֆոլտի իրադարձությունների արդյունքում, (ներկայացվում է որպես Փուլ 1), կամ
- Ակնկալվող պարտքային կորուստներ ակտիվի ողջ ժամկետի ընթացքում, որոնք կարող են առաջանալ ֆինանսական գործիքի ողջ տևողության ընթացքում բոլոր դեֆոլտի իրադարձությունների արդյունքում (ներկայացվում է որպես Փուլ 2 և Փուլ 3):

Ակնկալվող պարտքային կորուստների չափման համար խումբը կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոտեցում, որն օգտագործում է ակտիվի տևողության ողջ ընթացքում ակնկալվող պարտքային կորուստի պահուստ բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար (Ծանոթագրություն 11):

### **3 Պատրաստման հիմունքները (շարունակություն)**

**Ֆինանսական ակտիվների դուրսգրում.** Ֆինանսական ակտիվները ամբողջությամբ կամ մասամբ դուրս են գրվում այն ժամանակ, երբ հսումքը սպառել է դրանց վերականգնման բոլոր գործնական հնարավորությունները և եզրակացրել է, որ չկան այդպիսի ակտիվների վերականգնման հիմնավորված ակնկալիքներ: Դուրսգրումն իրենից ներկայացնում է ակտիվի ապաճանաչում: Խուճաբը կարող է դուրս գրել դեռևս հարկադիր բռնագանձման գործընթացում գտնվող ֆինանսական ակտիվները, այն դեպքում, երբ խուճաբը փորձում է բռնագանձել պայմանագրային պարտավորության գումարները՝ առանց վերականգնման ողջամիտ ակնկալիքի:

**Ֆինանսական ակտիվների ապաճանաչում.** Խուճաբը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ. (ա) ակտիվը մարվել է կամ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը կամ (բ) խուճաբը փոխանցել է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի նկատմամբ իրավունքները կամ կնքել է ակտիվների փոխանցման պայմանագիր, միաժամանակ (i) փոխանցելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները կամ (ii) չփոխանցելով և նաև չպահպանելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները, սակայն չպահպանելով նաև ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Վերահսկողությունը պահպանվում է, եթե գործընկերը չունի չկապակցված երրորդ կողմին ակտիվը ամբողջությամբ վաճառելու հնարավորություն՝ առանց վաճառքի սահմանափակումներ կիրառելու:

**Ֆինանսական ակտիվների փոփոխություն.** Ֆինանսական ակտիվի փոփոխությունը տեղի է ունենում այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվի դրամական միջոցների հոսքերը կարգավորող պայմանագրային պայմանները վերանայվում են կամ այլ կերպ փոփոխվում ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման և մարման ժամկետի միջև ընկած ժամանակահատվածում: Փոփոխությունն ազդում է պայմանագրային դրամական միջոցների հոսքերի գումարի և/կամ ժամանակի վրա՝ անմիջապես կամ ապագա ամսաթվով:

**Ֆինանսական պարտավորություններ. չափման կատեգորիաներ.** Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես հետագայում ամորտիզացված արժեքով չափվող:

**Ֆինանսական պարտավորություններ. ապաճանաչում.** Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են դրանց մարման պարագայում (այսինքն, երբ պարտավորությունը կատարվում է, կամ պայմանագրով նշված պարտավորությունը դադարում է կամ սպառվում է դրա իրականացման ժամկետը):

Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված ու վճարման ենթակա հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

**Ֆինանսական գործիքների հաշվանցում.** Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և զուտ գումարը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում միայն այն դեպքում, երբ առկա է ճանաչված գումարները հաշվանցելու համար իրավաբանորեն ամրագրված իրավունք և կա մտադրություն կամ մարելու զուտ արժեքը, կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը: Այդ հաշվանցման իրավունքը (ա) չպետք է կախված լինի ապագա իրադարձությունից և (բ) պետք է իրավաբանական ուժ ունենա բոլոր հետևյալ հանգամանքներում՝ (i) բնականոն գործունեության ընթացքում, (ii) պարտազանցման դեպքում և (iii) անվճարունակության կամ սնանկության դեպքում:

**Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ.** Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են առձեռն դրամական միջոցները, բանկերում պահվող ցպահանջ ավանդները և այլ կարճաժամկետ բարձր իրացվելիություն ունեցող ներդրումները՝ երեք ամիս կամ դրանից պակաս սկզբնական մարման ժամկետով: Դրամական միջոցները և դրամական միջոցների համարժեքները հաշվառվում են ԱՀ-ում, քանի որ. (i) դրանք պահվում են պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով, և այդ դրամական միջոցների հոսքերն իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և տոկոսագումարի վճարում, և (ii) դրանք չեն որոշված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

**Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր.** Առևտրային դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ հետագա չափումը իրականացվում է ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ:

### **3 Պատրաստման հիմունքները (շարունակություն)**

**Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր.** Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, երբ գործընկերը կատարում է պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները: Հետագա չափումն իրականացվում է ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

**Փոխառություններ.** Փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց կատարված գործարքի ծախսումների, և հետագայում հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

**Վարձակալության գծով պարտավորություններ.** Վարձակալության պայմանագրերից բխող պարտավորությունները սկզբնական ճանաչման պահին չափվում են ներկա արժեքով: Վարձակալության գծով պարտավորությունները ներառում են հետևյալ վարձակալության վճարների գույտ ներկա արժեքը:

- հաստատուն վճարներ (ներառյալ, ըստ էության, հաստատուն վճարումները) հանած ստացման ենթակա վարձակալության խրախուսումները,
- փոփոխական վարձակալական վճարումները, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքաչափից և սկզբնապես չափվում են օգտագործելով մեկնարկի ամսաթվի դրությամբ գործող ինդեքսը կամ դրույքաչափը, և
- վարձակալության պայմանագրերը դադարեցնելու համար տուգանքների վճարները, եթե վարձակալության ժամկետը արտացոլում է իմբի կողմից այդ օպցիոնի իրագործումը:

Վարձակալության երկարաձգման և դադարեցման օպցիոնները նախատեսված են իմբի մի շարք պայմանագրերում: Այս պայմաններն օգտագործվում են իմբի գործունեության մեջ օգտագործվող ակտիվները կառավարելիս առավելագույն գործառնական ճկունություն ապահովելու համար: Երկարաձգման օպցիոնները (կամ դադարեցման օպցիոններին հաջորդող ժամկետները) ներառվում են վարձակալության ժամկետում միայն այն դեպքում, եթե առկա է ողջամիտ վստահություն, որ վարձակալությունը երկարաձգվելու է (կամ չի դադարեցվելու): Պարտավորության գնահատումը ներառում է նաև վարձակալության վճարներ, որոնք կկատարվեն որպես երկարաձգման օպցիոնների իրագործման մաս, եթե բավարար վստահություն կա, որ վարձակալությունը կերկարաձգվի:

Վարձակալության վճարները զեղչվում են՝ օգտագործելով վարձակալության պայմանագրով ենթադրվող տոկոսադրույքը: Եթե այս տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել, ինչը, որպես կանոն, տեղի է ունենում իմբի մոտ առկա վարձակալության պայմանագրերի դեպքում, ապա խումբն օգտագործում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, որը այն դրույքաչափն է, որով խումբը կարող էր համանման ժամանակահատվածում և համանման ապահովությամբ ներգրավել փոխառու միջոցներ, որոնք անհրաժեշտ կլինեին համանման տնտեսական պայմաններում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի արժեքին համարժեք ակտիվ ձեռք բերելու համար:

Լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը որոշելու համար խումբը.

- հնարավորության դեպքում, որպես նախնական տեղեկատվություն օգտագործում է իմբի կողմից վերջերս երրորդ անձանցից ստացված ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվությունը և ճշգրտում է այն, հաշվի առնելով ֆինանսավորումը ստանալու պահից հետո տեղի ունեցած ֆինանսավորման պայմանների փոփոխությունները,
- օգտագործում է ձևավորման այնպիսի մոտեցում, որի դեպքում հաշվարկը սկսվում է առանց ռիսկի տոկոսադրույքից, որը ճշգրտվում է պարտքային ռիսկի չափով, և
- կատարում է ճշգրտումներ հաշվի առնելով վարձակալության պայմանագրի առանձնահատկությունները, օրինակ, վարձակալության ժամկետը, երկիրը, արժույթը և ապահովությունը:

Վարձակալության վճարները բաժանվում են պարտավորությունների հիմնական գումարի և ֆինանսական ծախսերի: Ֆինանսական ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում վարձակալության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում՝ յուրաքանչյուր ժամանակաշրջանի պարտավորության մնացորդի վրա հաստատուն պարբերական տոկոսադրույքն ապահովելու համար:

### **3 Պատրաստման հիմունքները (շարունակություն)**

**Շահութահարկ.** Համախմբված ֆինանսական հաշվետվություններում շահութահարկը ներկայացվում համաձայն օրենսդրության, որն, ըստ եռլայան, գործում է կամ ուժի մեջ է մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից և ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ այն ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ անմիջապես սեփական կապիտալում, քանի որ վերաբերում է այնպիսի գործարքների, որոնք տվյալ կամ այլ ժամանակաշրջանում ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ անմիջապես սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկն այն գումարն է, որը ենթակա է վճարման կամ փոխհատուցման և վերաբերում է ընթացիկ կամ նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթներին կամ վնասներին: Հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է գնահատումների վրա, եթե համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատված են մինչև համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացումը: Շահութահարկից տարբերվող այլ հարկերը, ճանաչվում են գործառնական ծախսերում:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են՝ կիրառելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը հետագա տարիներին փոխանցվող հարկային վնասի և ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առկա են ֆինանսական հաշվետվությունների նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները և հարկային նպատակով օգտագործվող արժեքները համեմատելիս: Համաձայն սկզբնական ճանաչման վերաբերյալ բացառության, հետաձգված հարկը չի գրանցվում այն ժամանակավոր տարբերությունների դեպքում, երբ ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումը կատարվում է այնպիսի գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որը սկզբնապես գրանցվելիս, ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական, և ո՛չ էլ հարկվող շահույթի վրա: Հետաձգված հարկային մնացորդները չափվում են կիրառելով հարկային դրույթները, որոնք, ըստ եռլայան, գործում են կամ ուժի մեջ են մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ և որոնք ակնկալվում է կիրառել այն ժամանակահատվածներում, երբ ժամանակավոր տարբերությունները հակադարձվեն կամ նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասն օգտագործվի:

Նվազեցվող ժամանակավոր տարբերությունների և նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասի մասով հետաձգված հարկային ակտիվը գրանցվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա իրավաբանորեն ամրագրված իրավունք հաշվանցել ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց և, երբ հետաձգված շահութահարկի ակտիվներն ու պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկվող անձից կամ տարբեր հարկատուներից, որտեղ կա մնացորդները զուտ հիմունքով կարգավորելու մտադրություն: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները մարվում են միայն խմբի առանձին ընկերություններում:

Խումբը վերահսկում է այն ժամանակավոր տարբերությունների հակադարձումը, որոնք վերաբերում են դուստր կազմակերպությունների շահաբաժինների գծով հարկերին կամ դրանց վաճառքից շահույթին: Խումբը չի արտացոլում հետաձգված հարկային պարտավորությունները նման ժամանակավոր տարբերությունների գծով, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունն ակնկալում է ժամանակավոր տարբերությունների հակադարձում տեսանելի ապագայում:

### **3 Պատրաստման հիմունքները (շարունակություն)**

**Անորոշ հարկային դիրքեր.** Խմբի անորոշ հարկային դիրքերը վերագնահատվում են ղեկավարության կողմից յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Շահութահարկի գծով պարտավորությունները հաշվի են առնվում այն դեպքում, երբ ղեկավարությունը գտնում է, որ լրացուցիչ հարկային պարտավորությունների առաջացման հավանականությունը ավելի մեծ է, քան դրանց բացակայությունը, եթե խմբի հարկային գործունեությունը վիճարկվի հարկային մարմինների կողմից: Գնահատումը հիմնված է այն հարկային օրենքների և համապատասխան իրավական ակտերի մեկնաբանությունների վրա, որոնք, ըստ Էուրոյան, գործում են կամ ուժի մեջ են մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, ինչպես նաև նմանատիպ հարցերի շուրջ ցանկացած հայտնի դատական կամ այլ որոշումների վրա: Տուգանքների, տուկոսների և հարկերի, բացառությամբ շահութահարկի, գծով պարտավորությունները ճանաչվում են ղեկավարության կողմից՝ հիմք ընդունելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պարտավորությունների մարման համար պահանջվող ծախսերի լավագույն գնահատականը: Շահութահարկի անորոշության գծով ճշգրտումները՝ բացառությամբ տույժերի և տուգանքների, արտացոլվում են շահութահարկի գծով ծախսերում: Շահութահարկի անորոշության գծով ճշգրտումները՝ կապված տույժերի և տուգանքների հետ, արտացոլվում են համապատասխանաբար ֆինանսական ծախսերի և Այլ ծախսերի կազմում, զուտ հիմունքով:

**Ավելացված արժեքի հարկ.** Վաճառքին վերաբերող ավելացված արժեքի հարկը հաշվեգրվում է հաճախորդներին ապրանքների առաքման կամ ծառայությունների մատուցման ամսում, և ենթակա է վճարման հարկային մարմիններին մինչև հաջորդ ամսվա 20-ը: Գնմանը վերաբերող ԱԱՀ-ը սովորաբար հաշվանցվում է վաճառքին վերաբերող ԱԱՀ-ի դիմաց, ԱԱՀ-ի հարկային հաշիվը ստանալուց և հաստատելուց հետո: Հարկային մարմինները թույլատրում են ԱԱՀ-ը հաշվարկել զուտ հիմունքով: Վաճառքին և գնումներին վերաբերող ԱԱՀ-ի գումարները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչվում են զուտ հիմունքով: Ակնկալվող պարտքային կորուստների արժեզրկման համար պահուստ ստեղծելու դեպքում արժեզրկումից կորուստը ճանաչվում է պարտավորության համախառն գումարի չափով, ներառյալ ԱԱՀ-ը:

**Պաշարներ.** Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Պաշարների արժեքը որոշվում է որոշակի միավորների հաշվառման միջոցով (հաշվապահության մեջ դուրս գրված միավորները փաստացի ուղարկված միավորներն են), ինչը, ըստ Էուրոյան, Էական տարբերության չի հանգեցնում «առաջինը մուտք, առաջինը ելք» (FIFO) մեթոդի համեմատ: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում Խումբը կատարում է ժամկետանց և դանդաղ իրացվելի պաշարների մոտավոր պլանավորում:

**Վաճառված ապրանքների ինքնարժեքը:** Վաճառված ապրանքների ինքնարժեքը ներառում է վաճառված ապրանքների ձեռքբերման գինը և պաշարները վաճառքի համար նախատեսված վայր հասցնելու և վաճառքի համար պատրաստ վիճակի բերելու համար կատարված այլ ծախսերը:

Խումբը մատակարարներից ստանում է տարբեր տեսակի հատուցումներ՝ առաջխաղացման վճարների, ծավալային զեղչերի և այլ խրախուսական վճարների տեսքով: Խմբի կողմից ստացված մատակարարների խրախուսական վճարները հաշվարկելիս Խումբը այդ խրախուսական վճարները դիտում է որպես ապրանքի համար վճարված գների իջեցում, և հաշվառում է դրանք վաճառված ապրանքների ինքնարժեքի կազմում կամ նվազեցնում է հաշվետու ամսաթվի դրությամբ առկա պաշարների ինքնարժեքից:

**Կանխավճարներ.** Կանխավճարները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկման գծով պահուստը: Կանխավճարները դասակարգվում են որպես ոչ ընթացիկ, երբ կանխավճարին վերաբերող ապրանքներն ու ծառայությունները ակնկալվում է ստանալ մեկ տարի հետո կամ երբ կանխավճարը վերաբերում է այնպիսի ակտիվի, որը սկզբնական ճանաչման ժամանակ կդասակարգվի որպես ոչ ընթացիկ: Ակտիվներ ձեռք բերելու գծով կանխավճարները փոխանցվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ Խումբը ստանում է ակտիվի նկատմամբ վերահսկողություն և հավանական է, որ ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Խումբ: Այլ կանխավճարները ծախսագրվում են շահույթի կամ վնասի կազմում, երբ կանխավճարի վերաբերող ակտիվները, ապրանքները կամ ծառայությունները չեն ստացվի, ապա կանխավճարի հաշվեկշռային արժեքը համապատասխանաբար դուրս է գրվում և արժեզրկումից կորուստը ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում:

### **3 Պատրաստման հիմունքները (շարունակություն)**

**Կանոնադրական կապիտալ.** Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Լրացուցիչ ծախսերը, որոնք անմիջականորեն վերագրելի են նոր բաժնետոմսերի թողարկմանը, սեփական կապիտալում ցույց են տրվում որպես ստացված մուտքերից նվազեցում հարկումից հետո: Իրական արժեքի այն մասը, որը գերազանցում է թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքը, սեփական կապիտալում գրանցվում է որպես Էմիսիոն եկամուտ:

**Շահաբաժիններ.** Շահաբաժինները ներկայացվում են որպես պարտավորություն և նվազեցվում են սեփական կապիտալից այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվել և հաստատվել են: Շահաբաժինները, որոնք հայտարարված են հաշվետու ժամանակաշրջանից հետո և մինչև ֆինանսական հաշվետվությունների թողարկման համար հատատումը, բացահայտվում են հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքերի վերաբերյալ ծանոթագրությունում: Ընկերության՝ ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն պատրաստված հաշվետվությունները հիմք են հանդիսանում շահույթի բաշխման և այլ հատկացումների համար:

**Պարտավորությունների և վճարների գծով պահուստներ.** Պարտավորությունների և վճարների գծով պահուստները անորոշ ժամկետներով կամ չափով ոչ ֆինանսական պարտավորություններ են: Դրանք հաշվեգրվում են, երբ հսումբը, անցյալ դեպքերի արդյունքում ունի իրավաբանորեն ամրագրված կամ ենթադրվող պարտավորություն և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող ռեսուրսների արտահոսք, ինչպես նաև պարտավորության չափը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Պահուստները գնահատվում են՝ ելնելով ծախսերի ներկա արժեքից, որն, ինչպես ակնկալվում է, կպահանջվի պարտավորության մարման համար՝ զեղչված մինչև հարկումը տոկոսադրույքով, որն արտացոլում է տվյալ պարտավորությունների գծով գումարների և ռիսկերի ներկա արժեքը: Ժամանակի ընթացքում պահուստի աճը ճանաչվում է որպես տոկոսային ծախս ֆինանսական ծախսերի կազմում:

Տուրքերը և վճարները, ինչպիսիք են, օրինակ, շահութահարկից բացի այլ հարկերը կամ կանոնակարգային վճարները, որոնք հիմնված են վճարման պարտավորության առաջացմանը նախորդող ժամանակահատվածի տեղեկատվության վրա, ճանաչվում են որպես պարտավորություն, երբ տեղի է ունենում օրենսդրությամբ սահմանված կարգով տուրքի վճարում առաջացնող պարտավորեցնող դեպք, որն առաջ է բերում տուրք վճարելու պարտավորություն: Եթե տուրքի վճարումը կատարվել է մինչև պարտավորեցնող դեպքը տեղի ունենալը, այն ճանաչվում է որպես կանխավճար:

**Հասույթի ճանաչումը.** Հասույթը խմբի սովորական գործունեության ընթացքում առաջացող եկամուտն է: Հասույթը ճանաչվում է գործարքի գնի չափով: Գործարքի գինն այն հատուցման գումարն է, որի իրավունքը հսումբն ակնկալում է հաճախորդին խոստացված ապրանքների կամ ծառայությունների նկատմամբ վերահսկողությունը փոխանցելու դիմաց՝ բացառությամբ երրորդ անձանց անունից հավաքագրված գումարները:

Եկամուտը ճանաչվում է զեղչերից, վերադարձերից և ավելացված արժեքի հարկերից զուտ:

Խումբը ճանաչում է հասույթը այն կերպով, որն արտացոլում է խոստացված ապրանքների կամ ծառայությունների փոխանցումը հաճախորդին, և այն գումարով, որն իրենից ներկայացնում է հատուցման չափը, որի իրավունքը հսումբն ակնկալում է ստանալ այդ ապրանքների կամ ծառայությունների փոխանցման դիմաց:

**Դեղագործական ապրանքների մեծածախ վաճառք.** Վաճառքը ճանաչվում է այն ժամանակ, երբ ապրանքների նկատմամբ վերահսկողությունը փոխանցվել է, այսինքն՝ երբ ապրանքները փոխանցվել են հաճախորդին, վերջինս ունի ապրանքներն իր հայեցողությամբ տնօրինելու լիակատար հնարավորություն, և չկան չմարված պարտավորություններ, որոնք կազդեին հաճախորդի կողմից ապրանքների ընդունման վրա:

Մեծածախ վաճառքից հասույթի գծով կատարողական պարտականությունը ներառում է ապրանքների առաքումը հաճախորդի պահեստ կամ դեղատուն:

Չեղչված հիմունքով վաճառքից ստացված հասույթը ճանաչվում է պայմանագրում նշված գնի հիման վրա՝ առանց զեղչերի:

### 3 Պատրաստման հիմունքները (շարունակություն)

**Դեղագործական ապրանքների մանրածախ վաճառք.** Մանրածախ վաճառքն իրականացվում է իսրայելի դեղատների միջոցով: Վաճառքի գրանցումը կատարվում է ապրանքների շտրիխ կոդերի միջոցով: Մանրածախ վաճառքից հասույթը ճանաչվում է ավտոմատ կերպով և անմիջապես, իրացման պահին՝ հաշվապահական հաշվառման ծրագրի և հսկիչ-դրամարկդային մեքենայի միջոցով:

**Հաճախորդների լոյալության ծրագիր.** Խումբը իրականացնում է հաճախորդների լոյալության ծրագիր, որը թույլ է տալիս հաճախորդներին միավորներ կուտակել իսրայելի ցանկացած դեղատներում կատարված յուրաքանչյուր գնման համար: Վաստակած միավորները հաճախորդներին հնարավորություն են տալիս կանխիկ գեղջ ստանալ ապագա գնումների ժամանակ, պայմանով, որ գնումն իրականացվում է միավորները վաստակելուց հետո մեկ տարվա ընթացքում:

Լոյալության միավորներին հատկացված հատուցումը չափվում է՝ ելնելով դրանց իրական արժեքից, այսինքն՝ այն գումարից, որի դիմաց լոյալության միավորները կարող էին առանձին վաճառվել: Այս գումարը հետաձգվում է և ճանաչվում է որպես հասույթ այն ժամանակաշրջանում, երբ միավորները մարվում են: Ակնկալվող տարբերությունը ճանաչվում է որպես հասույթ սկզբնական վաճառքի պահին, քանի որ այն չի ներառվում լոյալության միավորներին հատկացված գումարում:

Լոյալության միավորների գծով պայմանագրային պարտավորությունը ճանաչվում է վաճառքի պահին:

**Ենթավարձակալությունից եկամուտ.** Գործառնական վարձակալությամբ ստացված վարձակալությունից եկամուտը ճանաչվում է գծային հիմունքով՝ համապատասխան վարձակալության ժամկետի ընթացքում: Գործառնական վարձակալության պայմանագրերի կնքման և բանակցությունների ընթացքում կատարված սկզբնական ուղղակի ծախսերը գումարվում են վարձակալված ակտիվի հաշվեկշռային արժեքին և ճանաչվում են գծային հիմունքով՝ վարձակալության ժամկետի ընթացքում: Ենթավարձակալությունից եկամուտը ներկայացվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ իսրայելի ոչ հիմնական գործունեության կազմում:

**Դեռական շնորհներ.** Ծախսերի գծով ստացված պետական շնորհները ճանաչվում են տարվա շահույթում կամ վնասում և դրա ստացման հետ կապված ծախսերի դիմաց մարվում են այն ժամանակահատվածում, որն անհրաժեշտ է դրանք վերագրելու համար այն ծախսերին, որոնք նախատեսվում է փոխհատուցել տվյալ շնորհների հաշվին: Դրամաշնորհների տեսքով եկամուտը հաշվանցվում է տոկոսային ծախսի միջոցով՝ տարվա շահույթում կամ վնասում:

**Բարտերային գործարքներ և փոխադարձ չեղարկումներ.** Վաճառքների և գնումների մի մասը կարգավորվում է փոխադարձ չեղարկումներով, բարտերային կամ անկանխիկ հաշվարկների միջոցով: Այս գործարքները, ընդհանուր առմամբ, իրենցից ներկայացնում են անմիջական փոխհաշվարկ վերջնական հաճախորդի կողմից ոչ համանման ապրանքների և ծառայությունների (բարտեր), փոխադարձ մնացորդների չեղարկման, կամ մի քանի ընկերությունների ներգրավմամբ անկանխիկ գործարքների շղթայի միջոցով: Անկանխիկ հաշվարկները ներառում են մուրհակներ կամ փոխարկելի պարտատոմսեր, որոնք բանակցելի պարտքային գործիքներ են:

Վաճառքներն ու գնումները, որոնք անկալվում է մարել փոխադարձ հաշվարկների, բարտերի կամ այլ անկանխիկ հաշվարկների միջոցով, ճանաչվում են անկանխիկ հաշվարկներում ստացվող կամ գիջվող իրական արժեքի վերաբերյալ ղեկավարության գնահատման հիման վրա: Իրական արժեքը որոշվում է դիտարկելի շուկայական տեղեկատվության հիման վրա:

Անկանխիկ գործարքները չեն ներառվել դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունում: Ներդրումային և ֆինանսավորման գործունեությանը և գործառնական գործունեության ընդհանուր մեծությունը ներկայացնում են փաստացի դրամական հոսքերը:

**Հատուցումներ աշխատակիցներին.** Աշխատավարձերը, աշխատավարձերը, ՀՀ պետական կենսաթոշակային և սոցիալական ապահովագրության հիմնադրամներին կատարված վճարումները, տարեկան վճարովի և հիվանդության արձակուրդները, պարգևավճարները և ոչ դրամական նպաստները (օրինակ՝ առողջապահական ծառայությունները) հաշվարկվում են այն տարում, երբ իսրայելի աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Կենսաթոշակային հատկացումներից բացի, Խումբը չունի կենսաթոշակային կամ համանման այլ վճարումներ կատարելու իրավական կամ կառուցողական պարտավորություն:

### 3 Պատրաստման հիմունքները (շարունակություն)

Կարճաժամկետ աշխատակիցների հատուցումների գծով պարտավորությունները չափվում են չգեղջկած հիմունքով և ծախսագրվում են համապատասխան ծառայության մատուցմանը զուգընթաց: Ծանաչվում է պարտավորություն այն գումարի չափով, որը նախատեսվում է վճարել կարճաժամկետ դրամական պարզևավճարի տեսքով, եթե խումբը ունի այդ գումարը վճարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտավորություն՝ աշխատողի կողմից անցյալում մատուցված ծառայության արդյունքում, և պարտավորությունը կարող է արժանահավատորեն չափվել:

**Համախմբված ֆինանսական հաշվետվությունների փոփոխություն թողարկումից հետո.** Թողարկումից հետո սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների ցանկացած փոփոխության համար պահանջվում է հաստատում խմբի Տնօրենների խորհրդի կողմից, որը հաստատել է սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները հրապարակման համար:

#### **4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական գնահատականներ և դատողություններ**

Խումբը կատարում է գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների և հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա: Գնահատականներն ու դատողությունները շարունակական կերպով վերանայվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ինչպիսիք են հետագա իրադարձությունների ակնկալիքները, որոնք առկա պայմաններում տրամաբանական են համարվում: Գնահատականներից բացի, ղեկավարությունը կատարում է նաև որոշակի այլ դատողություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գործընթացում: Դատողությունները, որոնք առավել նշանակալի ազդեցություն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված արժեքների վրա, և գնահատականները, որոնք կարող են հիմք հանդիսանալ հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներում նշանակալի ճշգրտման համար, հետևյալն են.

**Հետաձգված հարկային ակտիվի ճանաչում.** Ծանաչված հետաձգված հարկային ակտիվները ներկայացնում են շահութահարկի այն գումարը, որը կարող է հաշվանցվել ապագա հարկվող շահույթից նվազեցումների դիմաց և ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա համապատասխան հարկային արտոնության իրացման բարձր հավանականություն: Սա ենթադրում է ժամանակավոր տարբերությունների առկայություն, որոնք ապագայում ակնկալվում է վերականգնել, և բավարար ապագա հարկվող շահույթ, որոնց դիմաց ակնկալվում է օգտագործել նվազեցումները: Ապագա հարկվող շահույթի և ապագայում ամենայն հավանականությամբ հաշվանցման ենթակա հարկային նվազեցումների չափը որոշվում է ղեկավարության կողմից մշակված միջնաժամկետ գործարար ծրագրի և ապագայի նկատմամբ դրա արտարկման/էքստրապոլյացիայի/ արդյունքների հիման վրա: Գործարար ծրագիրը հիմնված է ղեկավարության՝ տվյալ հանգամանքներում հիմնավորված ակնկալիքների վրա:

**Հարկային օրենսդրություն.** ՀՀ հարկային և մաքսային օրենսդրությունը ենթակա են տարբեր մեկնաբանումների: Տես Ծանոթագրություն 20-21:

**Կապակցված կողմերի հետ գործարքների սկզբնական ճանաչում.** Բնականոն գործունեության ընթացքում խումբը գործարքի մեջ է մտնում իր կապակցված կողմերի հետ: ՖՀՄՍ 9-ը պահանջում է ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչում հիմնված նրանց իրական արժեքի վրա: Դատողությունը կիրառվում է որոշելու, թե արդյոք գործարքները գնահատված են շուկայական կամ ոչ շուկայական տոկոսադրույքներով, երբ չկա ակտիվ շուկա այդպիսի գործարքների համար: Դատողության համար հիմք է հանդիսանում նմանատիպ գործարքների գնահատումը չկապակցված կողմերի հետ և արդյունավետ տոկոսադրույքով վերլուծությունները: Կապակցված կողմերի հաշվեկշռի պայմաններն ու դրույթները բացահայտվում են Ծանոթագրություն 27-ում:

**4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության Էական գնահատականներ և դատողություններ (շարունակություն)**

**Ակնկալվող պարտքային կորուստների գնահատում.** Ակնկալվող պարտքային կորուստների գնահատումը կարևոր գնահատական է, որը ներառում է մեթոդաբանության, մոդելների և ելակետային տվյալների սահմանումը: ԱՊԿ չափման մեթոդաբանության մանրամասները բացահայտված են Ծանոթագրություն 3-ում և 11-ում: Հետևյալ բաղադրիչներն ունեն Էական ազդեցություն պարտքային կորուստի պահուստի վրա՝ դեֆոլտի սահմանումը, վարկային ռիսկերի նշանակալի աճը, դեֆոլտի հավանականությունը, դեֆոլտով պայմանավորված կորուստը, ինչպես նաև մակրոտնտեսական սցենարների մոդելները: Խումբը պարբերաբար վերանայում և հաստատում է մոդելները և ելակետային տվյալները՝ գնահատված ակնկալվող պարտքային կորուստների և փաստացի պարտքային կորուստների միջև եղած տարբերությունները նվազեցնելու նպատակով:

**Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը.** Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը կատարվում է՝ ելնելով մասնագիտական դատողությունից, հիմք ընդունելով համանման ակտիվների գծով առկա փորձը: Այս ակտիվներում մարմնավորվող ապագա տնտեսական օգուտները հիմնականում կատարվեն դրանց օգտագործումից: Սակայն մի շարք այլ գործոններ, ինչպիսիք են՝ տեխնիկական կամ առևտրային տեսանկյունից մաշվածությունը, հաճախ հանգեցնում են տվյալ ակտիվների հետ կապված տնտեսական շահույթի նվազմանը: Ղեկավարությունը գնահատում է հիմնական միջոցների օգտակար ծառայության մնացորդային ժամկետը՝ հիմք ընդունելով ակտիվների տեխնիկական վիճակը, և հաշվի առնելով հաշվարկային ժամանակահատվածը, որի ընթացքում տվյալ ակտիվները հսկի համար կառաջացնեն տնտեսական շահույթ: Հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոնները. ա) ակտիվների ակնկալվող օգտագործման ժամկետը, բ) սարքավորումների ակնկալվող մաշվածությունը, որը կախված է շահագործման բնութագրերից և տեխնիկական սպասարկման ծրագրից, և գ) տեխնիկական կամ առևտրային տեսանկյունից մաշվածությունը, որն առաջանում է շուկայի պայմանների փոփոխության հետևանքով:

Եթե գնահատված օգտակար ծառայության ժամկետները 10%-ով տարբերվեն ղեկավարության գնահատականներից, ապա 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար մաշվածության վրա ազդեցությունը կկազմեր 26,019 հազ. ՀՀ դրամի չափով աճ կամ 26,019 հազ. դրամի նվազում (2022թ.՝ 20,661 հազ. ՀՀ դրամի չափով աճ կամ 20,661 հազ. ՀՀ դրամի չափով նվազում):

**Հիմնական միջոցների մնացորդային արժեքները.** Ղեկավարությունը հիմնական միջոցների մնացորդային արժեքները սահմանել է գրոյական:

**Օգտագործման իրավունքով ակտիվների օգտակար ծառայության ժամկետը.** Վարձակալության ժամկետը որոշելիս ղեկավարությունը հաշվի է առնում բոլոր փաստերն ու հանգամանքները, որոնք տնտեսական դրդապատճառ են ստեղծում երկարաձգման օպցիոնը կիրառելու կամ դադարեցման օպցիոնը չկիրառելու համար: Երկարաձգման օպցիոնները (կամ դադարեցման օպցիոններին հաջորդող ժամկետները) ներառվում են վարձակալության ժամկետում միայն այն դեպքում, եթե առկա է ողջամիտ վստահություն, որ վարձակալությունը երկարաձգվելու է (կամ չի դադարեցվելու):

Դեղատների և տրանսպորտային միջոցների վարձակալության դեպքում սովորաբար առավել կարևոր են հետևյալ գործոնները.

- Եթե վարձակալությունը դադարեցնելու (կամ չերկարաձգելու համար) նախատեսված են Էական տույժեր, Խումբը, որպես կանոն, ունի ողջամիտ համոզվածություն, որ վարձակալությունը երկարաձգվելու է (կամ չի դադարեցվելու):
- Եթե ակնկալվում է, որ վարձակալված ակտիվի կապիտալացվող բարելավման արդյունքում կառաջանա զգալի մնացորդային արժեք, ապա Խումբը, որպես կանոն, ունի ողջամիտ համոզվածություն, որ վարձակալությունը երկարաձգվելու է (կամ չի դադարեցվելու):

Հակառակ դեպքում, Խումբը հաշվի է առնում այլ գործոններ, ներառյալ վարձակալության նախկին տևողությունները և ծախսերը և բիզնեսի ընդհատումները, որոնք անհրաժեշտ են վարձակալված ակտիվը փոխարինելու համար: Դեղատների և տրանսպորտային միջոցների վարձակալության երկարաձգման տարբերակների մեծ մասը ներառված չեն վարձակալության գծով պարտավորության մեջ, քանի որ Խումբը կարող է փոխարինել ակտիվները առանց Էական ծախսերի կամ գործունեության ընդհատման:

**4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության Էական գնահատականներ և դատողություններ (շարունակություն)**

Դադարեցման օպցիոնները ներառված են Խմբի հիմնական միջոցների մի շարք վարձակալական պայմանագրերում: Այս պայմաններն օգտագործվում են Խմբի գործունեության մեջ օգտագործվող ակտիվները կառավարելիս առավելագույն գործառնական ճկունությունն ապահովելու համար:

Գրասենյակների և տրանսպորտային միջոցների վարձակալության երկարաձգման տարբերակների մեծ մասը ներառված չէ վարձակալության պարտավորության մեջ:

**Վարձակալության պարտավորությունների որոշման համար օգտագործվող գեղչային դրույքաչափեր.** Խումբը գեղչման տոկոսադրույքը հաշվարկելու համար որպես հիմք է օգտագործում իր փոխառության աճող տոկոսադրույքը, քանի որ վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը չի կարող անմիջականորեն որոշվել:

Հետևյալ գործոններով որոշվել է աճողական փոխառության 8.25% դրույքաչափի օգտագործումը (2022թ.՝ 8.25%). օգտագործվել է Խմբի փոխառությունների ՀՀ դրամով միջին կշռված տոկոսադրույքը:

2023թ. դեկտեմբերի 31-ին գեղչման դրույքի 10% հարաբերական աճը կամ նվազումը կհանգեցնի վարձակալության գծով պարտավորությունների աճի կամ նվազման 18,230 հազ. ՀՀ դրամի չափով (31 դեկտեմբերի 2022թ.՝ 20,604 հազ. ՀՀ դրամի չափով):

**Լոյալության ծրագրին վերագրվող եկամուտ.** Խումբը հաշվառում է հաճախորդների լոյալության միավորները՝ որպես առանձին բաղադրիչ այն վաճառքի գործարքի շրջանակներում, որում դրանք շնորհվում են: Հաճախորդներից ստացված հատուցման իրական արժեքի մի մասը բաշխվում է կուտակային միավորներին և հետաձգվում՝ ճանաչվելով որպես եկամուտ այն ժամանակաշրջանի ընթացքում, երբ կուտակային միավորները մարվում են: Հետևաբար, ղեկավարությունը պետք է ենթադրություններ կատարի մարման ակնկալվող դրույքաչափերի վերաբերյալ, որոնք հնարավոր է կատարել նախորդ ժամանակաշրջանների վիճակագրական տվյալների առկայության դեպքում, և հաշվետու ամսաթվի դրությամբ ենթակա են նշանակալի անորոշության:

**5 Անցումնոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին**

2023թ. հունվարի 1-ից ուժի մեջ են մտել հետևյալ նոր ստանդարտները և փոփոխությունները.

**ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր» (թողարկվել է 2017թ. մայիսի 18-ին և ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):** ՖՀՄՍ17-ը փոխարինում է ՖՀՄՍ 4-ին, որը թույլ էր տալիս ընկերություններին կիրառել ապահովագրական պայմանագրերի համար գործող հաշվապահական հաշվառման գործելակերպը: Սա ներդրողների համար դժվարեցնում էր համեմատումը և համադրումը այլ առումներով նմանատիպ ապահովագրական ընկերությունների ֆինանսական արդյունքների հետ: ՖՀՄՍ 17-ը մեկ միասնական սկզբունքի վրա հիմնված հաշվապահական ստանդարտ է՝ ապահովագրողի կողմից պահվող բոլոր տեսակի ապահովագրության պայմանագրերի, այդ թվում վերաապահովագրության պայմանագրերի հաշվառումը իրականացնելու համար: Ստանդարտը պահանջում է, որ ապահովագրության պայմանագրերի խմբերը ճանաչվեն և չափվեն (i) ապագա դրամական միջոցների հոսքերի՝ ռիսկով ճշգրտված ներկա արժեքով (պայմանագրերի կատարման դրամական հոսքեր)՝ հաշվի առնելով պայմանագրերի կատարման դրամական հոսքերի վերաբերյալ առկա ողջ տեղեկատվությունը, որը համահունչ է դիտարկելի շուկայական տեղեկատվությանը, գումարած՝ (եթե արժեքը պարտավորություն է) կամ հանած՝ (եթե արժեքը ակտիվ է) (ii) պայմանագրերի խմբի չբաշխված շահույթի գումարը (պայմանագրերի ծառայության մարժա): Ապահովագրողները կարտացոլեն ապահովագրական պայմանագրերի մեկ խմբից ստացված շահույթը այն ժամանակահատվածում, որի ընթացքում դրանք ապահովվում են ծածկույթ և ազատվում են ռիսկից: Եթե պայմանագրերի խումբը հանդիսանում է կամ դառնում է ոչ շահույթաբեր, Ընկերությունը անմիջապես ճանաչում է վնաս:

**5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին (շարունակություն)**

**ՖՅՄՍ 17-ի և ՖՅՄՍ 4-ի փոփոխություններ (թողարկված են 2020թ. հունիսի 25-ին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):** Փոփոխությունները ներառում են մի շարք պարզաբանումներ՝ ՖՅՄՍ 17-ի ներդրման գործընթացը դյուրացնելու, ինչպես նաև ստանդարտի պահանջները և անցումային որոշակի դրույթները հստակեցնելու նպատակով: Փոփոխությունները վերաբերում են ՖՅՄՍ 17-ի ուժ ուղրտներին, և դրանք նախատեսված չեն ստանդարտի հիմնարար սկզբունքները փոխելու համար: ՖՅՄՍ 17-ում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

- *Ուժի մեջ մտնելու ամսաթիվ.* ՖՅՄՍ 17-ի (փոփոխություններով) ուժի մեջ մտնելու ամսաթիվը հետաձգվել է երկու տարով: Ստանդարտը պետք է կիրառվի 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: ՖՅՄՍ 4-ով սահմանված՝ ՖՅՄՍ 9-ի կիրառման ժամանակավոր արտոնությունը նույնպես հետաձգվել է մինչև 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջաններ:
- *Ապահովագրության ձեռքբերման դրամական հոսքերի ակնկալվող փոխհատուցում.* Կազմակերպություններից պահանջվում է իրենց ձեռքբերման ծախսերի մի մասը դասակարգել համապատասխան պայմանագրերին, որոնց համար ակնկալվում է երկարաձգում, և այդ ծախսերը ճանաչել որպես ակտիվներ, քանի դեռ կազմակերպությունը չի ճանաչել պայմանագրի երկարաձգման ժամկետը: Կազմակերպությունները պարտավոր են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատել ակտիվի վերականգնման հավանականությունը և կոնկրետ ակտիվների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնել ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:
- *Ներդրումային ծառայություններին վերագրվող պայմանագրային ծառայությունների մարժա.* Ծածկույթի տարրերը անհրաժեշտ է որոշել՝ հաշվի առնելով հատույցների ծավալը, ինչպես նաև ապահովագրական ծածկույթի և ներդրումային ծառայությունների ակնկալվող ժամկետը՝ փոփոխական վճարներ նախատեսող պայմանագրերի և այլ՝ ընդհանուր մոդելի ներքո ներդրումային եկամուտների ստացում նախատեսող ծառայությունների պայմանագրերի համար: Ներդրումային գործունեության գծով ծախսերը պետք է ներառվեն որպես դրամական միջոցների հոսքեր ապահովագրության պայմանագրի շրջանակներում, երբ կազմակերպությունը նման գործողությունները ձեռնարկում է ապահովագրողի համար ապահովագրության ծածկույթից ստացվող օգուտները մեծացնելու նպատակով:
- *Ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրեր. վնասների վերականգնում.* Երբ կազմակերպությունը վնաս է ճանաչում սկզբնական ճանաչման պահին հիմնական ապահովագրական պայմանագրերի անբարենպաստ խմբի գծով, կամ խմբում անբարենպաստ բազային ապահովագրության պայմանագրեր ներառելու արդյունքում, կազմակերպությունը պետք է ճշգրտի ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրերի համապատասխան խմբի պայմանագրային ծառայությունների գծով մարժան և ճանաչի այդ վերաապահովագրության պայմանագրերի գծով շահույթ: Վերաապահովագրության պայմանագրով վերականգնված վնասի չափը հաշվարկվում է՝ բազային ապահովագրության պայմանագրերով ճանաչված վնասը բազմապատկելով բազային ապահովագրության պայմանագրերի գծով պահանջների տոկոսին, որը կազմակերպությունն ակնկալում է վերականգնել ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրով: Այս պահանջը կկիրառվի միայն այն դեպքում, եթե ձեռք բերված վերաապահովագրության պայմանագիրը ճանաչվի նախքան բազային ապահովագրության պայմանագրերի գծով վնասի ճանաչումը, կամ վերջինիս հետ միաժամանակ:
- *Այլ փոփոխություններ.* Այլ փոփոխություններով նախատեսվում են գործողության շրջանակից բացառություններ վարկային քարտերի որոշ պայմանագրերի (կամ նմանատիպ պայմանագրերի) և որոշ վարկային պայմանագրերի համար: Սահմանվում է նաև ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ապահովագրության պայմանագրերով նախատեսված ակտիվների և պարտավորությունների ներկայացում պորտֆելներում՝ խմբերի փոխարեն: Նախատեսվում է ռիսկերի մեղմացման տարբերակի կիրառելիություն այն դեպքում, երբ ֆինանսական ռիսկերի մեղմացման նպատակով գործադրվում են ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրեր և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ոչ ածանցյալ ֆինանսական գործիքներ: Նախատեսվում է հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության հնարավորություն՝ ՖՅՄՍ 17-ի կիրառմամբ նախորդ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում արտացոլված հաշվապահական գնահատումներում փոփոխությունների համար:

**5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին (շարունակություն)**

Նախատեսվում է կոնկրետ ապահովագրողին վերագրվող շահութահարկի վճարների և մուտքերի ներառում պայմանագրերի կատարման դրամական հոսքերում, ըստ ապահովագրության պայմանագրի, ընտրված անցումային արտոնություններ և այլ աննշան փոփոխություններ:

**ՖՀՄՍ 17-ը կիրառող ապահովագրողների համար անցումային պահանջների կիրառման ընտրության հնարավորություն. Փոփոխություններ ՖՀՄՍ 17-ում (թողարկվել է 2021թ. դեկտեմբերի 9-ին և ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):** ՖՀՄՍ 17-ի անցումային պահանջների փոփոխությունը ապահովագրողներին հնարավորություն է տալիս բարելավելու ՖՀՄՍ 17-ի սկզբնական կիրառման վերաբերյալ տեղեկատվության օգտակարությունը ներդրողների համար: Փոփոխությունը վերաբերում է միայն ապահովագրողների կողմից ՖՀՄՍ 17-ին անցմանը և չի ազդում ՖՀՄՍ 17 -ի որևէ այլ պահանջի վրա: ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի անցումային պահանջները կիրառվում են տարբեր ամսաթվերով, և կհանգեցնեն դասակարգման հետևյալ միանգամյա տարբերություններին ՖՀՄՍ 17-ի սկզբնական կիրառման ժամանակ ներկայացված համեմատական տեղեկատվության մեջ. հաշվապահական հաշվառման անհամապատասխանություններ ապահովագրական պայմանագրի գծով ընթացիկ արժեքով չափվող պարտավորությունների և ամորտիզացված արժեքով չափվող որևէ հարակից ֆինանսական ակտիվների միջև, և եթե կազմակերպությունը որոշում է վերաներկայացնել ՖՀՄՍ 9-ի նպատակներով համեմատական տեղեկատվությունը, ապա՝ դասակարգման տարբերություններ համեմատական ժամանակաշրջանում ապաճանաչված ֆինանսական ակտիվների (որոնց նկատմամբ ՖՀՄՍ 9-ը չի կիրառվում) և այլ ֆինանսական ակտիվների (որոնց նկատմամբ ՖՀՄՍ 9-ը կիրառվում է) միջև: Փոփոխությունը կօգնի ապահովագրողներին խուսափել այդ ժամանակավոր հաշվապահական անհամապատասխանություններից և, հետևաբար, կբարելավի համեմատական տեղեկատվության օգտակարությունը ներդրողների համար: Դա տեղի է ունենում ապահովագրողներին ֆինանսական ակտիվների վերաբերյալ համեմատական տեղեկատվության ներկայացման տարբերակների հնարավորություն տրամադրելու միջոցով: ՖՀՄՍ 17-ի սկզբնական կիրառման ժամանակ կազմակերպություններին, համեմատական տեղեկատվության ներկայացման առումով թույլատրվում է կիրառել դասակարգման ծածկույթ այն ֆինանսական ակտիվի նկատմամբ, որի համար կազմակերպությունը չի վերաներկայացնում ՖՀՄՍ 9-ի նպատակով համեմատական տեղեկատվությունը: Անցումային տարբերակը հասանելի կլինի գործիք առ գործիք՝ թույլ տալով կազմակերպությանը ներկայացնել համեմատական տեղեկատվություն այնպես, ինչպես եթե ՖՀՄՍ 9-ի դասակարգման և չափման պահանջները կիրառվեին այդ ֆինանսական ակտիվի նկատմամբ, բայց չպահանջելով, որ կազմակերպությունը կիրառի ՖՀՄՍ 9-ի արժեքի մասնական պահանջները. և ֆինանսական ակտիվի նկատմամբ դասակարգման ծածկույթը կիրառող կազմակերպությունից կպահանջվի օգտագործել անցումային ամսաթվի դրությամբ հասանելի ողջամիտ և հիմնավոր տեղեկատվությունը՝ որոշելու, թե ինչպես է կազմակերպությունն ակնկալում դասակարգել այդ ֆինանսական ակտիվը ՖՀՄՍ 9 կիրառմամբ:

**Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ-ի գործնական ուղեցույց 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության գծով տեղեկատվության բացահայտում (թողարկվել է 2021թ. փետրվարի 12-ին և ուժի մեջ է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):** ՀՀՄՍ 1-ում տեղի են ունեցել փոփոխություններ, որոնցով կազմակերպություններից պահանջվում է բացահայտել իրենց հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթների փոխարեն: Փոփոխությունները պարունակում են հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվության սահմանումները: Բացի այդ, փոփոխությունները պարզաբանում են, որ հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին տեղեկատվությունը հավանական է, որ կհամարվի էական այն դեպքում, եթե առանց այդ տեղեկատվության, ֆինանսական հաշվետվությունների օգտագործողները չեն կարողանա ըմբռնել ֆինանսական հաշվետվություններում առկա այլ էական տեղեկատվությունը: Փոփոխությունները ներկայացնում են հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության օրինակներ, որոնք, հավանաբար, կարող են էական համարվել կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների գծով: Բացի այդ, ՀՀՄՍ 1-ի փոփոխությամբ պարզաբանվում է, որ ոչ էական հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտման անհրաժեշտություն չկա: Փոփոխությունները ներկայացնում են հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության օրինակներ, որոնք, հավանաբար, կարող են էական համարվել կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների գծով:

**5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին (շարունակություն)**

Բացի այդ, ՀՀՄՍ 1-ի փոփոխությամբ պարզաբանվում է, որ ոչ էական հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտման անհրաժեշտություն չկա: Այնուամենայնիվ, այդպիսի տեղեկատվության բացահայտման դեպքում, այն չպետք է դժվարացնի հաշվապահական հաշվառման քաղաքականության էական տեղեկատվության ընկալումը: Այս փոփոխությանն օժանդակելու համար փոփոխություններ են կատարվել նաև ՀՀՄՍ-ի գործնական ուղեցույց 2-ում՝ «Էականության վերաբերյալ դատողություններ», որը ուղեցույց է տրամադրում հաշվապահական հաշվառման քաղաքականության գծով բացահայտումների նկատմամբ էականության հայեցակարգի կիրառման վերաբերյալ:

**Փոփոխություններ ՀՀՄՍ 8-ում. Հաշվապահական հաշվառման գնահատումների որոշում (թողարկվել է 2021թ. փետրվարի 12-ին և ուժի մեջ է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):** ՀՀՄՍ 8-ի փոփոխությունը պարզաբանում է, թե ինչպես պետք է կազմակերպությունները տարբերակեն հաշվապահական հաշվառման քաղաքականության և հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունները:

**Միևնույն գործարքից առաջացած ակտիվների և պարտավորությունների գծով հետաձգված հարկ – Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում (թողարկվել է 2021թ. մայիսի 7-ին, ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):** ՀՀՄՍ 12-ի փոփոխությունները հստակեցնում են հետաձգված հարկի հաշվառման եղանակները այնպիսի գործարքների համար, ինչպիսիք են վարձակալությունը և ապագործարկման պարտավորությունները: Որոշակի հանգամանքներում կազմակերպություններն ազատվում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման դեպքում հետաձգված հարկի ճանաչումից: Նախկինում կար այս բացառության կիրառման անորոշություն որոշակի գործարքների նկատմամբ, ինչպիսիք են վարձակալությունը և ակտիվների շահագործումից հանելը, որոնց համար ճանաչվում էր ինչպես ակտիվ, այնպես էլ պարտավորություն: Փոփոխությունները պարզաբանում են, որ այս բացառությունը չի կիրառվում, և որ կազմակերպություններից պահանջվում է նման գործարքների գծով ճանաչել հետաձգված հարկ: Համաձայն այս փոփոխությունների, կազմակերպությունները պարտավոր են հետաձգված հարկ ճանաչել այն գործարքների համար, որոնց գծով սկզբնական ճանաչման ժամանակ առաջանում են հավասար մեծությամբ հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ:

**Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում Շահութահարկ. Միջազգային հարկային բարեփոխում – Երկրորդ բաղադրիչի մոդելային կանոններ (հրապարակված է 2023թ. մայիսի 23-ին):** 2023թ. մայիսին ՀՀՄՍ-ն հրապարակել է «Շահութահարկ» ՀՀՄՍ 12-ի նեղ շրջանակի փոփոխությունները: Այս փոփոխությունները կատարվել են Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից միջազգային հարկային բարեփոխումների արդյունքում հրապարակված Երկրորդ բաղադրիչի մոդելային կանոնների առաջիկայում սպասվող ներդրմանը նախապատրաստվելու համար: Փոփոխությունները ժամանակավոր բացառություն են սահմանում Երկրորդ բաղադրիչի մոդելային կանոնների կիրառումն ապահովելու համար ընդունված կամ ըստ էության ընդունված հարկային օրենքներից բխող հետաձգված հարկերի ճանաչման և բացահայտման պահանջի գծով: Համաձայն ՀՀՄՍ-ի կողմից սահմանված՝ ուժի մեջ մտնելու ամսաթվի, ընկերությունները կարող են բացառությունը կիրառել անմիջապես, սակայն բացահայտման պահանջները կկիրառվեն 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

Փոփոխությունների կիրառումը էական ազդեցություն չի ունեցել իմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

## **6 Լոր ստանդարտներ և մեկնաբանություններ**

Հրապարակվել են 2024թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո տարեկան ժամանակահատվածների համար պարտադիր մի շարք Լոր ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնց վաղ կիրառում չի իրականացվել Ընկերության կողմից:

**Փոփոխություններ ՖՀՄՍ 16-ում Վարձակալություն. Վարձակալության պարտավորություն վաճառքի և հետադարձ վարձակալության ժամանակ (թողարկվել է 2022թ. սեպտեմբերի 22-ին և ուժի մեջ է մտնում 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):** Փոփոխությունները վերաբերում են վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքներին, որոնք բավարարում են ՖՀՄՍ 15-ի պահանջները՝ վաճառք հաշվառվելու համար: Փոփոխությունները պահանջում են, որ վաճառող-վարձակալը հետագայում չափի գործարքից բխող պարտավորությունները այն կերպ, որ չճանաչի իր կողմից պահպանված օգտագործման իրավունքի հետ կապված որևէ շահույթ կամ վնաս: Սա նշանակում է նման շահույթի հետաձգում, նույնիսկ եթե պարտավորության եռթյունը կայանում է փոփոխական վճարումներում, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույթաչափից: Խուճբը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

**Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների դասակարգումը – ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ (ի սկզբանե թողարկվել է 2020թ. հունվարի 23-ին և հետագայում թողարկման ամսաթիվը փոփոխվել է 2020թ. հուլիսի 15-ին և 2022թ. հոկտեմբերի 31-ին, ուժի մեջ է մտնում 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):** Այս փոփոխություններով հստակեցվում է, որ պարտավորությունների՝ որպես կարճաժամկետ կամ երկարաժամկետ դասակարգումը պայմանավորված է հաշվետու ժամանակաշրջանի վերջում գոյություն ունեցող իրավունքներով: Պարտավորությունները երկարաժամկետ են, եթե կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ըստ եռթյան ունի դրանց մարումն առնվազն 12 ամսով հետաձգելու իրավունք: Ուղեցույցն այլևս չի սահմանում այդ իրավունքի անվերապահ լինելու պահանջ: 2022թ. հոկտեմբերի փոփոխությունը սահմանեց, որ վարկային պայմանագրերը, որոնք պետք է կատարվեն հաշվետու ամսաթվից հետո, չեն ազդում հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքի՝ որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգման վրա: Մարումը ապագայում հետաձգելու իրավունքի իրացման առումով ղեկավարության ակնկալիքները ազդեցություն չունեն պարտավորությունների դասակարգման վրա: Պարտավորությունը դասակարգվում է որպես կարճաժամկետ, եթե պայմանը խախտվել է հաշվետու ամսաթվի դրությամբ կամ դրանից առաջ, նույնիսկ եթե հաշվետու ժամանակաշրջանի վերջում պարտատիրոջից ստացվել է պայմանի կատարման պարտավորությունից ազատում: Միևնույն ժամանակ, վարկը դասակարգվում է որպես երկարաժամկետ, եթե վարկային պայմանագրի պայմանը խախտվում է միայն հաշվետու ամսաթվից հետո: Բացի այդ, փոփոխությունները հստակեցնում են պարտքի դասակարգման պահանջները, որոնք կազմակերպությունը կարող է մարել՝ այն սեփական կապիտալի վերածելու միջոցով: «Մարում» հասկացությունը սահմանվում է որպես պարտավորության դադարեցում՝ դրամական միջոցների, տնտեսական օգուտները մարմանավորող այլ ռեսուրսների կամ կազմակերպության սեփական բաժնային գործիքների միջոցով կատարված վերջնահաշվարկի արդյունքում: Բացառություն է սահմանվում փոխարկելի գործիքների համար, որոնք կարող են վերածվել սեփական կապիտալի, բայց միայն այն գործիքների համար, երբ փոխարկման օպցիոնը դասակարգվում է որպես բարդ ֆինանսական գործիքի առանձին բաղադրիչ հանդիսացող բաժնային գործիք: Խուճբը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

**Փոփոխություններ ՀՀՄՍ 7-ում «Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն» և ՖՀՄՍ 7-ում «Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ. Մատակարարների ֆինանսական պայմանագրեր» (թողարկվել է 2023թ. մայիսի 25-ին):** Ի պատասխան ֆինանսավորման պայմանագրերի ոչ համարժեք կամ ապակողմնորոշիչ բացահայտման վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների մտահոգություններին, 2023թ. մայիսին ՀՀՄՍ-ն փոփոխություններ է կատարել ՀՀՄՍ 7-ում և ՖՀՄՍ 7-ում՝ պահանջելով բացահայտել կազմակերպության մատակարարների ֆինանսական պայմանագրերը (ՄՖՊ): Այս փոփոխություններով պահանջվում է, որպեսզի կազմակերպությունը բացահայտի մատակարարների այն ֆինանսական պայմանագրերը, որոնք ֆինանսական հաշվետվություններ օգտագործողներին հնարավորություն կտան գնահատել այդ պայմանագրերի ազդեցությունը կազմակերպության պարտավորությունների և դրամական միջոցների հոսքերի վրա և կազմակերպության իրացվելիության ռիսկի վրա:

**6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)**

Լրացուցիչ բացահայտման պահանջների նպատակն է բարձրացնել մատակարարների ֆինանսական պայմանագրերի թափանցիկությունը: Փոփոխությունները չեն ազդում ճանաչման կամ չափման սկզբունքների վրա, այլ միայն բացահայտման պահանջների վրա: Բացահայտման նոր պահանջները կգործեն 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Խումբը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

**ՖՀՄՍ 14 «Կարգավորող հետաձգված հաշիվներ» (թողարկվել է 2014թ. հունվարի 30-ին և ուժի մեջ է 2016թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):** ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտները առաջին անգամ կիրառող կազմակերպություններին ՖՀՄՍ 14-ը հնարավորություն է ընձեռում շարունակել դրույթաչափերի կարգավորման հետ կապված գումարների ճանաչումը իրենց նախորդ հաշվապահական հաշվառման ստանդարտի պահանջների համաձայն: Այնուամենայնիվ, ՖՀՄՍ Հաշվապահական հաշվառման ստանդարտներն արդեն կիրառող և այդ գումարները չճանաչող կազմակերպությունների հետ համադրելիությունը մեծացնելու նպատակով, ստանդարտը պահանջում է դրույթաչափերի կարգավորման ազդեցությունը ներկայացնել այլ հոդվածներից առանձին: Այն կազմակերպությունը, որն իր ֆինանսական հաշվետվությունները արդեն ներկայացնում է ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն, իրավասու չէ կիրառել ստանդարտը:

**«Ակտիվների վաճառք կամ հատկացում ներդրողի և ասոցիացված կազմակերպությունների կամ համատեղ ձեռնարկումների միջև» - փոփոխություններ ՖՀՄՍ 10-ում և ՀՀՄՍ 28-ում (թողարկված են 2014թ. սեպտեմբերի 11-ին, և ուժի մեջ են մտնում ՀՀՄՍ-ի կողմից որոշվելիք ամսաթվին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):** Այս փոփոխությունները վերաբերում են ներդրողի և իր ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկումների միջև ակտիվների վաճառքին կամ հատկացմանը վերաբերող՝ ՖՀՄՍ 10-ի և ՀՀՄՍ 28-ի պահանջների միջև գոյություն ունեցող անհամապատասխանությանը: Փոփոխությունների կիրառման հիմնական հետևանքն այն է, որ շահույթը կամ վնասը ճանաչվում է ամբողջությամբ այն դեպքում, երբ գործարքը առնչվում է ձեռնարկատիրական գործունեությանը: Շահույթը կամ վնասը ճանաչվում է մասնակիորեն այն դեպքում, երբ ակտիվը չի առնչվում ձեռնարկատիրական գործունեությանը, նույնիսկ եթե այդ ակտիվները պատկանում են դուստր կազմակերպությանը: Խումբը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

**Փոփոխություններ ՀՀՄՍ 21-ում «Փոխանակելիության բացակայություն» (թողարկվել է 2023թ. օգոստոսի 15-ին):** 2023թ. օգոստոսին ՀՀՄՍ-ն փոփոխություններ է կատարել ՀՀՄՍ 21-ում, որը նպատակ ունի օգնել կազմակերպություններին գնահատելու երկու արժույթների միջև փոխանակելիությունը և որոշել սփոթ փոխարժեքն այն դեպքում, երբ փոխանակելիություն առկա չէ: Փոփոխությունները ազդում են կազմակերպության վրա այն ժամանակ, երբ ընկերությունն ունի գործարք կամ գործառնություն արտարժույթով, որը չափման ամսաթվին որոշակի նպատակով չի կարող փոխանակվել այլ արժույթի: ՀՀՄՍ 21-ի փոփոխությունները չեն ներկայացնում սփոթ փոխարժեքը գնահատելու վերաբերյալ մանրամասն պահանջներ: Փոխարենը, սահմանվում է շրջանակ, որի համաձայն կազմակերպությունը կարող է որոշել սփոթ փոխարժեքը գնահատման ամսաթվի դրությամբ: Նոր պահանջները կիրառելիս չի թույլատրվում համեմատական տեղեկատվության վերաներկայացում: Անհրաժեշտ է ազդեցության ենթարկվող գումարները փոխարկել սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ գնահատված սփոթ փոխարժեքներով՝ չբաշխված շահույթի կամ կուտակային փոխարժեքային տարբերությունների պահուստի ճշգրտմամբ: Չի ակնկալվում, որ փոփոխությունները որևէ էական ազդեցություն կունենան խմբի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Բացառությամբ վերը նշված դեպքերի, չի ակնկալվում, որ սույն նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները որևէ էական ազդեցություն կունենան խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ**

**Համախմբված ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ  
առ 31 դեկտեմբերի 2023թ.**

**7 Հիմնական միջոցներ**

Հազ. ՀՀ դրամ	Հոդ և շենքեր	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Հարմարանքներ և կցամասեր	Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր	Անավարտ շինարարություն	Ընդամենը
Սկզբնական արժեքն առ 1 հունվարի 2022թ. Կուտակված մաշվածություն	2,142,786 (249,853)	367,084 (289,496)	395,290 (195,741)	1,186,630 (836,327)	102,329 (52,983)	5,502 -	4,199,621 (1,624,400)
<b>Հաշվեկշռային արժեքն առ 1 հունվարի 2022թ.</b>	<b>1,892,933</b>	<b>77,588</b>	<b>199,549</b>	<b>350,303</b>	<b>49,346</b>	<b>5,502</b>	<b>2,575,221</b>
Ավելացումներ	25,463	14,833	66,249	99,080	15,454	57,594	278,673
Վերադասակարգումներ	33,108	2,531	8,266	18,569	622	(63,096)	-
Վերադասակարգում ներդրումային գույքից (Ծան. 8)	95,847	-	-	-	-	-	95,847
Օտարումներ	-	-	(3,867)	(1,543)	-	-	(5,410)
Մաշվածության գծով ծախս	(36,815)	(21,808)	(42,956)	(92,559)	(12,471)	-	(206,609)
<b>Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2022թ.</b>	<b>2,010,536</b>	<b>73,144</b>	<b>227,241</b>	<b>373,850</b>	<b>52,951</b>	<b>-</b>	<b>2,737,722</b>
Սկզբնական արժեքը առ 31 դեկտեմբերի 2023թ. Կուտակված մաշվածություն	2,297,204 (286,668)	384,448 (311,304)	465,938 (238,697)	1,302,736 (928,886)	118,405 (65,454)	- -	4,568,731 (1,831,009)
<b>Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2022թ.</b>	<b>2,010,536</b>	<b>73,144</b>	<b>227,241</b>	<b>373,850</b>	<b>52,951</b>	<b>-</b>	<b>2,737,722</b>
Ավելացումներ	106,441	37,372	82,750	163,856	22,029	-	412,448
Վերադասակարգում ներդրումային գույքից (Ծան. 8)	17,847	-	-	-	-	-	17,847
Օտարումներ	-	-	(2,625)	(6,905)	-	-	(9,530)
Մաշվածության գծով ծախս	(40,600)	(32,053)	(50,915)	(122,461)	(14,159)	-	(260,188)
<b>Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2023թ.</b>	<b>2,094,224</b>	<b>78,463</b>	<b>256,451</b>	<b>408,340</b>	<b>60,821</b>	<b>-</b>	<b>2,898,299</b>
Սկզբնական արժեքը առ 31 դեկտեմբերի 2023թ. Կուտակված մաշվածություն	2,421,492 (327,268)	421,820 (343,357)	546,063 (289,612)	1,459,687 (1,051,347)	140,434 (79,613)	- -	4,989,496 (2,091,197)
<b>Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2023թ.</b>	<b>2,094,224</b>	<b>78,463</b>	<b>256,451</b>	<b>408,340</b>	<b>60,821</b>	<b>-</b>	<b>2,898,299</b>

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ**

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ  
առ 31 դեկտեմբերի 2023թ.**

**7 Հիմնական միջոցներ (շարունակություն)**

Մաշվածության գծով ծախսը՝ 176,893 հազ. ՀՀ դրամ (2022թ.՝ 182,403 հազ. ՀՀ դրամ) վերագրվել է վաճառքի և բաշխման ծախսերին (Ծանոթագրություն 18), 50,056 հազ. ՀՀ դրամ (2022թ.՝ 6,988 հազ. ՀՀ դրամ)՝ վարչական ծախսերին (Ծանոթագրություն 18) և 33,239 հազ. ՀՀ դրամ (2022թ.՝ 31,038 հազ. ՀՀ դրամ)՝ վաճառքի ինքնարժեքին:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ որպես վարկերի և փոխառությունների ապահովվածության միջոց գրավադրվել է 1,409,828 հազ. ՀՀ դրամ (2022թ.՝ 854,956 հազ. ՀՀ դրամ) հաշվեկշռային արժեքով հիմնական միջոց (Ծանոթագրություն 14):

2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար խմբի ղեկավարությունը չի բացահայտել արժեզրկման որևէ հայտանիշ:

Կան ամբողջությամբ մաշված հիմնական միջոցների միավորներ, որոնք դեռևս օգտագործվում են խմբի կողմից:

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2023թ.</b>	<b>2022թ.</b>
<b>Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի</b>		
Հարմարանքներ և կցամասեր	781,998	819,476
Տրանսպորտային միջոցներ	21,085	26,357
Մեքենաներ և սարքավորումներ	12,811	10,510
<b>Ընդամենը</b>	<b>815,894</b>	<b>856,343</b>

**8 Ներդրումային գույք**

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2023թ.</b>	<b>2022թ.</b>
<b>Հաշվեկշռային արժեքն առ 1 հունվարի</b>	<b>159,298</b>	<b>258,395</b>
Վերադասակարգում հիմնական միջոցների (Ծան. 7)	(17,847)	(95,847)
Մաշվածության գծով ծախս	(2,860)	(3,250)
<b>Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի</b>	<b>138,591</b>	<b>159,298</b>

Ներդրումային գույքը բաղկացած է կոմերցիոն գույքից, որը վարձակալությամբ տրված է երրորդ անձանց, որպես գրասենյակային տարածք:

2023թ. դեկտեմբերի 31-ին և 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում խումբը վերանայել է իր գույքի մի մասի օգտագործման եղանակը՝ վարձակալվող գույքից սեփական օգտագործման գույքի, հետևաբար, ներդրումային գույքի արժեքի համապատասխան մասը վերադասակարգվել է որպես հիմնական միջոցներ:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ որպես վարկերի և փոխառությունների ապահովվածության միջոց գրավադրվել է 138,591 հազ. ՀՀ դրամ (2022թ.՝ 159,298 հազ. ՀՀ դրամ) հաշվեկշռային արժեքով ներդրումային գույք (Ծանոթագրություն 14):

Ըստ ղեկավարության գնահատման, հաշվետու ամսաթվի դրությամբ ներդրումային գույքի իրական արժեքը մոտ է դրա հաշվեկշռային արժեքին: Ներդրումային գույքի իրական արժեքի որոշումը իրական արժեքի հիերարխիայում դասակարգվում է 3-րդ մակարդակով:

Ներդրումային գույքի վարձակալությունից եկամուտը կազմել է 5,973 հազ. ՀՀ դրամ (2022թ.՝ 8,625 հազ. ՀՀ դրամ):

Շահույթում կամ վնասում ճանաչված ուղղակի գործառնական ծախսումները, որոնք վերաբերում են վարձակալական եկամուտ ստեղծող ներդրումային գույքին, Էական չեն եղել (2022թ.՝ Էական չեն եղել):

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ**

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ  
առ 31 դեկտեմբերի 2023թ.**

**9 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ**

Խուճրը վարձակալում է տարբեր տարածքներ և տրանսպորտային միջոցներ: Վարձակալության պայմանագրերը սովորաբար կնքվում են 3-ից 8 տարի ժամկետով, բայց կարող են ունենալ երկարաձգման հնարավորություն:

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>Ընդամենը</b>
<b>Հաշվեկշռային արժեքն առ 1 հունվարի 2022թ.</b>	<b>1,709,372</b>
Ավելացումներ	868,741
Օտարումներ	(53,167)
Մաշվածության գծով ծախս	(727,279)
<b>Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2022թ.</b>	<b>1,797,667</b>
Ավելացումներ	686,895
Օտարումներ	(51,350)
Մաշվածության գծով ծախս	(845,187)
<b>Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2023թ.</b>	<b>1,588,025</b>

2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար ԽՄԲԻ ղեկավարությունը չի բացահայտել արժեզրկման որևէ հայտանիշ:

Խուճրը ճանաչում է վարձակալության գծով պարտավորությունները հետևյալ կերպ.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2023թ.</b>	<b>2022թ.</b>
Վարձակալության գծով կարճաժամկետ պարտավորություններ	525,765	729,318
Վարձակալության գծով երկարաժամկետ պարտավորություններ	1,160,165	1,176,141
<b>Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ</b>	<b>1,685,930</b>	<b>1,905,459</b>

2023թ. ֆինանսական ծախսերում ներառված տոկոսային ծախսերը կազմել են 152,892 հազ. ՀՀ դրամ (2022թ.՝ 147,568 հազ. ՀՀ դրամ):

Կարճաժամկետ վարձակալության գծով ծախսերը (ներառված վաճառքի և տարածման ծախսերում).

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2023թ.</b>	<b>2022թ.</b>
Կարճաժամկետ վարձակալության հետ կապված ծախսեր	14,876	20,902

2023թ. ընթացքում վարձակալության դիմաց կատարված վճարումների ընդհանուր գումարը կազմել է 962,675 հազ. ՀՀ դրամ (2022թ.՝ 875,416 հազ. ՀՀ դրամ):

Վարձակալության պայմանագրերը բացի ապահովության տոկոսներից, այլ պարտավորություններ չեն սահմանում վարձատուի մոտ պահվող վարձակալված ակտիվների գծով: Վարձակալված ակտիվները չեն կարող օգտագործվել որպես փոխառության դիմաց գրավի միջոց:

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ****Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ  
առ 31 դեկտեմբերի 2023թ.****10 Պաշարներ**

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2023թ.</b>	<b>2022թ.</b>
Վերավաճառքի համար նախատեսված ապրանքներ	8,063,548	7,591,064
Այլ	130,150	110,341
<b>Ընդամենը պաշարներ</b>	<b>8,193,698</b>	<b>7,701,405</b>

Վաճառքի ինքնարժեքը ներկայացնող ժամանակաշրջանում որպես ծախս ճանաչված պաշարների ինքնարժեքը կազմել է 25,404,479 հազ. ՀՀ դրամ (2022թ.՝ 24,238,419 հազ. ՀՀ դրամ):

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ որպես վարկերի և փոխառությունների ապահովվածության միջոց գրավադրվել է 1,000,000 հազ. ՀՀ դրամ (2022թ.՝ 1,000,000 հազ. ՀՀ դրամ) արժեքով շրջանառվող պաշար (Ծանոթագրություն 14):

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 7,500 հազ ՀՀ դրամ արժողությամբ պաշարները գնահատվել են զուտ իրացման արժեքով (2022թ.՝ զրո):

**11 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր**

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2023թ.</b>	<b>2022թ.</b>
Առևտրային դեբիտորական պարտքեր	2,411,392	1,852,875
Այլ ֆինանսական դեբիտորական պարտքեր	94,968	128,113
Հանած՝ պարտքային կորուստի գծով պահուստ	(182,279)	(218,590)
<b>Ընդամենը ֆինանսական ակտիվներ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի կազմում</b>	<b>2,324,081</b>	<b>1,762,398</b>
Վերականգնման ելթակա ԱԱՀ	13,352	1,951
Տրված կանխավճարներ	685,854	594,204
Հարկային կանխավճարներ	21,001	5,349
Այլ	5,660	7,032
<b>Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր առ 31 դեկտեմբերի</b>	<b>3,049,948</b>	<b>2,370,934</b>

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման համար խումբն օգտագործում է ՖՀՄՍ 9-ով նախատեսված պարզեցված մոտեցումը, համաձայն որի օգտագործվում է բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների համար գնահատված պահուստը ամբողջ ժամկետի համար:

Ակնկալվող պարտքային կորուստների չափման համար առևտրային դեբիտորական պարտքերը խմբավորվել են՝ ելնելով ընդհանուր պարտքային ռիսկի բնութագրերից և ժամկետանց օրերի քանակից:

Ակնկալվող կորուստի դրույքաչափերի համար հիմք են ծառայում յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին նախորդող 36-ամսյա ժամանակահատվածում հաճախորդների վճարման օրինաչափությունները և այդ ժամանակահատվածում համապատասխան վարկային կորուստների պատմական տվյալները: Կորուստների պատմական տվյալները ճշգրտվում են՝ արտացոլելու համար ընթացիկ և կանխատեսումային տեղեկատվությունը մակրոտնտեսական գործոնների վերաբերյալ, որոնք ազդում են հաճախորդների դեբիտորական պարտքերի մարման կարողության վրա:

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ**

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ  
առ 31 դեկտեմբերի 2023թ.**

**11 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (շարունակություն)**

Առևտրային դեբիտորական պարտքերի համար պարտքային կորստի պահուստը որոշվում է ստորև բերված աղյուսակում ներկայացված պահուստի ժամկետայնության հաշվարկի միջոցով: Պահուստի ժամկետայնության հաշվարկը հիմնված է ակտիվի մարման ժամկետանց օրերի քանակի վրա՝ ճշգրտված հաճախորդների դեբիտորական պարտքերի մարման կարողության վրա ազդեցություն ունեցող մակրոտնտեսական գործոնների վերաբերյալ ընթացիկ և կանխատեսումային տեղեկատվությամբ:

Համախառն գումարի նկատմամբ %-ային արտահայտությամբ (հազ. ՀՀ դրամ)	31 դեկտեմբերի 2023թ.			
	Կորստի դրույթաչափ	Համախառն հաշվեկշռային արժեք	ԱՊԿ ամբողջ ժամկետի համար	Չուս հաշվեկշռային արժեք
<b>Առևտրային դեբիտորական պարտքեր</b>				
- ընթացիկ	1.51%	1,526,245	23,039	1,503,206
- Մինչև 30 օր ժամկետանց	5.27%	449,490	23,667	425,824
- 31-60 օր ժամկետանց	12.35%	217,090	26,801	190,289
- 61-90 օր ժամկետանց	18.86%	67,593	12,748	54,846
- 91-120 օր ժամկետանց	31.26%	36,323	11,353	24,970
- 121-ից 150 օր ժամկետանց	50.26%	11,729	5,895	5,835
- 151-ից 180 օր ժամկետանց	76.84%	6,290	4,833	1,457
- 181-ից 211 օր ժամկետանց	75.00%	1,014	760	253
- ավելի քան 211 օր ժամկետանց	76.54%	95,618	73,183	22,433
<b>Ընդամենը</b>	<b>7.56%</b>	<b>2,411,392</b>	<b>182,279</b>	<b>2,229,113</b>

Համախառն գումարի նկատմամբ %-ային արտահայտությամբ (հազ. ՀՀ դրամ)	31 դեկտեմբերի 2022թ.			
	Կորստի դրույթաչափ	Համախառն հաշվեկշռային արժեք	ԱՊԿ ամբողջ ժամկետի համար	Չուս հաշվեկշռային արժեք
<b>Առևտրային դեբիտորական պարտքեր</b>				
- ընթացիկ	1.54%	1,132,384	17,462	1,114,922
- Մինչև 30 օր ժամկետանց	3.13%	341,924	10,711	331,213
- 31-60 օր ժամկետանց	9.44%	68,631	6,480	62,152
- 61-90 օր ժամկետանց	15.97%	42,747	6,828	35,919
- 91-120 օր ժամկետանց	23.06%	15,523	3,579	11,944
- 121-ից 150 օր ժամկետանց	25.59%	21,494	5,501	15,993
- 151-ից 180 օր ժամկետանց	46.23%	9,164	4,236	4,928
- 181-ից 211 օր ժամկետանց	68.24%	48,787	33,294	15,493
- ավելի քան 211 օր ժամկետանց	75.77%	172,221	130,499	41,721
<b>Ընդամենը</b>	<b>11.80%</b>	<b>1,852,875</b>	<b>218,590</b>	<b>1,634,285</b>

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է առևտրային դեբիտորական պարտքերի համար ձևավորված պարտքային կորստի պահուստի շարժը ըստ ակնկալվող պարտքային կորստի պարզեցված մոդելի, տարեկան ժամանակահատվածի սկզբից մինչև վերջ ընկած ժամանակահատվածի համար:

Հազ. ՀՀ դրամ	2023թ.	2022թ.
<b>Արժեզրկման կորուստի գծով պահուստ առ 1 հունվարի,</b>	<b>218,590</b>	<b>125,267</b>
Տարվա ընթացքում կատարված դուրսգրումներ	(39,087)	-
Տարվա ընթացքում պահուստի ավելացում	2,776	93,323
<b>Արժեզրկման կորուստի պահուստ առ 31 դեկտեմբերի</b>	<b>182,279</b>	<b>218,590</b>

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ****Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ  
առ 31 դեկտեմբերի 2023թ.****12 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2023թ.</b>	<b>2022թ.</b>
Ցպահանջ բանկային մնացորդներ	51,898	799,733
Դրամական միջոցներ դրամարկղում	126,702	132,035
Դրամական միջոցներ ճանապարհին	130,216	99,433
<b>Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ առ 31 դեկտեմբերի</b>	<b>308,816</b>	<b>1,031,201</b>

Դրամական միջոցները դրամարկղում ներկայացնում են հաշվետու ամսաթվի դրությամբ խմբի դեդատների ցանցում և գլխավոր գրասենյակում պահվող դրամական միջոցները:

Ստորև աղյուսակը բացահայտում է ցպահանջ բանկային մնացորդների վարկային դրակը՝ հիմնված վարկային ռիսկի վարկանշման վրա առ 31 դեկտեմբերի 2023թ. և 31 դեկտեմբերի 2022թ..

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2023թ.</b>	<b>2022թ.</b>
B1 (Moody's)	5,517	23,772
B2 (Moody's)	43,738	774,591
Ba3 (Moody's)	2,643	1,067
Չվարկանշված	-	303
<b>Ընդամենը ցպահանջ բանկային մնացորդներ</b>	<b>51,898</b>	<b>799,733</b>

**13 Կանոնադրական կապիտալ**

2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետոմսերի ընդհանուր հաստատված թիվը կազմել է 932,407 բաժնետոմս (2022թ.՝ 932,407 բաժնետոմս)՝ մեկ բաժնետոմսի համար 1.32 ՀՀ դրամ անվանական արժեքով (2022թ.՝ 1.32 ՀՀ դրամ մեկ բաժնետոմսի համար): Բոլոր թողարկված սովորական բաժնետոմսերը ամբողջությամբ վճարված են:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժիններ և քվեարկել խմբի ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

Համաձայն ՀՀ օրենսդրության, խմբի բաշխման ենթակա պահուստային միջոցները սահմանափակվում են չբաշխված շահույթի մնացորդով, որն արտացոլված է խմբի՝ համախմբված ֆինանսական հաշվետվություններում, որոնք պատրաստվում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան:

2023թ. Խումբը հայտարարագրել է 1,263,000 հազար դրամի շաբաբաժիններ, ներառյալ հարկերը՝ 18,225 հազ. ՀՀ դրամ, կամ 1.35 հազ. դրամ մեկ բաժնետոմսի դիմաց (2022թ.՝ 900,000 հազ. ՀՀ դրամ կամ 0.97 հազ. ՀՀ դրամ մեկ բաժնետոմսի դիմաց ):

**14 Վարկեր և փոխառություններ**

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2023թ.</b>	<b>2022թ.</b>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>		
Գրավով ապահովված բանկային վարկեր	51,494	332,417
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>		
Գրավով ապահովված բանկային վարկեր	429,293	238,700
<b>Ընդամենը փոխառություններ</b>	<b>480,787</b>	<b>571,117</b>

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ**

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ  
առ 31 դեկտեմբերի 2023թ.**

**14 Վարկեր և փոխառություններ (շարունակություն )**

Չմարված վարկերի ժամկետները ներկայացված են ստորև.

Արժույթ	Անվանական տոկոսադրույք	Մարման տարեթիվ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
ՀՀ դրամ	11.35% (սուբսիդավորված)	2025թ.	221,249	332,417
ՀՀ դրամ	11.5% (սուբսիդավորված)	2023թ.	-	238,700
ՀՀ դրամ	8.00%	2024թ.	259,538	-
ՀՀ դրամ	8.50%	2023թ.	-	-
<b>Ընդամենը փոխառություններ</b>			<b>480,787</b>	<b>571,117</b>

2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ խումբն ունեցել է Հայաստանի Հանրապետության կողմից սուբսիդավորված վարկեր: Այս վարկերը խմբի համար որևէ պահանջներ կամ պայմաններ չեն առաջացրել: Սուբսիդավորման շնորհիվ խմբի համար վարկերի փաստացի տոկոսադրույքը զրո է, և խումբը որևէ տոկոս չի վճարել:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տեղական բանկերի վարկերի գծով որպես ապահովման միջոց գրավադրվել է 1,548,419 հազ. ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,113,352 հազ. ՀՀ դրամ) հաշվեկշռային արժեքով գույք:

Խումբն ունի մի շարք վարկային գծերի պայմանագրեր տեղական բանկերի հետ և սկսել է ավելի ակտիվորեն օգտագործել այդ վարկային գծերը՝ իր դրամական միջոցների և գործառնությունների կառավարման գործընթացների շրջանակում: Վարկային գծերը հիմնականում կարճաժամկետ են՝ երկարաձգման կամ վերանայման հնարավորությամբ: Հաշվետու ամսաթվի դրությամբ չօգտագործված վարկային գծի ընդհանուր գումարը կազմել է 740,462 հազ. ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ին՝ 1,000,000 հազ. ՀՀ դրամ):

Տարվա ընթացքում վարկերից և փոխառություններից առաջացած տոկոսային ծախսերը կազմել են 40,594 հազ. ՀՀ դրամ (2022թ.՝ 40,594 հազ. ՀՀ դրամ): Տարվա ընթացքում սուբսիդավորված վարկերի և փոխառությունների գծով ստացված դրամաշնորհային եկամուտը կազմել է 34,036 հազ. ՀՀ դրամ (2022թ.՝ 76,375 հազ. ՀՀ դրամ):

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ**

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ  
առ 31 դեկտեմբերի 2023թ.**

**15 Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորությունների համեմատություն**

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական գործունեությունից բխող պարտավորությունների և ֆինանսական գործունեությունից բխող՝ ընկերության պարտավորությունների շարժի վերլուծությունը ներկայացված ժամանակաշրջաններից յուրաքանչյուրի համար: Սրանք այն պարտավորություններն են, որոնք դրամական միջոցների հոսքերի հաշվետվությունում ներկայացվում են որպես ֆինանսական պարտավորություններ:

	31 դեկտեմբերի 2023թ.			31 դեկտեմբերի 2022թ.		
	Վարկեր և փոխառություններ	Վարձակալության գծով պարտավորություններ	Ընդամենը	Վարկեր և փոխառություններ	Վարձակալության գծով պարտավորություններ	Ընդամենը
<i>Հազ. ՀՀ դրամ</i>						
<b>Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորություններ առ 1 հունվարի</b>	<b>571,117</b>	<b>1,905,459</b>	<b>2,476,576</b>	<b>1,059,239</b>	<b>1,817,733</b>	<b>2,876,972</b>
<b>Դրամական միջոցների հոսքեր</b>						
Չուտ ստացված / (վճարված) դրամական միջոցների հոսքեր	(90,877)	(809,683)	<b>(900,560)</b>	(487,556)	(727,848)	<b>(1,215,404)</b>
Տոկոսավճարներ	7,189	(152,892)	<b>(145,703)</b>	(3,429)	(143,105)	<b>(146,534)</b>
<b>Ոչ դրամական փոփոխություններ</b>						
Տոկոսային ծախս	(6,642)	152,892	<b>146,250</b>	2,863	147,568	<b>150,431</b>
Ավելացումներ	-	590,154	<b>590,154</b>	-	811,112	<b>811,112</b>
<b>Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորություններ առ 31 դեկտեմբերի</b>	<b>480,787</b>	<b>1,685,930</b>	<b>2,166,717</b>	<b>571,117</b>	<b>1,905,459</b>	<b>2,476,576</b>

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ**

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2023թ.**

**16 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր**

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2023թ.</b>	<b>2022թ.</b>
Առևտրային կրեդիտորական պարտքեր	2,707,612	2,866,369
Այլ կրեդիտորական պարտքեր	65,653	44,611
<b>Ընդամենը ֆինանսական կրեդիտորական պարտք առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի կազմում</b>	<b>2,773,265</b>	<b>2,910,980</b>
Հարկեր, բացի շահութահարկից	255,474	242,126
Աշխատավարձի գծով կրեդիտորական պարտքեր	402,194	366,952
Ստացված կանխավճարներ	6,639	30,603
<b>Ընդամենը այլ կրեդիտորական պարտքեր</b>	<b>664,307</b>	<b>639,681</b>
<b>Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր առ 31 դեկտեմբերի</b>	<b>3,437,572</b>	<b>3,550,661</b>

**17 Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ**

Խումբը եկամուտ է ստանում որոշակի ժամանակային կետում ապրանքների փոխանցումից՝

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2023թ.</b>	<b>2022թ.</b>
<i>Ապրանքների վաճառք</i>		
Մանրածախ	15,179,800	14,322,135
Մեծածախ	18,336,915	16,985,385
<b>Ընդամենը հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ</b>	<b>33,516,715</b>	<b>31,307,520</b>

**18 Եկամուտները և ծախսերը ըստ բնույթի**

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2023թ.</b>	<b>2022թ.</b>
Աշխատավարձեր և աշխատանքի վարձատրության այլ վճարումներ	2,767,805	2,353,647
Մաշվածություն և ամորտիզացիա	1,028,294	909,682
Կոմունալ ծառայություններ և կապ	132,135	125,836
Տրանսպորտ	122,594	119,489
Տնտեսական ծախսեր	88,910	72,515
Մարկետինգ և գովազդ	72,806	60,768
Բանկային սպասարկման վճարներ	77,917	52,174
Սպասարկման ծախսեր	37,326	36,208
Կարճաժամկետ վարձակալության գծով ծախսեր	25,324	28,919
Գրասենյակային ծախսեր	8,400	6,421
Այլ	124,188	87,606
<b>Ընդամենը վաճառքի և բաշխման ծախսեր</b>	<b>4,485,699</b>	<b>3,853,265</b>

Անձնակազմի գծով ծախսերը ներառում են պարտադիր կենսաթոշակային հիմնադրամի հատկացումներ՝ 124,952 հազ. ՀՀ դրամ (2022թ.՝ 94,967 հազ. ՀՀ դրամ):

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ**

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ  
առ 31 դեկտեմբերի 2023թ.**

**18 Եկամուտները և ծախսերը ըստ բնույթի (շարունակություն)**

**Ընդհանուր և վարչական ծախսեր**

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2023թ.</b>	<b>2022թ.</b>
Աշխատավարձեր և աշխատանքի վարձատրության այլ վճարումներ	532,929	540,866
Մասնագիտական ծառայություններ	75,651	36,063
Մաշվածություն և ամորտիզացիա	60,426	6,988
Կոմունալ ծառայություններ և կապ	42,195	45,170
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	21,762	26,299
Աշխատակիցներին առնչվող ծախսեր	21,231	24,695
Գրասենյակային ծախսեր	6,163	4,595
Սպասարկման ծախսեր	4,512	7,977
Այլ	17,217	9,946
<b>Ընդամենը ընդհանուր և վարչական ծախսեր</b>	<b>782,086</b>	<b>702,599</b>

Անձնակազմի գծով ծախսերը ներառում են պարտադիր կենսաթոշակային հիմնադրամի հատկացումներ՝ 21,263 հազ. ՀՀ դրամ (2022թ.՝ 15,336 հազ. ՀՀ դրամ):

**Այլ օգուտներ /( վնասներ), զուտ**

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2023թ.</b>	<b>2022թ.</b>
Վարձակալության փոփոխության գծով օգուտ	45,231	19,079
Կորուստ արժույթի փոխարկումից	(68,516)	(83,083)
Ծախսագրված ԱԱՀ	(45,226)	(49,336)
Բարեգործական ծախսեր	(21,393)	(16,883)
Այլ	(18,923)	11,889
Այլ պաշարների դուրսգրումներ	(9,052)	(4,060)
<b>Ընդամենը այլ օգուտներ /( վնասներ), զուտ</b>	<b>(117,879)</b>	<b>(122,394)</b>

**Այլ եկամուտներ**

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2023թ.</b>	<b>2022թ.</b>
Ենթավարձակալության գծով եկամուտ	110,924	87,048
Խրախուսական վճարների դուրսգրումից ստացված եկամուտ	43,594	42,660
Մատուցված ծառայություններից ստացված եկամուտ	31,518	34,531
Առաքման ծառայություններից ստացված եկամուտ	14,262	6,951
<b>Ընդամենը այլ եկամուտներ</b>	<b>200,298</b>	<b>171,190</b>

**19 Ֆինանսական ծախսեր**

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2023թ.</b>	<b>2022թ.</b>
Տոկոսային ծախս	152,892	150,431
<b>Ընդամենը ֆինանսական ծախս</b>	<b>152,892</b>	<b>150,431</b>

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ**

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ  
առ 31 դեկտեմբերի 2023թ.**

**20 Շահութահարկ**

**(ա) Շահութահարկի գծով ծախսի բաղադրիչները**

Շահութահարկի գծով ծախսի կազմը հետևյալն է.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2023թ.</b>	<b>2022թ.</b>
Ընթացիկ հարկ	536,133	540,381
Հետաձգված հարկ	2,163	(73,546)
<b>Տարվա շահութահարկի գծով ծախս</b>	<b>538,296</b>	<b>466,835</b>

**(բ) Կիրառելի հարկադրույքով բազմապատկած շահույթի կամ վնասի և շահութահարկի գծով ծախսի համադրում**

Խմբի համար գործող շահութահարկի դրույքաչափը 18% է: Հարկերի գծով ծախսի ակնկալվող և իրական մեծությունների միջև համեմատագրումը ներկայացված է ստորև.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2023թ.</b>	<b>2022թ.</b>
<b>Շահույթ մինչև հարկումը</b>	<b>2,766,589</b>	<b>2,498,362</b>
Տեսական հարկային (ծախս)/կրեդիտ՝ սահմանված 18% դրույքաչափով	(497,986)	(448,553)
Հարկային առումով չնվազեցվող կամ չհարկվող գործարքների ազդեցությունը.		
- Գուղվիլի գծով չճանաչված ժամանակավոր տարբերություն	-	24,315
- Չհարկվող եկամուտ	(2,852)	3,820
- Չնվազեցվող ծախսեր	(37,458)	(46,417)
<b>Տարվա շահութահարկի գծով ծախս</b>	<b>(538,296)</b>	<b>(466,835)</b>

**(գ) Հետաձգված հարկերի վերլուծությունն ըստ ժամանակավոր տարբերության տեսակի**

ՖՀՄՍ-ի և ՀՀ հարկային օրենսդրության միջև եղած տարբերություններն առաջացնում են ժամանակավոր տարբերություններ՝ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման նպատակով որոշվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկման նպատակով որոշվող դրանց գումարների միջև: Այդ ժամանակավոր տարբերություններում շարժի հարկային հետևանքը մանրամասն ներկայացված է ստորև և համեմատագրումը կատարված է 18% դրույքաչափով (2022թ.՝ 18%):

Ժամանակավոր տարբերություններում շարժի հարկային հետևանքը 2023թ. դեկտեմբերի 31-ի համար մանրամասն ներկայացված է ստորև.

**«ԱԼՖԱ ՖԱՐՄ» ՓԲԸ**

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ  
առ 31 դեկտեմբերի 2023թ.**

**20 Ծահուկահարկ (շարունակություն )**

	1 հունվարի 2023թ.	Ծախսագրված/ (կրեդիտագրված) շահույթին կամ վնասին	31 դեկտեմբերի 2023թ.
<i>Հազ. ՀՀ դրամ</i>			
<b>Նվազեցվող/(հարկվող) ժամանակավոր տարբերությունների հարկային հետևանքը</b>			
Հիմնական միջոցներ	(246,939)	32,131	(214,808)
Այլ ակտիվներ	19,902	(19,902)	-
Այլ ոչ նյութական ակտիվներ	(994)	1,531	537
Պաշարներ	33,913	1,359	35,272
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	39,729	(16,511)	23,218
Վարձակալության գծով պարտավորություն	19,403	(1,781)	17,622
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	42,109	946	43,055
Պայմանագրային պարտավորություն	25,494	64	25,558
<b>Չուտ հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)</b>	<b>(67,383)</b>	<b>2,163</b>	<b>(69,546)</b>
Հետաձգված հարկային ակտիվներ	115,751		127,640
Հետաձգված հարկային պարտավորություններ	(183,134)		(197,186)

Ժամանակավոր տարբերություններում շարժի հարկային հետևանքը 31 դեկտեմբերի 2022թ. համար մանրամասն ներկայացված է ստորև.

	1 հունվարի 2022թ.	Ծախսագրված/ (կրեդիտագրված) շահույթին կամ վնասին	31 դեկտեմբերի 2022թ.
<i>Հազ. ՀՀ դրամ</i>			
<b>Նվազեցվող/(հարկվող) ժամանակավոր տարբերությունների հարկային հետևանքը</b>			
Հիմնական միջոցներ	(238,061)	(8,878)	(246,939)
Այլ ակտիվներ	-	19,902	19,902
Այլ ոչ նյութական ակտիվներ	-	(994)	(994)
Պաշարներ	23,190	10,723	33,913
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	22,548	17,181	39,729
Վարձակալության գծով պարտավորություն	19,505	(102)	19,403
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	42,250	(141)	42,109
Պայմանագրային պարտավորություն	(10,361)	35,855	25,494
<b>Չուտ հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)</b>	<b>(140,929)</b>	<b>73,546</b>	<b>(67,383)</b>
Հետաձգված հարկային ակտիվներ	-		115,751
Հետաձգված հարկային պարտավորություններ	(140,929)		(183,134)

Խմբի ներկա կառուցվածքի համատեքստում, Խմբի մեկ ընկերության հարկային վնասները և ընթացիկ հարկային ակտիվները չեն կարող փոխհատուցվել Խմբի մյուս ընկերության ընթացիկ հարկային պարտավորությունների և հարկվող շահույթի դիմաց, և, համապատասխանաբար, հարկերը կարող են հաշվեգրվել նույնիսկ այն դեպքում, երբ կա համախմբված հարկային վնաս: Հետևաբար, հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները փոխհատուցվում են միայն այն դեպքում, երբ դրանք վերաբերում են նույն հարկվող կազմակերպությանը:

**21 Պայմանական դեպքեր և պարտավորություններ**

**Իրավական գործընթացներ.** Ժամանակ առ ժամանակ բնականոն գործունեության ընթացքում Խմբի դեմ կարող են ներկայացվել հայցեր: Իր գնահատականների, ինչպես նաև ներքին մասնագիտական խորհրդատվության հիման վրա դեկավարությունը կարծում է, որ պահանջների գծով ոչ մի Էական վնաս չի կարող կրել, որը կգերազանցի սույն համախմբված ֆինանսական հաշվետվություններում նախատեսված պահուստները:

**Հարկային պայմանական պարտավորություններ.** Հաշվետու ժամանակաշրջանի վերջում ընդունված կամ ըստ Էության ընդունված Հայաստանի հարկային և մաքսային օրենսդրությունը ենթակա է տարբեր մեկնաբանությունների՝ Խմբի գործունեության և գործարքների նկատմամբ դրանք կիրառելիս: Հետևաբար, դեկավարության հարկային դիրքորոշումը և այդ դիրքորոշումը հիմնավորող պաշտոնական թղթակցությունը կարող են վիճարկվել համապատասխան մարմինների կողմից:

Հարկային մարմիններն օրենսդրության մեկնաբանման և հարկային ստուգումների ընթացքում կարող են կիրառել առավել խիստ և բարդ մոտեցում: Բյուջեի կատարման ուղղված հարկային մուտքերի ավելացման ջանքերի հետ համատեղ, վերոնշյալը կարող է հանգեցնել հարկային մարմինների կողմից իրականացվող ստուգումների հաճախականության ու խորության աճի: Մասնավորապես, հնարավոր է, որ անցյալում խնդրահարույց չհամարված գործարքներն ու գործունեությունը վիճարկվեն: Որպես հետևանք, կարող են առաջադրվել Էական ծավալի լրացուցիչ հարկեր, տուգանքներ և տուկոսներ:

Հարկային ստուգումները կարող են ներառել ստուգման ամսաթվին անմիջապես նախորդող երեք օրացուցային տարիները: Որոշակի հանգամանքների դեպքում ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակահատվածներ:

**Գրավադրված և սահմանափակված ակտիվներ.** Դեկտեմբերի 31-ի դրությամբ որպես գրավի ապահովության միջոց գրավադրված են Խմբի հետևյալ ակտիվները (հարակից պարտավորության գումարները ներկայացնելիս դրանք չեն տարանջատվել ըստ ապահովվածության տեսակների).

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	2023թ.		2022թ.	
		Գրավադրված ակտիվ	Հարակից պարտավորություն	Գրավադրված ակտիվ	Հարակից պարտավորություն
Ներդրումային գույք	8	138,591	480,787	258,395	571,117
Հիմնական միջոցներ	7	1,409,828	480,787	854,956	238,700
Շրջանառվող պաշարներ	10	1,000,000	221,237	1,000,000	332,417
<b>Ընդամենը գրավադրված և սահմանափակված ակտիվներ առ 31 դեկտեմբերի</b>		<b>2,548,419</b>	<b>480,787</b>	<b>2,113,351</b>	<b>571,117</b>

**Համապատասխանություն պայմանագրերին.** Խումբը ունի պարտավորություններ որոշակի պայմանագրերի գծով, որոնք հիմնականում վերաբերում են իր փոխառություններին: Այդպիսի պայմանագրերի չկատարումը կարող է բացասական հետևանքներ ունենալ Խմբի համար, ներառյալ փոխառությունների արժեքի աճը և պարտագանցում հայտարարելը: 2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը ապահովել է համապատասխանություն պայմանագրերին:

**22 Դուստր ընկերություններ**

